

# Սոցիալական բարեփոխումները



II

Հայաստանում



**FRIEDRICH  
EBERT  
STIFTUNG**

սեպտեմբեր  
2012

ISBN 978-99941-2-717-7



Հրատարակիչ՝

Հրայր Մարուխյան հիմնադրամ ([www.maroukhianfoundation.org](http://www.maroukhianfoundation.org))

Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ

Սեպտեմբեր, 2012թ.

Տպագրվել է «Տիգրան Մեծ» տպագրատանը

Ձևավորող և էջադրող՝ Գրիգոր Հակոբյան

Առանձին բաժինների հեղինակները պատասխանատու են բովանդակության համար:

Նրանց կարծիքը պարտադիր չէ, որ համընկնի Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի դիրքորոշման հետ:

© Հրայր Մարուխյան հիմնադրամ, 2012

Մոցիալական  
բարեփոխումները  
Հայաստանում

II



# Բովանդակություն

<b>Նախաբան</b> .....	5
<b>Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը</b> .....	7
Ներածություն .....	7
Գլուխ 1. Գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացման ներկա վիճակի գնահատականը/ ոլորտի խոչընդոտները և հիմնախնդիրները/ .....	8
Գլուխ 2. Ռազմավարության նպատակները .....	23
Գլուխ 3. Ռազմավարության հիմնական ուղղությունները .....	24
Գլուխ 4. Գյուղական տարածքների զարգացում .....	38
Գլուխ 5. Պետական և մասնավոր հատվածի համագործակցության զարգացում .....	40
Գլուխ 6. Ակնկալվող արդյունքներ և գնահատման չափորոշիչներ .....	41
Գլուխ 7. Ռազմավարության իրականացման կառավարում և մոնիթորինգ .....	41
<b>Հանքարդյունաբերության զարգացման հիմնախնդիրները Հայաստանում</b> .....	45
Ներածություն .....	45
Գլուխ 1. Հանքարդյունաբերության տնտեսական ներուժը և զարգացման հիմնախնդիրները .....	46
Գլուխ 2. Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները Հայաստանում .....	68
Գլուխ 3. Հանքարդյունաբերության իրավական կարգավորումը .....	75
<b>Մանկավարժական ոլորտի աշխատողների սոցիալական պաշտպանվածությունը Հայաստանի Հանրապետության հանրակրթության համակարգում</b> .....	93
Ներածություն .....	93
Գլուխ 1. ՀՀ հանրակրթության համակարգի և մանկավարժական աշխատողների կարգավիճակի ընդհանուր նկարագիրը .....	94
Գլուխ 2. Սոցիալական պաշտպանությունը տեսության մեջ և միջազգային պրակտիկայում: .....	114
Գլուխ 3. ՀՀ հանրակրթության ոլորտի մանկավարժական աշխատողների սոցիալական պաշտպանվածության գնահատականը .....	122
<b>Հրայր Մարուխյան հիմնադրամ</b> .....	144
<b>Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ</b> .....	144



# Նախարան

Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ պետությունների կառուցման ընթացքը հեշտ չի եղել, այն նաև չի առանձնացել իր արդյունավետությամբ: Ազգային և տարածաշրջանային բախվող շահերը հաճախակի են խոչընդոտ հանդիսացել պետական կառույցների վերականգնման և վերակառուցման ռազմավարության զարգացման ճանապարհային նոր քարտեզի մշակմանը, արդար և արդյունավետ տնտեսական համակարգի հաստատմանը, արդարացի, սոցիալապես կայուն և ներառական հասարակության ապահովմանը: Այս համատեքստում ոչ մշտապես է մշակվել կամ իրականացվել նշված խնդիրների լուծման արդյունավետ քաղաքականություն:

2011 թվականին Հրայր Մարտիկյան հիմնադրամը (ՀՄՀ)՝ Գերմանիայի Դաշնության Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի (ՖԷՀ) ֆինանսական աջակցությամբ հրատարակեց «Սոցիալական բարեփոխումները Հայաստանում» աշխատությունը, որի նպատակն էր ներկայացնել քաղաքականության նորարարական մշակումներ երեք կարևոր՝ առողջապահության, սոցիալական բնակարանների և զբաղվածության ոլորտների վերաբերյալ: Այս ծրագիրը սերտորեն կապված է ՀՄՀ-ի հիմնական առաքելության հետ՝ ձևավորել նոր քաղաքական լուծումներ, ներկայացնել համապատասխան բոլոր շահառուներին և աջակցել դրանց գործադրմանը:

Հետևաբար, այս նախաձեռնությունը նպատակ ուներ լրացնելու երկրում առկա հանրային քաղաքականության բանավեճի բացը, ինչը շարունակում է խորացնել հանրության օտարումն ու հասարակության բևեռացումը: Մենք ակնկալում ենք, որ կնպաստենք մոտեցումների բազմազանության ընդլայնմանը և կպարզաբանենք ներկայիս կառավարության գործունեության և հանրային ծառայություններում քաղաքացիների մասնակցության ակնկալիքների միջև առկա բացը: Երբ քաղաքացիները ներգրավված չեն որոշումների կայացման գործընթացում, հետագայում նրանք չեն մասնակցում քաղաքական, տնտեսական և սոցիալական գործընթացներում նույնպես: Եթե Հայաստանի կառավարությունը ցանկանում է մեղմացնել հասարակության օտարումը, հուսալքությունը, արտագաղթը, իշխանությունների նկատմամբ վստահության պակասը, ապա այն պետք է հնարավորություն ընձեռի կազմակերպել քաղաքացիների կյանքի վրա անմիջական ազդեցություն ունեցող խնդիրների վերաբերյալ հնարավորինս լայն ընդգրկում ունեցող հանրային քննարկումներ:

«Սոցիալական բարեփոխումները Հայաստանում» ուսումնասիրության երկրորդ մասի նպատակն է շարունակել նույն տրամաբանությամբ, և այստեղ ընթերցողը կարող է ծանոթանալ կիրառելի ու կենսունակ քաղաքական լուծումների հետ, որոնք կոչված են հաղթահարելու առանցքային հիմնախնդիրներն ու բացթողումները մյուս երեք առաջնային ոլորտներում: Ուսումնասիրության առաջին գլուխը՝ «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը», ընդգծում է արդյունավետ գյուղատնտեսության իբրև տնտեսական զարգացման նախապայման լինելու հանգամանքը, և ներկայացնում գյուղատնտեսության ոլորտի առաջիկա տաս տարիների ռազմավարությունը: Երկրորդ գլուխը՝ «Հանքարդյունաբերության զարգացման հիմնախնդիրները Հայաստանում», ներառում է ոլորտի տնտեսական ներուժը և զարգացման հիմնախնդիրները, ինչպես նաև հանքարդյունաբերության օրենսդրական կարգավորումը: Երրորդ գլուխը՝ «Մանկավարժական ոլորտի աշխատողների սոցիալական պաշտպանվածությունը Հայաստանի Հանրապետության հանրակրթության համակարգում», գնահատում է ՀՀ հանրակրթական համակարգում ուսուցիչների սոցիալական պաշտպանվածության ներկայիս հիմնախնդիրները, բացահայտում է նրանց սոցիալական իրավունքների ոտնահարումները և բարելավման առաջարկություններ է ներկայացնում:

Առկա լավագույն փորձի ուսումնասիրությունը և փաստարկված առաջարկների ներկայացումը կնպաստեն ոլորտների նոր քաղաքականության մշակմանը: Արդյունքում՝ կբարելավվեն հանրային ծառայությունները, կքաջալերվի և կապահովվի քաղաքացիների մասնակցային դերակատարությունը, պետական հաստատությունները և համայնքները փոխադարձ կապի մեջ կլինեն շահառուների հետ, ինչն էլ կմեծացնի հանրային վստահությունը:

Հրայր Մարտիսյան և Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամները հավատացած են, որ հանրային համաձայնեցված քաղաքականության միջոցով հնարավոր է ախտորոշել ու լուծել առկա խնդիրները՝ նպաստելով քաղաքացիների կյանքի որակի բարելավմանը, արդարացի, սոցիալապես կայուն հասարակության ձևավորմանը:



# Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը

## Ներածություն

Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկն է: Երկրի տնտեսական զարգացման, պարենային անվտանգության, գյուղական բնակչության կենսապայմանների բարելավման և կյանքի որակի բարձրացման առումով՝ արդյունավետ գյուղատնտեսությունը առաջնային նախապայման է: Այս կարևոր առաքելության հետ միասին գյուղատնտեսական արտադրությունը բնական գործոններից մեծ կախվածության և պահանջարկի նվազ ճկունության պատճառով խիստ ռիսկային է: Հատկանշական է, որ, եթե բիզնեսի այլ ոլորտներում ձեռներեցի անհաջողությունը պատճառ է դառնում եկամտների ժամանակավոր կրճատման կամ, ծայրահեղ դեպքում՝ այդ բիզնեսից այդ գործարարի հեռացման, ապա գյուղատնտեսական արտադրության վնասաբերությունը, ձեռնարկատիրության այլընտրանքի սահմանափակության և պետական աջակցության բացակայության պայմաններում, պատճառ է դառնում գյուղից մարդկանց հեռացման: Իսկ դրա հետևանքով գյուղական տարածքների բնակազերծումը լուրջ սպառնալիք է երկրի տնտեսական տարածքների ներդաշնակ զարգացման և արտադրական ներուժի արդյունավետ օգտագործման համար: Ուստի Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը և պետական անվտանգության շահերը պահանջում են՝ գյուղական բնակավայրերի ամրապնդման, ժողովրդագրական գործընթացների արդյունավետ կառավարման և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման խելամիտ ագրարային քաղաքականության իրականացում:

Անցյալ դարի 90-ական թվականների սկզբին, դեռևս մինչև Խորհրդային Միության փլուզումը, Հայաստանում ագրարային բարեփոխումների աննախադեպ քայլեր ձեռնարկվեցին: Շուրջ յոթ տասնամյակի պետական սեփականության մենաշնորհը հաղթահարելով՝ սեփականաշնորհվեցին հողը և գյուղատնտեսական արտադրության հիմնական միջոցները: Օրենսդրական հիմքեր ստեղծվեցին սեփականության և տնտեսավարման բազմաձևության, գների ազատականացման, բանկային համակարգի, արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների մասնավորեցման համար: Նորանկախ Հայաստանի իշխանությունների հիմնական ուղենիշները մասնավոր սեփականության և շուկայական տնտեսության ինքնակարգավորման առավելությունների գաղափարին ապավինած տնտեսական բարեփոխումներն էին: Սակայն, այդ բարեփոխումներն ընթանում էին նախկին տասնամյակների ընթացքում ձևավորված տնտեսական կապերի խաթարման, երկրի արտաքին հաղորդակցության ուղիների շրջափակման և արցախյան գոյապայքարի պայմաններում, որի հետևանքով ի հայտ եկան բազմաթիվ հիմնախնդիրներ: Այդ հիմնախնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ էր իրականացնել նպատակամետ և հետևողական ագրարային քաղաքականություն, որի հիմնական վեկտորը պիտի լիներ գյուղատնտեսության պետական աջակցությունը:

Վերջին երկու տասնամյակներին ՀՀ կառավարության կողմից իրականացվել են հիմնականում կարճաժամկետ, տեղային բնույթ կրող, ծավալներով ու նշանակությամբ փոքր աջակցության ծրագրեր, որոնք չեն ապահովել գյուղի և գյուղատնտեսության կայուն զարգացում:

Հաշվի առնելով միջազգային փորձը, ազատական շուկայական տնտեսական հարաբերությունների անցման տարիների ձեռքբերումները և բացթողումները՝ մշակվել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացման ռազմավարությունը, որը կարող է ուղենշային փաստաթուղթ հանդիսանալ 2012-2022թթ. ժամանակահատվածի ագրարային քաղաքականության մշակման և իրականացման համար:

## **Գլուխ 1. Գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացման ներկա վիճակի գնահատականը/ ոլորտի խոչընդոտները և հիմնախնդիրները/**

### **1.1 Գյուղատնտեսության ելակետային վիճակը**

Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևոր ոլորտներից մեկն է, որին բաժին է ընկնում երկրի ՀՆԱ-ի 17 տոկոսը և զբաղվածների ընդամենը 45 տոկոսը:

Դեռևս Խորհրդային Միության փլուզումից առաջ Հայաստանի ժողովուրդը հանրապետի միջոցով իրացրեց իր ինքնորոշման իրավունքը և 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունը հռչակեց անկախ պետություն: Շուրջ յոթ տասնամյակ կենտրոնացած-պլանային տնտեսություն ունեցող երկրի նոր իշխանությունը նախընտրեց տնտեսության ազատական-շուկայական կողմնորոշումը և առաջին քայլերը ձեռնարկեց տնտեսական բարեփոխումների ուղղությամբ: Այս գործընթացի շրջանակներում առանձնապես կարևորվեցին ագրարային բարեփոխումները և ընտրվեց հողի և գյուղատնտեսական արտադրության միջոցների, սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքներ իրացնող և հումք վերամշակող կազմակերպությունների մասնավորեցման քաղաքականությունը:

Խորհրդային վերջին տարիներին Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում գործող 860 խոշոր պետական և կոլեկտիվ գյուղատնտեսական ձեռնարկություններ 1991-1992 թթ. ընթացքում լուծարվեցին, և նրանց փոխարեն ներկայումս ձևավորվել են շուրջ 340000 գյուղացիական տնտեսություններ: Վերջիններիս սեփականության իրավունքով հատկացվել է վարելահողերի ավելի քան 82.0, բազմամյա տնկարկների 75.0 և խոտհարքերի 50.0 տոկոսը: Այսպիսի մեծաթիվ տնտեսությունների ստեղծումը պատճառ է դարձել հողատեսքերի ծայրաստիճան մասնատման, որի հետևանքով մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում ընդամենը 1.4 հա գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում մոտ 1 հա վարելահող: Քանի որ գյուղատնտեսության տեխնիկական, տեխնոլոգիական, մարքեթինգային և կազմակերպական համակարգերը համապատասխանեցվել էին խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունների չափանիշներին, ագրարային բարեփոխումներից հետո ի հայտ եկան բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք մինչ այժմ դեռևս արդյունավետ լուծում չեն ստացել: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ հողի սեփականաշնորհումից հետո բավականին ճգճվեց ագրոպարենային համալիրի մյուս ոլորտների՝ վերամշակող, արտադրական և տեխնիկական սպասարկում իրականացնող պետական կառույցների մասնավորեցման գործընթացը, որը պատճառ դարձավ դրանց կազմալուծման և արտադրության միջոցների զգալի կորստի: Տնտեսավարման շուկայական հարաբերությունների ձևավորումը պահանջում էր համապատասխան շուկայական ենթակառուցվածքներ, մասնավորապես՝ ֆինանսավարկային, ապահովագրական և ագրարային շուկայի ինստիտուտների կայացում: Մակայն այս գործընթացները ևս դանդաղում էին, որի պատճառով ցանկալի դրսևորում չէին ստանում ագրարային բարեփոխումների ակնկալիքները: Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության համար բավականին ծանր 1991-1995 թվականներին, շնորհիվ ագրա-

րային բարեփոխումների և միջազգային հանրության աջակցության, որոշ չափով լուծվեցին բնակչության զբաղվածության և պարենային ապահովման հիմնախնդիրները:

Ագրարային բարեփոխումների երկրորդ փուլում (1996–2000թթ.) պետության ագրարային քաղաքականության հիմնական գերակայությունը գյուղատնտեսության ոլորտի արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների ակտիվացումն էր: Դրան նպաստեց ֆինանսական շուկայի կայացումը և ագրովերամշակման ոլորտի հզորությունների մասնակի վերականգնումը:

Վերջին տասնամյակում գյուղատնտեսության մեջ դրսևորվեցին տնտեսական աճի կայունացման և առանձին արտադրությունների գծով մրցունակության բարձրացման որոշակի նախանշաններ: Մակայն 2008 թվականից ահագնացող համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը իր բացասական ազդեցությունն ունեցավ նաև տնտեսության ագրարային հատվածի վրա: ՀՀ Կառավարության կողմից իրականացված հակաճգնաժամային միջոցառումները լայնածավալ բնույթ չէին կրում և անկարող էին կասեցնել գյուղատնտեսության ոլորտի տնտեսական անկումը: Հատկապես 2010 թվականին գյուղատնտեսական արտադրության ծավալը պակասեց 13.4 տոկոսով, որ լրջորեն արգելակեց հանրապետության տնտեսական աճը: Գյուղատնտեսության ճյուղի կայուն զարգացման վրա դեռևս մեծ է բնական գործոնների ազդեցությունը, սակայն, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, ռիսկերի կառավարման համար կարևոր նշանակություն ունեն երկարաժամկետ նպատակային քաղաքականության պետական աջակցության գործիքները, տեխնիկական, տեխնոլոգիական և ապահովագրական համակարգերի զարգացումը:

ՀՀ կառավարության ագրարային քաղաքականության ծրագրերի գերակշիռ մասը կրում է կարճաժամկետ, առանձին դեպքերում՝ էպիզոդիկ բնույթ, որի պատճառով գյուղատնտեսական սյուբեկտների կողմից ըստ արժանավույն չեն ընկալվում և ակնկալվող արդյունք չեն ապահովում: Վերջին տասնամյակում պետական աջակցության շրջանակներում միայն «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» և «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրերն են ամեն տարի ֆինանսավորվել: Ընդ որում՝ միջև 2008թ. դրանք իրականացվում էին «Եվրամիության պարենային աջակցություն» ծրագրով ՀՀ-ին ցուցաբերվող օգնության միջոցներից, որի շնորհիվ, նաև ՄԱԿ-ի ՊԳԿ տեխնիկական օժանդակությամբ, կատարելագործվում էր ծրագրի կառավարումը և հիմնավորված կերպով ավելացվում ֆինանսավորումը: 2010թ. այս ծրագրերից առաջինի ֆինանսավորումը կրճատվել է ավելի քան մեկ երրորդով, իսկ երկրորդինը 50 տոկոսով: «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին» ծրագիրը, որով իրականացվում էր հանրապետության առավել ռիսկային տարածաշրջանների գյուղացիական տնտեսություններին հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածության 1հա. հաշվով 35հազ. դրամ սուբսիդիայի հատկացում, 2007–2009թ.թ. նկատելիորեն նպաստեց սուբսիդավորվող գյուղական համայնքների տնտեսական գործունեության ակտիվացմանը: Մակայն 2010թ. առանց լուրջ



2008 թ–ից ահագնացող համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը իր բացասական ազդեցությունն ունեցավ տնտեսության ագրարային հատվածի վրա

փաստարկների նպատակահարմար չհամարվեց շարունակել այդ ծրագիրը, որի արդյունքում փոխվեց ծրագրի ուղղվածությունը և մոտ 3 անգամ կրճատվեց ֆինանսավորումը: Այսպիսի մարտավարությունը նսեմացնում է գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականության վարկանիշը և թուլացնում շահառուների գործարար կարողությունները: Ընդհանուր առմամբ, տնտեսության զարգացման օրինաչափությունները պահանջում էին հակաճգնաժամային քաղաքականության շրջանակներում մեծացնել գյուղատնտեսական ոլորտին ցուցաբերվող պետական աջակցությունը, սակայն, 2008թ. համեմատությամբ 2010թ.-ին պետական բյուջեից գյուղատնտեսության ֆինանսավորումը կրճատվել է 34.6 տոկոսով: Նույն ժամանակահատվածում ավելի քան 2.7 անգամ ավելացել է ոռոգման համակարգերի պետական ֆինանսավորումը:

Գյուղատնտեսական հումքի վերամշակման համակարգում 1991-1997թթ. շեշտակիորեն նվազեցին արտադրական հզորությունների օգտագործման մակարդակը և արտադրության ծավալները: Սակայն 1998 թվականից հետո, լրացուցիչ ներդրումների, արտադրանքի մրցունակության բարձրացման և արտահանման ընդլայնման շնորհիվ, զգալիորեն բարելավվել է այս համակարգի վիճակը: Հայաստանի Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ սննդարդյունաբերության տեսակարար կշիռը 2010թ. կազմել է 33.7 տոկոս, իսկ ընդհանուր մշակող արդյունաբերության մեջ՝ 51.0 տոկոս:

Գյուղատնտեսական մթերքների վերամշակման համակարգի գործունեության ակտիվացումը և արտահանման ծավալների ավելացումը որոշակիորեն նպաստել են գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի մեղմացմանը և տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը:

Այս ուղղությամբ դրական տեղաշարժերն առավել զգալի կլինեին, եթե հիմնովին լուծվեին գյուղատնտեսության վարկավորման և ռիսկերի ապահովագրման հիմնախնդիրները: Թեև առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով տարեցտարի ավելանում են գյուղատնտեսությանը հատկացվող վարկային միջոցները, բայց դրանք բավարարում են պահանջարկի մոտ 10 %-ը: Այդուհանդերձ, աստիճանաբար ձևավորվում է սպասարկման և շուկայական ենթակառուցվածքների այնպիսի համակարգ, որը համահունչ է ազատական տնտեսության սկզբունքներին: Կարևորագույն ձեռքբերում է տնտեսավարող սուբյեկտների գործելաոճի և մտածելակերպի փոփոխությունը, երբ արտադրողն այլևս իր արտադրական խնդիրների լուծումն ամբողջությամբ չի կապում պետական հովանավորչության հետ: Այդուհանդերձ դեռևս խիստ ցածր է գյուղատնտեսության արդյունավետությունը և գյուղական բնակչության հիմնական, իսկ շատ տեղերում միակ՝ գյուղատնտեսական գործունեությունից ստացվող եկամուտը: Ուստի, բնավ պատահական չէ, որ վերջին երեք տասնամյակների ընթացքում շատ երկրներում ընդունվում է գյուղատնտեսության բազմաֆունկցիոնալության սկզբունքը և պետության ագրարային քաղաքականությունը

համապատասխանեցվում է այդ սկզբունքի պահանջներին: Այսինքն՝ գյուղատնտեսությունը դիտարկվում է ոչ թե որպես նյութական արտադրության սովորական ոլորտ, այլ առանձնահատուկ ոլորտ, որի գործառնությունը չի սահմանափակվում միայն գյուղատնտեսական արտադրանքների արտադրությամբ: Այս կարևոր գործառնությունից բացի, գյուղատնտեսությունը ապահովում է գյուղական տարածքների զարգացում, շրջակա միջավայրի, հատկապես գյուղական լանդշաֆտների և




Խիստ ցածր է գյուղական բնակչության հիմնական՝ գյուղատնտեսական գործունեությունից ստացվող եկամուտը

ռեկրեացիոն ռեսուրսների պահպանություն, ժողովրդագրական գործընթացների կարգավորում, ազգային նկարագրի, կենցաղի, սովորույթների ու ավանդույթների պահպանում:

ՀՀ ագրարային բարեփոխումների սկզբնական փուլի հիմնական գործընթացը հողի սեփականաշնորհումն էր: Վերջինս իրականացվեց պահպանելով սոցիալական արդարության և բոլոր գյուղաբնակներին միննույն ելակետային պայմաններ ապահովելու սկզբունքով: Քանի որ գյուղատնտեսական հողատեսքերն ըստ որակական հատկանիշների դասակարգված էին 5 կատեգորիայի, հավասար հնարավորություններ ստեղծելու անհրաժեշտությունից ելնելով՝ գյուղական ընտանիքին հասանելիք հողաբաժինը լրացվում էր համայնքի վարչական տարածքի տարբեր հատվածներում տեղաբաշխված 3-4 հողակտորներով, որի հետևանքով ավելի փոքր չափերի տրոհվեցին գյուղացիական տնտեսությունների հողակտորները: Այդ պատճառով երբեմնի զանգվածային հողակտորները մասնատվեցին և ներկայումս գյուղատնտեսական արտադրության արդյունավետ կառավարմանը լրջորեն խոչընդոտում են գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը: Միջին հաշվով մեկ ընտանեկան գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում 1.4 հա գյուղատնտեսական տարբեր հողատեսքեր, այդ թվում 1.1 հա վարելահող, որն անբավարար է ընտանիքի սոցիալական կարիքների բավարարման և արտադրության վարման նպատակով ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրման համար: Ավելին, առանձին դեպքերում տնտեսապես չի արդարացնում միմյանցից զգալի հեռավորության վրա գտնվող և բերրիության տարբեր մակարդակ ունեցող հողակտորների մշակումը, որի հետևանքով Հայաստանի նման սակավահող երկրում, որտեղ բնակչության մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական հողերը կազմում են 0.65 հա, իսկ վարելահողերը՝ ընդամենը 0.14 հա, վարելահողերի շուրջ 35-37 տոկոսը նպատակային նշանակությամբ չի օգտագործվում: Որպես հետևանք՝ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և բազմամյա տնկարկների տարածքները 1990 թվականի համեմատությամբ 2011 թվականին համապատասխանաբար պակասել են 31.3 և 32.6 տոկոսով (զճապատկեր 1 և 2):

Գճապատկեր 1: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները




Վելուծությունը ցույց է տալիս, որ 2008-2010թ.թ. միջին տվյալներով վարելահողերի և բազմամյա տնկարկների ոչ լիարժեք և նպատակային օգտագործման պատճառով գյուղա-



ցիական տնտեսությունները չեն կարողացել ստանալ շուրջ 193 մլրդ. Դրամի եկամուտ, որը կազմում է բուսաբուծության համախառն արտադրանքի ավելի քան 50 տոկոսը:

**Գծապատկեր 2: Բազմամյա տնտեսությունների տարածությունները**



Դեռևս ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, որի հիմնական պատճառը արտադրության ինտենսիվության անբավարար մակարդակն է: Բավական է փաստել, որ վերջին տասնամյակում ավելի քան 10 անգամ կրճատվել է հանքային, գրեթե 18 անգամ՝ օրգանական պարարտանյութերի և շուրջ 10 անգամ բույսերի պաշտպանության միջոցների օգտագործումը: 1990-ական թվականների կեսերին, բացառությամբ Գյումրու սելեկցիոն կայանի և երկրագործության գիտական կենտրոնի, կազմալուծվեցին հացահատիկային մշակաբույսերի սերմնաբուծական տնտեսությունները: Դրա հետևանքով հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածության միայն 10-12 տոկոսն էր մշակվում բարձր վերարտադրության սերմերով: 2010-2011թ.թ. Ռուսաստանի Դաշնությունից ներկրված բարձր վերարտադրության 1-1.5 հազ. տոննա աշնանացան ցորենի և 2 հազ. տոննա գարու սերմերը սորոտաբարմացման առումով դեռևս շոշափելի արդյունք չեն կարող ապահովել: Ուստի նախապատվությունը պետք է տալ տեղում սերմնաբուծության արդիական համակարգի զարգացմանը: Այս առումով նկատելի առաջընթաց կա կարտոֆիլի սերմնաբուծության ոլորտում, որտեղ մասնավոր սերմարտադրողների կողմից հոլանդական և գերմանական բարձր վերարտադրության տնկանյութի ներկրման և տեղում բազմացման արդյունքում ձևավորվել է արդյունավետ համակարգ:


Իրավիճակը ծանր է գյուղատնտեսության տեխնիկական ապահովման և սպասարկման ծառայությունների բնագավառում: Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ավելի քան 90 տոկոսը շահագործվում է արդեն 20-30 տարի, որի պատճառով էլ հաճախացել են անսարքությունները, ցածր է արտադրողականությունը:

Վերջին մեկ ու կես տասնամյակում պետական աջակցությամբ զգալի աշխատանքներ են կատարվել ռոտզման համակարգերի վերականգնման և զարգացման ուղղությամբ: Այս ոլորտում դեռևս անելիքը մեծ է: Խորհրդային տարիներին ձևավորված համակարգը խիստ ծախսատար էր, քանի որ էժան էլեկտրաէներգիայի պայմաններում գերակշռում էր մեխանիկական ռոտզումը: Ներկայումս մեծ ներդրումներ են կատարվում ըստ հնարավորության ինքնահոս ռոտզման անցնելու և ջրատար համակարգը պահպանելու ուղղությամբ: ՀՀ պե-


տական բյուջեից ռոտզման համակարգին կատարվող հատկացումները գրեթե 2 անգամ զե-  
րազանցում են գյուղատնտեսության մյուս բոլոր ծրագրերի համար նախատեսված գումարը,  
սակայն հանրապետության 232.9 հազ. հա ռոտզելի հողատարածքներից փաստացի ռոտզ-  
վում է ընդամենը 156 հազ. հեկտարը:

Հիմնականում ցանքատարածությունների ավելացման և որոշ չափով ինտենսիվացման  
մակարդակի բարձրացման հաշվին ավելացել է հացահատիկի, բանջարեղենի և կարտո-  
ֆիլի համախառն բերքը: Ինտենսիվացման առումով որոշակի դրական տեղաշարժեր կան  
այգեգործության բնագավառում (զծապատկեր 3):

**Գծապատկեր 3: Գյուղատնտեսական մշակաբույսերի համահատն բերքը**



**Գծապատկեր 4: Հայաստանի Հանրապետության անասնազրկաքանակը (տարեկերջի դրությամբ)**




1990թ. համեմատությամբ ավելի քան 4 անգամ կրճատվել է կերային մշակաբույսերի ցան-  
քատարածությունը: Այս պայմաններում ինտենսիվ օգտագործվում է բնական արոտների ըն-  
դամենը 35 և խոտհարքերի՝ 60 տոկոսը: Դրա հիմնական պատճառը հեռագնա արոտներում  
նախկին ջրարբիացման համակարգերի վերացումն ու ճանապարհների բացակայությունն է:  
Որպես հետևանք խիստ գերբեռնված են գյուղամերձ արոտները, որը հողերի էռոզիայի ակ-  
տիվացման և գենետիկ ռեսուրսների կենսաբազմազանության վտանգման պատճառ է դար-  
ձել: Մեծ է նաև տնտեսական կորուստը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ բնական կերա-  
հանդակների օգտագործման ցածր մակարդակի հետևանքով չոր խոտի հաշվարկով տա-  
րեկան կորուստը կազմում է 845 հազ. տոննա կամ արժեքային արտահայտությամբ ավելի  
քան 25 մլրդ դրամ:

Կերի կայուն բազայի բացակայությունից բացի, անասնապահության ճյուղի զարգացմա-  
նը խոչնդոտում են նաև տոհմային գործի կազմակերպմանը և անասնաբուժական համա-  
կարգի զարգացմանը նպատակաուղղված պետական աջակցության խիստ սահմանափակ  
հնարավորությունները:

Նշված հիմնախնդիրներին ավելանում են գյուղմթերքների իրացման շուկայի ձևավորման  
դժվարությունները, որոնք մի կողմից պայմանավորված են տեղական շուկայում դեռևս ցածր  
վճարունակ պահանջարկով և մյուս կողմից՝ գյուղատնտեսական մթերքներ գնող-իրացնող  
ենթակառուցվածքների բացակայությամբ՝ դրանց ձևավորման դանդաղ ընթացքով և ար-  
տահանման դժվարություններով:

Գծապատկեր 5: Անասնապահական մթերքների արտադրությունը



Արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում պարենի և գյուղատնտեսական հում-  
քի բաժինը (2004–2008թթ. տվյալներով) կազմում է արտահանման 14.3 և ներմուծման 17.1  
տոկոսը: 2008թ. տվյալներով ներմուծման արժեքը արտահանմանը գերազանցում է 4.2 ան-  
գամ, իսկ պարենի և գյուղատնտեսական հումքի գծով՝ 4.3 անգամ: Ավելին, արտադրատե-  
սակների այս խմբում արտահանման ավելի քան 64.0 տոկոսը բաժին է ընկնում կոնյակին,  
որը անհրաժեշտաբար արտահանման դիվերսիֆիկացման խնդիր է առաջադրում: Ուստի  
գյուղատնտեսական ապրանքների արտահանման ծավալների ավելացումը, առևտրային  
հաշվեկշռի և կառուցվածքի բարելավումը նույնպես դիտվում է որպես ռազմավարական  
կարևորություն ներկայացնող հիմնախնդիր:



Դեռևս չի բավարարվում գյուղատնտեսությունում տնտեսվարողների վարկավորման պահանջը, մասնավորապես՝ գյուղացիները յուրաքանչյուր տարի շրջանառու միջոցների խիստ կարիք են զգում, իսկ գործող բանկային համակարգի կողմից վարկավորման պայմանները՝ գրավի առարկայի շրջանակներ, վարկավորման ժամկետ, տոկոսադրույք և այլն, դժվարամատչելի են գյուղացիական տնտեսությունների հիմնական մասի համար:

Գյուղատնտեսությունը որպես ռիսկային ոլորտ յուրաքանչյուր տարի զգալի կորուստներ է կրում տարբեր բնական աղետներից: Ուստի կարևորվում են ռիսկերի մեղմացման միջոցառումների իրականացման և ապահովագրական համակարգի ներդրման խնդիրները: Վերջին տարիներին որոշակի ուշադրություն է դարձվել հակակարկտային տեղակայանքների կիրառման և ռադիոլոկացիոն ցանցի ներդրման ուղղությամբ: Զգալի աշխատանքներ են տարվում նաև հեղեղավտանգ տարածքներում հակահեղեղային միջոցառումների և հողերի էրոզիայի դեմ պայքարի իրականացման ուղղությամբ:

ՀՀ գյուղական բնակչության եկամուտների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունի գյուղատնտեսությունը: Սակայն հողօգտագործման ցածր մակարդակը, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության ոչ բարձր ցուցանիշները, ներքին շուկայի փոքր տարողունակությունը և արտահանման դժվարությունները հնարավորություն չեն ընձեռում ավելացնել գյուղատնտեսությունից ստացվող եկամուտը: Այս պայմաններում մեծանում է գյուղական բնակչության աղքատությունը և ակտիվանում է հատկապես երիտասարդ տարիքի գյուղաբնակների միգրացիան:

## 1.2. Գյուղական տարածքների զարգացման գնահատականը

Հայաստանի գյուղական տարածքների զարգացման ներկա վիճակը պահանջում է իրականացնել աղքատության հաղթահարման, սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև գյուղական բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացման ծրագրեր:

ՀՀ կառավարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող տարածքային զարգացման քաղաքականությունը ֆինանսական միջոցների սահմանափակության պայմաններում գլխավորապես ուղղորդվել է գյուղական բնակչության կենսագործունեության առաջնային պայմանների ստեղծմանը: Մշակվել և իրագործվել են մի շարք նպատակային ծրագրեր, որոնք ուղղված են ՀՀ մարզերում առողջապահական, կրթական, բնակկոմունալ, էներգետիկ և սոցիալական ու արտադրական այլ ենթակառուցվածքների բարելավմանը, ինչպես նաև հոգևոր և մշակութային ոլորտների զարգացմանը: Որոշակի աշխատանքներ են իրականացվել նաև ՀՀ մարզերի առանձին համայնքների զարգացման ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ: Դրանք ներառում են կոնկրետ միջոցառումներ՝ ուղղված ռոռզման ցանցերի վերականգնմանը, գազաֆիկացմանը, միջհամայնքային (ներհամայնքային) ճանապարհների վերակառուցմանը, դպրոցական շենքերի վերանորոգմանը, պոլիկլինիկաների, հիվանդանոցների, բուժկետերի վերազինմանը, ինչպես նաև գյուղական բնակչության կենսապայմանների բարելավմանը: Գյուղական տարածքների զարգացման ծրագրերը իրականացվել են պետական բյուջեի, համայնքային բյուջեների, վարկային միջոցների, դոնոր հանրության և մասնավոր հատվածի ներդրումների հաշվին:

Այդուհանդերձ, դեռևս կարևոր հիմնախնդիր է տարածքային համաչափ զարգացումը, քանի որ Երևան քաղաքի, քաղաքամերձ առանձին համայնքների համեմատությամբ, երկրի մյուս մարզերի զարգացման ցուցանիշները բավականին ցածր են:

Տարածքային ոչ համաչափ զարգացումը հանգեցնում է գյուղաբնակների սոցիալական վիճակի վատացման և ոչ ցանկալի միգրացիոն գործընթացների ակտիվացման: Հատկապես



Ձեռնարկվող միջոցառումները բավարար չեն անբարենպաստ տարածքներում բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու և զբաղվածության հիմնախնդիրները լուծելու համար

աչքի է զարնում տնտեսավարման համար համեմատաբար անբարենպաստ տարածքներում բնակչության աղքատության և գործազրկության բարձր մակարդակը: Անբարենպաստ տարածքների շարքին են դասվում սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային տարածքները, որոնք ցածր ներդրումային գրավչության պատճառով, ձեռնարկատիրության զարգացման և բնակչության եկամուտների ավելացման հնարավորություններից գրեթե զուրկ են: Իհարկե, մի շարք իրավական ակտերում ամրագրված են անբարենպաստ տարածքների զարգացմանը խթանող դրույթներ:

ՀՀ հողային օրենսգրքով սահմանված է, որ պետական և համայնքային սեփականության հողամասերը սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային, երկրաշարժից տուժած

և լքված բնակավայրերում անհատույց տրամադրվում են գյուղատնտեսական գործունեության, տնամերձի կամ անհատական տան կառուցման համար այն ընտանիքներին, որոնք նախկինում չեն օգտվել հողի սեփականաշնորհումից, չեն ստացել տնամերձ կամ բնակելի տան շինարարության համար հողամասեր:

- «Կրթության մասին» ՀՀ օրենքում սահմանված են արտոնություններ՝ սահմանամերձ, բարձրլեռնային և լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար:
- ՀՀ կառավարության 1999թ. ապրիլի 21-ի թիվ 246 որոշմամբ հաստատվել է ՀՀ սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի առաջնահերթ հիմնախնդիրների լուծման հայեցակարգային ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը:
- ՀՀ կառավարության 2001թ. մարտի 22-ի թիվ 222 որոշմամբ հաստատվել է լեռնային բնակավայրերի զարգացման միջոցառումների ծրագիրը, ինչպես նաև սահմանվել են այդ միջոցառումների իրականացման սկզբունքները: Դրանք են՝ սակավաբնակ բնակավայրերի ամրապնդումը, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների կրկնորդված ցանցի ընդլայնումը և այլն:
- Սահմանամերձ գոտու բնակավայրերի ամրապնդման տեսանկյունից առանձնահատուկ կերպով կարևորվում է «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը (2002թ., մայիսի 20, ՀՕ-356-Ն), իր լրացումներով ու փոփոխություններով:

Այդուհանդերձ, ձեռնարկվող միջոցառումները դեռևս բավարար չեն անբարենպաստ տարածքներում բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը էականորեն բարելավելու և զբաղվածության հիմնախնդիրները լուծելու համար:

### 1.3. Դասեր միջազգային փորձից

Հայաստանի գյուղատնտեսության արմատական բարեփոխումները (հողի սեփականաշնորհումը, գյուղատնտեսական արտադրանքների գնումների և գյուղատնտեսության համար արտադրության միջոցների մատակարարման պետական մենաշնորհի վերացումը, գների ազատականացումը կային) մասնավոր ձեռնարկատիրության և շուկայական մրցակցության

առավելությունների հետ միասին, երևան բերեցին մի շարք հիմնախնդիրներ, որոնք առանց պետական կարգավորման և գյուղատնտեսության աջակցության միջոցառումների կիրառման, դժվար է հաղթահարել: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ գյուղատնտեսության ոլորտի հմնական առանձնահատկությունները գրեթե բոլոր երկրների համար ընդհանուր են: Ուստի դրանցով պայմանավորված հիմնախնդիրները և դրանց լուծումները նույնպես կարող են նմանատիպ լինել: Բնավ հավակնություն չդրսևորելով կուրորեն պատճենահանել զարգացող, առավել ևս՝ զարգացած երկրների փորձը, իրատեսորեն գնահատելով Հայաստանի կառավարության տրանսֆերտային հնարավորությունները՝ առաջարկվում է դասեր վերցնել գյուղատնտեսության պետական կարգավորման միջազգային փորձից և այն կիրառել տեղական առանձնահատկություններին և հնարավորություններին ներդաշնակելով:

Ներկայումս ՀՀ ագրարային քաղաքականության թիվ մեկ գերակայությունը երկրի պարենային անվտանգությունն է: Վերջինս կարևորագույն սոցիալական, տնտեսական և քաղաքական հիմնախնդիր է: Այն պահանջում է երկրի տնտեսության այնպիսի վիճակ, որը հնարավորություն է ընձեռում բնակչության բոլոր խավերի առողջ և ակտիվ կենսագործունեության համար ապահովել ֆիզիոլոգիական նորմաներով սահմանված քանակությամբ ու տեսականիով որակյալ սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիություն: Հայաստանի համար, որպես դեպի ծով ելք չունեցող, հակամարտություններով հղի տարածաշրջանում գտնվող և արտաքին հաղորդակցության ուղիների շրջափակում և սահմանափակ այլընտրանք ունեցող երկրի, կենսական նշանակություն ունի պարենային անկախության, այսինքն՝ պարենի հիմնական տեսակներով ինքնաբավության մակարդակի ոչ պակաս 80 տոկոսի ապահովումը: Մինչդեռ, 2005-2010թթ. միջին տվյալներով պարենային ցորենի ինքնաբավությունը կազմել է 36.7, բուսական յուղինը՝ 4.3, շաքարինը՝ 7.7, խոզի մսինը՝ 35.1 և հավի մսինը՝ 16.2 տոկոս: Ակնհայտ է, որ այս ցուցանիշները, պարենի միջազգային շուկայի անկայունության և տարածշրջանում կայուն խաղաղության երաշխիքների բացակայության պայմաններում, լուրջ սպառնալիքներ են երկրի պարենային, անգամ ազգային անվտանգության համար: Պարենային ինքնաբավության մակարդակի բարձրացման միակ ուղին ներմուծումը տեղական արտադրությամբ փոխարինումն է, այսինքն՝ երկրի գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության ոլորտների զարգացումը: Դրա համար առկա են հանիրավի չօգտագործվող ռեսուրսներ (օգտագործվում է մշակովի հողերի մոտ 60, ռոտզման ջրի պաշարների՝ 17, գյուղական աշխատուժի՝ 35 տոկոսը) և ինտենսիվ զարգացման հնարավորություններ: Այդ հնարավորություններն իրացնելու համար անհրաժեշտ է բարձրացնել ագրարային ոլորտի ներդրումային գրավչությունը և մրցունակությունը: Այս տեսանկյունից ուսանելի է համանման իրավիճակներից դեպի կայուն զարգացում անցած երկրների փորձը:

Քանի որ գյուղատնտեսական արտադրանքների գների և իրացման ծավալների միջև առաձգականությունը (էլաստիկությունը) փոքր է, արտադրության միջոցների գների բարձրացումն ուղղակիորեն տանում գյուղացիական տնտեսությունների եկամուտների կրճատման և արտադրության ծավալների կրճատման: Աշխարհի բազմաթիվ երկրներում այս հիմնախնդիրը լուծվում է գների ուղղակի և անուղակի կարգավորման ուղիով:

Տնտեսապես զարգացած երկրների ագրարային քաղաքականության հիմնական բովանդակությունը գյուղատնտեսության ոլորտին տարբեր բնույթի սուբսիդիաների, դոտացիաների և արտոնությունների տրամադրումն է: Աշխարհում գյուղատնտեսական արտադրանք արտահանող խոշոր երկրներում (ԱՄՆ, Կանադա և Եվրամիության երկրներ) գյուղատնտեսության ոլորտին տրամադրված պետական աջակցությունը զգալի նշանակություն է ունեցել գյուղատնտեսության արտադրության արտադրողականության և արդյունավետության բարձրացման ու արդյունաբերական արտադրության թռիչքաձև զարգացման գործընթացում:

Զարգացած երկրներում գյուղացիական տնտեսություններին պետական աջակցությունը տրամադրվում է ուղղակի և անուղղակի ձևով:

Ուղղակի աջակցության ձևերն են.

Ա) Ուղղակի պետական փոխհատուցվող վճարներ.

Բ) Տարերային աղետների պատճառած վնասների փոխհատուցման վճարներ.

Գ) Արտադրության վերակազմակերպման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վճարներ (օրինակ ցանքատարածությունների կրճատում, հարկադիր սպանդ և այլն):

Անուղղակի աջակցության ձևերն են.

Ա) Մանդամթերքի շուկայում գների միջամտություն՝ քվոտավորման, հարկային քաղաքականության, սակագների կիրառման միջոցով.

Բ) Ծախսերի փոխհատուցում՝ պարարտանյութերի, վառելանյութերի, թունաքիմիկատների գների մի մասի և վարկերի տոկոսադրույքների որոշակի կետի սուբսիդավորման միջոցով.

Գ) Օժանդակություն շուկայի զարգացմանը՝ գյուղատնտեսական արտադրանքի պահպանման և տրանսպորտային ծախսերի փոխհատուցման միջոցով.

Դ) Ենթակառուցվածքների զարգացման և կառուցման աջակցություն՝ ռոտզման համակարգերի կառուցման, հողերի արմատական բարելավման և գյուղացիական կոոպերատիվների ու միությունների կազմավորման համար պահանջվող ծախսերի սուբսիդավորման կամ փոխհատուցման միջոցով.

Տնտեսապես զարգացած երկրներում պետական աջակցության համակարգի կառուցվածքում զգալի տեսակարար կշիռ ունի գների կարգավորման մեխանիզմը: Զարգացած շուկայական տնտեսություններ ունեցող երկրներում գյուղատնտեսական արտադրանքի գնագոյացման ժամանակակից մոտեցումը համարվում է գների ձևավորման և կարգավորման գործընթացում պետական ակտիվ միջամտությունը.

Ա) Գների տատանման վերին և ստորին սահմանների, ինչպես նաև ինդիկատիվ կամ պայմանական գների սահմանում, որի պահպանմանը ձգտում է պետությունը:

Բ) Երկարաժամկետ պահպանման ենթակա պարենային մթերքների առք և վաճառք՝ ապրանքային ինտերվենցիաների և գների ցանկալի մակարդակի պահպանման համար:

ԱՄՆ-ում գյուղատնտեսության աջակցության համակարգում գոյություն ունի երկու տեսակի գին: **Նպատակային** (երաշխավորված) գինը տարածվում է կարևորագույն գյուղատնտեսական արտադրատեսակների վրա: Նպատակային գները հաշվարկված են այն հաշվով, որ դրանք միջին և ցածր ծախսերի մակարդակ ունեցող ֆերմերային տնտեսություններում երաշխավորեն այնպիսի եկամտի մակարդակ, որը կապահովի ընդլայնված վերարտադրության կազմակերպում: Տարվա ընթացքում ֆերմերային տնտեսությունները իրենց արտադրանքը վաճառում են շուկայական գներով, որոնք կարող են բարձր լինել նպատակային գնից, ցածր կամ հավասար: Իրացման գինը նպատակային գնից ցածր լինելու դեպքում տարվա վերջում ֆերմերային տնտեսությունը ստանում է փոխհատուցում նշված տարբերության չափով:

Մյուսը՝ **գրավային** գինն է (գրավադրույքներ): Պետության կողմից սահմանվում են գյուղատնտեսական արտադրանքի գրավային գներ, որոնք հավասար են երաշխավորված գների ստորին մակարդակին: Համաձայն ԱՄՆ-ի գյուղատնտեսության մասին օրենքի՝ ֆերմերն ազատ է տնօրինելու իր արտադրանքը: Այն կարող է վաճառել ազատ շուկայում, իրացնել կնքված պայմանագրի համաձայն, իսկ եթե շուկայական գինը ցածր է գրավային գնից, հանձնել պահպանման՝ հետագայում, շուկայական գների բարձրացման ակնկալիքով կամ գրավային գնով գրավադնել ապրանքա-վարկային կորպորացիայում: Ապրանքա-վարկային կորպորացիայում գրավադնելու դեպքում ինն ամսվա ընթացքում



Եվրամիության երկրներում գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող սուբսիդիայի գումարը կազմում է գյուղատնտեսական ապրանքային արտադրանքի 45–50 տոկոսը, Ճապոնիայում և Ֆինլանդիայում՝ 70, Ռուսաստանում՝ ընդամենը 3,5: Եվրամիության երկրներում ազգային դոտացիաները հատկացվում են համակերպական դոտացիոն քաղաքականության շրջանակներում և դրանց սկզբունքներին խիստ համապատասխան: Ցանկացած այլ օգնություն արգելվում է, որը Եվրամիության որևէ առանձին երկրում կարող է ստեղծել առավել նպաստավոր պայմաններ: Այս տիպի օգնություններ են համարվում՝ գնային միջամտությունը, արտադրանքի ծավալների կարգավորումը, արտահանվող ապրանքների նկատմամբ բարձր փոխհատուցումը: Այնուամենայնիվ ազգային կառավարությունները կարող են մասնակցել այն միջոցառումների իրականացմանը և ֆինանսավորմանը, որոնք ուղղված են արտադրանքի որակի բարձրացմանը, անասնաբուժական հսկողության իրականացմանը, գիտատեխնիկական առաջընթացի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, անբարենպաստ պայմաններում գտնվող շրջաններում արտադրության խթանմանը և փոքր գյուղացիական տնտեսություններում եկամտի նվազագույն մակարդակի ապահովմանը:

Չնայած եվրոպական երկրներում ագրարային քաղաքականությունն իրականացվում է Եվրամիության ագրարային քաղաքականության շրջանակներում, սակայն կան որոշակի տարբերություններ գյուղատնտեսությունում իրականացվող ծրագրերի ուղղությունների և ֆինանսավորման մեթոդների միջև: Մասնավորապես Եվրամիության համակարգին ինտեգրվելու նպատակով արտադրության և շուկայի զարգացմանն ուղղված պետական աջակցությունը Դանիայում կազմում է ընդհանուր գյուղատնտեսության բյուջեի 1/3-ը, Անգլիայում և Իռլանդիայում 15–20 տոկոսը: Եվրամիության բոլոր երկրներում գյուղատնտեսության ընդհանուր բյուջեի շուրջ 50 տոկոսն ուղղվում է կառուցվածքային քաղաքականությանը, որի մեջ ներառվում է ֆերմաների խոշորացումը և մոդեռնիզացումը, հողերի և այլ գյուղատնտեսական ռեսուրսների բարելավումը, առևտրական ծախսերի կրճատումը և անբարենպաստ պայմաններում գտնվող շրջանների զարգացումը:

Եվրամիության միասնական ագրարային քաղաքականության շրջանակներում առանձին երկրներ պահպանում են գյուղատնտեսության ոլորտի կառավարման որոշակի ավանդական կառուցակարգեր: Օրինակ, Գերմանիայում դեռևս 1955թ. Ֆերմերների միության և կառավարության բանակցությունների արդյունքում ընդունվեց Գերմանիայի գյուղատնտեսության մասին օրենքը: Այս օրենքում ամրագրված են երկրի մասշտաբով իրականացվող ագրարային քաղաքականության հիմունքները, ինչպես նաև դրանց իրականացման կոնկրետ քաղաքական միջոցները:



Եվրոպական  
երկրներում ագրարային  
քաղաքականությունն  
իրականացվում է  
Եվրամիության ագրարային  
քաղաքականության  
շրջանակներում

Քանի որ օրենքում նշված դրույթները ընդհանրական բնույթ ունեն, Գերմանիայի ֆերմերների միությունը փորձել է այնտեղ ներառել աջակցության կոնկրետ միջոցառումներ: Նրանց չհաջողվեց օրենքում ամրագրել մշտական երաշխավորված գների ու եկամուտների մասին դրույթներ, սակայն պետության կողմից իրականացվող առևտրային, վարկային և գնային քաղաքականությունը բավականին նպաստավոր պայմաններ է ստեղծում գյուղատնտեսության և գյուղական

տարածքների զարգացման համար: Հատկապես ուսանելի է ֆերմերների արտոնյալ վարկավորման փորձը: ԳՖՀ-ի գյուղատնտեսական վարկերի ավելի քան 1/5-ը հատկացվում է արտոնյալ պայմաններով իրականացվող՝ «Գյուղատնտեսություն», «Երիտասարդ ֆերմերներ» և «Գյուղի նորացում» ծրագրերով: Այստեղ կիրառվում է վարկային տոկոսադրույքի սուբսիդավորում, իսկ երիտասարդ ֆերմերներին փոխառու միջոցները տրամադրվում են 28 տարի ժամկետով, ընդամենը 1 տոկոս տոկոսադրույքով:

Գաղտնիք չէ, որ Գերմանիան Եվրամիության հիմնական դոնոր երկիրն է: Բայց գյուղատնտեսության աջակցության համար, բացի ֆեդերալ բյուջեից ֆերմերները սուբսիդավորվում են նաև ԵՄ բյուջեից: 2010թ. ընդհանուր աջակցություն կազմել է շուրջ 12 մլրդ. եվրո, որը գյուղատնտեսական հողատեսքերի 1հա հաշվով կազմում է մոտ 708 եվրո, իսկ մեկ աշխատողի հաշվով՝ 37 հազ. եվրո:

Ֆրանսիայում ագրոպարենային համալիրի կառավարումն իրականացնում են գյուղատնտեսության և անտառտնտեսության նախարարությունը, գյուղատնտեսության պալատները, ինչպես նաև մի շարք կիսապետական և մասնագիտական կազմակերպություններ: Ֆրանսիայի ագրոպարենային համալիրում միջճյուղային կապերի համակարգման մարմին է հանդիսանում գյուղատնտեսության և սննդարդյունաբերության զարգացման կողմնորոշման և համակարգման գերագույն խորհուրդը: Խորհրդում ընդգրկված են ֆինանսների, արդյունաբերության, գյուղատնտեսության և անտառտնտեսության նախարարությունների, ագրոպարենային արտադրանքի վերամշակման և իրացման ոլորտների ներկայացուցիչները: Այն մշակում է մթերային ենթահամալիրների կազմակերպման և կառավարման կատարելագործման միջոցառումները, համաձայնեցնում է արտադրանքի արտադրման և իրացման մասնակիցների և իշխանության պետական մարմինների ներկայացուցիչների գործողություններն ագրարային և պարենային քաղաքականության որոշման, ֆինանսական ներդրումների, գիտատեխնիկական նվաճումների ներմուծման, արտաքին տնտեսական գործունեության զարգացման հարցերում: Գերագույն խորհրդը կարգավորում է նաև գյուղատնտեսական արտադրության ներքին շուկան, վճարում է դրա պահպանման, վերամշակման և արտահանման համար սուբսիդիաներ, կատարում է երաշխավորված գներով գյուղատնտեսական արտադրանքի գնում:

Գյուղատնտեսության և անտառտնտեսության նախարարությունն իրականացնում է ոլորտի ֆինանսական, տեխնիկական և վարչական ռեսուրսների օգտագործման և կառավարման կոորդինացումը, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի որակի հսկողության, բույսերի պաշտպանվածության, կենդանիների առողջության պահպանության հետ կապված միջոցառումներ, միջազգային կոոպերացիաների ձևավորման և զարգացման գործընթացներում առկա խնդիրների բացահայտումը և լուծումը:

Ֆրանսիայում գյուղատնտեսության և անտառտնտեսության նախարարության կառուցվածքն արտացոլում է իր կողմից իրականացվող գործառնությունները: Այն ներառում է ինը ստորաբաժանումներ (գլխավոր վարչություններ, վարչություններ և ծառայություններ), որոնք համալրված են նեղ մասնագիտացված կառուցվածքային միավորումներով:

Տեղական մակարդակով ագրոպարենային համալիրի կառավարումն իրականացնում են 22 տարածաշրջանային և 100 դեպարտամենտային վարչություններ: Տարածաշրջանային և դեպարտամենտային վարչություններն անմիջական կապի մեջ են գտնվում վերամշակող արդյունաբերական ձեռնարկությունների, ֆերմերների և գյուղական բնակչության այլ կատեգորիայիների հետ:

Ֆրանսիայի ագրարային քաղաքականության ձևավորման կառավարման համակարգի առանձնահատկությունն այն է, որ այնտեղ նշանակալի տեղ են զբաղեցնում տարբեր գյուղատնտեսական մասնագիտական մարմիններ: Դրանցից առավել կարևորներն են՝



Ֆինլանդիայի  
 գյուղատնտեսությունը  
 հիմնված է ընտանեկան  
 ֆերմաների վրա,  
 որոնց գերակշռող  
 մասը հանդիսանում  
 է պրոֆեսիոնալ  
 կազմակերպությունների՝  
 արտադրողների  
 միությունների անդամ

գյուղատնտեսական պալատների համակարգը և մասնագիտական միությունների ցանցը: Վերջիններիս բյուջեն ձևավորվում է հողի սեփականատերերի հարկերի, սուբսիդիաների, սպառողների պարտավորությունների և փոխառությունների հաշվին:

Ֆինլանդիան համարվում է հիմնական պարենային ապրանքներով ինքնաբավ երկիր: Երկրի համախառն ազգային արդյունքի մեջ գյուղատնտեսության մասնաբաժինը կազմում է 3 %: Ճյուղում աշխատում է 190 հազ. մարդ, կամ տնտեսությունում զբաղվածների ընդհանուր թվի 8 տոկոսը:

Ֆինլանդիայի գյուղատնտեսությունը հիմնված է ընտանեկան ֆերմաների վրա: Ֆերմերային ընտանիքի ջանքը գյուղատնտեսությունում կազմում է ողջ աշխատանքային ծախսերի 94 տոկոսը: Ընտանիքները հիմնականում իրենք են սպասարկում իրենց տնտեսությունը:

Գյուղացիական տնտեսությունների էական մասն ունի անասնաբուծական ուղղություն: Երկրի 2,2 մլն հեկտար վարելահողից 15 %-ը օգտագործվում է պարենային կուլտուրաների աճեցման նպատակով, շուրջ 35 %-ը՝ կերային կուլտուրաների և շուրջ կեսը կերային հատիկի արտադրության համար: Գյուղատնտեսության ընդհանուր համախառն արտադրանքի 65 %-ը կազմում է անասնաբուծության արտադրանքը, 23 %՝ բուսաբուծության ոլորտի արտադրանքը, մնացած մասը վարձակալությունից եկամուտներն են, գյուղատնտեսական սուբսիդիաները և տարբեր հատուցումներ, որոնք վճարվում են ապրանքների արտադրությունը հավասարակշռելու համար:

Ագրարային քաղաքականությունը Ֆինլանդիայում իրականացնում է գյուղատնտեսության և անտառտնտեսության նախարարությունը՝ արտադրողների մասնագիտական և կոոպերատիվ միավորումների ակտիվ մասնակցությամբ:

Տարածաշրջանային մակարդակով Ֆինլանդիայի գյուղատնտեսության կառավարման համակարգում ֆերմերների շահերը պաշտպանում են արտադրողների մասնագիտական միությունները: Ֆերմերների մոտ 90 %-ը հանդիսանում է պրոֆեսիոնալ կազմակերպությունների՝ արտադրողների միությունների անդամ: Արտադրողների միությունները գործում են բոլոր համայնքներում և պաշտպանում են հողագործների տեղական շահերը: Ընկերությունները ֆինանսավորվում են անդամության վճարներից, մասնակիորեն՝ իրական ներդրումների եկամուտներից: Կառավարությունը նրանց գումարներ չի հատկացնում:

Գյուղատնտեսության կառավարման համապետական համակարգում ֆերմերների շահերը պաշտպանող մասնագիտական կազմակերպություններն են գյուղատնտեսական արտադրության (ֆիննական և շվեդական) ձեռնարկատերերի կենտրոնական միությունները: Երկու միությունն էլ աշխատում են սերտ համակագործակցությամբ: Կենտրոնական միությունների կարևոր խնդիրը կառավարության հետ բանակցությունների վարելն ու համաձայնագրեր մշակելն է՝ գյուղատնտեսական արտադրանքի ծավալի, պարենի գների և ֆերմերների եկամուտների վերաբերյալ: Կենտրոնական միությունները մեծ աշխատանք են տանում

Գյուղատնտեսության կառավարման համապետական համակարգում ֆերմերների շահերը պաշտպանող մասնագիտական կազմակերպություններն են գյուղատնտեսական արտադրության (ֆիննական և շվեդական) ձեռնարկատերերի կենտրոնական միությունները: Երկու միությունն էլ աշխատում են սերտ համակագործակցությամբ: Կենտրոնական միությունների կարևոր խնդիրը կառավարության հետ բանակցությունների վարելն ու համաձայնագրեր մշակելն է՝ գյուղատնտեսական արտադրանքի ծավալի, պարենի գների և ֆերմերների եկամուտների վերաբերյալ: Կենտրոնական միությունները մեծ աշխատանք են տանում



Ֆերմերների, պաշտոնատար անձանց, տնտեսության ներկայացուցիչների, արհմիությունների և բնակչության շրջանում տեղեկատվության տարածման գործում:

Ագրարային քաղաքականության մշակման և իրականացման մեջ կարևորագույն դեր ունեն գյուղատնտեսական կոոպերատիվների: Գյուղատնտեսությանն աջակցելու համար բոլոր սուբսիդիաներն ու գումարները վճարվում են գյուղատնտեսական կոոպերատիվների միջոցով:

Կոոպերատիվները հանդիսանում են Ֆինլանդիայի ագրարային ոլորտի ավելի գործուն կառույցները, որոնք ապահովում են արտադրության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, երաշխավորված գնով արտադրանքի իրացումը և գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների ներդրումը: Միավորելով գրեթե բոլոր ֆերմերներին՝ կոոպերատիվներն առաջատար դեր են խաղում ագրարային հատվածի և տնտեսության մյուս ճյուղերի միջև տնտեսական կապերի ձևավորման և զարգացման գործում: Սա վերաբերում է ինչպես գյուղատնտեսական արտադրանքի իրացմանը և մշակմանը, այնպես էլ ֆերմերային տնտեսությունների արտադրական մատակարարմանը, վարկավորմանը և սպասարկմանը:

Մեծ է կոոպերատիվների դերը գյուղատնտեսության և վերամշակման ոլորտի ինտեգրման գործում: Գրեթե բոլոր մսի մշակման, կաթի և կաթնամթերքի արտադրության ձեռնարկությունները հանդիսանում են կոոպերատիվ սեփականություն: Մսի և մսամթերքի արտադրանքի 75 %-ից ավելին և կաթի ու կաթնամթերքի արտադրության շուրջ 92 %-ը արտադրում են կոոպերատիվները: Ֆերմերային տնտեսությունների պարարտանյութի, կերի, տեխնիկայի ու վառելիքի պահանջարկի համապատասխանաբար 50, 65, 40 և 40 %-ը մատակարարում են կոոպերատիվները:

Գյուղատնտեսության և անտառտնտեսության նախարարությունը (պետական մակարդակ) ձևավորում է ճյուղի տնտեսական գործունեության հիմնական ուղղությունները: Գործնական և ագրարային արտադրության հարցերի մանրակրկիտ վերլուծումն իրականացվում է կառավարության՝ արտադրողների (մասնագիտական մակարդակ) և գյուղատնտեսական կոոպերատիվների (արտադրական մակարդակ) հետ բանակցությունների և համաձայնագրերի միջոցով: Այդպիսի համագործակցությունը թույլ է տալիս մշակել օպտիմալ պայմաններ ֆերմերային տնտեսությունների արդյունավետ գործունեության համար և սահմանափակել պետության վարչական միջամտությունը գյուղատնտեսական արտադրության մեջ:

Այսպիսով՝ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ գյուղատնտեսության պետական կարգավորումը և պետական աջակցությունը աշխարհի գրեթե բոլոր երկրների տնտեսական քաղաքականության գերակայությունն է: Միաժամանակ գյուղատնտեսության կառավարումը բարձր արդյունավետություն է ապահովում քաղաքացիական հասարակության և պետական կառավարման մարմինների համագործակցության պայմաններում:

## Գլուխ 2. Ռազմավարության նպատակները

Սույն Ռազմավարության շրջանակներում առաջարկվում է 2012-2022 թ.թ. ՀՀ ագրարային քաղաքականությունը կենտրոնացվել հետևյալ նպատակների համակարգի վրա.

1. Ագրարային բարեփոխումների շարունակականության և բազմակողմանի պետական աջակցության միջոցով գյուղատնտեսության մրցունակության բարձրացում, առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների, կոոպերատիվների և ընտանեկան գյուղացիական տնտեսությունների ներդաշնակ զարգացում:
2. Երկրի պարենային անվտանգության ապահովում և պարենային ինքնաբավության մակարդակի բարձրացում:

3. Գյուղական համայնքներում փոքր ու միջին ձեռնարկատիրության, սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների զարգացման, ոչ գյուղատնտեսական զբաղվածության ընդլայնման միջոցով՝ գյուղական բնակչության աղքատության հաղթահարում և արտահոսքի կառավարում,
4. Բուսաբուծության և անասնապահության ենթաճյուղերի ինտենսիվ զարգացման պետական աջակցության ծրագրերի իրականացում և արտադրական ռեսուրսների արտադրողականության մակարդակի բարձրացում:
5. Պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացման և համաֆինանսավորման սկզբունքով՝ գյուղատնտեսական ռիսկերի կանխարգելման, ապահովագրական համակարգի ներդրման, ինովացիոն և ներդրումային գործունեության ակտիվացման, ինչպես նաև վենչուրային ծրագրերի իրականացում:
6. Միջազգային կառույցներին (Եվրամիություն, Եվրասիական համագործակցություն, ԱՊՀ, Սևծովյան համագործակցության երկրներ և այլն) ակտիվ մասնակցություն և ագրարային ոլորտի արտաքին առևտրատնտեսական կապերի զարգացում:
7. Գյուղատնտեսության և գյուղական տարածքների կառավարման բոլոր մակարդակներում իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության սյուրեկտների համագործակցության ապահովում:

### Գլուխ 3. Ռազմավարության հիմնական ուղղությունները

#### 3.1. Կառավարման արդյունավետության բարձրացում և նորմատիվ-իրավական դաշտի բարելավում

ՀՀ գյուղատնտեսության կառավարման արդյունավետության բարձրացումը հրատապ խնդիր է: Վերջին երկու տասնամյակների ընթացքում ոլորտի կառավարման համակարգը բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել, որոնք ոչ բոլոր դեպքերում են եղել օբյեկտիվ ու հիմնավորված: Այսօր ագրարային քաղաքականությունն ըստ ենթաոլորտների մշակում և իրականացնում են տարբեր պետական կառավարման մարմիններ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը (գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն), ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը (գյուղական բնակավայրերի զարգացում, ոռոգման համակարգ), ՀՀ կառավարության աշխատակազմը (գյուղական կարողությունների և շուկայավարման հնարավորությունների ընդլայնում), ՀՀ կառավարությանը կից անշարժ գույքի պետական կադաստրը (հողային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման մշտադիտարկում), ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (ագրովերամշակման և լոգիստիկ համակարգի զարգացում), ՀՀ գիտության և կրթության նախարարությունը (գիտական ապահովում և մասնագիտական կադրերի պատրաստում), ՀՀ կենտրոնական բանկը (ապահովագրության և վարկավորման քաղաքականություն) և այլն, ինչը նվազեցնում է ոլորտի ամբողջական քաղաքականության մշակման, իրականացման և հաշվետվողականության արդյունավետությունը:

Հանրապետությունում գոյություն չունի որևէ իրավական ակտ, որով սահմանված լինի պետական ագրարային քաղաքականությունը, դրա նպատակները սկզբունքները, ուղղությունները և ընդհանրապես ագրարային ոլորտում պետության պատասխանատվությունը և պարտավորությունները: Հրամայական պահանջ է դարձել գյուղատնտեսության ոլորտում վերահիմնաստավորել պետության դերը՝ պասիվ բարեփոխիչից վերածելով երկրի կայուն զարգացման մասնակցի և պատասխանատուի: Անհրաժեշտ է ձևավորել գյուղատնտեսության պետական աջակցության ամբողջական համակարգ: Տարբեր բնույթի սուբսիդիաների, դոտացիաների և արտոնությունների տրամադրումը պետք է դարձնել ագրարային քա-

ղաքականության հիմնական նպատակը և բովանդակությունը: Այս բացը լրացնելու համար առաջարկվում է ընդունել «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը, որով կսահմանվի.

1. Գյուղատնտեսության և գյուղի զարգացման պետական քաղաքականությունը, դրա նպատակները, սկզբունքները, ուղղությունները, իրականացման միջոցները,
2. Պետական քաղաքականությունը գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքի շուկայի կարգավորման բնագավառում,
3. Գյուղատնտեսության ոլորտին պետական աջակցության տրամադրման սկզբունքները, ուղղությունները և մեխանիզմները,
4. Գյուղատնտեսության և գյուղի զարգացման պետական ծրագիրը, դրա հաստատման կարգը և իրականացումը,
5. Պետական ծրագրի ընթացքի և արդյունքների մասին ազգային զեկույցը: Զեկույցի բովանդակությունը և ներկայացման կարգը,
6. Գյուղատնտեսության և գյուղի զարգացման բնագավառներում տեղեկատվական համակարգի ձևավորումը:

### **Գյուղատնտեսության կառավարման լիազոր մարմնի կարողությունների հզորացում**

ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների մարդկային, տեխնիկական և տեղեկատվական կարողությունները հեռու են բավարար լինելուց: Հայեցակարգային և քաղաքացիական պաշտոն զբաղեցնող աշխատակիցների շահադրդումը (մոտիվացիան) շատ թույլ է, քաղձառայողների մրցութային ընտրության, ատեստավորման և վերապատրաստման գործող համակարգի արդյունավետությունը՝ ցածր: Անբավարար է նաև մասնագիտական պարտականությունների կատարման համար տեխնիկական, տրանսպորտային և կապի միջոցներով ապահովվածության վիճակը: Այս բացերի աստիճանաբար լրացման նպատակով անհրաժեշտ է.

- սահմանել որոշակի մասնագիտական չափորոշիչներ գյուղատնտեսության ոլորտի կառավարման բարձր պաշտոնյաների համար,
- բարձրացնել քաղաքացիական ծառայողների պաշտոնային դրույքները և բարելավել պաշտոնի անձնագրով նախատեսված պարտականությունների կատարումից կախված վարձատրության չափի տարբերակման համակարգը,
- քաղձառայողների և նրանց անչափահաս երեխաների համար սահմանել սոցիալական երաշխիքների այնպիսի փաթեթ, որը մասամբ կփոխհատուցի ցածր աշխատավարձը և լրացուցիչ մոտիվացիայի գործոն կդառնա,
- կառավարչական նորմատիվներին համապատասխան՝ պաշտոնի անձնագրով սահմանել քաղձառայողի պարտականությունների կատարման համար հստակեցնել տեխնիկական, կապի, տրանսպորտի և այլ միջոցները, ինչպես նաև սահմանել գործուղման ծախսերը:



ՀՀ-ում գոյություն չունի որևէ իրավական ակտ, որով սահմանված լինի պետական ազրարային քաղաքականությունը, նպատակները, սկզբունքները և պետության պատասխանատվությունը

## Գյուղատնտեսության և գյուղի զարգացման պետական ծրագիր

Գյուղատնտեսության և գյուղի զարգացման պետական ծրագիրը (այսուհետ՝ պետական ծրագիր) պետք է սահմանի միջնաժամկետ (եռամյա) գյուղատնտեսության զարգացման եւ գյուղատնտեսական արտադրանքի, հումքի ու պարենամթերքի շուկայի կարգավորման նպատակները, խնդիրներն ու հիմնական ուղղությունները, կանխատեսումների վրա հիմնված գյուղատնտեսության զարգացման հիմնական ցուցանիշները, ըստ առանձին տարիների իրականացվելիք միջոցառումները, ակնկալվող արդյունքները՝ քանակական և որակական ցուցանիշները և իրականացվող միջոցառումների համար պահանջվող ֆինանսական միջոցները: Պետական ծրագիրը պետք է մշակի լիազոր մարմինը և մինչև պետական ծրագրի առաջին ֆինանսական տարվան նախորդող տարվա հուլիսի մեկը ներկայացնի Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը: Անհրաժեշտ է նախատեսել, որ հաստատված պետական ծրագրում եռամսյակի համար նախատեսված ֆինանսավորման չափը նվազման առումով հետագայում փոփոխության ենթակա չէ: Հաստատված պետական ծրագրում նախատեսված՝ եռամսյակի յուրաքանչյուր տարվան հասանելիք ֆինանսավորման չափը, համապատասխան ֆինանսական տարվան նախորդող տարում, հաջորդ տարվա համար կազմվող՝ «Պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում նվազեցման առումով ներառվում է առանց փոփոխությունների: Պետական ծրագրի ֆինանսավորման կայունությունը և շարունակականությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է սահմանել դրույթ, որով կամրագրվի ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորման հարաբերական (տոկոսային) չափը՝ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի կամ գյուղատնտեսության համախառն արտադրանքի նկատմամբ: Լիազոր մարմինը յուրաքանչյուր տարի մինչև մայիսի 1-ը, պետք է նախապատրաստի և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնի նախորդ տարում **պետական ծրագրի իրականացման ընթացքի ու արդյունքների մասին հաշվետվությունը կամ ազգային զեկույցը** (այսուհետ՝ ազգային զեկույց), որը կքննարկվի և կհաստատվի մեկամսյա ժամկետում: Հաստատված ազգային զեկույցը քսանօրյա ժամկետում կներկայացվի Ազգային ժողով, որը կլսվի հերթական նիստում:

**Ազգային զեկույցն** իր մեջ ներառում է՝ ազգային ծրագրի տվյալ փուլի ամբողջական և առանձին միջոցառումների իրականացման արդյունքները, ծրագրի իրականացման փաստացի արդյունքային ցուցանիշների համապատասխանությունը ծրագրով սահմանված գյուղատնտեսության զարգացման կանխատեսումներին և արդյունքային ցուցանիշներին, ծրագրի իրականացման մնացած ժամանակահատվածի համար գյուղատնտեսության զարգացման կանխատեսումները, անհրաժեշտության դեպքում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները և այլ ցուցանիշներ:

## Վարչական ռեգիստրի վարում

Կառավարման արդյունավետությունն էապես կախված է ոլորտի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության ստացումից և տիրապետումից: Ներկայումս ՀՀ ԱՎԾ-ի կողմից գյուղատնտեսության ոլորտում վարվում է վերլուծական վիճակագրություն: Այսինքն՝ վիճակագրական տվյալների հավաքագրումն իրականացվում է ոչ թե ըստ տնտեսվարող սյուբեկտների, այլ համայնքային ամփոփ տվյալների և ընտրանքային հետազոտությունների արդյունքների ընդհանրացման միջոցով: Այսպիսի մոտեցումը ընդհանուր վիճակագրության առումով ընդունելի է, սակայն բավարար չէ համակարգի մանրակրկիտ վերլուծության, իրատեսական քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև հասցեական պետական աջակցության ու դրա արդյունքների գնահատման համար:

Ուստի առաջիկա 1-2 տարիների ընթացքում անհրաժեշտ է ստեղծել գյուղատնտեսական վարչական վիճակագրական ռեգիստր:

### **Ռազմավարական հետազոտությունների կենտրոն**

ՀՀ ագրոպարենային համալիրի արդյունավետ կառավարումը պահանջում է հիմնել ռազմավարական հետազոտությունների կենտրոն, որը պետք է իրականացնի ագրարային քաղաքականության արդյունքների վերլուծություն, մշակի ոլորտին վերաբերվող օրենքների, կանոնակարգերի, հայեցակարգերի նախագծեր, ինովացիոն և ներդրումային ծրագրեր, զարգացնի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը:

### **Քաղաքացիական հասարակության հետ համագործակցություն**

Կառավարման արդյունավետության բարձրացման համար կարևոր է և անհրաժեշտ ապահովել քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը գյուղատնտեսության ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում: Այդ նպատակով անհրաժեշտ է ներդնել քաղաքականության մշակման առանձին աշխատանքները կառավարության կողմից հասարակական կազմակերպություններին պատվիրելու մեխանիզմը: Բացի այդ ոլորտի զարգացման համար հիմնարար նշանակություն ունեցող օրենքների, որոշումների, ռազմավարական ծրագրերի և հայեցակարգերի նախագծերը մինչև ՀՀ կառավարություն ներկայացնելը պետք է քննարկել շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

### **Արտադրողների մասնագիտական միություններ**

Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների շահերի պաշտպանության, մասնագիտական և այլ խորհրդատվական ծառայությունների մատուցման, գյուղատնտեսական արտադրանքի ծավալի, պարենամթերքի գների և տնտեսվարողների եկամուտների վերաբերյալ կառավարության հետ բանակցությունների վարման ու համաձայնագրերի մշակման, ինչպես նաև ֆերմերների, պաշտոնատար անձանց, տնտեսության ներկայացուցիչների և բնակչության շրջանում տեղեկատվության տարածման գործընթացների արդյունավետ կազմակերպման համար հրամայական պահանջ է դարձել արտադրողների մասնագիտական միությունների ձևավորումը: Առաջարկվում է պետական աջակցություն ցուցաբերել նշված միությունների ստեղծմանն ու գործունեության ծավալմանը՝ միջնաժամկետ ժամանակահատվածում ապահովելով ֆերմերային տնտեսությունների 30 տոկոսի անդամությունը այդ միություններին:

### **Գյուղատնտեսական կոոպերացիա**

Արտադրության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, երաշխավորված գնով արտադրանքի իրացման, գյուղատնտեսական տեխնիկայի, վառելիքի, պարարտանյութերի մատակարարման, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների ներդրման գործընթացների արդյունավետ կազմակերպումը հնարավոր է իրականացնել գյուղատնտեսական կոոպերատիվների միջոցով: Կոոպերատիվները կարող են նաև զգալիորեն նպաստել ագրարային հատվածի և տնտեսության մյուս ճյուղերի միջև տնտեսական կապերի ձևավորմանը և զարգացմանը: Այս ոլորտում պետության քաղաքականությունը պետք է նպատակաուղղել գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման գործում պետական աջակցության տարբեր մեխանիզմների կիրառմանը: Մասնավորապես պետական աջակցության շրջանակներում գյուղացիական տնտեսություններին տրամադրվող տարբեր սուբսիդիաներ



Գյուղատնտեսության  
ուրրտի պետական  
աջակցության  
համակարգում  
կարևոր դեր ունի  
գների կարգավորման  
մեխանիզմը

ու դրամաշնորհները հատկացնել կոոպերատիվների միջոցով:

### 3.2. Ագրարային շուկայի և գյուղատնտեսական արտադրանքների գների կարգավորում

Ներկայումս Հանրապետության ագրոպարենային ոլորտում առերևույթ ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատ տնտեսական համակարգ, որը ներառում է շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություն, սակայն անհասկանալի է իրացվող գյուղատնտեսական արտադրանքի գնագոյացման գործընթացը և խիստ կասկածելի է շուկայական մեխանիզմներով դրա ձևավորումը: Մի կողմից

գյուղատնտեսական արտադրանքի առանձին արտադրատեսակներ ունեն բարձր գներ, ինչը դրանց բարձր ինքնարժեքի, առաջարկի համեմատ ավելի մեծ պահանջարկի, ինչպես նաև տվյալ ապրանքատեսակի շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների կողմից թելադրվող (գերշահույթ ապահովող) գների հետևանք է, իսկ մյուս կողմից, հաճախ վերամշակող կազմակերպությունները գյուղատնտեսական ապրանքներ արտադրողներին առաջարկում են արտադրանքի ինքնարժեքից ցածր կամ հավասար մթերման գին, ինչը ազդում է նաև իրացման այլ շուկաների վրա և Ֆերմերային տնտեսություններն իրենց արտադրանքը միջնորդներին (վերավաճառողներին) իրացնում են վերջնական սպառողին վաճառվող գնից զգալիորեն ցածր գնով: Գյուղատնտեսական արտադրանքի գնող-իրացնող ենթակառուցվածքների բացակայությունը և արտահանման դժվարությունները խոչընդոտում են գյուղմթերքների իրացման շուկայի ձևավորմանը:

Գյուղատնտեսության զարգացման համար կարևորագույն պայման է համարվում արտադրված արտադրանքների իրացումից կայուն եկամտի այնպիսի մակարդակի ապահովումը, որը կերաշխավորի ընդլայնված վերարտադրության իրականացումը:

Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության համակարգում կարևոր դեր ունի գների կարգավորման մեխանիզմը: Գյուղատնտեսական արտադրանքի գնագոյացման ժամանակակից մոտեցումը համարվում է գների ձևավորման և կարգավորման գործընթացում պետական ակտիվ միջամտությունը՝ կարևորագույն գյուղատնտեսական արտադրատեսակների երաշխավորված գներով իրացման համակարգի ձևավորումը:

#### Երաշխավորված գին

Անհրաժեշտ է սահմանել կարևորագույն գյուղատնտեսական արտադրատեսակների (հացահատիկ, միս, կաթ) իրացման երաշխավորված գներ, որոնք տարվա ընթացքում կարող են ճշգրտվել՝ հաշվի առնելով արձանագրված գնաճի տեմպը: Երաշխավորված գների սահմանման համար անհրաժեշտ է հիմք ընդունել երկրի բարենպաստ բնակլիմայական պայմաններում արտադրված կարևորագույն գյուղատնտեսական մթերքների հաշվարկված ինքնարժեքը: Անբարենպաստ պայմաններում գյուղատնտեսական մթերքների արտադրության համար պետք է հատկացվեն լրացուցիչ դոտացիաներ: Տարվա ընթացքում Ֆերմերային տնտեսությունները ազատ են իրենց արտադրանքի տնօրինման հարցում և այն կարող են վաճառել շուկայական գներով, որը կարող է լինել երաշխավորված գնից

բարձր, ցածր կամ հավասար: Իրացման գինը երաշխավորված գնից ցածր լինելու դեպքում տարվա վերջում ֆերմերային տնտեսությունը կստանան փոխհատուցում նշված տարբերության չափով:

Շուկայում երաշխավորված գնով իրացման ենթակա հիմնական գյուղատնտեսական արտադրանքի ավելցուկի առաջացման դեպքում կառավարության կողմից կիրականացվի դրանց ինտերվենցիոն գնումը երաշխավորված գնով և կապահովվի գնված ապրանքների հետագա տնօրինումը՝ պահպանումը, վերամշակումը, իրացումը, փոխանակումը և այլն:

### **Ապրանքային ինտերվենցիաներ և ինտերվենցիոն գնումներ**

Կարևոր գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքի գնային զգալի տատանումները կանխելու և ընդհանրապես պարենամթերքի շուկայի ընդհանուր կարգավորման նպատակով անհրաժեշտ է ձևավորել ապրանքային ինտերվենցիաների և ինտերվենցիոն գնումների ամբողջական համակարգ: Ապրանքային ինտերվենցիաները և ինտերվենցիոն գնումները կարող են իրականացվել տվյալ ժամանակահատվածում պարենամթերքի շուկայում գնային զգալի տատանումների, մասնավորապես 30 տոկոս գների բարձրացման և նվազման դեպքում: Ապրանքային ինտերվենցիաների և ինտերվենցիոն գնումների ժամանակ անհրաժեշտ է կիրառել որոշակի ապրանքների արտահանման և ներկրման լրացուցիչ սահմանափակումներ:

### **3.3. Գյուղատնտեսության պետական աջակցություն**

Ռազմավորության այս հիմնարար ուղղությունը պահանջում է պետության ագրարային քաղաքականությունը ուղղորդել հետևյալ միջոցառումների իրականացմանը.

1. Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առավել հեռանկարային և արդյունավետ գործարար ծրագրերի աջակցության ընդալյնում, պետության և մասնավոր հատվածի համագործակցության խորացում:
2. արտահանման ուղղվածություն ունեցող և արտաքին շուկայում մրցունակ արտադրանք արտադրող կազմակերպություններին վարկային երաշխիքների, դրամաշնորհների և տեխնիկական օժանդակության տրամադրում (այս ուղղությամբ նախընտրելի են համարվում պտուղ-բանջարեղենի վերամշակման, գինեգործական, օրգանական գյուղատնտեսական մթերքների, չոր մրգերի, կաթնամթերքի և մսամթերքի առանձին տեսակների, թարմ մրգերի արտադրության, հետբերքահավաքային տեխնոլոգիաների կատարելագործման և կարողությունների հզորացման, մանր եղջերավոր անասունների վերարտադրության ապահովման և արտահանման, շուկայահանման խթանման և այլ ծրագրերը)
3. առաջնային սերմնաբուծության և տոհմային գործի զարգացման, բույսերի պաշտպանության և անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների իրականացման, սննդամթերքի անվտանգության, ենթակառուցվածքների կարողությունների հզորացման, գյուղական համայնքների արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների բարելավման, գյուղատնտեսական հողատեսքերի բերրիության բարձրացման, հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, բնական կերահանդակների ջրաբերիացման, գիտական, խորհրդատվական և տեղեկատվական ապահովման, մասնագիտական կադրերի պատրաստման, գյուղատնտեսությունում տնտեսավարողներին հասցեական աջակցության ծրագրերի իրականացում:
4. ագրարային ոլորտում տնտեսավարման բազմաձևության և միջոցառումների կոոպերացիայի զարգացման խթանում (ագրովերամշակող և գյուղատնտեսական հումք արտադրող

կազմակերպությունների միջև ֆյուչերսային (Futures) պայմանագրերի համակարգի ընդլայնում, վարկային միջոցների, մրցակցային դրամաշնորհների և աջակցության տարբեր ձևերի կիրառմամբ՝ համագործակցության զարգացում.

5. ներմուծվող պարենամթերքներն աստիճանաբար տեղական արտադրությամբ փոխարինման քաղաքականության խթանում, հատկապես՝ պարենային ցորենի, շաքարի, բուսական յուղի, հատիկալընդեղեն մշակաբույսերի, խոզի և թռչնի մսի ինքնաբավության բարձրացման նպատկով սուբսիդավորման ծրագրերի իրականացում
6. պետության և մասնավոր հատվածի համաֆինանսավորման սկզբունքով սպասարկման ծառայությունների մատչելիության բարձրացում և որակի բարելավում (տարածամկետ վճարմամբ, լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորմամբ, ապրանքային վարկավորմամբ գյուղատնտեսական տեխնիկայի, տոհմային անասունների, վերամշակման հոսքագծերի և այլ միջոցների մատակարարման կազմակերպում)
7. հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և ռազմավարական նշանակություն ունեցող պարենային ապրանքների ինքնաբավության մակարդակի բարձրացման նպատակով ըստ մշակվող ցանքատարածության և արտադրության ընդլայնման վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորում
8. գենդերային հիմնախնդիրների լուծման, գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության հնարավորությունների ընդլայնման (փոքր և միջին ձեռնարկատիրության, ազրոտորիզմի, արհեստագործության, հուշանվերների, և տնայնագործության զարգացում) նպատակային ծրագրերի իրականացման համար մրցակցային դրամաշնորհների հատկացում
9. գյուղատնտեսական հողատեսքերի, հատկապես վարելահողեր արդյունավետ օգտագործման նպատակով հողակտորների կամավոր միավորման աջակցության ծրագրերի իրականացում
10. ՄԱԿ-ի՝ Անապատացման դեմ պայքարի Կոնվենցիայի շրջանակներում դեգրադացված հողերի վերականգնման, հողաբարելավման և ռեկուլտիվացիոն (խախտված հողերի վերականգնման) ծրագրերի իրականացում
11. տեղական արտադրողների և ներքին շուկայի պաշտպանության նպատակով ներդրումային միջավայրի բարելավման, տարիֆային և ոչ տարիֆային կարգավորման մեխանիզմների կատարելագործման և տնտեսական այլ գործիքների կիրառման միջոցառումների իրականացում (գործարարության զարգացմանը խոչընդոտող իրավական ակտերի իռացիոնալ դրույթների բացառություն և վերացում, անասնաբուժասանիտարական, բուսասանիտարական և կարանտին կանոնների միջազգային չափորոշիչներին, ինչպես նաև ԱՀԿ-ի պահանջներին համապատասխանեցում):

### 3.4. Գյուղատնտեսության կազմակերպական ձևերի զարգացում

ՀՀ ագրարային վերակառուցումների արդյունքում գյուղատնտեսության ոլորտում հիմնական կազմակերպական միավորը ընտանեկան գյուղացիական տնտեսություններն են, որոնց հետ կապված խնդիրները կարգավորվում էին «ՀՀ գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքով: Այդ օրենքը 2006թ. ուժը կորցրած ճանաչվեց և հետայսու գյուղացիական տնտեսությունների կարգավիճակը անորոշ է: Օրենսդրորեն կանոնակարգված չեն նաև տնամերձ հողամասերի, այգեգործական ընկերությունների (ամառանոցային) հողամասերի, ինչպես նաև գյուղատնտեսական կոոպերատիվների իրավահարաբերությունները: Ուստի առաջնահերթ կարգով անհրաժեշտ է հստակեցնել գյուղատնտեսության ոլորտի կազմակերպ-իրավական միավորների վերաբերյալ օրենսդրությունը: Կարևոր հիմնախնդիր է նաև ագրարային ոլորտի ինստիտուցիոնալ բարեփոխումների մի-



ջոցով լոգիստիկ համակարգի զարգացումը: Այդ նպատակով սույն ռազմավարությամբ նախատեսվում է.

- գյուղատնտեսական մթերքների արտադրությունից մինչև սպառումը ապրանքային շարժին նպաստող կառույցների, լոգիստիկ համակարգի՝ պահպանման, վերամշակման, փաթեթավորման, փոխադրման և շուկայահանման կարողությունների ձևավորման, հանրապետության մեծ քաղաքներում հանգստյան օրերին գյուղատնտեսական տոնավաճառների կազմակերպման և մեծածախ շուկայի ցանցի ձևավորման աջակցություն,
- սննդամթերքի անվտանգության պահանջներին բավարարող սպանդանոցների ցանցի ընդլայնում, մսի սառեցման, տեսակավորման, փաթեթավորման և վաճառքի կանոնակարգում,
- կաթի հավաքման կետերի և սպառողական կոոպերատիվների հիմնադրման աջակցություն, սննդամթերքի անվտանգության պահանջներին համապատասխան կաթի և կաթնամթերքի պահպանման, տեսակավորման, փաթեթավորման և վաճառքի կանոնակարգում,
- գյուղատնտեսական արտադրանքների, հատկապես՝ թարմ մրգերի և բանջարեղենների միջնորդավորված վաճառքի կարգավորում, կոոպերացիայի զարգացման միջոցով մանրածախ առևտրի օբյեկտներին մատակարարվող ապրանքների մեծածախ հավաքման կետերի ստեղծում, դրանց կարողությունների ընդլայնում, առանձնապես՝ պահպանման, տեսակավորման, փաթեթավորման և փոխադրման միջոցներով վերազինման աջակցություն:



## ՀՀ ազգային

պարենային հաշվեկշռի  
միջին տվյալներով՝

2008–2010թթ. Պարենի

հիմնական տեսակների

ինքնաբավության

մակարդակը ցածր է

### 3.5. Պարենային անվտանգության ապահովում

Երկրի պարենային անվտանգությունը համարվում է ապահովված, եթե առկա է տնտեսության զարգացման այնպիսի մակարդակ, որը երաշխավորում է բնակչության առողջ և ակտիվ կենսագործունեության համար ֆիզիոլոգիական նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիությունը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում պարենային ճգնաժամերի առաջացման բացառումը: ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի միջին տվյալներով՝ 2008–2010թթ. պարենի հիմնական տեսակների ինքնաբավության մակարդակը ցածր է: Այսպես, մի քանի ապրանքներին գծով այն կազմում է. ցորեն՝ 38.7 %, հատիկաընդեղեն մշակաբույսեր՝ 56.2 %, բուսական յուղ՝ 4.3 %, շաքար՝ 9.7 %, խոզի միս՝ 52.5 %, հավի միս՝ 21.2 %:

Ռազմավարական առումով ՀՀ պարենային անվտանգության ապահովումը պահանջվում է.

1. Պարենամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիության մակարդակի բարձրացման քաղաքականության իրականացում՝ «Պարենային անվտանգության ապահովման մասին» (2002թ.) Հայաստանի Հանրապետության օրենքի, «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» (2007թ.), «ՀՀ Կայուն զարգացման ծրագրի» (2008թ.), «Հայաստանի Հանրապետության պարենային ապահովության քաղաքականության հայեցակարգի» (2011թ.) պահանջներին համապատասխան

2. Ապահովել՝ բնակչության մեկ շնչի հաշվով օրական նվազագույնը 2420 կկալ էներգետիկ արժեքով սննդամթերքի սպառում, առաջնային պարենի (պարենային ցորեն, կարտոֆիլ, բանջարեղեն, բուսական և կենդանական յուղ, շաքար, կաթ, միս, ձու, աղ) ինքնաբավության նվազագույնը 75–80 տոկոս ապահովում և տարեկան պահանջի 15–20 տոկոսի չափով պետական պահուստի ստեղծում: Այս կարևոր մարտահրավերը պահանջում է՝ ոչ նպատակային նշանակությամբ օգտագործվող և տարիներ շարունակ չօգտագործվող վարելահողերը տնտեսական շրջանառության մեջ ներգրավելու համար, առանց դրանց սեփականատերերի սեփականության իրավունքը խախտելու և վնաս պատճառելու, իրականացնել հետևյալ արտակարգ միջոցառումը՝ «ՀՀ Հողային օրենսգիրքը» լրացնել հետևյալ դրույթներով՝
  - ա) համայնքի ավագանուն իրավունք վերապահել առնվազն 3 տարի նպատակային նշանակությամբ չօգտագործվող վարելահողը, որի սեփականատերը հարկային պարտավորությունները բարելավողներն չի կատարել և հողի վարձակալության հանձնելու հայտարարություն չի տվել, հողի հարկի գումարը չգերազանցող վարձակալական վճարով և 5 տարվանից ոչ պակաս ժամկետով վարձակալության հանձնել այն մշակելու ցանկություն ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց,
  - բ) վարձակալության սահմանված ժամկետը լրանալուց հետո հողի սեփականատիրոջ կողմից ինքնուրույն տնտեսավարման պարտավորություն չվերցնելու դեպքում վարձակալության ժամկետը յուրաքանչյուր դեպքում երկարացնել ևս 5 տարով:
3. Պարենի հիմնական տեսակների ինքնաբավության մակարդակի բարձրացումը դիտարկել որպես ոլորտի զարգացման հիմնական գերակայություն և **պետական ծրագրով** իրականացնել հետևյալ միջոցառումները՝
  - ա) պետական և մասնավոր հատվածի համագործակցության ծրագրերի շրջանակներում՝ հիմնականում տեղում սերմարտադրության զարգացման միջոցով, հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածության առնվազն 60 տոկոսի համար առաջին և երկրորդ վերարտադրության սերմերով ապահովում, բույսերի պաշտպանության, պարարտացման և վնասատուների դեմ պայքարի միջոցառումների իրականացում,
  - բ) բարձր ավելացված արժեք ապահովող, հանրապետության բնատնտեսական պայմաններին հարմարված և շուկայական պահանջարկ ունեցող մշակաբույսերի ներդրում,
  - գ) գյուղատնտեսական կենդանիների բարձր մթերատու ցեղերի ներմուծում և ընտրասերման ճանապարհով անասունների տեղական ցեղերի տոհմային հատկանիշների բարելավման գործընթացի շարունակականության ապահովում:
4. Պարենամթերքի տնտեսական մատչելիության մակարդակի բարձրացման համար նվազագույն սպառողական զամբյուղից ոչ պակաս նվազագույն աշխատավարձի և կենսաթոշակի սահմանում:

### 3.6. Սննդամթերքի անվտանգության ապահովում

«Դաշտից մինչև պատառաքաղ» սկզբունքով սննդի շղթայում սպառողների սննդի անվտանգության ապահովումը պահանջում է.

1. սննդամթերքի անվտանգության համակարգը կանոնակարգող օրենսդրական դաշտի ամբողջականացում և Եվրամիության համապատասխան դիրեկտիվների հիման վրա՝ արտադրության, վերամշակման, փաթեթավորման, մակնիշման, փոխադրման, պահպանման և իրացման շղթայի ինքնակարգավորման և տեսչական հսկողության ապահովում,
2. սպառողների շահերի պաշտպանության և սննդամթերքի որակի ու անվտանգության ոլորտի հասարակական կազմակերպությունների գործունեության աջակցություն,

3. սննդամթերքի անվտանգության ապահովման ուղղությամբ միջազգային և տարածաշրջանային համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցության և ընթացակարգերի ներդաշնակեցման ապահովում,
4. «Կողեքս Ալիմենտարիուս»-ի ազգային կոմիտեի գործունեության ակտիվացում և ազգային ստանդարտների՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցում.
5. ԱՀԿ-ի սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման մասին համաձայնագրի պահանջներին, Եվրոպական նոր հարևանության քաղաքականության (ԵՀՔ) 2009-2011թթ. գործողությունների ծրագրին, ինչպես նաև Եվրամիության Արևելյան գործընկերության շրջանակներում՝ սանիտարական և բուսասանիտարական բնագավառներին առնչվող մասով նախատեսված միջոցառումներին համապատասխան Վտանգի աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման (HACCP կամ ՎԱՎԿԿՀ) համակարգի ներդրման աջակցություն.
6. սննդամթերքի փորձաքննության լաբորատորիաների կարողությունների ուժեղացում՝ տեխնիկական հագեցվածություն, կադրերի ուսուցում և վերապատրաստում:

### 3.7. Հողերի պահպանություն և ոռոգման համակարգի զարգացում

Հայաստանը դասվում է սակավահող երկրների շարքին, ուստի սույն ռազմավարության շրջանակներում նախատեսվում է պետական աջակցություն ցուցաբերել հողերի պահպանության և ոռոգման համակարգերի զարգացման հետևյալ ուղղություններին.

1. ոռոգման համակարգի կառավարման կառուցվածքի կատարելագործում և տեխնիկական վիճակի բարելավում,
2. մեխանիկական ոռոգումն ինքնահոսի փոխարինման, ոռոգման ջրի տնօրինման, տրման և հաշվառման իրավական-կազմակերպական հստակ մեխանիզմների կիրառում,
3. նոր ջրատնտեսական կառույցների (մասնավորապես՝ փոքր ջրամբարներ), կառուցման և շահագործման միջոցով ոռոգելի հողատարածությունների ավելացում,
4. նպաստել Զրոգտագործողների ընկերությունների կայացմանը և հետագա զարգացմանը, ինչպես նաև Զրոգտագործողների ընկերությունների միությունների ստեղծմանը,
5. աջակցություն ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնմանը,
6. դրենաժային ցանցերի տակ ընկած ոռոգելի հողատարածքներում գրունտային ջրերի մակարդակի և հանքայնացման կարգավորման նպատակով կոլեկտորատրենաժային ցանցերի մաքրում և նորոգում,
7. ոռոգման համակարգերի տեխնիկական վիճակի բարելավման միջոցով հուսալի ջրամատակարարման ապահովում, ջրի կորուստների և շահագործման ծախսերի նվազեցում, ջրոգտագործողներին հասցեական սուբսիդավորման համակարգի ներդրում,
8. բնական կերահանդակների (արոտների) բարելավման և ջրարբիացման ծրագրի իրականացում,
9. ոռոգման ջրի բարձր պահանջարկ ունեցող հողատարածքներում մշակաբույսերի ճիշտ ընտրություն և դրանց մշակության ջրախնայողական տեխնոլոգիաների կիրառում:

### 3.8. Օրգանական գյուղատնտեսության զարգացում

Սույն ռազմավարության շրջանակներում հանրապետությունում օրգանական գյուղատնտեսության զարգացման համար նախատեսվում է.

1. մշակել և ընդունել «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող՝ համապատասխանության գնահատման, օրգանական արտադրանքի մակնշման, պիտակավորման և այլ կանոնակարգերը,

2. աջակցել մասնավոր հատվածում համապատասխանությունը հավաստող (գնահատող) մարմինների ձևավորմանը,
3. օրգանական գյուղատնտեսության և գյուղական տարածքների ռեկրացիոն ռեսուրսների, պատմա-մշակութային և բնության հուշարձանների օգտագործումով՝ ագրոտուրիզմի զարգացման ծրագրերի պետական աջակցություն

### 3.9. Գյուղատնտեսության տեխնիկական վերազինում և տեխնիկայի արդյունավետ օգտագործում

Գյուղատնտեսության տեխնիկական ապահովվածության ներկա վիճակը, հատկապես առկա տեխնիկայի ծայր աստիճան մաշվածությունը և նորացման միանգամայն անբավարար տեմպերը հիմք են տալիս կանխատեսել, որ **առաջիկա տասնամյակի վերջում ինտենսիվ մշակության չի ենթարկվի վարելահողերի 55–60 տոկոսը**: Ուստի սույն ռազմավարության շրջանակներում գյուղատնտեսության զարգացման գերխնդիր է ոլորտի տեխնիկական վերազինումը և տեխնիկայի արդյունավետ օգտագործումը: Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- յուրաքանչյուր տարի հանրապետություն ներմուծել 1100 հատ տրակտոր, 40 հատ հացահատիկահավաք, 60 հատ կերահավաք կոմբայն և տրակտորների ագրեգատավորման նվազագույն նորմաներին բավարարող քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ: Այս քանակությամբ տեխնիկայի ներկրումը պահանջում է տարեկան 10 մլրդ . դրամ (շուրջ 165 հազ. հա վարելահողերի չօգտագործելու պատճառով տարեկան պակաս է արտադրվում 200 մլրդ. դրամի արտադրանք),
- պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացման ընդունելի տարբերակների (լիզինգ կամ տարածամկետ վճարում, վարձակալություն, կոոպերացիա և այլն) կիրառումով ներմուծված տեխնիկան հատկացնել գյուղական համայնքներին, սպառողական կոոպերատիվներին և առևտրային գյուղատնտեսական ձեռնարկություններին,
- պետական աջակցություն ցուցաբերել մեխանիզատորական և գյուղատնտեսական տեխնիկայի նորոգման, կադրերի պատրաստման ու վերապատրաստման հարցերին, շարժական տեխնիկական օգնության ծառայությունների զարգացմանը,
- հողի նվազագույն և զրոյական (անվար) մշակության տեխնոլոգիայի ներդրում և այդ նպատակով համապատասխան գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման աջակցություն.
- հաշվի առնելով հանրապետության ուղղաձիգ գոտիականության պայմաններում հացահատիկային և կերային մշակաբույսերի բերքահավաքի ժամկետների տարբերությունը, սուբսիդավորել սեզոնային գրաֆիկով ծառայություններ մատուցող կոմբայնների վառելանյութի արժեքը:

### 3.10. Գյուղատնտեսության վարկավորման բարելավում

Գյուղատնտեսության արտադրության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ խիստ արտահայտված սեզոնայնություն գոյություն ունի արտադրական ծախսերի կատարման և դրամական եկամուտների ստացման ժամանակահատվածների միջև, որը կարճաժամկետ վարկերի անհրաժեշտություն է առաջացնում: Բացի այդ, ներդրումային ծրագրերի միջոցով արտադրության ընդլայնումը և տեխնիկական հագեցումն ու արդիականացումը պահանջում են երկարաժամկետ վարկի ներգրավում: Ներկայումս վարկային ռեսուրսների սահմանափակությունը և թանկությունը լուրջ խոչընդոտ են արտադրության զարգացման համար: Այս հիմնախնդրի լուծումը պահանջում է.

- «Վարկային կոոպերացիայի զարգացման» ծրագրի մշակում և իրականացում,

- նպատակային վարկավորման և վենչուրային ծրագրերի իրականացման պետական աջակցություն,
- գրավադրման մեխանիզմների բարելավում և պետական երաշխիքների տրամադրում,
- վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման՝ ըստ տարածաշրջանների տարբերակված ծրագրի ընդունում և իրականացում:

### 3.11 Գյուղատնտեսության ոլորտի գիտակրթական և խորհրդատվական համակարգի բարելավում

Հազարամյակի մարտահրավերներին դիմագրավելու ամենակարևոր ուղին **գիտելիքահենք տնտեսության** զարգացումն է: Այս խնդիրն առավել շեշտադրվում է գյուղատնտեսության ոլորտում, քանի որ պարենի արտադրության ավելացման արտադրական ռեսուրսները խիստ սահմանափակ են, իսկ բնակչության աճն անկասելի: ՀՀ գյուղատնտեսության գիտակրթական և խորհրդատվական համակարգը այսօր կանգնած է կազմալուծման վտանգի առաջ: Կառուցվածքային փոփոխությունների անվան տակ կատարվող օպտիմիզացիայի հետևանքով ըստ էության վերացել են անասնաբուժական և բույսերի պաշտպանության գիտական կառույցները, մնացած հինգ գիտական կենտրոններից երեքն արդեն մեկ տարուց ավելի է, ինչ գտնվում են Հայաստանի պետական ագրարային համալսարանին (ՀՊԱՀ) միավորելու գործընթացում, բայց դեռևս չի հստակեցվել դրանց կարգավիճակը: Նույն ճակատագիրն է սպասում մարզերում տեղաբաշխված գյուղատնտեսական քոլեջներին, որոնցից երկուսն արդեն օպտիմալացվել են (Մայիտակ և Արմավիր), իսկ մյուսները 2012թ. ընթացքում դուրս են բերվելու ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգից: Հանրապետության 10 մարզերում գործող գյուղատնտեսական խորհրդատվական կառույցները՝ ԳԱՄԿ-երը և ԳԱՀԿ-ն կարողությունների հզորացման լրջագույն խնդիր ունեն: Ընդհանուր առմամբ գյուղատնտեսության գիտակրթական և խորհրդատվական համակարգի ներկա վիճակը հուսադրող չէ և այն արդիականացնելու համար սույն ռազմավարությամբ առաջարկվում է.

- արդիականացնել ագրարային ոլորտի կադրերի պատրաստման պետպատվերի համակարգը, պետպատվերով կրթություն ստացող ուսանողների համար սահմանել ոչ միայն ընդունելության և ուսումնառության չափորոշիչներ, այլև հետբուհական գործունեության որոշակի պահանջներ (կադրերի պահանջարկ ունեցող տարածաշրջաններում առնվազն երեք տարի մասնագիտական աշխատանք),
- ՀՀ գյուղատնտեսության նախարարության գիտական կենտրոնների և ՀՀ գիտության և կրթության նախարարության ագրարային թեքումով գիտական հաստատությունների միավորման (պետական բաժնեմաս), ինչպես նաև մասնավոր հատվածի շահագրգիռ ընկերությունների մասնակցության (բաժնետոմսերի գնում կամ ներդրումային ծրագրերի իրականացում) միջոցով ստեղծել «Ագրոգիտություն» գիտաարտադրական հոլդինգ բաց բաժնետիրական ընկերություն (ԳԱՀ ԲԲԸ), որը կիրականացնի ագրարային ոլորտի գիտական սպահովման, գիտական կադրերի պատրաստման, գիտաարտադրության զարգաց-



ՀՀ գյուղատնտեսության  
գիտակրթական և  
խորհրդատվական  
համակարգը այսօր կանգնած է  
կազմալուծման վտանգի առաջ

ման (էլիտար սերմնաբուծություն, կենսատեխնոլոգիա, վակցինաների արտադրություն, գյուղատնտեսական կենդանիների սելեկցիա և առողջության պահպանություն, ինովացիոն և վենչուրային ծրագրերի մշակում և ներդրում, միջազգային գիտական նվաճումների տեղայնացում և այլն) գործառույթներ,

- ոլորտի գիտական ներուժը արդյունավետ օգտագործելու նպատակով ստեղծել Ագրոգիտության ինտելեկտուալ բանկ (ԱԻԲ) և նախապես սահմանված չափանիշների ու բալային միավորների հիման վրա յուրաքանչյուր տարի որոշել գիտնականների ռեյտինգը կամ կատարել ատեստավորում: Որոշակի շեմը հաղթահարած գիտնականներն իրավունք կստանան օգտվելու պատվովճարից, մասնակցելու ագրարային ոլորտի գիտական և խորհրդատվական ծրագրերի դրամաշնորհների մրցույթին: Այս գաղափարը կյանքի կոչելու համար առաջարկել համապատասխան օրենսդրական փոփոխություններ և ՀՀ կառավարությանը ներկայացնել «Ագրոգիտության ինտելեկտուալ բանկի և գիտնականների ատեստավորման մասին» որոշման նախագիծ,
- հետևողականորեն իրականացնել ագրարային գիտության, կրթության և խորհրդատվության ինտեգրացման ծրագիր, ՀՊԱՀ-ին վերապահել ծրագրի նախագծի մշակման և իրականացման գործառույթը,
- գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնների տեխնիկական վերազինման և մասնագիտական կարողությունների հզորացման միջոցով խորհրդատվական համակարգի արդյունավետության բարձրացում, ֆերմերների առաջնային կարիքների բացահայտում և դրանց բավարարման գործուն համակարգի ձևավորում,
- մարզային մակարդակում գիտական, ուսումնական և խորհրդատվական կառույցների ինտեգրման միջոցով ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում:

### 3.12. Աշխատանքային ռեսուրսների օգտագործման բարելավում

ՀՀ ԱՎԾ-ի տվյալներով 2010թ. միայն գյուղացիական տնտեսություններում զբաղված է 496.1 հազ մարդ կամ հանրապետության զբաղվածների ընդամենը 44,9 տոկոսը: Երեք տարի առաջ եղել է՝ 502.5 հազ. մարդ կամ 45.6 տոկոսը: Այս թվերը հաշվարկելիս վիճակագրությունը մեխանիկորեն զբաղված է դիտարկում հողի սեփականաշնորհումից օգտված ընտանիքների բոլոր աշխատունակ անդամներին: Արդյունքում ստացվում է, որ ընդամենը 36 տոկոս գյուղական բնակչության յուրաքանչյուր 100 մարդուց զբաղված է 47.5-ը, իսկ քաղաքում այդ ցուցանիշը կազմում է 30 մարդ: Մեկ այլ հաշվարկով ստացվում է, որ զբաղված է հանրապետության տնտեսապես ակտիվ բնակչության 81 տոկոսը, որից քաղաքում 72.2, իսկ գյուղում՝ 94 տոկոսը: Քանի դեռ պաշտոնական վիճակագրությունը ՀՀ կառավարությանը այսպիսի տվյալներ է ներկայացնում, գյուղի աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման քաղաքականություն չի իրականացվի, քանի որ



ՀՀ գյուղերում առկա է ոչ գյուղատնտեսական զբաղվածության զարգացման հիմնախնդիրը

առերևույթ այդպիսի հիմնախնդիր գոյություն չունի: Իսկ դա նշանակում է, որ տևական ժամանակ չի ընկալվի գյուղում ոչ գյուղատնտեսական զբաղվածության զարգացման հիմնախնդիրը, որի լուծումով է հիմնականում պայմանավորված գյուղատնտեսական հողատեսքերի միավորման, տնտեսությունների

խոշորացման, գյուղական բնակչության եկամուտների ավելացման, սոցիալական ապահովության արժանապատիվ համակարգի ներդրման, աղքատության հաղթահարման, թաքնված գործազրկության բարձր մակարդակի (ավելի քան 46 տոկոս) նվազեցման հիմնախնդիրների լուծումը: Սույն ռազմավարությունը շեշտադրում է այդ հիմնախնդիրները և առաջարկում պետության տնտեսական քաղաքականության գերակայությունների մեջ ներառել.

- գյուղական համայնքներում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ներդրումային մթնոլորտի բարելավում, մասնավորապես՝ հարկային արտոնությունների սահմանում, վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում և վենչուրային ծրագրերի իրականացում,
- ճոճանակային միգրացիայի զարգացման նպատակով փոքր քաղաքների արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացում,
- գյուղական համայնքների կրաստերների ձևավորում և ըստ առանձնահատկությունների սոցիալ-տնտեսական զարգացման լոկալ ծրագրերի մշակում և իրականացում,
- տնտեսապես ակտիվ բնակչության զբաղվածության առումով Երևանի բեռնաթափման և տարածշրջանային համաչափ զարգացման նպատակով պետական կառավարման կառույցների մի մասի փոխադրում մարզային կենտրոններ:

### 3.13. Ագրարային ոլորտի արտաքին տնտեսական կապերի զարգացում

Ագրարային ոլորտի արտաքին տնտեսական կապերի զարգացումը, իր որոշակի առանձնահատկություններով հանդերձ, հիմնականում պայմանավորված է երկրի արտաքին տնտեսական քաղաքականությամբ: Մասնավորապես, ԱՀԿ-ի անդամության շրջանակում Հայաստանն օգտվում է ազգերի առավել բարենպաստության ռեժիմից, բացի այդ ազատ առևտրի համաձայնագրեր ունի Վրաստանի և ԱՊՀ երկրների հետ, բացառությամբ Ադրբեյջանի և Ուզբեկստանի: Ներկայումս խիստ կարևորվում է Հայաստան-Եվրոպական Միություն խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի ստորագրումը: Համաձայնագրի առկայությունը հայկական ապրանքների համար կապահովի ազատ մուտք դեպի ԵՄ շուկա: Հայաստանն օգտվում է նաև Եվրամիության (GSP+) «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգից» (ԱԸՀ), որը Հայաստանին հնարավորություն է տալիս տեղական ծագման շուրջ յոթ հազար ապրանքատեսակ ԵՄ շուկա արտահանել գրոյական կամ նվազեցված մաքսատուրքերով: Արտաքին տնտեսական ակտիվության տեսանկյունից կարևորվում է մրցունակ ենթակառուցվածքների ապահովման խնդիրը: Ենթակառուցվածքների արդիականացումն իրականացվում է համապատասխան ոլորտային ծրագրերով: Մասնավորապես, տրանսպորտային ենթակառուցվածքում կարևորագույն ծրագրերից են՝ Հյուսիս-Հարավ ավտոճանապարհի, Իրան-Հայաստան երկաթգծի և «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի հարակից տարածքում միջազգային լոգիստիկ կենտրոնի և ազատ տնտեսական գոտու տրանսպորտային ենթակառուցվածքների ծրագրերը: Այդուհանդերձ, կարևորելով բարեփոխումների շարունակականությունը՝ սույն ռազմավարությամբ նախատեսվում է.

- գործարարների ուսուցման և տեղեկատվական ծառայությունների մատուցման միջոցով՝ մեծացնել «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգից» (ԱԸՀ) օգտվողների թիվը,
- ավելացնել արտահանվող պարենային ապրանքների տեսականին,
- նվազեցնել հարկային վարչարարությունը և հաշվետվողականությունը,
- հարկատուների սպասարկման որակի բարելավում, ստուգումների ռիսկային չափորոշիչների համատարած կիրառում,

- արտահանման և ներմուծման ընթացակարգերի պարզեցում, կրճատում և ավտոմատացում, տնտեսվարողների սպասարկման որակի բարելավում,
- վարկերի հասանելիության ապահովում, վարկային տեղեկատվության կենտրոնացում,
- մտավոր սեփականության պաշտպանության արդյունավետ կիրակում, այդ թվում նաև արտահանման շուկաներում հայկական արտահանողների մտավոր սեփականության պաշտպանություն,
- բարենպաստ արտաքին առևտրային ռեժիմների ապահովում և առևտրի խոչընդոտների վերացում:

## Գլուխ 4. Գյուղական տարածքների զարգացում

Գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացումը կոռոելացված համակարգ է: Որպես կանոն, զարգացած գյուղական տարածքներում գյուղատնտեսության ինտենսիվացման մակարդակը ավելի բարձր է: Իր հերթին՝ արդյունավետ գյուղատնտեսությունը նպաստում է գյուղական տարածքների զարգացմանը: Այս տեսանկյունից ռազմավարությունը ներառում է գյուղական տարածքների զարգացման այն ենթակառուցվածքները, որոնք ուղղակիորեն պայմանավորված են գյուղատնտեսության զարգացմամբ և նպաստում են այդ ճյուղի զարգացմանը: Մասնավորապես դա վերաբերում է՝ էներգետիկ համակարգին, ճանապարհային ցանցին, տրանսպորտին, կապին և ջրամատակարարմանը: Նշված բնագավառների զարգացման ռազմավարական ուղղություններն են՝

### 1. վառելիքաէներգետիկ համակարգ.

- ա) պետական-մասնավոր հատվածների համագործակցությամբ, ինչպես նաև այլ աղբյուրներից ֆինանսական միջոցների ներգրավման միջոցով՝ գյուղական համայնքների գազաֆիկացում և համապատասխան պայմանների առկայության դեպքում փոքր հիդրոէլեկտրակայանների նոր հզորությունների գործարկում՝ պահպանելով անվտանգության պահանջները և բնապահպանական նորմերը.
- բ) կենսագազի, երկրաջերմային, արևային և վերականգնվող էներգիայի այլ աղբյուրների ներուժի արդյունավետ օգտագործում, որը ոչ միայն կենցաղային, այլև արդյունաբերական նշանակություն ունի գյուղական տարածքների զարգացման համար.

### 2. ջրամատակարարման բնագավառ

- ա) մատակարարվող ջրի որակի բարելավում, ջրի կորուստների կրճատում, իսկ հեռանկարում՝ խմելու ջրի շուրջօրյա մատակարարման ապահովում.
- բ) անհրաժեշտ ջրաքանակի պաշարների ստեղծում և կառավարում, ջրամատակարարման համակարգի անվտանգ շահագործում, օրվա կարգավորիչ ջրավազանների վերակառուցումը և նորերի կառուցում.
- գ) գյուղական համայնքներում կոյուղացման աշխատանքների շարունակում, կենսաբանական մաքրման կայանների տեղադրում՝ հնարավորինս բացառելով վարակիչ հիվանդությունների տարածումը.

### 3. ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառ

- ա) բարձրացնել տրանսպորտային միջոցներով օգտվելու մատչելիությունը՝ հատկապես հեռավոր (ծայրամասային) լեռնային ու սահմանամերձ բնակավայրերում.
- բ) տրանսպորտային ծառայությունների լիարժեք շուկայի կայացման նպատակով՝ բարելավել մարկետինգային կառույցների գործունեությունը, ապահովել փոխադրումների մրցութային ընտրություն, կատարելագործել արտոնագրման և սերտիֆիկացման համակարգերը.



- գ) շարունակել տրանսպորտի ոլորտում իրականացվող բարեփոխումները՝ ուղղված գյուղական տարածքների գործարար ակտիվության բարձրացման և ճոճանակային միգրացիայի միջոցով աշխատուժի շուկայի զարգացմանը:
4. Ծանայարհաշինության բնագավառում.
- ա) ՀՀ պետական բյուջեի և ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին շարունակաբար իրականացնել գյուղական բնակավայրերը սպասարկող ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ (հատկապես՝ լեռնային և սահմանամերձ գոտում)՝ ապահովելով դրանց պատշաճ անցանելիությունը:
- բ) միջնաժամկետ հեռանկարում գրեթե բոլոր բնակավայրերը միջպետական նշանակության ճանապարհներին կապող առնվազն մեկ բարեկարգ ճանապարհի առկայության ապահովում:
5. կապի, լրատվության և տեղեկատվության բնագավառ
- ա) կապի համակարգի արդիականացում գյուղական համայնքներում, կապի միջոցներից օգտվելու մատչելիության բարձրացում, համակարգի աստիճանական թվայնացում, համացանցի հասանելիության և մատչելիության ապահովում,
- բ) պահուստային (ռեզերվային) ու այլընտրանքային ենթակառուցվածքների, ինչպես նաև շարժական (մոբիլ) կապի միջոցների ստեղծում, պահպանում և զարգացում:
- գ) Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում կապի համակարգի ծավալում՝ գծային, ռադիոռելեային, այլընտրանքային կապի միջոցների զարգացման միջոցով,
- դ) կապի համակարգի հուսալի պահպանում արտաքին միջամտությունից,
- ե) կապի ժամանակակից միջոցների (ինտերնետային, բջջային և այլ) հասանելիության և լիարժեք ծածկույթի աստիճանական ապահովում, ներառյալ հեռավոր գյուղական տարածքները, ծառայությունների շուկայի այդ հատվածում առողջ մրցակցության ապահովում,
- զ) հեռահաղորդակցության և փոստային կապի ոլորտներում շուկայական տնտեսությանը բնորոշ հարաբերությունների արմատավորում:

### Սոցիալական ենթակառուցվածք

Գյուղական բնակչության կենսամակարդակի և գյուղատնտեսության ճյուղի արդյունավետության բարձրացման առումով կարևոր նշանակություն ունի գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացումը: Շուկայական հարաբերությունների ձևավորման անցումային շրջանում դեռևս կպահպանվի պետության կողմից այդ ենթակառուցվածքների ուղղակի աջակցության անհրաժեշտությունը: Հետագայում աստիճանաբար կմեծանա տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի մասնակցությունը սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ու դրանց կառավարմանը: Սույն ռազմավարության շրջանակներում կարևորվում են գյուղի սոցիալական զարգացման հետևյալ ուղղությունները.

- կրթա-մշակութային և մարզական օբյեկտների շինարարություն և վերանորոգում,
- ագրոտուրիզմի զարգացման ծրագրերի մշակում և իրականացման տեխնիկական աջակցություն,
- ոչ գյուղատնտեսական զբաղվածության նպատակով մշակութային բնույթի ծառայություններ մատուցող փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում,
- գյուղաբնակ կանանց գործարար ակտիվության բարձրացման նպատակային ծրագրերի իրականացում,
- գյուղական ֆոլկլորի և արհեստագործության զարգացման պետական աջակցություն,

- կայուն զարգացման ծրագրի շրջանակներում գյուղական աղքատության հաղթահարման միջոցառումների իրականացում:

## Գլուխ 5. Պետական և մասնավոր հատվածի համագործակցության զարգացում

Սույն ռազմավարության իրականացումը խարխիվում է պետության և մասնավոր հատվածի ակտիվ համագործակցության վրա: Նախատեսվում է, որ պետությունը կիրականացնի գյուղատնտեսության կարգավորման հետևյալ գործառնությունները.

- աջակցություն արտադրության խոշոր ինժեներական (մեխտրոնիկա, ռոբոտիկա, ցամաքորդային համակարգ, հակահեղեղային միջոցառումներ, ջրարբիացում, ճանապարհաշինություն և այլն) և գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը,
- օրենսդրական հիմքերի ստեղծում, ազատ մրցակցության ապահովում,
- գյուղատնտեսական հողերի մոնիտորինգ և պահպանություն,
- առաջնային սերմնաբուծության և տոհմային գործի զարգացում.
- անասունների և բույսերի համաճարակային և կարանտին հիվանդությունների կանխարգելում,
- սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի գործունեության կատարելագործում,
- ոլորտի գիտատեխնիկական ապահովում, տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների աջակցություն.
- գյուղական տարածքների համաչափ զարգացման ծրագրերի մշակում և իրականացման աջակցություն.
- միջազգային համագործակցության զարգացում և շուկայահանման հնարավորությունների ընդլայնում,
- գյուղացիների շահերի և իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությունների գործունեության ազատության ապահովում:

Մասնավոր հատվածի կողմից սույն ռազմավարության իրականացման համար պահանջվում է.

- ագրարային բարեփոխումների և հողի սեփականաշնորհման արդյունքում որպես սեփականություն ստացած հողի, տեխնիկայի, շինությունների և արտադրության այլ միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործում,
- ագրարային և սննդի անվտանգության կանոնների, ինչպես նաև կենսաբազմազանության և բնապահպանական պահանջների պահպանություն,
- համաֆինանսավորման սկզբունքով համայնքային զարգացման ծրագրերին ակտիվ մասնակցություն,
- գյուղատնտեսական կոոպերացիայի և ենթակառուցվածքների զարգացման աջակցություն և մասնակցային ակտիվություն, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համատեղ գյուղացիների իրավունքների և շահերի պաշտպանություն,
- որպես լիիրավ անդամ ՋՕԸ-երի կառավարմանը և մշտադիտարկման արդյունքների քննարկմանը ակտիվ մասնակցություն,
- գյուղատնտեսական խորհրդատվական և տեղեկատվական ծրագրերից, ուսուցումներից ու դաշտային ցուցադրումներից օգտվելու հնարավորության ապահովում,
- ամենամյա ցուցահանդեսներին, բերքի տոներին ու տոնավաճառներին մասնակցություն:

## Գլուխ 6. Ակնկալվող արդյունքներ և գնահատման չափորոշիչներ

Մոյն ռազմավարության հիմնական ուղղությունների շրջանակներում նախատեսված ծրագրային միջոցառումների իրականացման դեպքում 2022թ. ակնկալվում են հետևյալ հիմնական արդյունքները.

1. գյուղատնտեսության միջին տարեկան աճ 4.5 տոկոսով,
2. գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակը կդրսևորի կրճատման միտում (այն 2022թ. կկազմի 420 հազ. զբաղված, ներկայիս 493.0 հազ. զբաղվածի դիմաց) և համախառն արտադրանքի ավելացումը կապահովվի աշխատանքի արտադրողականության ավելացման հաշվին.
3. գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը կհասնի մինչև 75 տոկոսի, որը հնարավորություն կտա էականորեն ավելացնել գյուղացիական տնտեսությունների դրամական հոսքերը և վերարտադրողական կարողությունները.
4. 2022թ. ցանքային տարածքը կհասցվի 421.0 հազ. հա, որը կգերազանցի 2008–2010թթ. միջին մակարդակը (296 հազ. հա) ավելի քան 42 տոկոսով: Նույն ժամանակահատվածում կերային մշակաբույսերի տարածությունը կհասցվի 155.0, իսկ բազմամյա տնկարկներինը՝ 86.2 հազ. հա.
5. դրական տեղաշարժեր կլինեն բուսաբուծության և անասնապահության ներճյուղային կառուցվածքում՝ կավելանա պտղի, խաղողի, կարտոֆիլի, բանջարեղենի, կերային և տեխնիկական մշակաբույսերի համախառն արտադրությունը: Անասնապահության մեջ նկատելիորեն կավելանա ոչխարաբուծությունից և թռչնաբուծությունից ստացվող մթերքների տեսակարար կշիռը.
6. բարձր բերքատու սորտերի շրջանացման և մշակության տեխնոլոգիաների արդիականացման շնորհիվ կանխատեսվող ժամանակահատվածի վերջում, 2008–2010թթ. համեմատությամբ հացահատիկային մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի բերքատվությունը կաճի համապատասխանաբար՝ 44.6, 34.8 և 34.2 տոկոսով, իսկ պտղի և խաղողի բերքատվությունը՝ 36.7 և 12.5 տոկոսով,
7. տոհմային գործի զարգացման, կերակրման և պահման բարելավման շնորհիվ՝ 2022թ. մեկ կովի կաթնատվության մակարդակը կհասցվի 2480 կիլոգրամի,
8. պարենի և գյուղատնտեսական հումքի արտահանման ծավալները կավելանան 3 անգամ,
9. կրթական հանրապետության բնակչության պարենային անվտանգության մակարդակը, զգալիորեն կավելանա կարևորագույն պարենամթերքների տեղական արտադրության հաշվին ապահովվածությունը, կավելանան գյուղատնտեսությունում տնտեսվարողների եկամուտները:

## Գլուխ 7. Ռազմավարության իրականացման կառավարում և մոնիթորինգ

Ռազմավարության կառավարումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, մյուս շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հետևյալ մեխանիզմներով՝

1. ռազմավարության դրոյթների և դրանց կատարումն ապահովող միջոցառումները ուղենիշային են լինելու գյուղատնտեսության ճյուղում միջնաժամկետ ծախսերի ծրագ-

րի, բյուջետային ֆինանսավորման տարեկան հայտերի ներկայացման և ոլորտում այլ նպատակային ծրագրերի իրականացման համար,

2. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սույն ռազմավարության դրոյթները կարող են կիրառվել «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. Կայուն զարգացման ծրագրի» լրամշակման և դրա կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցի վերանայման համար,
3. Ռազմավարության իրականացումն ապահովող միջոցառումների մշտադիտարկումը կատարվելու է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և ոլորտի ՀԿ-ների կողմից, հետևյալ ձևաչափով.
  - Ա) մոնիթորինգի իրականացման համար հիմք են ծառայելու ՀՀ ԱՎԾ-ի կողմից հրապարակվող գյուղատնտեսության ոլորտին առչվող հետևյալ ցուցանիշները.
    - ա. գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը՝ ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի,
    - բ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և դրանց կառուցվածքը,
    - գ. բազմամյա տնկարկների տարածքը և կառուցվածքը,
    - դ. գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը՝ ըստ տեսակների,
    - ե. բուսաբուծական հիմնական մթերքների արտադրության ծավալները,
    - զ. գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքատվությունը,
    - է. անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները,
    - ը. գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը,
    - թ. գյուղատնտեսության մեջ զբաղվածների միջին թվաքանակը,
    - ժ. գյուղատնտեսության մեջ մեկ զբաղվածի հաշվով համախառն արտադրանքը (արտադրողականությունը),
    - ժա. գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը,
    - ժբ. ոռոգելի հողատարածքների տեսակարար կշիռը ցանքատարածությունների և բազմամյա տնկարկների տարածքների նկատմամբ,
    - ժգ. հիմնական գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը,
    - ժդ. գյուղատնտեսական տեխնիկայի սարքիչության մակարդակը,
    - ժե. առաջնային անհրաժեշտ սննդամթերքների ինքնաբավության մակարդակը,
    - ժզ. Հայաստանի Հանրապետության պարենային հաշվեկշռում ներառվող սննդամթերքների սպառման կառուցվածքը (էներգետիկ արժեքով գնահատված),
    - ժէ. գյուղատնտեսական մթերքների գները (մանրածախ և գյուղացիական տնտեսությունների կողմից առաջարկվող),
  - Բ) ռազմավարության մշտադիտարկումն իրականացվելու է նաև նախարարության համակարգում գործող պետական տեսչությունների և այլ ստորաբաժանումների կողմից՝ նախարարության կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում:

## Հապավումների ցանկ

<b>ԱԱՀ</b>	Ավելացված արժեքի հարկ:
<b>ԱՀԿ</b>	Առևտրի համաշխարհային կազմակերպություն:
<b>ԱՎԾ</b>	Ազգային վիճակագրական ծառայություն:
<b>ԳԱՄԿ</b>	Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն:
<b>ԳԳԱՀ</b>	Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ:
<b>ԳԶՄՀ</b>	Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ:
<b>ԳԶՓԱԳԶԾ</b>	Գյուղական ճեռնարկության և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր:
<b>ԳԳԿԶՈ</b>	Գյուղի և գյուղատնտեսության 2011-2020թ.թ. կայուն զարգացման ռազմավարություն:
<b>ՀԲ</b>	Համաշխարհային բանկ:
<b>ՀՀԳԿ</b>	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:
<b>ՀԿ</b>	Հասարակական կազմակերպություն:
<b>ԵՄ</b>	Եվրոպական Միություն, Եվրամիություն:
<b>ՄԳՔ</b>	Միասնական գյուղատնտեսական քաղաքականություն (ԵՄ-ի):
<b>ՄԺԾԾ</b>	Միջնաժամկետ ծախսային ծրագրեր (ՀՀ պետական բյուջեի):
<b>ՄԱԶԾ</b>	Միացյալ ազգերի զարգացման ծրագրեր:
<b>ՊԳԿ</b>	Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (ՄԱԿ-ի):
<b>ՊՈԱԿ</b>	Պետական ոչ առևտրային կազմակերպություն:
<b>ՏԻՄ</b>	Տեղական ինքնակառավարման մարմին:

# Құрметті оқырмандар!

# Հանքարդյունաբերության զարգացման հիմնախնդիրները Հայաստանում

## Ներածություն

Հայաստանում սոցիալական ապահովության բարեփոխման հետազոտությունների շրջանակներում կատարվել են հանքարդյունաբերության ոլորտին առնչվող հիմնական խնդիրների ուսումնասիրություններ և վերլուծություններ: Դրանց արդյունքները ամփոփված են այս զեկույցի երեք բաժիններում, որոնք համակարգված են ըստ դիտարկվող խնդիրների բնույթի՝ 1) Հանքարդյունաբերության տնտեսական ներուժը և զարգացման հիմնախնդիրները, 2) Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները, և 3) Հանքարդյունաբերության իրավական կարգավորումը:

«Հանքարդյունաբերության տնտեսական ներուժը և զարգացման հիմնախնդիրները» բաժնում ներկայացված են վերջին տարիներին Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտում արտադրության, ներդրումների, արտահանման, պետական բյուջե կատարված հարկային վճարների ծավալների, շահութաբերության մեծությունների, զբաղվածության և աշխատավարձերի, ինչպես նաև կարևորագույն հանքահումքային արտադրատեսակների համաշխարհային ու արտահանման գների վերլուծությունները: Միաժամանակ, համեմատություններ են կատարվել աշխարհի այլ երկրների հետ և դրանց հիման վրա յուրաքանչյուր ենթաբաժնում արվել հետևություններ: Եզրափակիչ ենթաբաժնում առաջ են քաշվել առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, սկզբունքները, անհրաժեշտ միջոցառումները, որոնց հաջող իրականացումը կնպաստի Հայաստանում այդ ոլորտի հետագա զարգացմանը:

«Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» բաժնում տրվել է ոչ մետաղական հանքային ռեսուրսների տնտեսական ներուժի գնահատականը, ներկայացվել է ճյուղի ռազմավարական նշանակությունը՝ ինովացիոն, քլաստերաստեղծ, տարածքային համաչափ զարգացման առումներով և դրա դերը՝ պետական-մասնավոր գործընկերության շրջանակներում ու Հայաստանի արդյունաբերական զարգացման հեռանկարում: Նախանշվել են ոչ մետաղական հանքային ռեսուրսների վերամշակմամբ ստացվող արտադրատեսակների արտահանման հնարավոր շուկաները և հեռանկարները:

«Հանքարդյունաբերության իրավական կարգավորումը» բաժնում դիտարկվել է ընդերքօգտագործման սկզբունքների ու կարգի արդարացիության, շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության ապահովման և կողմերի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության ուղղություններով միջազգային լավագույն փորձը: Այդ փորձի հիման վրա կատարվել են Հայաստանին վերաբերվող հետևություններ: Տրվել են նաև առաջարկություններ, որոնք ներառում են միջազգային համագործակցության, ներքին օրենսդրական ու ինստիտուցիոնալ բարեփոխումների հնարավորությունները, ինչպես նաև բանակցային մոտեցումներ:

## Գլուխ 1. Հանքարդյունաբերության տնտեսական ներուժը և զարգացման հիմնախնդիրները

### 1.1 Ներածություն

2010 թվականի ընթացքում համաշխարհային տնտեսական և քաղաքական միտումները վերափոխել են հանքարդյունաբերության ոլորտն ամբողջ աշխարհում: Հանքարդյունաբերությունը հայտնվել է նոր ժամանակաշրջանում: Զարգացող երկրների կողմից ձևավորվում են աճող երկարաժամկետ պահանջարկի կանխատեսումներ, մինչդեռ առաջարկը մնում է սահմանափակ՝ կապված առկա մարտահրավերների հետ, ինչպիսիք են հանքանյութերի կորզման նվազող աստիճանը և հանքերի առավել հեռավոր տեղանքներում գտնվելը: Ծախսերի կորը տեղաշարժվել է դեպի վեր և շարունակում է ճնշումները ոլորտի վրա՝ ստիպելով նրան պահպանելու ֆինանսական կարգապահություն: Ոլորտում հայտնվել են նոր մասնակիցներ, և ոլորտը հետզհետե արժանանում է առավել մեծ ուշադրության բազմաթիվ և տարբեր շահագրգիռ մասնակիցների կողմից: Իրավիճակը հանքարդյունաբերության ոլորտում փոխվել է էապես:

Չնայած 2010 թվականից սկսված որոշակի բարելավումներին՝ հանքարդյունաբերական ընկերություններն ամբողջ աշխարհում շարունակում են դիմակայել հիմնական մարտահրավերները՝ կայուն աճ ապահովելու համար:

Մասնավորապես, նրանց գործունեության բարելավումը և ծախսերի խնայողությունը դարձել են ոլորտի հիմնական մարտահրավերները:

Ռեսուրսների ազգայնացման մեծացումը հիմնական մտահոգությունն է համաշխարհային հանքարդյունաբերության ընկերությունների համար: Համաձայն ԵՎԶԲ-ի՝ հանքարդյունաբերության ոլորտում մասնավոր ոլորտի մասնակցությունը ընդհանուր առմամբ ավելի հեռուն է գնացել՝ քան նավթարդյունաբերությունում: Այնուամենայնիվ շատ երկրներում դեռ մնում է զգալի մնացորդային պետական սեփականություն և ազդեցություն, մասնավորապես նվազ հաջողված անցումային տնտեսություններում: Հաշվի առնելով միջազգային գների անկայուն միջավայրը, փորձառու և ֆինանսապես կայուն ստրատեգիական ներդրողների ներգրավումը մնում է էական մարտահրավեր այս ոլորտի համար:

Հարկերը լուրջ հիմնախնդիր են դարձել ձեռնարկությունների ղեկավարության համար: Հանքարդյունաբերական ընկերություններն ունեն նաև փորձառու աշխատողների պակաս, հատկապես այն ակնհայտ է զարգացող երկրներում:

### 1.2 Արտադրություն


Վերջին տասնամյակի ընթացքում հանքարդյունաբերության ոլորտը Հայաստանում զգալի աճ է արձանագրել և 2000 թվականի ընդամենը 15 մլն. ԱՄՆ դոլարի ավելացված արժեքից, 2010 թվականին այն կազմել է ավելի քան 235 մլն. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1): Նկատի ունենալով 2011 թվականի առաջին 9 ամիսների ՀՀ ԱԿԾ նախնական վիճակագրական արդյունքները, ենթադրվում է, որ 2011 թվականին հանքարդյունաբերության ոլորտում ավելացված արժեքը կարող է գերազանցել 300 մլն. ԱՄՆ դոլարը:



2010 թ-ի ընթացքում համաշխարհային տնտեսական և քաղաքական միտումները վերափոխել են հանքարդյունաբերության ոլորտն ամբողջ աշխարհում



Գծապատկեր 1. Հանքարդյունաբերությունը Հայաստանում 2000-2011թթ.



\* - ստացին 9 ամիս

- Ավելացված արժեքը հանքարդյունաբերությունում, մլն. ԱՄՆ դոլար
- Հանքարդյունաբերության կշիռը ՀՆԱ-ում, տոկոս (աջակողմյան առանցք)

Աղբյուրը՝ ԱՎԾ

Միաժամանակ, հանքարդյունաբերության ոլորտը դեռևս շատ համեստ կշիռ ունի ՀՆԱ-ում և ամբողջ ժամանակահատվածում առավելագույն կշիռը ՀՆԱ-ում կազմել է 3,6 տոկոս:

Հանքարդյունաբերության ոլորտից ստացված տնտեսական օգուտները կարելի է բաժանել ըստ հետևյալ 3 խմբերի՝

- զուտ շահույթի տեսքով ոլորտի ձեռնարկությունների համար
- հարկային վճարումներ պետությանը
- աշխատավարձի տեսքով կատարված վճարումներ աշխատողներին:

Այսօր հանքարդյունաբերության ոլորտն աշխարհում համարվում է ամենաշահութաբեր ոլորտներից մեկը: Համաձայն IBISWorld ֆինանսախորհրդատվական ընկերության տվյալների, 2011 թվականին ԱՄՆ-ում ամենաշահութաբեր 10 ոլորտներից 5-ը կապված են եղել հենց հանքարդյունաբերության ոլորտի հետ: Հանքարդյունաբերության ոլորտում շահութաբերության ամենաբարձր մարժա ԱՄՆ-ում ապահովել են պղնձի, նիկելի և ցինկի՝ 52,1 տոկոս, նավթի և գազի՝ 48 տոկոս, երկաթի հանքաքարի՝ 46,4 տոկոս, մոլիբդենի՝ 42 տոկոս, ոսկու և արծաթի՝ 39,1 տոկոս արտադրությունները:

2008-2009 ֆինանսական տարվա արդյունքներով հանքարդյունաբերության ոլորտը գլխավորել է նաև այդ ոլորտում աշխարհում մեծ համբավ ունեցող Ավստրալիայի ամենաշահութաբեր ճյուղերի ցանցը՝ 37,1 տոկոս միջին շահութաբերության մարժայով:

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, Հայաստանում ոլորտի համար ամենաբարենպաստ տարիները՝ շահութաբերության տեսանկյունից եղել են 2005 և 2006 թվականները, երբ ոլորտի ձեռնարկություններն իրենց գործունեության արդյունքում ունեցել են զուտ շահութաբերության<sup>1</sup> համապատասխանաբար՝ 32 և 30 տոկոս ցուցանիշներ: Այդ

<sup>1</sup> Զուտ շահութաբերությունը հաշվարկված է որպես շահութահարկի զծով ծախսերի նվազեցումից հետո ստացված զուտ շահույթի և արտադրանքի, ապրանքների, ծառայության իրացումից ստացված զուտ հասույթի հարաբերակցություն: ԱՎԾ-ի կողմից այն հաշվարկվել է ընտրանքային մեթոդով ընդգրկված կազմակերպությունների համար և տարածվել է ամբողջ ոլորտի վրա:




տարիներին զուտ շահութաբերության ցուցանիշով Հայաստանի ձեռնարկությունները նույնիսկ գերազանցել են աշխարհի առաջատար 40 ընկերություններին: Իսկ 2003 և 2009 թվականներին ոլորտում ընդհանրապես շահութաբերություն չի եղել: Համաձայն վիճակագրական տվյալների, ընդհանուր առմամբ 2002-2009 թվականների ընթացքում Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում զուտ շահութաբերության միջին մակարդակը կազմել է 8 տոկոս և զիջել է աշխարհի առաջատար 40 ընկերությունների զուտ շահութաբերության գրանցված 17 տոկոս ցուցանիշին:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը և դրանով պայմանավորված մետաղի համաշխարհային գների կտրուկ անկումները, 2008-2009 թվականներին բացասական ազդեցություն ունեցան ոլորտի զարգացման աճի տեմպերի, ինչպես նաև շահութաբերության մակարդակի վրա:

Վերջին տարիներին ոլորտում շահութաբերության ցածր մակարդակ է արձանագրվել հատկապես ոսկու արդյունահանման ձեռնարկությունների վնասով աշխատելու հետևանքով, որի հիմնական պատճառ են հանդիսացել մետաղի կորզման ցածր ցուցանիշները և բարձր տրանսպորտային ծախսերը:

Գծապատկեր 2. Հանքարդյունաբերության ոլորտում շահութաբերության մակարդակը 2002-2011թթ.(%)




Աղբյուրը՝ ԱՎԾ, «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն», PricewaterhouseCoopers (PwC)


2010-2011 թվականներին հանքարդյունաբերությունը կրկին վերելք ունեցավ, որին նպաստեցին համաշխարհային շուկայում մետաղների գների բարձրացումը և արտաքին պահանջարկի վերականգնումը:

2010 թվականին պղնձի արտադրության (տոկոսով՝ ամբողջ պաշարների նկատմամբ) և պղնձի պաշարների միջև կախվածությունը Հայաստանում և պղնձի արտադրության հիմնական երկրներում պատկերված է գծապատկեր 3-ում: Ինչպես հայտնի է Հայաստանում պղնձի պաշարները կազմում են շուրջ 6,4 մլն. տոննա կամ համաշխարհային պաշարների 0,9 տոկոսը և 2010 թվականի տվյալներով Հայաստանում արտադրվել է երկրի ունեցած պաշարների 0,5 տոկոսը: Համեմատության համար աշխարհի երեք երկրներում, որտեղ կենտրոնացված է ընդհանուր պաշարների կեսից ավելին, (Չիլի-27,7, Պերու-13,1 և Ավստրալիա-12,5 տոկոս), 2010 թվականի տվյալներով արտադրվել է ունեցած պաշարների համապատասխանաբար 2,9, 1,4 և 1 տոկոսը:


Գծապատկեր 3. 2010 թվականին պղնձի արտադրության (%-ով պաշարների նկատմամբ) և պաշարների միջև կախվածությունն ըստ երկրների



Գծապատկեր 4. 2010 թվականին մոլիբդենի արտադրության (%-ով պաշարների նկատմամբ) և պաշարների միջև կախվածությունն ըստ երկրների



Գծապատկեր 5. 2010 թվականին ոսկու արտադրության (%-ով պաշարների նկատմամբ) և պաշարների միջև կախվածությունն ըստ երկրների



Աղբյուրը՝ ԱՄՆ-ի երկրաբանական հետազոտություն, Wikipedia

Հայաստանի արտադրության կախվածությունը պաշարներից



Պաշարների արդյունավետ և խնայողաբար օգտագործումը հանդիսանում է հանք-արդյունաբերության ոլորտի հիմնական գերակայություններից մեկը

Նմանատիպ իրավիճակ է նաև ոսկու արտադրության և առկա պաշարների հետ կախվածության գծով: 2010 թվականին Հայաստանում արտադրվել է ընդհանուր պաշարների մոտ 0,5 տոկոսը (գծապատկեր 5): Մոլիբդենի տարեկան արտադրությունը եղած պաշարների նկատմամբ ավելի բարձր է և 2010 թվականի համար կազմել է 2,5 տոկոս (գծապատկեր 4): Ընդհանուր առմամբ, Հայաստանում 3 կարևորագույն հանքահումքային արտադրանքների գծով տարեկան արդյունահանման ծավալները՝ արտահայտված առկա պաշարների նկատմամբ տոկոսներով, աշխարհի հանքարդյունաբերող հիմնական երկրների հետ համեմատած

գտնվում են դեռևս ավելի ցածր մակարդակի վրա: Մակայն պետք է նկատի ունենալ, որ զարգացած երկրներում նոր պաշարների հետախուզական աշխատանքներն առավել մեծ ծավալներով են իրականացվում, ինչը այդ երկրներին թույլ է տալիս պարբերաբար ավելացնել գոյություն ունեցող պաշարները: Մինչդեռ Հայաստանում, պայմանավորված նաև տարածքի փոքր լինելու հանգամանքով, նույնիսկ երկրաբանահետախուզական լայնածավալ աշխատանքների իրականացման դեպքում հնարավոր չէ էապես ավելացնել ներկայումս առկա պաշարները: Հետևաբար, պաշարների արդյունավետ և խնայողաբար օգտագործումը հանդիսանում է ոլորտի հիմնական գերակայություններից մեկը:


### 1.3 Համաշխարհային գներ

2000-2011 թվականների ընթացքում պղնձի համաշխարհային գինը աճել է շուրջ 5 անգամ՝ 2000 թվականի 1813 ԱՄՆ դոլարից՝ 1 մետրիկ տոննայի դիմաց, 2011 թվականին դարձել է 8828 ԱՄՆ դոլար, մինչդեռ պղնձի համաշխարհային արտադրության ծավալներն ավելացել են ընդամենը 22 տոկոսով (գծապատկեր 7): Հայաստանում պղնձի խտանյութի արտադրությունը, համեմատած համաշխարհային արտադրության ծավալների փոփոխության հետ, այդ ժամանակահատվածում ավելացել է զգալիորեն՝ 2,75 անգամ (գծապատկեր 6):


Մոլիբդենի համաշխարհային գինը 2011 թվականին 2002 թվականի հետ համեմատած աճել է մոտ 4 անգամ, իսկ համաշխարհային արտադրության ծավալներն այդ ընթացքում կրկնապատկվել են (գծապատկեր 9): Հայաստանում մոլիբդենի արտադրությունը աճել է 60 տոկոսով (գծապատկեր 8):

Ոսկու համաշխարհային գինը 2011 թվականին 2000 թվականի հետ համեմատած աճել է 5,6 անգամ, իսկ համաշխարհային արտադրության ծավալներն աճել են ընդամենը 5 տոկոսով (գծապատկեր 11): Հայաստանում ոսկու արտադրության ծավալները թեև 2010 թվականին 2000 թվականի հետ համեմատած շուրջ 15 տոկոսով աճել են, սակայն այդ ցուցանիշը կազմում է 2002 թվականին գրանցված առավելագույն մակարդակի ընդամենը 30 տոկոսը (գծապատկեր 10):

Գծապարկեր 6. Պղնձի համաշխարհային գինը և արտադրությունը Հայաստանում 2000-2011 թթ.



Գծապարկեր 7. Պղնձի համաշխարհային գինը և արտադրությունը աշխարհում 2000-2011 թթ.




Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի երկրաբանական հետազոտություններ

2000-ական թվականների ընթացքում պղնձի, ոսկու և մոլիբդենի համաշխարհային գների փոփոխության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ եթե պղնձի և ոսկու գների ներկայիս մակարդակը վերջին տասնամյակի ընթացքում հասել է իր առավելագույն մակարդակին, ապա մոլիբդենի գների առավելագույն մակարդակը գրանցվել է 2005 թվականին, իսկ 2011 թվականին գրանցված գները այդ առավելագույն գների միայն 50 տոկոսն են կազմում:


Ներկայումս, հաշվի առնելով ձևավորված բարձր գների մակարդակը և այն հանգամանքը, որ ընկերությունների կողմից կա մեծ հետաքրքրություն շահագործելու առավել հեռավոր և խորը հանքերը, ամբողջ աշխարհում հանքահումքի շահագործման հետազոտական և զարգացման (R&D) ծախսերի աստիճանը ավելացել է:

համաշխարհային արտադրություն

Գծապարկեր 8. Մոլիբդենի համաշխարհային գինը և արտադրությունը Հայաստանում 2002-2011 թթ.



Գծապարկեր 9. Մոլիբդենի համաշխարհային գինը և արտադրությունը աշխարհում 2002-2011 թթ.




Աղբյուրը՝ mineral.ru, ԱՄՆ-ի երկրաբանական հետազոտություններ


Ինչպիսի տենդենց կգրանցեն հանքահումքային ապրանքների համաշխարհային գները, կպահպանվեն դրանք ներկայիս բարձր մակարդակում, թե՛ կարող են գլորվել ներքև: Այս հարցի պատասխանից մեծապես կախված է՝ արդյոք շահութաբեր կլինեն ընթացիկ հանքարդյունաբերության ծրագրերը Հայաստանում: Ցավոք անվիճելի պատասխան այստեղ գոյություն չունի:

Մի կողմից, անժխտելի է, որ զարգացող շուկաները շարժվում են դեպի ինդուստրացում: Պահանջարկը Չինաստանում, Հնդկաստանում և նույնիսկ աֆրիկյան երկրներում աճում է գլխապտույտ արագությամբ, և երկարաժամկետ կանխատեսումները կարծես մատնանշում են, որ տասնամյակների համար աճող պահանջարկ է ձևավորվել: Միայն Չինաստանի պահանջարկը պղնձի համաշխարհային պահանջարկի 37 և ալյումինի համաշխարհային պահանջարկի 44 տոկոսն է կազմում, ինչը գերազանցում է ԱՄՆ-ի, Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի ընդհանուր սպառման մակարդակը:

Գծապատկեր 10. Ոսկու համաշխարհային գինը և արտադրությունը Հայաստանում 2000-2011 թթ.



Գծապատկեր 11. Ոսկու համաշխարհային գինը և արտադրությունը աշխարհում 2000-2011 թթ.




Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի երկրաբանական հետազոտություններ

Մյուս կողմից, ԱՄՆ-ում ներքին սպառման կրճատումը, եվրոպական պարտատոմսերի անկայուն շուկան, քաղաքական անկայունությունը և աճող տոկոսադրույքներն Ասիայում, շարունակում են զսպել ապրանքների գների աճը՝ մղելով նրանց դեպի անկայունության աննախադեպ մակարդակի: Ապրանքների առևտուրը և շահարկումը նմանապես պատճառ են հանդիսանում իրական ֆիզիկական առաջարկի և պահանջարկի միջև կարճաժամկետ սխալ գնագոյացումների՝ դրանով իսկ դժվարացնելով գների կանխատեսման նույնիսկ ամենալուրջ փորձերը: Ջարմանալի չէ, որ ոլորտին հետևողները հաճախակի են կանգնում փակուղու առաջ: Նման բարձր անորոշության շուկայական միջավայրում տեղեկացված որոշումներ կայացնելը պահանջում է կանխատեսման այնպիսի մակարդակ, որը շատ ընկերությունների համար հասանելի չէ: Չնայած սցենարների պլանավորման հնարավորություններին, հանքարդյունաբերական ընկերությունները չեն կարող հաշվի առնել և ընդգրկել բոլոր նախազգուշական միջոցները հնարավոր ապագայի համար:



Գծապատկեր 12. Ոսկու և պղնձի համաշխարհային գների համեմատությունը Հայաստան ներմուծվող առանձին կարևորագույն ապրանքատեսակների համաշխարհային գների հետ 2000-2011 թթ. (2000=100%)



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ

Ամփոփելով հանքահումքային արտադրատեսակների համաշխարհային գների՝ Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի համար ունեցած նշանակության մասին ասելիքը, կարևոր է մատնանշել, որ դրանք 2000-ական թվականներին, նույնիսկ խիստ տատանումների պայմաններում, դրական ազդեցություն են ունեցել ոլորտի զարգացման և արտադրության ծավալների մեծացման վրա: Ավելին, եթե փորձենք դիտարկել դրանց ամբողջական ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա արտաքին առևտրի տեսանկյունից, ապա ինչպես նկատելի է դառնում գծապատկեր 12-ից, այն ընդհանուր առմամբ շատ ավելի բարենպաստ է եղել, քանի որ արտահանված պղնձի և ոսկու համաշխարհային գները գտնվել են ավելի բարձր մակարդակի վրա, քան մի քանի կարևոր ներմուծվող ապրանքատեսակների (նավթ, գազ, հացահատիկ և տավարի միս) գները:

### 1.4. Ներդրումներ


Հանքարդյունաբերության ոլորտում կապիտալ ներդրումներն էական դեր են խաղում հանքարդյունահանման արդյունավետության և արտադրողականության բարձրացման տեսանկյունից: Ինչպես պատկերված է գծապատկեր 13-ում, աշխարհում 20 տարի գործող պղնձի հանքագործական միջին չափի ընկերությունն իր եկամտի 1/5-ի հաշվին իրականացնում է կապիտալ ծախսեր: Հայաստանում ոլորտի կտրվածքով նման ցուցանիշ չի հրապարակվում և այն ըստ առանձին տարիների համար խիստ տարբեր է: 2006-2008 թվականների համար ըստ գնահատականների<sup>2</sup> այն զգալիորեն ցածր է՝ հա-

<sup>2</sup> Գնահատականի համար հիմք է հանդիսացել այլ ծախսերի տեսակարար կշիռը, որը 2006-2008 թթ. համար կազմել է մոտ 18 տոկոս (գծապատկեր 14): Բացի կապիտալ ծախսերից այլ ծախսերում ընդգրկված են տրանսպորտային, ներկայացուցչական ծախսերը, բնապահպանական վճարները:




մեմատած աշխարհում 20 տարի գործող պղնձի հանքագործական միջին չափի ընկերությունների հետ:

Գծապատկեր 13. 20 տարի գործող միջին չափի պղնձի հանքագործական ընկերության եկամուտների կառուցվածքը (%)



Գծապատկեր 14. Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի համախառն եկամտի գնահատականը 2006-2008 թթ. (%)



Աղբյուրը՝ գնահատականներ հիմնված ԱՎԾ-ի տվյալների հիման վրա, «Հարկման և ներդրումների հիմնախնդիրները հանքարդյունաբերությունում», OECD




Համաձայն ՄԱԿ-ի և Համաշխարհային բանկի կողմից կատարված հետազոտությունների<sup>3</sup> արդյունքների՝ հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների կողմից ներդրումներ կատարելու վերաբերյալ որոշումներ ընդունելու վրա ազդող 10 հիմնական չափանիշներն են՝

1. Տվյալ հանքահումքի երկրաբանական պոտենցիալը
2. Հավանական գործունեության շահութաբերությունը
3. Իրավական երաշխիքները և թույլտվությունը
4. Շահույթի հայրենադարձության (repatriation) հնարավորությունը
5. Հանքահումքի ոլորտում քաղաքականության շարունակականությունը
6. Արտարժույթի իրական վերահսկումը
7. Շահագործման պայմանների և ժամկետների կայունությունը
8. Շրջակա միջավայրի գծով պարտավորությունները նախապես որոշելու հնարավորությունը
9. հարկային պարտավորությունները նախապես որոշելու հնարավորությունը
10. Հարկային ռեժիմի կայունությունը:

Ընդ որում, մասնագետները եկել են այն եզրակացության, որ ներդրողների համար հատկապես առանցքային երեք գործոններ են հանդիսանում՝ իրավական երաշխիքները և թույլտվությունը, շահագործման պայմանների և ժամկետների կայունությունը, շահույթի ռեպատրիացիայի հնարավորությունը:

Հանքարդյունաբերության ոլորտին Հայաստանի առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկային միջոցները մինչև 2008 թվականը շատ մեծ չեն եղել (գծապատկեր 15): Ինչպես երևում է գծապատկերից, ստացված վարկերի ծավալների 2 մեծ թռիչքներ տեղի են ունեցել 2008 և 2011 թվականներին: Եթե առաջինը պայմանավորված էր համաշխարհային տնտեսական ճգնաժամի շրջանում այդ ձեռնարկությունների կողմից ճգնաժամի հետևանքները մեղմելու միջոցառումներով, ապա երկրորդ կտրուկ աճը, որը տեղի է ունեցել 2011 թվականին, ավելի շուտ պայմանավորված է ընկերությունների գործունեության ծավալների ընդլայնման, նոր հանքերի շահագործման մտադրությունների հետ:

Գծապատկեր 15. Հանքարդյունաբերությանը տրամադրված վարկերի պաշարները տարեվերջի դրությամբ 2004-2011 թթ.



Աղբյուրը՝ ԿԲ

<sup>3</sup> 45 ընկերությունների ՄԱԿ-ի հետազոտություն, հեղինակ Օտտո, 2005 թվական:

Բացի առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերից, հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանը խթանելու նպատակով 2009 թվականին ՀՀ կառավարությունը, հակաճգնաժամային միջոցառումների իրականացման շրջանակներում, ոլորտի 4 ձեռնարկությունների<sup>4</sup> ընդհանուր 54 մլն. ԱՄՆ դոլար գումարի չափով տրամադրել է բյուջետային վարկավորում՝ Լիբոր +6-ից +8 տոկոսադրույքներով: Նշված միջոցների հաշվին ձեռնարկություններն իրականացրել են ինչպես շրջանառու միջոցների համալրում, այնպես էլ տեխնիկական վերագինում և ներկայումս նրանք ամբողջությամբ մարել են պետության կողմից տրամադրված վարկերը:

Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում զգալի դեր են խաղում օտարերկրյա ներդրումները: 2002-2010 թթ. ընթացքում ոլորտում կատարվել են 390 մլն. ԱՄՆ դոլարի ընդհանուր ծավալով կամ տարեկան միջին հաշվով 43 մլն. ԱՄՆ դոլարի օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ), որի հիմնական բաժինը՝ շուրջ 3/4-ը, իրականացվել է միայն 2004-2007 թթ. ընթացքում (աղյուսակ 1): Ընդհանուր ՕՈՒՆ-ի 77,5 տոկոսը կատարվել է միայն Գերմանիայի կողմից: Բացի Գերմանիայից ՕՈՒՆ-երի հոսքեր են ներգրավվել Կանադայից, Կիպրոսից, Ավստրալիայից և Շվեյցարիայից:

Աղյուսակ 1: Օտարերկրյա ուղղակի ներդրումները հանքարդյունաբերությունում, մլն. ԱՄՆ դոլար

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Մետաղական հանքաքարի արդյունահանում	3,1	12,2	3,4	0,9	17,9	18,4	0,0	0,0	0,0
Հանքարդյունաբերության և բաց հանքերի շահագործման այլ ճյուղեր	0,2	0,0	39,6	97,5	48,1	62,5	33,8	20,9	32,3
Ընդամենը ՕՈՒՆ	141,0	217,7	235,2	303,7	436,7	675,3	1 118,4	828,7	483,0
Հանքարդյունաբերությունում ՕՈՒՆ-ը %-ով ընդամենը ՕՈՒՆ-ի նկատմամբ	2,4	5,6	18,3	32,4	15,1	12,0	3,0	2,5	6,7

Աղբյուրը՝ ԱՊԾ


2006-2010 թվականների կտրվածքով, հանքարդյունաբերության ոլորտում կատարված օտարերկրյա ներդրումների՝ ընդամենը ՕՈՒՆ-երի մեջ ունեցած տեսակարար կշիռներով Հայաստանը ընդհանուր առմամբ զգալիորեն զիջում է այդ ոլորտում առաջատար դիրքեր ունեցող երկրներին, ինչպիսիք են Ավստրալիան և Չիլին (գծապատկեր 16):

Չիլիում, որը 2011 թվականի տվյալներով արտադրում է համաշխարհային պղնձի ավելի քան 1/3-ը, հանքարդյունաբերության ոլորտում գործող 5 խոշոր ընկերություններից պետական է միայն մեկը՝ Codelco-ն: Մնացած 4 ընկերությունները մասնավոր ընկերություններ են, որոնցից Antofagasta-ն գնանշված է Լոնդոնի, իսկ Sociedad Quimica y Minera-ն՝ Նյու Յորքի բորսայում:

<sup>4</sup> ՀՀ կառավարության 2009 թ. փետրվարի 19-ի թիվ 147-Ա և հունիսի 26-ի թիվ 719-Ա որոշումներով բյուջետային վարկավորում է տրամադրվել Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ-ին՝ 10 մլն. ԱՄՆ դոլարի, Ջանգեզուր մայրիկ ՍՊԸ-ին՝ 15 մլն. ԱՄՆ դոլարի, Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն ՍՊԸ-ին 15 մլն. ԱՄՆ-ի դոլարի և Ագարակի պղնձ-մոլիբդենային կոմբինատ ՓԲԸ-ին 14 մլն. ԱՄՆ-ի դոլարի չափով:



Գծապատկեր 16. Հանքարդյունաբերությունում օտարերկրյա ուղղակի ներդրումների տեսակարար կշիռը ամբողջ տնտեսության ՕՌՆ-երի նկատմամբ 2006-2010 թթ. (%)



Աղբյուրը՝ ԱՎԾ, Տնտեսական Համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)

Մեքսիկայում հանքարդյունաբերության ոլորտում գործող 7 խոշոր ընկերություններից պետական է միայն մեկը, մնացած ընկերությունները մասնավոր են և դրանց հիմնական մասի բաժնետոմսերի որոշակի մասը վաճառվում է Մեքսիկայի կամ Լոնդոնի բորսաներում:

Միջազգային բորսաներում հանքարդյունաբերական ընկերությունների բաժնետոմսերի որոշակի մասի գնանշումը բացի պորտֆելային միջոցների ներգրավման հնարավորությունների մեծացումից, կարող է մեծապես նպաստել այլ երկրներում Հայաստանի ընկերությունների ճանաչմանը, տնտեսական կապերի ստեղծմանը և ուղղակի օտարերկրյա ներդրումների հոսքերի ավելացմանը:

Աշխարհում հանքարդյունաբերության ոլորտում ներդրողների կողմից գրավչության գնահատման տեսանկյունից գոյություն ունեն նաև մի շարք հրապարկումներ որոնք ներկայացնում են հիմնական երկրների համեմատական գնահատականները: Դրանցից առավել հեղինակավորների համառոտ նկարագրությունը ներկայացվում է ստորև:

**Behre Dolbear**-ը հանքահումքային արդյունաբերության ոլորտում նշանավոր խորհրդատվական ընկերություն է, որը ավելի քան 10 տարի հրապարակում է հանքարդյունաբերության գրավչության տեսանկյունից առանձին երկրների<sup>5</sup> գնահատականները: Այդ գնահատումները որակական են և հիմնված են «Որտեղ կցանկանայիք ներդրումներ կատարել» հարցի պատասխանների արդյունքների հիման վրա: 25 երկրների համար կատարված հարցումների համար ընտրվում են տվյալ երկրի համար հետևալ 7 չափանիշները.

- տնտեսական համակարգը
- քաղաքական համակարգը
- սոցիալական հիմնախնդիրների վրա հանքարդյունաբերության ազդեցության աստիճանը
- թույլտվություն ստանալու ժամկետները
- կոռուպցիայի աստիճանը
- դրամական միավորի փոխարժեքի կայունությունը
- հարկային ռեժիմը

Համաձայն 2011 թվականի գնահատականների 1-6 տեղերը զբաղեցրել են Ավստրալիան, Կանադան, Չինի, Բրազիլիան, Մեքսիկան և ԱՄՆ-ը:

<sup>5</sup> Behre Dolbear-ի կողմից ընտրված են այն երկրները, որոնք համարվել են կարևոր հանքարդյունաբերության ոլորտում

**Fraser Institute**-ը կանադական ինստիտուտ է և հարցումների արդյունքների հիման վրա հրապարակում է *Policy Potential Index* (PPI), որը վեր է հանում կառավարությունների քաղաքականության գնահատման գրավչությունը:

PPI-ն ամփոփ ինդեքս է, որը գնահատում է կառավարությունների կողմից իրականացվող քաղաքականությունների հետևանքները՝ ներառելով վարչարարության հետ կապված անորոշությունները, գոյություն ունեցող օրենսդրությունների հարկադրումը, շրջակա միջավայրի կարգավորումները, կարգավորման կրկնօրինակումները և անհամապատասխանությունները, հարկումը, անորոշությունը հողային պահանջների և հատուկ պահպանվող տարածքների հետ, ենթակառուցվածքները, սոցիալ տնտեսական համաձայնագրերը, քաղաքական կայունությունը, աշխատանքի հիմնախնդիրները, երկրաբանական տվյալների բազան և անվտանգությունը:

Համաձայն 2011 թվականի գնահատականների, ամենաբարձր վարկանիշներ ունեն ԱՄՆ-ի, Կանադայի, Ավստրալիայի մի շարք նահանգները, իսկ առանձին երկրներից՝ Ֆինլանդիան, Շվեդիան և Չիլին:

**Resourcestocks magazine**-ի կողմից հրապարակվող «Համաշխարհային ռիսկի հետազոտությունը» ընդգրկում է ռիսկայնությունը հետևալ 11 ոլորտներում

- ֆինանսական ռիսկ
- սուվերենության ռիսկ
- ընդերքի թույլտվություն
- կանաչ գոտիներ
- հողային պահանջ
- կարմիր գոտիներ
- սոցիալական ռիսկ
- ենթակառուցվածք
- քաղաքացիական անկարգություն
- բնական աղետներ
- աշխատանքային հարաբերություններ

2011 թվականի «Համաշխարհային ռիսկի հետազոտության» արդյունքների համաձայն, հանքարդյունաբերության համար ամենագրավիչ երկրների ցանկը գլխավորել են Ֆինլանդիան, Չիլին, Բուրկինա Ֆասոն, Բոտսվանան, Շվեդիան, ԱՄՆ-ը, Ավստրալիան, Բրազիլիան, Կանադան և Արգենտինան:

Ներկայումս Հայաստանը վերոհիշյալ հրապարակումներում ընդգրկված չէ, սակայն կարելի է քննարկել նշված հաստատություններին անդամակցելու հնարավորությունները, հեռանկարները, պայմանները, առավելությունները և նպատակահարմարությունը:

## 1.5 Արտահանում


Հանքարդյունաբերության կենսական նշանակությունը Հայաստանի տնտեսության համար հատկապես արտահայտվում է արտահանման ծավալներում այդ ոլորտի ունեցած զգալի մասնակցությամբ: Ի տարբերություն ՀՆԱ-ում ունեցած մասնաբաժնի, հանքարդյունաբերությունը մեծ կշիռ ունի արտահանման ծավալներում:

Հանքարդյունաբերության հիմնական արտադրատեսակների<sup>6</sup> գծով արտահանման ծավալները և ընդհանուր արտահանման ծավալներում դրանց ունեցած տեսակարար կշիռ-

<sup>6</sup> Հաշվարկները իրականացվել է ԱՎԾ արտաքին առևտրի 4-նիշ հրապարակումների տվյալների հիման վրա հետևյալ 6 ապրանքատեսակների գծով՝ պղնձի հանքաքար և խտանյութ, ցինկի հանքաքար և խտանյութ, մոլիբդենի հանքաքար և խտանյութ, անմշակ կամ կիսամշակ ոսկի, փոշի, չգտված պղինձ, մոլիբդեն և ապրանքներ մոլիբդենից:

ների դինամիկան 2000-2011 թվականների ընթացքում պատկերված է գծապատկեր 17-ում: Ինչպես երևում է գծապատկերից, հանքարդյունաբերության արտադրանքի արտահանումը 2000 թվականի 29 մլն. ԱՄՆ դոլարից 2011 թվականին կազմել է ավելի քան 483 մլն. ԱՄՆ դոլար, որը բնութագրվում է նաև այդ արտադրատեսակների ընդհանուր արտահանման ծավալներում ունեցած 10 տոկոսից մինչև 36 տոկոս պարուրաձև աճով: Հաշվի առնելով նաև տեղական հումքի հաշվին արտադրվող երկաթի միահավաձքի և ոսկերչական իրերի արտահանումը, ապա ստացվում է, որ այդ ոլորտի կողմից ուղղակիորեն և անուղղակիորեն արտահանվում է ամբողջ արտահանման գրեթե կեսը:

Գծապատկեր 17. Հանքարդյունաբերության արտահանման գնահատականները 2000-2011 թթ.




Աղբյուրը՝ հաշվարկներ հիմնված ԱՎԾ տվյալների հիման վրա

Հայաստանում հանքարդյունաբերական արտադրանքի արտահանման գների և համաշխարհային գների համեմատությունը 2000-2011 թվականներին ցույց է տալիս, որ զգալիորեն նվազել են դրանց միջև առկա տարբերությունները: Օրինակ, պղնձի հանքաքարի և խտանյութի համար համաշխարհային գնի և արտահանման գնի հարաբերակցությունը 2000 թվականի 7,5 անգամից 2011 թվականին կազմել է 4 անգամ: Սա պայմանավորված է հիմնականում արտադրատեսակի որակի բարձրացման արդյունքում ավելի թանկարժեք պղնձի խտանյութի արտադրության և արտահանման հանգամանքով, ինչպես նաև մասնակիորեն այն պատճառով, որ ձեռնարկությունները կարողացել են ավելի շահավետ գներով կատարել արտահանումը: Համաձայն արտաքին առևտրի վիճակագրական տվյալների, աշխարհում պղնձի հիմնական արտահանող երկրներում պղնձի խտանյութի արտահանման ամենաբարձր գները գրանցվել են ԱՄՆ-ում, Կանադայում և Ավստրալիայում (գծապատկեր 18),

ինչը ակնհայտորեն պայմանավորված է այդ երկրներում հանքարդյունաբերության ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների և արտադրության առաջավոր մեթոդների կիրառման արդյունքում առավել բարձր որակի պղնձի խտանյութի արտադրության հանգամանքով: Հայաստանը պղնձի խտանյութի արտահանման գներով զգալիորեն զիջում է առաջատար երկրներին, բայց որոշակիորեն գերազանցում է Ռուսաստանին, Ղազախստանին և Վրաստանին:

Գծապատկեր 18. Պղնձի խտանյութի արտահանման գները մի շարք երկրներում 2001-2011 թթ. (ԱՄՆ դոլար/տոննա)



Աղբյուրը՝ ՄԱԿ-ի և ԱՀԿ-ի արտաքին առևտրի վիճակագրություն

Հայաստանում առկա է զգալի պոտենցիալ պղնձի խտանյութում մետաղի արդյունաբերական կորզման արդյունավետության հետագա բարձրացման, ինչպես նաև պղնձի և պղնձե իրերի արտադրության կազմակերպման համար, որի արդյունքում հնարավոր կլինի նվազեցնել ներկայումս դրանց ներմուծումը և ավելացնել արտահանումը՝ ի հաշիվ առավել բարձր արժեքային ապրանքատեսակների արտահանման:

Քանի որ Ալավերդի քաղաքում գործող պղնձաձուլարանը աշխատում է հին և մաշված տեխնոլոգիաներով, ինչպես նաև բնապահպանության տեսանկյունից վիճահարույց է, շատ կարևոր է հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցված և էկոլոգիապես մաքուր գործարանի կառուցումը: Բացի, առնվազն, 100 մլն. դոլար ֆինանսական զգալի ներդրումների անհրաժեշտությունից, կա նաև երկու տեխնիկական լուրջ հիմնախնդիր՝ կապված պահանջվող նվազագույն արտադրական հզորության և պղնձի արտադրության ընթացքում ծծմբաթթվի արտահանման խնդրի հետ:

Մակայն, որպես այլընտրանքային տարբերակ, 2011 թվականից սկսած Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը բանակցություններ է սկսել ֆինանսական ընկերության հետ՝ վերջին տարիներին Ֆինլանդիայում մշակված փոքր պղնձաձուլարանների կառուցման տեխնոլոգիաների հիման վրա Հայաստանում գործարկել փոքր հզորությամբ պղնձաձուլարան:



Ներկայումս քննարկման և զարգացման փուլերում են գտնվում նաև մի շարք ծրագրեր (ևոր հանքերի շահագործման կամ հին հանքերի վերաբացման), որոնց հաջող իրականացումը կնպաստի պղնձի արդյունաբերության հետագա զարգացմանը Հայաստանում:

## 1.6 Հարկեր

Հանքարդյունաբերության ոլորտի<sup>7</sup> կողմից 2005–2011 թթ. ընթացքում Հայաստանի պետական բյուջե վճարված հարկերի և պարտադիր սոցիալական վճարների ընդհանուր ծավալների մասին վիճակագրական տվյալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

*Աղյուսակ 2: Հանքարդյունաբերության ձեռնարկությունների կողմից վճարված հարկերի և սոցալ վճարումների մլն. ԱՄՆ դոլար*

	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Ընդամենը հարկեր	75,0	88,4	116,8	67,0	28,7	54,7	107,9
Պարտադիր սոցալ վճարներ	-	4,6	6,7	8,7	4,6	4,2	7,5

Աղբյուրը՝ հաշվարկներ կատարված Պետական եկամուտների կոմիտեի տվյալների հիման վրա

Ինչպես երևում է աղյուսակից, պետական բյուջե վճարված հարկերի ամենացածր մակարդակը գրանցվել է 2009 թվականին, որը հիմնականում պայմանավորված էր այդ տարվա ընթացքում մոլիբդենի համաշխարհային գների կտրուկ անկման գործոնով:

Միաժամանակ, առանձին հարկատեսակների գծով կատարված վճարումների վերլուծությունը (աղյուսակ 3) ցույց է տալիս, որ հարկային վճարումների կտրուկ նվազումը, որը սկսվել էր դեռևս 2008 թվականին, պայմանավորված էր այդ տարվա ընթացքում ավելացված արժեքի հարկի էական նվազմամբ՝ շուրջ 50 մլն. ԱՄՆ դոլարի չափով, համեմատած 2007 թվականի մակարդակի հետ: Քանի որ հանքարդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի գերակշիռ մասն արտահանվում է Հայաստանից, միայն ԱԱՀ հարկի դինամիկայի վերլուծությունը չի կարող ներկայացնել ամբողջական իրավիճակը՝ պայմանավորված ԱԱՀ-ի մատով հնարավոր գերավճարների առաջացման հանգամանքով:

*Աղյուսակ 3: Հանքարդյունաբերության ձեռնարկությունների կողմից վճարված հարկատեսակները, մլն. ԱՄՆ դոլար*


	2006	2007	2008	2009	2010
Ընդամենը հարկեր, որից՝	88,4	116,8	67,0	28,7	54,7
ԱԱՀ	31,1	63,3	14,5	10,6	18,1
Շահութահարկ	45,1	35,4	24,4	5,2	14,0
Եկամտահարկ	3,0	6,4	6,1	4,6	5,9
Այլ հարկեր	9,2	11,7	22,0	8,4	16,6

Աղբյուրը՝ հաշվարկներ կատարված Պետական եկամուտների կոմիտեի տվյալների հիման վրա

<sup>7</sup> Հաշվարկները կատարվել են ոլորտի 7 ձեռնարկությունների՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ, Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն ՍՊԸ, Ագարակի պղնձ-մոլիբդենային կոմբինատ ՓԲԸ, Գեո Պրո Մայնինգ Գոլդ ՍՊԸ, Արմենիան Քափրո Փրոդրամ ՓԲԸ, Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի ՓԲԸ, Այսթալայի լեռնահարստացման կոմբինատ ՓԲԸ համար:



Գծապատկեր 19. Հանքարդյունաբերության ոլորտի կողմից վճարված հարկերի գնահատականը 2005-2011 թթ.



Աղբյուրը՝ հաշվարկներ կատարված՝ Պետական եկամուտների կոմիտեի տվյալների հիման վրա

Հանքարդյունաբերության ձեռնարկությունների կողմից պետական բյուջե կատարված վճարումներից բացի, կարևոր ցուցանիշ է համարվում այդ ոլորտում արդյունավետ հարկադրույքի մեծությունը: Արդյունավետ հարկադրույքը հաշվարկվում է որպես փաստացի վճարված ընդամենը հարկերի և համախառն եկամուտների (կամ առանձին դեպքերում նաև համախառն շահույթի) հարաբերակցություն: Հանքարդյունաբերության գործունեության հարկումը պետական քաղաքականության շատ կարևոր հիմնախնդիր է, որը բարձրացնում է ազգային բնական կապիտալի շահագործման արդարության հարցերը: Ոլորտի բազմազանության հետևանքով հնարավոր չէ առանձնացնել որևէ երկրի օպտիմալ հարկային համակարգ Հայաստանի համար որպես մոդել օգտագործելու նպատակով, բայց գոյություն ունեն որոշակի համընդհանուր բնութագրեր, որոնց պետք է պետությունն առավել մեծ ուշադրություն դարձնի այդ ոլորտում հարկային բեռի օպտիմալ մակարդակը սահմանելիս: Դրանք են՝


- արդյոք վճարումները հասարակությանը համարժեք են
- արդյոք ներդրողները ստանում են արդար փոխհատուցում
- արդյոք համակարգը մրցունակ է այլ երկրների հետ:

Համաձայն Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի հիշատակված հետազոտությունների՝ արդյունավետ հարկի տոկոսադրույքի (հաշվարկված որպես պետությանը վճարված բոլոր հարկերի և համախառն շահույթի հարաբերություն) իդեալական սահմանը գնահատվել է 40-50 տոկոսի սահմաններում: Ընդհանուր առմամբ երկրները բաժանվել են 3 խմբի: Առաջին խմբում են այն երկրները, որոնցում արդյունավետ հարկի դրույքը կազմում է 25-ից 40 տոկոս: Ըստ հերթականության, այդ երկրների ցանկում են հայտնվել՝ Շվեդիան, Ավստրալիայի հարավային մասը, Չիլին, Զիմբաբվեն և Արգենտինան:

Արդյունավետ հարկման իդեալական սանդղակի ցանկում տեղ են զբաղեցրել Չինաստանը, Պապուա Գվինեան, Բոլիվիան, Հարավաֆրիկյան Հանրապետությունը, Ֆիլիպինները, Ղազախստանը, Ինդոնեզիան, Պերուն, Տանզանիան, Լեհաստանը, Մեքսիկան, ԱՄՆ-ի Արիզոնա նահանգը: Եվ երրորդ խմբում ընդգրկված են այն երկրները, որտեղ արդյունավետ հարկի դրույքը ավելի բարձր է իդեալական հարկի դրույքի մակարդակից: Այդ երկրներն են Գրենլանդիան, Գվինեան, Գանան, Մոնդոլիան, Կոտ դ'Իվուարը, Ուգբեկստանը: Հայաստանը 2005-2006 թվականների համար՝ համաձայն վիճակագրական տվյալների հիման վրա կատարված գնահատականների, արդյունավետ հարկման միջին ցուցանիշով, գտնվում է երրորդ՝ 50 տոկոսից բարձր երկրների խմբում:

Արդյունավետ հարկի մեկ այլ ցուցանիշի (հաշվարկված որպես պետությանը վճարված բոլոր հարկերի և համախառն հասույթի հարաբերություն) դինամիկան (գծապատկեր 20)<sup>8</sup> հաշվարկված վերջին 6 տարիների համար, ցույց է տալիս, որ 2008 և 2009 թվականներին զգալիորեն նվազել են: Ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2007 թվականին և կազմել է 26,2 տոկոս:

Գծապատկեր 20. Արդյունավետ հարկադրույքի գնահատականը հանքարդյունաբերությունում 2006-2011 թթ.



Աղբյուրը՝ հաշվարկներ կատարված՝ Պետական եկամուտների կոմիտեի հիման վրա

Արդյունավետ հարկադրույքի կայուն և առավելագույն մակարդակ ապահովելու համար պետության առաջնային խնդիր են համարվում հանքարդյունաբերության ոլորտում հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները: 2011 թվականի դեկտեմբերին կատարված կողմից ընդունվել է որոշում<sup>8</sup> այդ ոլորտի 4 խոշոր ձեռնարկություններում հարկային մարմնի ներկայացուցիչներ նշանակելու վերաբերյալ:

Հաշվի առնելով միջազգային շուկաներում հանքահումքային արտադրանքի խիստ անկայունությունը, պետական բյուջեում հանքարդյունաբերության ոլորտից ստացված եկամուտների պլանավորումը, կանխատեսումը չափազանց բարդ խնդիր է հանդիսանում, և հնարավոր են զգալի շեղումներ նախատեսվածից, ինչը մասնավորապես համաշխարհային

<sup>8</sup> ՀՀ կառավարության «Հարկային մարմնի ներկայացուցիչ նշանակելու ենթակա հարկ վճարողների՝ 2012 թվականի ցանկը հաստատելու մասին» 2011 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1834-Ն որոշմամբ հարկային մարմնի ներկայացուցիչներ են նշանակվել Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ-ում, Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ ՓԲԸ-ում, Գեո Պրո Սայնինգ Գոլդ ՍՊԸ-ում, Դինո Գոլդ Սայնինգ Քամինի ՓԲԸ-ում:

գների զգալի նվազման դեպքում կարող է բացասաբար անդրադառնալ պետական բյուջեի ծախսային մասի կատարման վրա: Հետևաբար, նպատակահարմար է պետական բյուջեում կանխատեսումների համար կիրառել համաշխարհային գների կանխատեսված առավել ցածր, պահպանողական սցենարները:

## 1.7 Զբաղվածություն և աշխատավարձեր

Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում 2010 թվականի դրությամբ գործում են 62 ձեռնարկություններ, որոնցից 7-ը մետաղական հանքաքարի արդյունահանման և 55-ը հանքարդյունաբերության և բաց հանքերի շահագործման այլ ճյուղերում: Բոլոր ձեռնարկություններն իրենց կազմակերպական իրավական ձևով ոչ պետական ձեռնարկություններ են:

Ընդհանուր առմամբ հանքարդյունաբերության ոլորտում 2002-2010 թթ. ընթացքում զբաղված են եղել միջին հաշվով 7,7 հազ. աշխատողներ (աղյուսակ 4), որոնք կազմել են ամբողջ տնտեսությունում զբաղվածների 0,7 տոկոսը: Հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների քանակը շատ փոքր է ընդհանուր զբաղվածների մեջ, սակայն այդ ոլորտի հետագա զարգացումը կարող է նպաստել հարակից ճյուղերում՝ մասնավորապես տրանսպորտի, մետաղագործական արդյունաբերության և շինարարության ոլորտներում տնտեսական ակտիվության և զբաղվածության մեծացմանը:

Աղյուսակ 4: Զբաղվածության և աշխատավարձերի դինամիկան հանքարդյունաբերությունում 2002-2010 թթ.

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Զբաղվածներն հանքարդ., հազ. մարդ	7,9	8,2	6,9	7,0	7,6	8,6	8,3	7,3	7,6
Ընդամենը զբաղվածներ, հազ. մարդ	1 106,4	1 107,6	1 081,7	1 097,8	092,4 <sup>1</sup>	1 101,5	1 117,6	089,4 <sup>1</sup>	1 104,8
Միջին ամսական աշխատավարձը հանքարդ., ԱՄՆ դոլար	102,1	152,6	180,6	233,2	308,3	469,2	593,1	484,4	580,9
Միջին ամսական աշխատավարձը տնտեսությունում, ԱՄՆ դոլար	47,7	60,1	81,4	113,7	149,7	217,0	285,7	264,3	274,7

Աղբյուր՝ ԱՎԾ

Նոր պղնձաձուլարանի կառուցումը, բացի արտահանման ծավալների մեծացմանը նպաստելուց, կարող է ավելացնել նաև զբաղվածությունը հարակից ոլորտներում: Մասնավորապես, նոր պղնձաձուլարան կառուցելու անմիջական արժեզրկայում ընդգրկված 7 ձեռնարկություններում<sup>9</sup> ներկայումս աշխատում է շուրջ 10,000 մարդ: Հաշվի առնելով, որ նոր պղնձաձուլարանի կառուցումը մուլտիպլիկացիոն ազդեցություն կունենա այդ ձեռնարկությունների արտադրական հզորությունների մեծացման վրա, ապա 10 տոկոս հնարավոր նոր աշխատատեղերի ստեղծումը միայն անմիջական արժեզրկայի ընկերություններում կկազմի 1,000 մարդ:

Հանքարդյունաբերությունում միջին ամսական անվանական աշխատավարձը՝ ԱՄՆ դոլարով արտահայտված, ամբողջ ժամանակահատվածի համար ավելի քան 2 անգամ գերազանցել է ընդամենը տնտեսությունում զբաղվածների միջին աշխատավարձի մեծությանը

<sup>9</sup> Համաձայն «Ի-Վի» Քոնսալթինգ ընկերության կողմից կատարված ուսումնասիրությունների, անմիջական արժեզրկայում ընդգրկված են՝ Գեո Դրո Մայնինգ Գոլդ ՄԳԸ-ն, Արմենիան Քափրը Փրոգրամ ՓԲԸ-ն, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ-ն, Ալյալայի լեռնահարստացման կոմբինատ ՓԲԸ-ն, Գաջ ՓԲԸ-ն, Երևանկարել ՄԳԸ-ն և Հարավկովկասյան երկաթուղի ՓԲԸ-ն:

(աղյուսակ 4) և այդ ցուցանիշով ավելի բարձր է քան Ավստրալիայում և ԱՄՆ-ում՝ որտեղ հանքարդյունաբերության աշխատավարձը գերազանցում է տնտեսության միջին աշխատավարձի մեծությանը համապատասխանաբար 1,7 և 1,5 անգամ: Ընդհանուր առմամբ աշխատավարձի ծախսերը ինքնարժեքում թեև 2010 թվականին 2004 թվականի նկատմամբ աճել են, բայց դրանց տեսակարար կշիռները ցածր են եղել 2005–2007 թվականներին, որը կապված է եղել այդ տարիներին նյութական ծախսերի տեսակարար կշիռների ավելացման հետ (աղյուսակ 5):

**Աղյուսակ 5: Հանքարդյունաբերության ոլորտում<sup>10</sup> արտադրանքի (սպրանքների, ծառայությունների) արտադրության ծախսերի տեսակարար կշիռները, %**

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	04-10 միջին
Նյութական ծախսեր	42,3	59,4	59,6	56,6	42,4	41,4	43,5	49,3
Աշխատանքի վարձատրության ծախսեր	14,8	11,1	9,5	11,0	17,0	15,8	17,0	13,7
Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	1,9	1,5	1,8	2,0	2,0	2,0	1,9	1,9
Ամորտիզացիոն հատկացումներ	12,4	5,3	4,9	5,4	14,2	17,6	15,2	10,7
Այլ ծախսեր	28,6	22,7	24,3	25,0	24,4	23,2	22,4	24,4

Աղբյուրը՝ ԱՎԾ, «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն»

Ընդհանրապես ցածր եկամուտներ ունեցող շատ երկրներում հանքարդյունաբերության ոլորտում միտում կա վճարելու շատ ավելի բարձր աշխատավարձեր քան տնտեսության մնացած ոլորտները հնարավորություն ունեն դա անելու: Դա գրավում է պետական և մասնավոր ոլորտից առավել շնորհալի մարդկանց և դրանով բացասաբար է ազդում այլ ոլորտների վրա՝ զրկելով նրանց լավագույն մասնագետներից:

Ներկայումս Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի համեմատաբար ցածր տեսակարար կշռի պատճառով այդ խնդիրը զգալի չէ, սակայն հաշվի առնելով առաջիկա տարիների համար նախատեսված ընդլայնման ծրագրերի հնարավորությունները, այն կարող է մեծանալ:

Մեկ ուրիշ հնարավոր ազդեցություն հանքարդյունաբերության ոլորտում կապված է մարդկային կապիտալի դուրս մղման հետ (*crowding out of human capital*): Պետությունները, որոնք զգալիորեն հենվում են բնական ռեսուրսների արտահանման վրա, կարող են անտեսել կրթության զարգացումը, քանի որ դրա անմիջական կարիքը այդքան էլ չի զգացվում: Ի հակադրություն, ռեսուրսներով աղքատ երկրները, ինչպիսին են Մինգապուրը, Թայվանը, Հարավային Կորեան վիթխարի միջոցներ են ներդնում կրթության զարգացման մեջ, որն էլ զգալիորեն նպաստում է այդ երկրների տնտեսական հաջողություններին: Սակայն անհրաժեշտ է նշել, որ այս տեսակետը առանձին հետազոտողներ համարում են վիճելի և ապացուցում են, որ բնական ռեսուրսները բերում են համեմատաբար հեշտ հարկային վճարներ և դրանք շատ հաճախ են ծախսվում կրթության ոլորտում:

## 1.8 Հետևություններ

Կարևորագույն հիմնախնդիրը, որը ներկայումս ծառայում է Հայաստանի առաջ, հանքարդյունաբերությունից ստացված եկամուտների արդյունավետ կառավարման հիմնախնդիրն է, որի նպատակն է հաջողությամբ հաղթահարել կարճաժամկետ հեռանկա-

<sup>10</sup> ԱՎԾ-ի կողմից հաշվարկվել է ընտրանքային մեթոդով ընդգրկված կազմակերպությունների համար և տարածվել է ամբողջ ոլորտի վրա

րում միջազգային շուկաներում հնարավոր գնային բացասական ցնցումները և երկարա-  
ժամկետ հեռանկարում թույլ չտալ տնտեսության և կենսամակարդակի անկում, երբ այդ  
պաշարները ամբողջությամբ կամ զգալիորեն կսպառվեն: Ըստ էության, այս հիմնախն-  
դիրը իրենից ներկայացնում է սպառման և ինվեստիցիաների ճիշտ հարաբերակցության  
ընտրության անհրաժեշտություն: Աշխարհում շատ տարածված է նաև այն տեսակետը,  
որ թույլատրելի չէ, որպեսզի ներկայիս սերունդը ամբողջությամբ արդյունահանի տվյալ  
երկրի բոլոր հանքային պաշարները և դրանով իսկ հնարավորություն չտա գալիք սե-  
րունդներին նույնպես զբաղվելու հանքարդյունաբերությամբ: Այդ պատճառով մասնա-  
գետները գտնում են, որ եթե ներկա սերունդը օգտագործում է եկամուտները՝ ստեղծե-  
լով արդյունավետ կապիտալ, ապա դա կլինի օգտակար նաև ապագա սերունդների հա-  
մար: Կասկածից վեր է, որ ապագա սերունդները կունենան առավել կատարելագործված  
և արդյունավետ տեխնոլոգիաներ՝ մասամբ զարգացրած նախորդ սերունդների մտավոր  
կապիտալի հիման վրա և ի վիճակի կլինեն նաև բացահայտելու շատ այլ հանքահումքեր  
և զբաղվելու առավել արդյունավետ գործունեությամբ, որոնց գոյության մասին ներկայիս  
սերունդը նույնիսկ տեղյակ էլ չէ:

Հետևաբար, հանքահումքային արտադրանքից ստացված եկամուտների մի զգալի մա-  
սը պետք է օգտագործվի արդյունավետ տնտեսության հիմքերը զարգացնելու համար: Այլ  
խոսքով՝ պետք է փոխարինել բնական հումքային պաշարները երկարաժամկետ ակտիվ-  
ներով, ինչպիսիք են կենսունակ տեխնոլոգիաները, ֆիզիկական և սոցիալական ենթակա-  
ռուցվածքները, ինչպես նաև մարդկային կապիտալը: Որպես կենսունակ և երկարաժամկետ  
ռազմավարություն՝ անհրաժեշտ է անցում կատարել չվերականգնվող հանքարդյունաբերու-  
թյան եկամուտների տնտեսական կախվածությունից դեպի դիվերսիֆիկացված այլընտրան-  
քային ոլորտներ:

Շատ վերլուծաբաններ խորհուրդ են տալիս «Վերելք և անկում» (*Boom and Bust*) ցիկլերից  
խուսափելու համար հանքարդյունաբերությունից ստացված ֆինանսական հոսքերի կառա-  
վարման համար ստեղծել առանձին ֆոնդեր, որոնք չեն ընդգրկվի պետական կամ համայն-  
քային բյուջեներում: Թեև կան նաև այլ տեսակետներ՝ կապված առանձին ֆոնդերի ստեղծ-  
ման հետ, սակայն ընդհանուր առմամբ վերլուծաբանները գտնում են, որ առավել կարևոր  
են այդ միջոցների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրը:

Նորվեգիայի կառավարական կենսաթոշակային ֆոնդը, որ նախկինում կոչվում էր Նոր-  
վեգիայի նավթային ֆոնդ (*The Petroleum Fund of Norway*), աշխարհի ամենամեծ կենսա-  
թոշակային ֆոնդն է: Չնայած այն հանգամանքին, որ այդ ֆոնդը կոչվում է կենսաթոշա-  
կային, իրականում այն կենսաթոշակային չէ, քանի որ նրա եկամուտները ձևավորվում են  
նավթի շահույթից, այլ ոչ թե կենսաթոշակային վճարումներից: 2011 թվականի տարեվերջի  
դրությամբ այդ ֆոնդի միջոցները կազմել են 573 մլրդ ԱՄՆ դոլար կամ համաշխարհային  
կապիտալի շուկաների մեկ տոկոսը: Նավթային ֆոնդի, որի եկամուտները հիմնականում  
ձևավորվում են ընկերությունների հարկերից, ինչպես նաև շահագործման թույլտվության  
համար տրամադրված լիցենզիաներից և պետական մասնակցությամբ *Statoil* ընկերության  
շահաբաժիններից, նպատակն է Նորվեգիայի նավթարդյունաբերության ոլորտից ստաց-  
ված մեծ շահույթի մի մասի հաշվին ներդրումներ կատարել այլ ոլորտներում: Նորվեգիա-  
յի նավթային ֆոնդը կատարում է ինչպես կայունացման այնպես էլ «զալիք սերունդների  
ֆոնդի» դեր:

«Ռուսաստանի կայունացման ֆոնդը» ստեղծվել է 2004 թվականին և գործում է որպես  
ֆեդերալ բյուջեի մաս՝ բալանսավորելու ֆեդերալ բյուջեն, երբ նավթի գները նվազում են  
սահմանված մակարդակից ցածր: Ֆոնդի գումարները օգտագործվում են ինչպես մակրոտն-  
տեսական կայունության ապահովման, այնպես էլ ինվեստիցիոն ծրագրերի իրականացման

համար՝ որոնց նպատակն է ապահովել ապագա սերունդների համար բյուջետային ծախսերի նվազեցում:

Նավթային շահույթներից ստացված եկամուտների հաշվին նմանատիպ ֆոնդեր գոյություն ունեն նաև Վենեսուելայում (Մակրոտնտեսական կայունացման ֆոնդ), Քուվեյթում (Ապագա սերունդների համար պահուստային ֆոնդ), Օմանում (Պետական գլխավոր պահուստային ֆոնդ), Ադրբեջանում (Ադրբեջանի պետական նավթային ֆոնդ), Այասկայում, Պապուա Նոր Գվինեայում (Հանքահումքային ռեսուրսների կայունացման ֆոնդ), Միացյալ Արաբական Էմիրություններում (Աբու Դաբիի զարգացման ֆոնդ), Իրանում (Իրանի կենտրոնական բանկի նավթի կայունացման ֆոնդ):

Չիլիում 1985 թվականին ստեղծվել է «Պղնձի կայունացման ֆոնդ»: Յուրաքանչյուր տարի Չիլիի ֆինանսների նախարարությունը սահմանում է պղնձի կողմնորոշիչ, բազային գին: Եթե պղնձի արտահանման փաստացի գինը գերազանցում է այդ սահմանված գինը, ապա եկամտի ավելցուկային մասը բյուջեից փոխանցվում է ֆոնդին: Այդ ռեսուրսները հետագայում օգտագործվում են այն տարիներին, երբ պղնձի գները իջնում են նորմայից «ցածր» մակարդակի: Այս կառուցվածքային միավորը օգնել է Չիլիին՝ առնվազն դիմակայել պղնձի շուկայի անկայունությանը: Բացի դրանից, երբեմն «Պղնձի կայունացման ֆոնդ»-ից օգտվում են, երբ մեծ գումարների խիստ կարիք է առաջանում: Մասնավորապես, ֆոնդից որոշակի գումար կհատկացվի 2010 թվականի Չիլիի աղետալի երկրաշարժից տուժածներին: 2006 թվականի տարեսկզբին այդ ֆոնդում կուտակվել էր 1 մլրդ ԱՄՆ դոլարից ավելի գումար:

Հայաստանում ներկայումս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն, բաժնետիրական ընկերություններում ստեղծվում են կանոնադրական կապիտալի առնվազն 15 տոկոսի չափով պահուստային հիմնադրամներ, որոնք օգտագործվում են ընկերությունների կորուստները ծածկելու, ինչպես նաև պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը ետ գնելու համար, եթե ընկերությունների շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Քանի որ կանոնադրական կապիտալի մեծությունը կարող է համարժեքորեն չարտացոլել համաշխարհային գների տատանումները և դրանով պայմանավորված հասույթի, շահույթի փոփոխությունները, նպատակահարմար է նոր ֆոնդեր ստեղծելիս հիմք ընդունել ընկերությունների հասույթի կամ շահույթի մեծությունը և դրանց տալ առավելապես ներդրումային ուղղվածություն:

## **Գլուխ 2. Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները Հայաստանում**

### **2.1 Հայաստանի ոչ մետաղական հանքային ռեսուրսների տնտեսական ներուժը**

Հայաստանը հարուստ է ոչ մետաղական հանքային պաշարներով, որոնք մեծ կիրառություն և պահանջարկ ունեն ամբողջ աշխարհում: Դրանց որոշակի տեսակներով և որակական հատկանիշներով մեր երկիրը առաջատար տեղ է գրավում աշխարհում (տես աղյուսակ 1): Հատուկ արժեք ու նշանակություն են ներկայացնում Հայաստանի տարածքում սփռված հրաբխային-լեռնային ապարները՝ տուֆերը, պեոլիտները, պեմզաները, ցեոլիտները, կրաքարերը, դոլոմիտները, դիատոմիտները, բենտոնիտները, կվարցիտները, հրաբխային խարամները և այլն: Տարատեսակ բազալտների, գրանիտների, նեֆելինային սիենիտների, մարմարների պաշարների ծավալները նույնպես հսկայական են: Հանրապետության

տարածքում հայտնաբերված են ոչ մետաղական հանքային ռեսուրսների ավելի քան 700 հանքավայրեր:

*Աղյուսակ 1. Ոչ մետաղական օգտակար հանածոների պաշարները ՀՀ տարածքում (01.04.2011թ. դրությամբ)*

Օգտակար հանածո	Գնահատված ընդհանուր պաշարները, մլն. մ <sup>3</sup>
Բազալտ	436,24
Տուֆ	2 500,00
Լիթոիդային պեմզա	169,68
Պեղիտ	141,78
Դիատոմիտ	30,43
Բենտոնիտային կավեր	56,70
Տրավերտին	38,40
Դոլոմիտ	15,69
Կվարցիտներ	15,57
Ցեոլիտներ	12,10
Անդեզիտներ	11,40
Կրաքար	9,20
Օբսիդիան	11,00

Աղբյուրը: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Հումքային այդ հարուստ հենքի վրա Խորհրդային Հայաստանում բավական բարձր զարգացման աստիճանի էր հասել շինանյութերի արդյունաբերությունը: Այդ տարիներին շինանյութերի արդյունաբերությունը ներկայացված էր այնպիսի խոշոր ձեռնարկություններով, ինչպիսիք էին «Արթիկ-տուֆը», «Անի պեմզան», «Արագածպեղիտը», «Հայմարմարը» և այլն: Ընդհանուր առմամբ տնտեսության այս հատվածում աշխատում էին մի քանի տասնյակ ձեռնարկություններ, որոնց մի մասն իր արտադրանքն արտահանում էր Ռուսաստան և նախկին Խորհրդային Միության այլ հանրապետություններ, ինչպես նաև եվրոպական զարգացած երկրներ: Հարկ է նշել, որ տվյալ ճյուղը աստիճանաբար ձեռք էր բերում զարգացման գիտատար ուղղվածություն: Այս ոլորտում գործում էին երեք գիտահետազոտական ինստիտուտներ՝ «Ընդհանուր և անօրգանական քիմիայի», «Նյութաբանության» (սպակու ինստիտուտ), «Քար և սիլիկատներ», որոնք միասին ունեին ավելի քան 1000 աշխատող: Այդ ինստիտուտների կողմից իրականացված բազմաթիվ մշակումները ներդրվել են տարբեր արտադրություններում և ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանում, Ուկրաինայում և նախկին Խորհրդային Միության այլ հանրապետություններում: Այլ խոսքերով, խորհրդային տարիներին այս ճյուղում կուտակվել էր հսկայական ինովացիոն ներուժ:

Ճյուղի ձեռնարկությունները մասնավորեցվել են 2000-ական թվականների սկզբներին: Ներկայում, արտաքին շուկաները կորցնելու արդյունքում, այդ ձեռնարկությունները գործնականում չեն աշխատում կամ լավագույն դեպքում աշխատում են նվազագույն բեռնվածությամբ: Այսօր, բացի ցեմենտի, երեսպատման սալիկների, շինաքարի արտադրությունից, ոչ մետաղական օգտակար հանածոները այլ նպատակներով ըստ էության չեն վերամշակվում: Դրանց արդյունահանման ծավալները խորհրդային ժամանակաշրջանի համեմատությամբ կրճատվել են տասնյակ անգամներ:

Բարձր տեխնոլոգիաների ներդրման համար տարվող աշխատանքներն, առ այսօր գործնականում արդյունք չեն տվել, չի աշխատում «Արագած-պեղիտ» գործարանը, նույնիսկ,

որպես հումք արտահանող ձեռնարկություն: Մյուս կողմից հատկանշական է, որ այս ուղղությամբ կատարված են մեծ թվով գիտական մշակումներ (գոյություն ունեն մի քանի տասնյակ պատենտավորված աշխատանքներ, լաբորատոր և արտադրամասային արտադրություններ և այլն): «Նյութաբանության» ինստիտուտի առաջատար մասնագետ Ա. Մուշեղյանի խոսքերով՝ ժամանակին, միայն «Քար և սիլիկատներ» ինստիտուտում պաշտպանվել են 3 դոկտորական և շուրջ 150 թեկնածուական ատենախոսություններ, որոնք գործնական հետաքրքրություն են ներկայացնում ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման հիման վրա հեռանկարային արտադրանքների արտադրության համար: Գոյություն ունեցող մշակումների նույնիսկ մի մասի օգտագործման դեպքում ոչ մետաղական հանքանյութերը կարող են հիմք հանդիսանալ մի շարք ձեռնարկությունների ստեղծման կամ վերագործարկման համար, որոնց թողարկած արտադրանքը պահանջված կլինի ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում:

Հայկական հումքի վերամշակման հիման վրա հիմնված առավել հեռանկարային արտադրատեսակները կարող են կիրառվել տնտեսության տարբեր ճյուղերում՝ էներգետիկայում, էլեկտրատեխնիկական, քիմիական և սննդի արդյունաբերությունում, գյուղատնտեսությունում, բժշկության ոլորտում, շինանյութերի արտադրությունում և շինարարությունում, ռազմական արդյունաբերության մեջ և այլուր: Օրինակ, միայն պեռլոտի վերամշակման հիման վրա ստացվող արտադրատեսակների թիվը անցնում է 150-ից:

Սակայն, այդ ճյուղի ներուժը չի օգտագործվում, ինչին խոչընդոտում են բազմաթիվ գործոններ: Այդ գործոնների շարքում կարելի է առանձնացնել հետևյալները.

- պետական աջակցության բացակայությունը ներքին և արտաքին շուկաներում հեռանկարային արտադրատեսակների իրացման համար,
- «փափուկ» վարկային միջոցների բացակայությունը,
- արտադրություն-գիտություն-կրթություն ինովացիոն շղթայի բացակայությունը,
- ոլորտի ձեռնարկությունների մեկուսցվածությունը և դրանց շահերը համադրող օղակի բացակայությունը:

## 2.2 Ճյուղի ռազմավարական նշանակությունը Հայաստանի տնտեսության զարգացման համար

Հայաստանի Հանրապետության կառավարությունը տնտեսության տևական կայուն զարգացման գրավականն է համարում երկրի մրցունակության բարձրացումը, ինչպես նաև տնտեսական աճի որակական փոխակերպման և արդյունավետ կառուցվածքային տեղաշարժերի կառավարելի համակարգի ձևավորումը՝ աջակցելով բարձր տեխնոլոգիաներ կիրառող ռեսուրսախնայող և գիտատար տնտեսությանը միտված ոլորտներին ու ընկերություններին: Այս առումով ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտը կարող է դառնալ Հայաստանի տնտեսության այն հիմնական հատվածներից մեկը, որն ընդունակ է ապահովելու առևտրայնացվող գյուտերի, նորարարական տեխնոլոգիաների արագ ներդրում և արտաքին շուկաներում մրցունակ նոր արտադրատեսակների արտադրություն: Օրինակ, պեռլոտային ապարների վերամշակման արդյունքում կարելի է ստանալ ջերմա և էլեկտրամեկուսիչներ, նուրբ քամիչներ, սպիտակ, գունավոր և բջջային ապակիներ, բյուրեղապակի, հրակայուն թելեր և այլն: Բազալտները, բացի ավանդական կիրառությունից, կարող են օգտագործվել քիմիական արդյունաբերության մեջ՝ թթվակայուն իրերի շինվածքների համար, որպես քարածուխի հումք. այս ձևով պատրաստված իրերը՝ առանձնապես խողովակները, սպեյրը, էլեկտրամեկուսիչները իրենց բարձր թթվակայունությամբ և դիմացկունությամբ կարող են փոխարինել մագնեզիալ և այլ տիպի հատուկ պողպատներին, որոնք կիրառվում են մետալուրգիական, քիմիական, թղթի, ցեմենտի, մեքենաշինության և այլ բնագավառներում: Կիևի



միջուկային հետազոտությունների ինստիտուտում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բազալտե թեփուկներից ստացված սալիկները հանդիսանում են ռադիացիոն ճառագայթման դեմ լավ պաշտպանիչներ: Հայաստանի ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման արդյունքում ստացվող արտադրանքների թվարկումը կարելի է դեռ երկար շարունակել: Հետևաբար, կասկած չկա, որ ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման արտադրությունները կարող են նպաստել մրցունակ և գիտելիքահենք տնտեսության կառուցմանը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորում է նաև համակարգատեղծ ընկերությունների զարգացման ծրագրերի մշակմանը պետական աջակցության մեխանիզմների և գործիքների ներդրման հարցը: Այս առումով նախատեսվում է, ուսումնասիրելով քլաստերային զարգացման միջազգային փորձը, ուղենշել հանրապետության քլաստերաստեղծ ոլորտները և նպատակաուղղված քլաստերային քաղաքականության միջոցով՝ իրականացնել հանրապետությունում գիտաարտադրական և սպասարկող քլաստերների ստեղծման նախաձեռնումն ու համակարգումը: Հայաստանում ոչ մետաղական հանքանյութերի վերամշակումը տիպիկ քլաստերաստեղծ ինդուստրիա է: Այս ճյուղի խոշոր տեղական ընկերություններն աստիճանաբար կարող են վերածվել ինովացիաների շարժիչ ուժի, որոնց կսկսեն հետևել ոլորտի փոքր և միջին ձեռնարկությունները: Այդ կերպ ճյուղի զարգացումը կնպաստի նաև տարածքային համաչափ զարգացմանը:

Այսօր, զարգացած երկրներում ինովացիոն քաղաքականության իրականացման արդյունավետ գործիքներից մեկը մասնավոր և պետական հատվածների միջև գործընկերության (ՊՄԳ) ձևերի զարգացումն է: Ծնորհիվ ճիշտ ձևակերպված նպատակների, այդպիսի գործընկերությունը տալիս է շոշափելի տնտեսական արդյունք, նպաստում է լավագույն հետազոտողների ներուժի միավորմանը, օժանդակում է գիտատար արդյունաբերության և տարածաշրջանային քլաստերների առաջացմանը: Շատ առումներով Հայաստանի ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ճյուղի ընկերությունները կարող են դառնալ ՊՄԳ լավ օրինակ: Որպես կանոն ՊՄԳ-ն ենթադրում է սեփականության խառը ձևերով ձեռնարկությունների առկայություն, որի դեպքում պետական կազմակերպությունը իրականացնում է իր մտավոր ներդրումը, իսկ մասնավոր ընկերությունը՝ ֆինանսական և կառավարչական: Դրանք հաջողությամբ «ներդրվում են» «ինովացիոն շղթայում» և մեկուսացված մասնավոր ընկերությունների համեմատությամբ բարձր ավելացված արժեքով ապրանքների և ծառայությունների «խորշ» զբաղեցնելու ավելի մեծ հնարավորություններ ունեն: Ներկայումս Հայաստանի ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի մասնավոր ձեռնարկությունների մեծ մասը դեմ չեն և նույնիսկ ակնկալում են պետական մասնակցություն իրենց գործունեությանը (տես ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման հայեցակարգի նախագիծ, Երևան 2009):

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ Հայաստանում պետական-մասնավոր գործընկերության ծրագրերը ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտում կողմնորոշել հետևյալ նպատակների ձեռքբերմանը.

- ոլորտի ձեռնարկություններում ինովացիոն ծրագրերի աջակցություն,



Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտը կարող է դառնալ Հանրապետության արդյունաբերության զարգացման գրավականը

- արտահանման շուկաներին կողմնորոշված քլաստերային հետազոտությունների զարգացում,
- պետական հատվածում ստացված գիտական գործունեության արդյունքները արտադրություն փոխանցելու համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում,
- ճյուղի ձեռնարկությունների կողմից ցանցերի ստեղծման գծով նախաձեռնությունների խրախուսում,
- միջազգային համագործակցություն,
- օպտիմալ չափի պետական մասնակցություն ոլորտի կարևորագույն ընկերությունների կանոնադրական կապիտալում:

Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակումը այն ոլորտներից է, որի զարգացումը շատ կարճ ժամանակահատվածում կարող է հասցնել Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգային ուղղություններով սահմանված նպատակների ձեռքբերմանը:

### 2.3 Ոչ մետաղական հանքային ռեսուրսների վերամշակմամբ ստացվող արտադրատեսակների արտահանման հեռանկարները

Արտաքին շուկաներ դուրս գալու առումով առանձնահատուկ դեր են նշանակություն կարող են ունենալ հայկական պեռլիտի վերամշակման հիման վրա ստացվող արտադրատեսակները:

Պեռլիտը միջազգային առևտրի առարկա է: Այդ արտադրանքի գլխավոր արտահանողներն են հանդիսանում առաջատար արդյունահանող երկրները՝ Հունաստանը, Թուրքիան, Հունգարիան, Իտալիան: Արտահանման առավել մեծ ծավալը ընկնում է Հունաստանին՝ սեփական արտադրության ավելի քան 60%-ը: ԱՄՆ արտահանում է սեփական արտադրության 5-7%-ը: Պեռլիտի և դրա հիմնա վրա արտադրված տարատեսակ արտադրանքի հիմնական սպառողներ են հանդիսանում բարձր զարգացած տնտեսություն ունեցող երկրները՝ ԱՄՆ, Արևմտյան Եվրոպան (Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ավստրիա, Նիդեռլանդներ և այլն), Ճապոնիան:

Աղյուսակ 2. Պեռլիտի համաշխարհային արտադրությունը, հազ. տոննա (ըստ հիմնական երկրների)

Երկիրը	2007	2008	2009
Հայաստան*	50	50	50
Չինաստան*	700	700	700
Հունաստան	1100*	1000	863
Հունգարիա	68	132	82
Իտալիա*	60	60	60
Ճապոնիա*	230	230	230
Մեքսիկա	54	43	51
Ռուսաստան*	45	45	45
Թուրքիա*	160	160	160
ԱՄՆ	409	434	380*

\* – գնահատված ցուցանիշներ

Աղբյուրը՝ World Mineral Production, 2005-2009.

Փքման հատկանիշով հայկական պեռլիտները և օբսիդիանները ամենաորակյալներից են աշխարհում: Հայկական պեռլիտի որակական հատկանիշները մի քանի անգամ գերազան-

ցում են մյուս հայտնի հանքավայրերի ցուցանիշները: Ժամանակին հայկական պեոլիտը արտահանվել է 200 հասցեներով, այդ թվում՝ Բելգիա, Իտալիա, Իսպանիա և այլն:

«Արագածպեոլիտ» գործարանը, որում ժամանակին աշխատում էին 6 արտադրամասեր, 1998թ. վաճառվել է ամերիկյան «Դեկոլայթ» ֆիրմային: Ձեռնարկության թանկարժեք սարքավորումը դուրս է բերվել հանրապետությունից և վճարվել, և ներկայումս այնտեղ գործում է միայն մեկ արտադրամաս: Մինչև 2002-2003թթ. «Դեկոլայթը» տարեկան 200-300 հազար տոննա արագածի պեոլիտ է արտահանել Նիդեռլանդներ, Շվեյցարիա և այլ երկրներ: 2003 թվականից «Արագածպեոլիտը» գործնականում չի աշխատում:

Վերջին տարիներին Հայաստանում լայնորեն քննարկվում է ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ճյուղի գրեթե անգործության մատնված ձեռնարկությունների աշխատանքի վերսկսման հարցը:

Հարկ է նշել, որ դեռևս 1993թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է «ոչ մետաղական հանքային ռեսուրսների օգտագործման» նպատակային համալիր ծրագիր (պատասխանատու կատարող «Քար և սիլիկատներ» ԳՀԻ, ծրագրի գլխավոր մշակող՝ «Հայարդշինանյութեր» պետական արտադրական միավորում), ինչը հաստատվել է համապատասխան որոշմամբ:

2009թ. հուլիսի 18-ին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ստեղծվել է մասնագետների աշխատանքային խումբ, որը մշակել և հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացրել «Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման» հայեցակարգի նախագիծ: Տվյալ հայեցակարգը հավանության է արժանացել տնտեսության զարգացմանը նպաստող ծրագրերի աջակցության օպերատիվ շտաբի երկու նիստերում: Ըստ ՀՀ էներգետիկայի նախարարի, ներկայումս իրականացվում են լրացուցիչ հետազոտություններ՝ փաստաթղթի վերջնական տարբերակի ընդունման համար: Բացի այդ, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը կառավարության քննարկմանն է ներկայացրել տվյալ ճյուղի հինգ առաջատար ձեռնարկությունների վերագործարկման վերաբերյալ առաջարկություններ: Տվյալ ճյուղի հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները քննարկվել են նաև ՀՀ Հանրային խորհրդում: Վերջինս, քննարկումների արդյունքում, 2010թ. հունիսի 4-ին ՀՀ վարչապետին առաջարկել է ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ճյուղը հայտարարել տնտեսության զարգացման գերակա ուղղություն:

Հատկանշական է, որ 2007թ. հաստատված «Մինչև 2010թ. ՌԴ և ՀՀ երկարաժամկետ տնտեսական համագործակցության Ծրագրի իրականացման միջոցառումների պլանով» նախատեսված էին Հայաստանից ՌԴ Արագածի պեոլիտի վերամշակմամբ ստացված 1 000 000 մ<sup>3</sup> ջերմամեկուսիչ նյութերի (պենոպեոլիտից պատրաստված ջերմամեկուսացնող սալեր շինարարության համար, սեզմենտներ և պատյաններ էներգահամակարգի խողովակների համար) և Հայաստանի ոչ մետաղական հանքանյութերից (պեոլիտ, դիատոմիտ, ցեոլիդ, բազալտ, տուֆ և այլն) ստացված տարբեր կազմի և բաղադրության փոշիների մատակարարման հնարավորություններ: Տվյալ «Պլանը» նախատեսում էր նաև բազալտե ճուլվածքի հիման վրա թթվակայուն և մաշվադիմացկուն պատրաստվածքների (սալեր, խողովակներ, դեկորատիվ և բազմագույն քարեր բազալտի ճուլվածքից և այլն) արտադրության կազմակերպման հնարավորություններ՝ Քարակերտի քարածուխի գործարանում (ՔՔԳ): Հետագայում պեոլիտի հումքի մատակարարման հիման վրա պլանավորվում է արտադրություն կազմակերպել ՌԴ տարածքում (Կովկասի սահմանին):

Չնայած այս պլանները դեռևս չեն իրականացվել, բայց այս ոլորտում համագործակցության դաշտը ինչես Ռուսաստանի, այնպես էլ ԱՊՀ և այլ երկրների հետ բաց է: Հաշվի առնելով զարգացած երկրներում պեոլիտից ջերմամեկուսիչ և ձայնամեկուսիչ նյութերի

արտադրության աճի տեմպերը, ինչը պայմանավորված է տնտեսական և տեխնիկական գործոններով, ապա ակնհայտ է դառնում, որ ԱՊՀ և այլ երկրներում մոտ հեռանկարում սպասվում են էական փոփոխություններ վերը նշված նյութերի օգտագործման ծավալներում և կառուցվածքում:

Փքված պեռլիտի խոշորագույն սպառող են հանդիսանում մետալուրգիական ձեռնարկությունները: 80-ական և 90-ական թվականներից փքված պեռլիտը լայն կիրառում ստացավ չուգունի և պողպատի տարլցման մեջ: Այսպես, մինչև 90 կգ/մ<sup>3</sup> լցման խտությամբ փքված պեռլիտը մետալուրգիական գործարանների կողմից օգտագործվում է մետաղաձուլական շերտիներում, մետաղակաղապարներում, ձուլման կաղապարներում՝ հալման մակերեսի մեկուսացման համար: Ջերմամեկուսացնող շերտը խոչընդոտում է ձուլվածքի արագ սառեցմանը: Ընդ որում մետաղում առկա խառնուրդները, մետաղախարամները անցնում են շահութաբեր մասը, այդ կերպ բարելավելով հիմնական մետաղի որակը: Դրանց համակենտրոնացումը օգտակար մասում ավելացնում է պիտանի մետաղի ելքը մեկ կիլոգրամ ձուլվածքի հաշվով:

Մետալուրգիայում փքված պեռլիտի օգտագործման ևս մեկ ուղղություն է դրա օգտագործումը ձուլածո ձևավորող խառնուրդներում: Փքված պեռլիտի ավելացումը ձուլածո ավազներում կաղապարների պատերը դարձնում է ավելի քիչ ջերմահաղորդունակ: Դա նպաստում է ձուլվածքի դանդաղ սառեցմանը, հետևաբար, խառնուրդների և խարամների լիարժեք անցմանը օգտակար հեռացվող մաս:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մշակված է գտիչ փոշիների տեխնոլոգիա: Ժամանակին տարեկան արտադրվել են 100 հազար տոննա տարբեր փոշիներ: Դրանք չեն զիջում օտարերկրյա ֆիրմաների կողմից արտադրված փոխարինիչներին: Այդ գտիչ փոշիները օգտագործվում են ծաղիկների, կանաչեղենի և գյուղատնտեսական հումքի պահպանման համար: Զտիչ փոշիները օգտագործվում են նաև տարբեր կոշտ և հղկող նյութերի ստացման համար, որոնք օգտագործվում են ռադիոտեխնիկայում, էլեկտրոնային արդյունաբերությունում, ռազմաարդյունաբերական համալիրում: 90-ական թվականների սկզբերին ԱՊՀ երկրները տարբեր տեսակի գտիչ փոշիներ էին ստանում Իտալիայից, Բելգիայից, ամերիկյան «Դեկոլայթ», «Ցելիթ» ֆիրմաներից, որոնց արտադրության համար որպես հումք օգտագործվում էր Արագածի հանքավայրի պեռլիտը:

1986թ. «Արագածպեռլիտ» ձեռնարկությունում կազմակերպվեց տարեկան 1000 տոննա կարողությամբ ՊԱ 63-15 մակնիշի բնական հղկող փոշիների արտադրություն: Երեք տարիների ընթացքում ձեռնարկությունն իր արտադրանքն անխափան մատակարարել է ավիացիոն, նավաշինական, ռադիոտեխնիկական արդյունաբերության և մեքենաշինական կազմակերպություններին: Հայկական հղկող փոշիների նկատմամբ մեծ հետաքրքրություն դրսևորեցին Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Չեխոսլովակիան: Հղկող փոշիների արտադրության և կիրառման հետ կապված բոլոր գիտական մշակումները ավարտված են: Այս արտադրանքը կարող է օգտագործվել Ռուսաստանի և Ուկրաինայի ռազմաարդյունաբերական համալիրում:

Այսպիսով, փքված պեռլիտի կիրառման ոլորտները բավական լայն են, իսկ սպառումն աշխարհում ընդլայնվում է: Հայաստանի համար հեռանկարային առումով հատկապես մեծ շուկա են ներկայացնում ԱՊՀ երկրները, որոնցում այդ արտադրատեսակների սպառ-



Հայաստանում  
փքված պեռլիտի  
արտադրատեսակների  
զարգացումը դառնում է  
հեռանկարային

արտադրության և կիրառման հետ կապված բոլոր գիտական մշակումները ավարտված են: Այս արտադրանքը կարող է օգտագործվել Ռուսաստանի և Ուկրաինայի ռազմաարդյունաբերական համալիրում:

ման մակարդակը դեռևս շատ հեռու է տնտեսապես զարգացած երկրներում գոյություն ունեցող սպառման մակարդակից: Ապագայում Ռուսաստանում և ԱՊՀ երկրներում կարելի է սպասել փքված պեղիտի սպառման ծավալների աճ՝ ջերմամեկուսիչ նյութերի արտադրության և այլ նպատակներով օգտագործման համար: Միայն Ռուսաստանում ջերմամեկուսիչ նյութերի սպառումը ներկայումս կազմում է 50 մլն մ<sup>3</sup>: Այս առումով, հայկական պեղիտի հիման վրա ՔՔԳ-ում ջերմամեկուսիչ նյութերի (պենոպեղիտ) արտադրության կազմակերպումը դառնում է հեռանկարային: Բացի էներգետիկ համակարգից ջերմամեկուսիչ նյութերի մեծ պահանջարկ գոյություն ունի նաև Ռուսաստանի շինարարության և բնակարանային կոմունալ տնտեսության ոլորտներում:

Բազալտը և դրա վերամշակման հիման վրա ստացված պատրաստվածքները նույնպես ունեն արտահանման հսկայական ներուժ: Հայկական բազալտի հումքի հիման վրա կարելի է կազմակերպել արտահանման կողմնորոշում ունեցող հետևյալ արտադրությունները.

- անընդհատ բազալտե թելերի, որի համար կարելի է արդիականացնել Սևանի «Էլեկտրամեկուսացման» գործարանի տեխնոլոգիական գիծը,
- բազալտե-կերամիկական գտիչների,
- անդեզիտային ալյուրի,
- քարածուլման, ՔՔԳ-ի արտադրատեխնիկական բազայի հիման վրա,
- գերբարակ թելերի, ջերմա և ճայնամեկուսիչ նյութերի, ինչպես նաև բազալտե թելերից ստացվող կոշտ սալերի՝ Սևանի «Ապակեմեկուսիչ» գործարանի արտադրատեխնիկական բազայի հիման վրա,
- կոշտ բազալտե թելերի, որը կարող է օգտագործվել բետոնների արտադրությունում և կրճատել այդ նպատակով մետաղի օգտագործումը:

Արտահանման մեծ հնարավորություններ կան նաև ոչ մետաղական հանքային ռեսուրսների վերամշակման հետևյալ ոլորտներում.

- Հայաստանի մագնեզիում պարունակող լեռնային ապարների համալիր վերամշակում, որոնց պաշարները գործնականում անսպառ են (ավելի քան 10 մլրդ տոննա),
- Բենտոնիտների արտադրություն: Բենտոնիտները կիրառվում են նավթագազային արդյունաբերությունում, քիմիական, սննդի և այլ ճյուղերում:
- Դիատոմիտից ստացվող գտիչ փոշիների արտադրություն: Ներկայումս «Դիատոմիտների Խարբերդի գործարանը» հաջողությամբ գտիչ փոշիներ է արտահանում Գերմանիա, Լեհաստան, Նորվեգիա, Չինաստան, Ռուսաստան, Բելառուսիա, Ղազախստան և Ուկրաինա,
- Հիդրավլիկ կրաքարի արտադրություն հայկական կարբոնատների հիման վրա: Խորհրդային տարիներին այդպիսի գործարան աշխատում էր Ջաջուռում, որի արտադրանքն արտահանվում էր Ռուսաստան: 1988թ. երկրաշարժից հետո այդ գործարանը չի աշխատում,
- Բազմանպատակ քարի փոշիների արտադրություն, որոնցից կարելի է արտադրել հղկանյութեր տպագրող սարքերի համար, հատուկ լցանյութեր, հանքային պիգմենտներ և այլն:

## Գլուխ 3. Հանքարդյունաբերության իրավական կարգավորումը

### 3.1 Ներածություն

Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտը կարգավորվում է վերջերս ընդունված «Ընդերքի մասին օրենսգրքով», ինչպես նաև այդ օրենսգրքը կիրարկող բազմաթիվ այլ օրենսդրական ակտերով, որոնց մեծ մասը դեռ գտնվում է մշակման փուլում: Այս պահին

այդ ամբողջ փաթեթի արդյունավետության մասին դեռ դժվար է հետևություններ անել: Դրա մշակման գործընթացում ներգրավված են եղել միջազգային կառույցներ, այդ թվում՝ Համաշխարհային բանկն ու Եվրոմիության փորձագետները:


Հանքարդյունաբերության ոլորտի կարգավորման լիազորություն է իրականացնում Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը<sup>11</sup>, ներառյալ՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության տրամադրումը, օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության տրամադրումը, ինչպես նաև երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման վերահսկողությունը:

Բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության վերահսկողության համար պատասխանատու է Բնապահպանության նախարարությունը<sup>12</sup>, որը մասնավորապես սահմանում է համապատասխան կանոններն ու նորմերը և կատարում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերի նախնական գնահատում, ինչպես նաև արդյունահանման նախագծերի փորձաքննություն:

Տեխնիկական անվտանգության վերահսկողության համար պատասխանատու է Արտակարգ իրավիճակների նախարարությունը<sup>13</sup>, որի ենթակայության տակ գտնվող Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը մասնավորապես սահմանում է անվտանգության կանոններն ու նորմերը և կատարում է արդյունահանման նախագծերի փորձաքննություն:

Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի կարգավորումը ներկայումս ունի բազմաթիվ խնդիրներ: Դրանք ընդհանուր առմամբ ներառում են ոլորտի ընկերությունների ներքին ու արտաքին միջավայրերը (պատկեր) և վերաբերում են՝

1. ընդերքօգտագործման սկզբունքների ու կարգի արդարացիությանը.
2. շրջակա միջավայրի պաշտպանությանը.
3. տեխնիկական անվտանգության ապահովմանը.
4. բոլոր կողմերի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը:



Խնդիրներից մասնավորապես կարելի է նշել ըստ գործող կարգի թույլտվությունների բաշխման և վերահսկողության, ինչպես նաև փորձաքննությունների համակարգում կոռուպցիոն ռիսկերի առկայությունը: Բնապահպանական և տեխնիկական անվտանգության առնչությամբ հատկանշական են նաև համապատասխան ստանդարտների և տեխնիկական կանոնակարգերի մշակման գործընթացի թերությունները՝ անհրաժեշտ գիտահետազո-

<sup>11</sup> Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն; [www.minenergy.am/](http://www.minenergy.am/)

<sup>12</sup> Բնապահպանության նախարարություն; [www.mnp.am/](http://www.mnp.am/)

<sup>13</sup> Արտակարգ իրավիճակների նախարարություն; [www.mes.am/](http://www.mes.am/)

տական հաստատությունների բացակայության կամ ներգրավված չլինելու պայմաններում: Թույլ է կապը նաև կրթական համակարգի հետ՝ թե նույն գիտահետազոտական աշխատանքի և թե որակյալ մասնագետների ապահովման առումով:

Բնապահպանական բազմաթիվ խնդիրներից կարելի է նշել նաև այն, որ Բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի շարունակաբար համալրվելու պայմաններում չեն կատարվում խախտված հողերի վերականգնման աշխատանքներ՝ ինչի համար չկան արդյունահանողին պարտադրելու լծակներ: Հակասական է նաև արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակայանների տնօրինման հարցը: Այն դեպքում երբ վիճելի է դրանց մի մասի հետագա շահավետ օգտագործման հնարավորությունը՝ դրանք սպառնում են հարակից համայնքների բնակչության անվտանգությանն ու առողջությանը:

Թերևս վերը նշվածի լույսի ներքո առանձնահատուկ կարևորվում է հանքարդյունաբերական գործունեության արդյունքում երկրին և մասնավորապես ներգրավված համայնքներին առնվազն բավարար փոխհատուցման հարցը: Մասնավորապես մետաղական օգտակար հանածոների մասով, ըստ վերջերս ընդունված «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքում փոփոխությունների և լրացումների՝ վճարման ենթակա ռոյալթիի<sup>14</sup> համար սահմանվում է առնվազն չորս տոկոս դրույքաչափ՝ ինչը հաշվարկվում է իրացումից հասույթի վրա (առանց ԱԱՀ-ի): Դա առաջխաղացում է նախկին մեկ տոկոսի համեմատությամբ: Սակայն, արդյունահանողի գերշահույթի դեպքում ռոյալթիի դրույքաչափի նախատեսվող հավելումը դեռևս փոքր է: Կա նաև գանձվող ռոյալթիների և բնօգտագործման վճարների (ոչ մետաղական օգտակար հանածոների դեպքում) որոշակի մասը ներգրավված համայնքների սոցիալական հարցերի լուծմանը համակարգված կերպով ուղղելու անհրաժեշտություն:<sup>15</sup>

Սույն նախագծի շրջանակներում մանրակրկիտ աշխատանք է կատարվել ընդհանուր խնդիրներից յուրաքանչյուրին առնչվող միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման համար, որի նկարագրությունը ներկայացված է նյութի համապատասխան բաժիններում: Դրանց հաջորդում է Հայաստանին վերաբերվող հետևությունների և առաջարկությունների եզրակացված բաժինը:

## 3.2 Ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը

Ընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից ռազմավարական նշանակություն ունեցող հանքարդյունաբերության ոլորտի համար անչափ կարևոր են բոլոր գործառնությունների առնչությամբ օրինականությունը, թափանցիկությունն ու պատասխանատվությունը: Այս ուղղությամբ միջազգային փորձը ներառում է տարբեր գործիքների ու լծակների կիրառում:

### 3.2.1 Անկախ կարգավորող մարմիններ

Աշխարհում որոշ երկրներ ստեղծում են հատուկ անկախ կարգավորիչ գործակալություններ՝ հանքարդյունաբերության ոլորտի կառավարման համար: Դրանք մասնավորապես սահմանափակում են պետական մարմինների վարչական հայեցողությունն ու կարգավորողների վրա ոչ տեղին ազդեցությունը: Այս մասնագիտացված գործակալությունները ներգրավվելով անկախ մասնագետների՝ կարող են զարգացնել ոլորտին առնչվող ավելի բարձր պատրաստվածություն: Ընդհանուր առմամբ, անկախ կարգավորիչ գործակալությունները

<sup>14</sup>  $R = 4 + [C / (C \times 8)] \times 100$ , որտեղ՝ C – շահույթն է նախքան հարկումը, <- իրացումից հասույթն է առանց ԱԱՀ-ի:

<sup>15</sup> Վերը նշված խնդիրները բացահայտվել են ընդհանուր ուսումնասիրության, ինչպես նաև նախարարությունների համապատասխան աշխատակիցների հետ քննարկումների արդյունքում:

բարձրացնում են հանրային կառավարման արդյունավետությունը:

Մասնավորապես, Բրազիլիան նախատեսել է ստեղծել Հանքարդյունաբերության ազգային անկախ գործակալություն, որը պիտի փոխարինի Հանածոների արտադրության ազգային վարչությանը: Այդ գործակալության գործառույթների շրջանակներում պետք է լինի մասնավորապես հանքարդյունաբերական լիցենզիաների տրամադրումը: Գործակալությանը պետք է կառավարի հանձնաժողովը, որը պետք է նշանակվի երկրի Սենատի կողմից: Հանձնաժողովի անդամներին կարող է հանել միայն Սենատը՝ այդպիսով ապահովելով անհրաժեշտ անկախություն:<sup>16</sup>

Գանան արդեն ունի անկախ գործակալություն՝ Հանածոների հանձնաժողովը, որը ժամանակին ստեղծվել է ոլորտում մասնավորապես բյուրոկրատիան նվազեցնելու, վարչական արդյունավետությունը բարելավելու և կոռուպցիան նվազեցնելու համար: Գանայի Հանածոների հանձնաժողովը ունի երկրի նախագահի կողմից նշանակվող խորհուրդ՝ կազմված ինն անդամներից, ներառյալ՝ նախագահն ու գործադիր տնօրենը: Հանձնաժողովի վարչական գործառույթները անկախ են երկրի կառավարությունից և մասնավորապես ներառում են վերջինիս քաղաքականության իրագործման վերահսկողությունը: Թույլտվությունների համար դիմումները տրվում են Հանածոների հանձնաժողովին, որն այնուհետև առաջարկ է ներկայացնում երկրի Հոդերի և ազգային ռեսուրսների նախարարին: Վերջինս որոշում է կայացնում՝ հիմնվելով այդ առաջարկի վրա: Թեև նախարարը խստորեն պարտավորված չէ ընդունել Հանածոների հանձնաժողովի բոլոր առաջարկները, սակայն բավականին սահմանափակումներ կան նաև նախարարի հայեցողության<sup>17</sup> հարցում:

Անկախ կարգավորիչ գործակալությունների ստեղծումը կարևոր մաս է կազմում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կարգավորման որակի ուղեցույցների ու առաջարկությունների մշակման աշխատանքում:<sup>18</sup> Ըստ ՏՀԶԿ՝ այդ գործակալությունների ստեղծումը պետք է դիտարկվի այն իրադրություններում, որտեղ անհրաժեշտ է պահպանել հանրային վստահություն, պետական ու մասնավոր ընկերությունների առկայության դեպքում չեզոքություն, և ընկերությունների վրա կարգավորիչ որոշումների զգալի տնտեսական ազդեցության հանգամանքներում անկողմնակալություն:<sup>19</sup>

Ինչ վերաբերվում է անկախ գործակալությունների կառուցվածքին, ապա բազմաթիվ անդամներից կազմված խորհուրդը ապահովում է ավելի բարձր անկախություն: Նույն նպատակով, անդամների նշանակումը պետք է կատարվի իշխանության ամենաբարձր մակար-



Հատուկ անկախ կարգավորիչ գործակալությունները ստեղծվում են հանքարդյունաբերության ոլորտի կառավարման համար, որոնց հիմնական գործառույթը հանքարդյունաբերական լիցենզիաների տրամադրումն է

<sup>16</sup> State's player/ref role makes independent mining regulation essential – Leon; *Mining Weekly*; [www.miningweekly.com/article/states-playerref-status-makes-independent-mining-regulation-essential-leon-2011-03-18](http://www.miningweekly.com/article/states-playerref-status-makes-independent-mining-regulation-essential-leon-2011-03-18)

<sup>17</sup> International Mineral Regulatory Best Practice; *Spatial Dimension*; [www.spatialdimension.com/LinkClick.aspx?fileticket=Ta5%2F5jT9dus%3D&tabid=153](http://www.spatialdimension.com/LinkClick.aspx?fileticket=Ta5%2F5jT9dus%3D&tabid=153)

<sup>18</sup> Guiding Principles for Regulatory Quality and Performance; *OECD*; [www.oecd.org/document/38/0,3746,en\\_2649\\_37421\\_2753254\\_1\\_1\\_37421,00.html](http://www.oecd.org/document/38/0,3746,en_2649_37421_2753254_1_1_37421,00.html)

<sup>19</sup> Draft OECD Recommendation on Regulatory Policy and Governance; *OECD*; [www.oecd.org/dataoecd/49/43/48087250.pdf](http://www.oecd.org/dataoecd/49/43/48087250.pdf)



դակով և լինի հարաբերականորեն երկար ժամանակով (4–5 տարի կամ ավել): Անդամների հեռացման կարգը նույաես կարևոր է՝ պետք է հնարավորինս բացառվի իշխանությունների հետ քաղաքական հարցերով անհամաձայնության պատճառը: Գործակալության աշխատակիցների որակը կախված է ֆինանսական ու մարդկային ռեսուրսների առկայությունից ու ապահովման մոտեցումներից: Բոլոր առումներով, չկա մեկ ընդհանուր կառուցվածք ու մոտեցումներ բոլոր երկրների համար՝ քանի որ երկրից երկիր տարբեր են հաստատությունների կառուցվածքներն ու վարչարարության մշակույթները:

Անկախ կարգավորող գործակալության ֆինանսավորումը կարող է լինել պետական բյուջեից, սակայն դա կարող է հանգեցնել համապատասխան պետական մարմնի կողմից ոչ բացահայտ ճնշումների: Ֆինանսավորումը կարող է ապահովվել նաև կարգավորվող արդյունաբերությունից գանձվող վճարներից, և վճարների չափն ու կարգը կարող է հաստատվել օրենքով՝ պահպանելով գործակալության անկախությունը: Երբեմն ֆինանսավորումը ձևավորվում է թե պետական բյուջեից և թե արդյունաբերությունից գանձվող վճարներից՝ միաժամանակ: Մասնագետների առումով, հիմնական խնդիրը տեխնիկական բարձր մակարդակի փորձագետների բացակայությունն է կամ էլ դրանց համար մրցունակ վարձատրության ապահովումը:<sup>20</sup>

### 3.2.2 Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) միջազգային կառույց է, որը թափանցիկության համաշխարհային չափանիշ է սահմանում նավթի, գազի և հանքարդյունաբերության ոլորտներում: Կառույցի ընդհանուր նպատակն է բնական ռեսուրսները ծառայեցնել բոլորի շահերին: Լավ կառավարման արդյունքում այդ ռեսուրսների արդյունահանումը կարող է ստեղծել լայնածավալ եկամուտներ՝ աճ խթանելու և աղքատությունը նվազեցնելու համար: Սակայն, երբ կառավարումը թույլ է, ռեսուրսների արդյունահանումը կարող է առաջ բերել աղքատություն, կոռուպցիա և հակասություններ:

Համաշխարհային բանկը պաշտոնապես օժանդակել է կառույցի ստեղծմանը և այդ նախաձեռնության իրագործման հարցում հատուկ միջոցառումներով աջակցել է տարբեր երկրների, այդ թվում՝ հատուկ հիմնադրամի միջոցով նրանց հատկացնելով տեխնիկական ու ֆինանսական աջակցություն: Նախաձեռնությանը խորհուրդ է տրվում միանալ հատկապես այն երկրներին, որոնք համարվում են «հանաձոներով հարուստ»: Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի սահմանման՝ հանաձոներով հարուստ են համարվում այն երկրները, որոնց նախորդ երեք տարիների ընթացքում արդյունահանող ճյուղերից ստացված պետեկամուտների միջինը կամ այդ ճյուղերի արտահանումների միջինը կազմում է ամբողջի առնվազն 25 տոկոսը:<sup>21</sup>

ԱՃԹՆ-ը նպատակ ունի ուժեղացնել կառավարումը՝ արդյունահանող ճյուղերում բարելավելով թափանցիկությունն ու պատասխանատվությունը: Նախաձեռնությունը մասնավորապես ստուգում և ամբողջապես իրապարակում է բոլոր ընկերությունների վճարումներն ու կառավարությունների եկամուտները հանքարդյունաբերությունից: Կառույցի աշխատանքի սկզբունքները հաստատվում են շահագրգիռ կողմերի, աջակիցների ու իրագործողների կողմից: Դրանք արդեն նշվածից բացի ներառում են նաև հետևյալը՝

- պետական եկամուտների հանրային գիտակցության և հանրային բանավեճի արդյունքում ընտրվում են կայուն զարգացման ուղիներ,

<sup>20</sup> Designing Independent and Accountable Regulatory Authorities for High Quality Regulation; *OECD*, [www.oecd.org/dataoecd/15/28/35028836.pdf](http://www.oecd.org/dataoecd/15/28/35028836.pdf)

<sup>21</sup> Implementing the Extractive Industries Transparency Initiative; *World Bank*; [siteresources.worldbank.org/INTOGMC/Resources/Implementing\\_eiti\\_final.pdf](http://siteresources.worldbank.org/INTOGMC/Resources/Implementing_eiti_final.pdf)

- Ֆինանսական թափանցիկությունը բարելավում է ներդրումային միջավայրը,
- կառավարության պատասխանատվությունը բոլոր քաղաքացիների առջև օգնում է եկամուտների և ծախսումների ճիշտ տնօրինմանը,
- մասնակցություն ունեն բոլոր շահագրգիռ կողմերը՝ պետական մարմինները, ընկերությունները, ներդրողները և բազմակողմ, ֆինանսական ու հասարակական կազմակերպությունները:

Թափանցիկության նախաձեռնության իրագործումը պետք է համապատասխանի որոշակի չափանիշների: Ընկերությունների կատարած բոլոր վճարումներն ու կառավարությունների ստացած բոլոր եկամուտները պետք է պարբերաբար հրապարակվեն լայն լսարանի առջև՝ հանրության համար մատչելի, ընդգրկուն և հասկանալի ձևով: Վճարումներն ու եկամուտները ենթակա են վստահելի ու անկախ աուդիտի՝ կիրառելով աուդիտի միջազգային չափանիշները: Վճարումներն ու եկամուտները համեմատվում են վստահելի ու անկախ կառավարչի կողմից, և կառավարչի կարծիքը, ներառյալ որևէ անհամապատասխանություն հրապարակվում է: Քաղաքացիական հասարակությունը ակտիվորեն մասնակցում է այս գործընթացի նախագծմանը, վերահսկողությանն ու գնահատմանը և օժանդակում է հանրային բանավեճին:

ԱՃԹՆ-ը հանդես է գալիս որպես սերտ համագործակցություն՝ կառավարությունների, ընկերությունների, քաղաքացիական հասարակության խմբերի, ներդրողների և միջազգային կազմակերպությունների միջև: Սա արտահայտվում է թափանցիկության նախաձեռնությունը իրագործող երկրների համապատասխան գործընթացներում, ինչպես նաև միջազգային մակարդակով՝ ԱՃԹՆ խորհրդի անդամները ներառում են ներկայացուցիչներ կառավարություններից, ընկերություններից ու քաղաքացիական հասարակությունից և նշանակվում են կառույցի երկամյա համաշխարհային համաժողովի ժամանակ:

Կառույցն ունի լավ մշակված և միևնույն ժամանակ ճկուն մեթոդաբանություն՝ ինչի շնորհիվ տարբեր իրագործող երկրներում գործում է մեկ համաշխարհային չափանիշ: ԱՃԹՆ խորհուրդը և միջազգային քարտուղարությունը այդ մեթոդաբանության երաշխավորն են: Սակայն իրագործումը ինքնին առանձին երկրների պարտավորությունն է: Ըստ էության, թափանցիկության նախաձեռնությունը համաշխարհային մակարդակով մշակված չափանիշ է, որը խրախուսում է եկամուտների թափանցիկությունը տեղային մակարդակով: Կան նաև ԱՃԹՆ մեթոդաբանությունը հաստատող կանոններ, որոնց երկրները պետք է հետևեն՝ կառույցի հետ ամբողջական համապատասխանության մեջ լինելու համար:<sup>22</sup>

### 3.2.3 Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհուրդ

Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհուրդը (ՀՄՄԽ) ընկերությունների մակարդակով նախաձեռնություն է: Այն ստեղծվել է ոլորտում կայուն զարգացման իրագործումը բարելավելու համար և այսօր համախմբում է 21 ընկերությունների, ինչպես նաև 31 ազգային ու տարածաշրջանային հանքարդյունաբերական ասոցիացիաների և համաշխարհային ապրանքահումքային ասոցիացիաների:

Կազմակերպությունը ստեղծվել է բազմաթիվ շահագրգիռ կողմերի հետազոտական մի նախաձեռնությունից՝ Հանքարդյունաբերության, հանածոների և կայուն զարգացման նախագծից, որը ուսումնասիրում էր կայուն ապագայում հանքարդյունաբերության դերը: Այդ ուսումնասիրության արդյունքները ի հայտ բերեցին ոլորտի օժանդակության ներուժը, հիմնական մարտահրավերները և փոփոխությունների օրակարգը՝ ինչը դարձավ ՀՄՄԽ-ը առաքելության հիմքը:

<sup>22</sup> What is the EITI?; *Extractive Industries Transparency Initiative*, [eiti.org/eiti](http://eiti.org/eiti)

Խորհրդի անդամ ընկերությունները հրապարակային պարտավորություն են ստանձնել բարելավել կայուն գործունեության իրենց կատարողականը և տարեկան հաշվետվություններ ներկայացնել առաջընթացի վերաբերյալ: Իմաստալից փոխհարաբերություններ կառուցելու համար այդ ընկերությունները առնչվում են բոլոր շահագրգիռ կողմերի՝ կառավարությունների, միջազգային կազմակերպությունների, համայնքների ու տեղաբնակների, քաղաքացիական հասարակության և գիտակրթական ոլորտի հետ: Մասնավորապես, ՀՄՄԽ-ը աշխատանքը և մյուսների հետ փոխհարաբերությունները հիմնվում են հետյալ սկզբունքների վրա՝

- աշխատողների, համայնքների, կառավարությունների և այլոց հետ առնչությունների ազնվությունը,
- ստանձնած պարտավորությունները կատարելու պատասխանատվությունը,
- ընդհանուր մարտահրավերների ու հնարավորությունների ուղղությամբ ուրիշների հետ բաց, թափանցիկ և ընդգրկուն համագործակցությունը:<sup>23</sup>

ՀՄՄԽ-ը ակտիվորեն համագործակցում է նաև արտաքին շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ՝ Համաշխարհային բանկն ու Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը: Արդյունքում՝ փոխանակվում են փորձն ու լավագույն գործելակերպը, և ընկերությունները կարողանում են հասկանալ՝ թե որ մոտեցումներն են գործնականում աշխատում:<sup>24</sup>

### 3.3 Շրջակա միջավայրի պաշտպանություն

Մոցիալ-տնտեսական զարգացման ցանկացած ռազմավարության կարևոր տարր է հանդիսանում կայուն զարգացման դիտարկումը: Վերջինս առանձնահատուկ առնչություն ունի հանքարդյունաբերության հետ՝ հաշվի առնելով ոլորտի գործունեության ազդեցության չափերը մասնավորապես բնության ու շրջակա միջավայրի վրա: Այս առումով անչափ կարևոր է հստակ ստանդարտների ու կանոնների սահմանումը, որոնց պետք է համապատասխանի հանքարդյունաբերության ոլորտի գործունեությունը: Այս ուղղությամբ միջազգային փորձը ներառում է հստակ մոտեցումներ:

#### 3.3.1 Բնապահպանական միջազգային չափանիշներ

Աշխարհում առաջատար շատ հանքարդյունաբերական ընկերություններ գործադրում են ISO 14001 ստանդարտի<sup>25</sup> վրա հիմնված հանքարդյունաբերության ոլորտին առանձնահատուկ բնապահպանական կառավարման համակարգեր (ԲԿՀ): ԲԿՀ-ը հնարավորություն են տալիս համակարգված կերպով բացահայտել ու ըստ առաջնահերթության դասակարգել բնապահպանական հատկանիշներն ու ազդեցությունները, ներառյալ՝ չկարգավորվող ուղղություններում: Դրանք նաև թույլ են տալիս ավելի շատ հաշվի առնել չբնորոշված կամ չնախատեսված պայմանները, որ կարող են առաջ գալ հանքավայրում՝ խրախուսելով արտակարգ իրավիճակներին պատրաստվածություն և հնարավոր չնախատեսված պայմանների փորձարկումներ:

Ընդհանուր առմամբ, պաշտոնական (ISO 14001 հավատարմագրումով) կամ ոչ պաշտոնական (չհավատարմագրված կամ ինքնահայտարարված) ԲԿՀ-ի գործադրմամբ հանքարդյունաբերական գործունեությունը իրական ու արժեքավոր օգուտներ է ունենում: Այս հա-

<sup>23</sup> About Us; *International Council on Mining and Metals*; [www.icmm.com/](http://www.icmm.com/)

<sup>24</sup> Mining, metal sector more transparent: international council; *Mining Weekly*; [www.miningweekly.com/article/dialogue-brings-progress-2011-03-24](http://www.miningweekly.com/article/dialogue-brings-progress-2011-03-24)

<sup>25</sup> ISO 14000 – Environmental Management; *International Organization for Standardization*; [www.iso.org/iso/iso\\_catalogue/management\\_and\\_leadership\\_standards/environmental\\_management.htm](http://www.iso.org/iso/iso_catalogue/management_and_leadership_standards/environmental_management.htm)

մակարգերի գործադրումը դրական արդյունք է տալիս՝ բարելավված բնապահպանական գործունեության, երաշխավորված իրավական համապատասխանության և էներգետիկ ու նյութական արդյունավետության առումներով: Հիմնավոր ԲԿՀ-ը օգնում է հանքարդյունաբերական ընկերությանը բացահայտել իր պարտավորությունները՝ ավելի քան պարզապես պահանջներին համապատասխանելն է:

Արդյունավետ ԲԿՀ-ը պաշտոնապես սահմանում և գործի է դնում անհրաժեշտ կառուցվածք, գործելակերպ, ընթացակարգեր, գործընթացներ և ռեսուրսներ: Մասնավորապես, ամբողջությամբ բարելավվում են հաղորդակցման, հմտությունների, գիտելիքի և մոտեցումների ուղիները: Հիմնավոր ԲԿՀ-ը կարող է շահագրգիռ կողմերին՝ կարգավորող պետական մարմիններին, բնապահպանական գործակալություններին և հանրությանը, հավաստիացնել, որ ընկերությունը կշարունակի բավարարել բնապահպանական կարգավորմանը համապատասխանության պահանջները և պատրաստ է բարելավել բնապահպանական իր ամբողջ գործունեությունը:

ԲԿՀ գործադրումը հանքարդյունաբերական ընկերությանը թույլ է տալիս կանխատեսել հանրության փոփոխող սպասելիքները, ինչպես նաև բնապահպանական օրենքների ու կանոնակարգերի փոփոխությունները: ԲԿՀ գործադրելը ենթադրում է նաև որոշակի ծախսեր: Օգուտների ու ծախսերի հարաբերակցությունը ուղղակիորեն առնչվում է ընկերության կամ հանքավայրի չափի ու դրանց գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունների հետ: Կարևոր հանգամանք է նաև թե ընկերությունը արդեն որքան ԲԿՀ տարրեր ունի իր կառավարման մեջ: ԲԿՀ հատկանշական օգուտներից լրացուցիչ կարելի է նշել հետևյալը՝

- ISO 14001 ստանդարտի տարրերին համապատասխան ԲԿՀ-ը ցուցադրում է, որ հանքարդյունաբերական ընկերությունը կիրառում է կառավարման այնպիսի համակարգ, որը համապատասխանում է որակի միջազգայնորեն ընդունված և չափելի չափանիշներին,
- արդյունավետ ԲԿՀ-ը նվազեցնում է բնապահպանական ռիսկն ու պատասխանատվությունը: Բարելավվում են փաստաթղթավորումն ու ընթացակարգերը: Տեղի է ունենում բնապահպանական կառավարման ծախսերի խնայողություն,
- ԲԿՀ-ը հնարավորություն է տալիս ընկերությանը նպատականշել և չափել առաջխաղացումը՝ օգտագործելով հետևողական մեթոդներ,
- արդյունավետ ԲԿՀ-ը թույլ է տալիս ընկերությանը ոչ միայն կիրառել բնապահպանական հիմնավոր կառավարում, այլև տալիս է հնարավորություն ապացուցելու, որ այն փաստացի հասնում է դրան,
- հանքավայրում բնապահպանական կառավարման շարունակվող բարելավումը որպես արդյունք բերում է օգուտներ՝ հաստատելով, որ ԲԿՀ-ը կիրառումը արդյունավետ է,
- բարձրանում է ընկերության աշխատակազմի բնապահպանական հարցերով իրազեկվածությունը: Բարելավվում են աշխատակազմի ոգին, գործառնությունները: Ավելանում է համագործակցությունը՝ տարբեր բաժինների աշխատողների ընդհանուր նպատակի շուրջ աշխատելու արդյունքում,
- ISO 14001-ի գրանցումը կարող է միջազգային շուկաներում դառնալ փաստացի պահանջ:<sup>26</sup>

Բնապահպանության բնագավառում կան նաև ընկերությունների մակարդակով միջազգային համագործակցության նախաձեռնություններ: Դրանցից է նախորդ բաժնում դիտարկված Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհուրդը (ՀՄՄԽ): Մասնավորապես, ՀՄՄԽ-ը աշխատանքը և մյուսների հետ փոխհարաբերությունները հիմնվում

<sup>26</sup> Mining and ISO 14000; *EnviroGulf Consulting*; [www.envirogulf.com/mining\\_iso.html](http://www.envirogulf.com/mining_iso.html)

են մի շարք սկզբունքների վրա, այդ թվում՝ մարդկանց ու շրջակա միջավայրի նկատմամբ հարգանքը և ընդունող հասարակությունների արժեքների նկատմամբ ուշադրությունը:<sup>27</sup>

### 3.3.2 Եվրոմիության բնապահպանական գործելակերպը

Եվրոմիությունը (ԵՄ) հանդիսանում է աշխարհում հանքարդյունաբերության իրավական կարգավորման լավագույն գործելակերպի առաջատարներից մեկը: Եվրոպական խորհրդի (ԵԽ) Ձեռնարկության և արդյունաբերության գլխավոր տնօրինությունը պատասխանատու է արդյունաբերական ճյուղերի, այդ թվում՝ Հանքարդյունաբերության, մետաղների և հանածոների<sup>28</sup>, քաղաքականության համար: Մինևույն ժամանակ, ԵԽ Շրջակա միջավայրի գլխավոր տնօրինությունը պատասխանատու է տարբեր ուղղություններով, այդ թվում՝ Հանքարդյունաբերության թափոնների<sup>29</sup>, քաղաքականության համար:

Հանքարդյունաբերության թափոնների վնասակար ազդեցությունը կարող է ունենալ մնացած բնապահպանական ու սոցիալ-տնտեսական հետևանքներ և լինել ծայրահեղ դժվար ու ծախսատար՝ վերականգնողական միջոցառումներով կարգավորելու համար: Հետևաբար, այս թափոնները պետք է պատշաճ կերպով տնօրինվեն՝ մասնավորապես լցակայանների երկարաժամկետ կայունություն ապահովելու համար, ինչպես նաև թթու կամ ալկալային դրենաժի և ծանր մետաղների դուրս թափանցելու հետևանքով ջրի կամ հողի հնարավոր աղտոտումը կանխելու կամ նվազեցնելու համար: Այդ նպատակով, արդյունահանող ճյուղերի թափոնների անվտանգ կառավարման համար ԵՄ մակարդակով ընդգրկուն օրենսդրություն է մշակվել: Այդ փաթեթի բաղկացուցիչ մաս է հանդիսանում «Առկա լավագույն մեթոդներ» տեղեկանք փաստաթուղթը՝ հանքարդյունաբերական գործունեության պոչանքների և քարի թափոնների տնօրինման համար:

Այդ փաստաթուղթը անդրադառնում է զգալի բնապահպանական ազդեցության ներուժ ունեցող հանքատեսակների պոչանքների ու քարի թափոնների կառավարման հետ կապված գործողություններին: Մասնավորապես, ներառված են այն գործողությունները, որոնք կարող են համարվել լավ գործելակերպի օրինակներ: Հանքարդյունաբերական մեթոդներն ու հանածոների մշակումը շոշափվում են միայն պոչանքների ու քարի թափոնների տնօրինության առնչությամբ: Նպատակն է բարձրացնել այդպիսի գործելակերպերի մասին իրազեկությունը և խրախուսել դրանց օգտագործումը ոլորտում գործունեության բոլոր տեսակներում:

Լավագույն մեթոդների փաստաթուղթը մշակվել է ԵՄ անդամ պետությունների և հանքարդյունաբերության ոլորտի միջև տեղեկատվության փոխանակման հիման վրա: Այն մշակվել է որպես ԵԽ նախաձեռնություն և պետք է նաև օժանդակի «Արդյունահանող ճյուղերի թափոնների կառավարման» դիրեկտիվի իրագործմանը: Վերջինս պահանջում է ձեռնարկել լավագույն մեթոդների փաստաթղթի վրա հիմնված միջոցներ:<sup>30</sup>

Հանքարդյունաբերական գործունեությունում պոչանքների և քարի թափոնների կառավարման լավագույն մեթոդների փաստաթուղթը անկախ արտադրված քանակներից կամ հանածոյի մշակման մեթոդից (մեխանիկական կամ քիմիական կամ հիդրոմետալուրգիական) դիտարկում է հետևյալ մետաղները՝ ալյումին, կադմիում, քրոմ, պղինձ, ոսկի, երկաթ, կապար, մանգան, սնդիկ, նիկել, արծաթ, անագ, վոլֆրամ և ցինկ:

<sup>27</sup> About Us; *International Council on Mining and Metals*; [www.icmm.com/](http://www.icmm.com/)

<sup>28</sup> Mining, Metals and Minerals; *European Commission*; [ec.europa.eu/enterprise/sectors/metals-minerals/index\\_en.htm](http://ec.europa.eu/enterprise/sectors/metals-minerals/index_en.htm)

<sup>29</sup> Mining Waste; *European Commission*; [ec.europa.eu/environment/waste/mining/index.htm](http://ec.europa.eu/environment/waste/mining/index.htm)

<sup>30</sup> Mining Waste, BAT Reference Document; *European Commission*; [ec.europa.eu/environment/waste/mining/bat.htm](http://ec.europa.eu/environment/waste/mining/bat.htm)

Հետևյալ արդյունաբերական հանածոները նույնպես ներառված են՝ բարիտներ, բորա- ներ, դաշտային շպատ (եթե ստացվել է ֆլոտացման եղանակով), ֆլյուորիտ, կաոլին (եթե ստացվել է ֆլոտացման եղանակով), կրաքար (եթե մշակվել է), ֆոսֆատ, կալիումի կարբո- նատ (պոտաշ), ստրոնցիում և տալկ (եթե ստացվել է ֆլոտացման եղանակով): Ներառված այլ հանածոների թվում է քարածուխը՝ միայն երբ այն մշակվում է և առաջանում են պոչանք- ներ: Ընդհանուր առմամբ, սա նշանակում է, որ սև քարածուխը (անթրացիտ) ներառված է, իսկ գորշ քարածուխը (լիգնիտ), որը սովորաբար չի մշակվում, ներառված չէ:<sup>31</sup>

### 3.4 Անվտանգություն

Ստանդարտներով ու կանոններով կարգավորվող ուղղություն է նաև տեխնիկական անվ- տանգությունը: Հանքարդյունաբերությունը ավանդաբար հանդիսանում է առանձնահա- տուկ գործունեությամբ պայմանավորված տեխնիկական ռիսկերով հագեցված ոլորտ: Այս առումով անչափ կարևոր են հստակ ստանդարտների ու կանոնների սահմանումը, որոնց պետք է համապատասխանի հանքարդյունաբերության ոլորտի գործունեությունը: Այս ուղ- դությամբ միջազգային փորձը նույնպես ներառում է հստակ մոտեցումներ:

#### 3.4.1 Անվտանգության միջազգային չափանիշներ

Աշխատանքային առողջության ու անվտանգության կառավարման համակարգի միջազ- գային դասակարգում է՝ OHSAS 18000-ը: Այն բաղկացած է երկու մասից՝ 18001 ու 18002, և ներառում է մի շարք այլ հրատարակություններ: OHSAS 18001-ը Աշխատանքային առողջու- թյան ու անվտանգության գնահատման ստանդարտների շարք է՝ առողջության ու անվտան- գության կառավարման համակարգերի համար: Այն նախատեսված է օգնել կազմակերպու- թյուններին՝ վերահսկել աշխատանքային առողջության ու անվտանգության (ԱԱԱ) ռիսկերը: OHSAS 18001-ը մշակվել է ի պատասխան համատարած պահանջարկին՝ այնպիսի ճանաչ- ված ստանդարտի համար, որի նկատմամբ կարելի է գնահատվել և հավատարմագրվել:

OHSAS 18001-ը ստեղծվել է աշխարհի մի շարք առաջատար ազգային ստանդարտների մարմինների (այդ թվում՝ Մեծ Բրիտանիայի, Իռլանդիայի, Ավստրալիայի և Հարավային Աֆրիկայի), հավատարմագրման մարմինների և մասնագիտացված խորհրդրդատվական կազմակերպությունների համատեղ ջանքերով: Դրա համար հիմնական խթան է հան- դիսացել աշխատավայրում հավատարմագրերի ԱԱԱ դասակարգումների բազմությու- նից խստնաշփոթությունը վերացնելու փորձը: Պետք է նշել, որ OHSAS 18001-ի ստեղծմա- նը ներգրավված հավատարմագրման

մարմինների բաժինը կառավարման համակարգերի հավատարմագրման համաշխարհային շուկայում կազ- մում է մոտ 80 տոկոս:

OHSAS դասակարգումը կիրառելի է ցանկացած կազմակերպության հա- մար, որ նպատակ ունի հաստատել ԱԱԱ կառավարման համակարգ՝ աշ- խատողների և այլ շահագրգիռ կող- մերի նկատմամբ իր գործունեության հետ կապված համապատասխան ռիսկերը վերացնելու կամ նվազեցնել-



Միջազգային փորձից ելնելով՝ ստեղծվել է OHSAS 18001-ը, որը Աշխատանքային առողջության ու անվտանգության գնահատման ստանդարտների շարք է

<sup>31</sup> Management of Tailings and Waste-rock in Mining Activities; *European Commission*; [eippcb.jrc.ec.europa.eu/reference/mmr.html](http://eippcb.jrc.ec.europa.eu/reference/mmr.html)

լու համար: Կազմակերպությունը կարող է նաև ապահովել իր համապատասխանությունը իր հաստատած ԱԱԱ քաղաքականության հետ, ինչպես նաև ցուցադրել իր այդ համապատասխանությունը այլ կողմերի՝ միաժամանակ իրագործելով, պահպանելով և շարունակաբար բարելավելով ԱԱԱ կառավարման համակարգը: Կազմակերպությունը կարող է ինքը որոշել և հայտարարել իր համապատասխանությունը OHSAS դասակարգման հետ: Այն կարող է նաև նպատակ ունենալ հավատարմագրելու կամ գրանցելու իր ԱԱԱ կառավարման համակարգը՝ արտաքին կազմակերպության կողմից:<sup>32</sup>

OHSAS 18001-ը մշակվել է այնպես, որ համատեղելի լինի ISO 9001 (որակ) և ISO 14001 (շրջակա միջավայր) կառավարման համակարգերի ստանդարտների հետ՝ որպեսզի հեշտացվի կազմակերպությունների ցանկության դեպքում որակի, շրջակա միջավայրի և աշխատանքային առողջության ու անվտանգության կառավարման համակարգերի ինտեգրացումը: OHSAS դասակարգումը տալիս է պահանջներ ԱԱԱ կառավարման համակարգի համար՝ կազմակերպությանը հնարավորություն տալով վերահսկել համապատասխան ռիսկերը և բարելավել իր գործունեությունը: Այդ դասակարգումը չի բնորոշում առանձնահատուկ ԱԱԱ կատարման չափանիշներ և չի տալիս կառավարման համակարգի նախագծման մանրամասը նկարարագրություն:<sup>33</sup>

Տեխնիկական անվտանգության բնագավառում կան նաև ընկերությունների մակարդակով միջազգային համագործակցության նախաձեռնություններ: Դրանցից է նախորդ բաժիններում դիտարկված Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհուրդը (ՀՄՄԽ): Մասնավորապես, ՀՄՄԽ-ը աշխատանքը և մյուսների հետ փոխհարաբերությունները հիմնվում են մի շարք սկզբունքների վրա, այդ թվում՝ աշխատողների, կապալառուների, ընդունող համայնքների և նյութեր օգտագործողների անվտանգությունը, առողջությունը և բարօրությունը:<sup>34</sup>

### 3.4.2 Եվրոմիության անվտանգության գործելակերպը

Եվրոպական խորհրդի Զբաղվածության, սոցիալական հարցերի և ընդգրկման գլխավոր տնօրինությունը պատասխանատու է աշխատանքի հարցերի, այդ թվում՝ Աշխատավայրում առողջության և անվտանգության<sup>35</sup>, քաղաքականության համար: Աշխատավայրում առողջության և անվտանգության հարցը ԵՄ սոցիալական քաղաքականության ամենակարևոր ուղղություններից է: Այս բնագավառում ընդունված օրենսդրության զգալի փաթեթը առնչվում է առավելագույն քանակով ռիսկերի հետ՝ կանոնակարգերի նվազագույն քանակով:

Եվրոպական ջանքերը չեն սահմանափակվում միայն օրենսդրությունով: ԵՄ-ը ընդլայնել է իր գործառնությունների շրջանակները և համագործակցում է Աշխատավայրում առողջության ու անվտանգության եվրոպական գործակալության և Ապրելու ու աշխատելու պայմանների բարելավման եվրոպական հիմնադրամի հետ՝ առողջ աշխատանքային միջավայրի տեղեկատվության, օժանդակության և խրախուսման համար:

Ավելին, ԵՄ առաջնորդվում է այս բնագավառում բարելավման 2007-2012 թթ. ռազմավարությամբ, որը նպատակ ունի հասնել աշխատանքային պատահարների և հիվանդությունների կայուն նվազեցման՝ հետևյալ հիմնական ուղղություններում մի շարք գործողությունների միջոցով՝

<sup>32</sup> The Health and Safety and OHSAS Guide; *OHSAS 18001 Occupational Health and Safety Zone*, [www.ohsas-18001-occupational-health-and-safety.com/index.htm](http://www.ohsas-18001-occupational-health-and-safety.com/index.htm)

<sup>33</sup> OHSAS 18001; *The BS8800 OHSAS and OSHA Health and Safety Management Group*, [www.osha-bs8800-ohsas-18001-health-and-safety.com/ohsas-18001.htm](http://www.osha-bs8800-ohsas-18001-health-and-safety.com/ohsas-18001.htm)

<sup>34</sup> About Us; *International Council on Mining and Metals*; [www.icmm.com/](http://www.icmm.com/)

<sup>35</sup> Health and Safety at Work; *European Commission*; [ec.europa.eu/social/main.jsp?catId=148&langId=en](http://ec.europa.eu/social/main.jsp?catId=148&langId=en)

- առկա օրենսդրության բարելավում ու պարզեցում և գործնականում այդ օրենսդրության իրագործման աստիճանի բարձրացում այնպիսի չպարտավորեցնող գործիքներով, ինչպիսիք են՝ լավ գործելակերպերի փոխանակումը, իրազեկություն բարձրացնող միջոցառումները և ավելի լավ տեղեկատվությունն ու վերապատրաստումը,
- ազգային ռազմավարությունների սահմանում և իրագործում՝ հարմարեցված յուրաքանչյուր անդամ երկրի առանձնահատուկ ենթատեքստին: Այս ռազմավարությունները պետք է վերաբերվեն առավել խնդրահարույց ոլորտներին ու ընկերություններին և ամրագրեն ազգային ցուցանիշներ՝ աշխատանքային պատահարներն ու հիվանդությունները նվազեցելու համար,
- աշխատավայրում առողջության ու անվտանգության հարցի ներառում ազգային ու եվրոպական քաղաքականության այլ բնագավառներում (կրթություն, հանրային առողջություն, հետազոտություններ) և նոր գործակցությունների որոնում,
- հնարավոր նոր ռիսկերի ավելի լավ բացահայտում և գնահատում՝ ավելի շատ հետազոտությունների, գիտելիքի փոխանակության և արդյունքների գործնական կիրառման միջոցով:<sup>36</sup>

Անդրադառնալով օրենսդրությանը նշենք, որ աշխատավայրում առողջության ու անվտանգության վրա ազդող առանցքային հիմնախնդիրների ուղղությամբ ԵՄ աշխատանքը դասակարգվում է ըստ գործունեության հետևյալ ուղղությունների՝ աշխատավայրեր, աշխատանքի սարքավորում, աշխատողների կատեգորիաներ, ֆիզիկական ազենտներ, քիմիական ազենտներ, քաղցկեղածին ազենտներ, ասբեստ, կենսաբանական ազենտներ, հոգեբանական-սոցիալական գործոններ, էրգոնոմիկա, աշխատանքային հիվանդություններ և միջազգային համագործակցություն:<sup>37</sup>

Մասնավորապես, աշխատավայրերի մասով կան աշխատավայրի համար անվտանգության ու առողջության նվազագույն պահանջներ, որոնք մշակված են ըստ վայրերի տեսակի, որտեղ աշխատանք է կատարվում, և ներառված են համապատասխան դիրեկտիվում (89/654/EEC): Այս դիրեկտիվը մասնավորապես պահանջում է, որ առողջության և անվտանգության հարցերը հաշվի առնվեն նախագծերի մշակման և կազմակերպման ժամանակ: Այն նաև պահանջում է հաստատել պատասխանատվության շղթա և կապել բոլոր ներգրավվածներին՝ հնարավոր ռիսկերը նվազեցնելու համար: Նաև գործատուները պարտավոր են դիրեկտիվում նշված հարցերի առնչությամբ տեղեկացնել, խորհրդակցել և աշխատողների մասնակցություն ապահովել:

Հանքարդյունաբերության ոլորտին առնչվող լրացուցիչ պահանջները տրվում են առանձին դիրեկտիվներով կարգավորվող երեք բաժիններով՝

- հորատանցքեր օգտագործող արդյունահանող ճյուղեր,
- մակերեսային և ստորգետնյա արդյունահանող ճյուղեր,
- պայթուցանավտանգ միջավայրերում օգտագործվող սարքավորում և պաշտպանիչ համակարգեր:

Մակերեսային և ստորգետնյա արդյունահանող ճյուղերում աշխատողների անվտանգության ու առողջության պաշտպանությունը բարելավելու համար նվազագույն պահանջների առնչությամբ անհատական դիրեկտիվ է ընդունվել (92/104/EEC): Այս դիրեկտիվը վերաբերում է բոլոր այն ճյուղերին, որոնք ներգրավված են հանածոների բացօթյա կամ ստորգետնյա արդյունահանման և կամ ուսումնասիրությունների հետ առնչվող գործունեության մեջ:

<sup>36</sup> Health and Safety at Work: EU Strategy 2007–2012; *European Commission*; ec.europa.eu/social/main.jsp?catId=151&langId=en

<sup>37</sup> Health and Safety at Work: Areas of Activity; *European Commission*; ec.europa.eu/social/main.jsp?catId=716&langId=en



Մասնավորապես, այն պահանջում է, որ ապահովվի գործողությունների ընթացում պատասխանատու վերահսկողություն, առանձնահատուկ ռիսկեր պարունակող աշխատանքը կատարվի միայն մասնագետ աշխատողների կողմից և անվտանգության ցուցումները հասկանալի լինեն բոլոր առնչվող աշխատողներին: Գործատուները պարտավոր են գնահատել ռիսկերը և մշակել առողջության ու անվտանգության փաստաթուղթ:<sup>38</sup>

Աշխատավայրի առողջությանն ու անվտանգությանը վերաբերվող ԵՄ օրենսդրության մշակման ընդհանուր գործընթացի առնչությամբ նշենք նաև, որ դրա կարևոր մաս են կազմում անդամ երկրների ազգային փորձագետներին համալսմբող հանձնաժողովները: Ազգային մասնագետների հանդիպումները օգնում են համալսմբել արժեքավոր գիտելիքները, փորձագիտությունը և խորհրդատվությունը՝ ԵՄ որոշումների պատրաստման և իրագործման գործընթացում:

Այս հանձնաժողովների հանդիպումները նաև էական են կարգավորման միջոցառումների և տեխնիկական ստանդարտների գնահատման ու թարմացման ներկայիս գործընթացում՝ արդյունաբերական էվոլյուցիայի ու մոտեցումների փոփոխման հետ զուգահեռ: Օրենսդրության վերահսկողությանն ու կիրարկմանը օժանդակելու հետ մեկտեղ՝ փորձագետների հանդիպումները նաև օգնում են ապահովել խորհրդակցությունը արդյունաբերության երկու կողմերի միջև:

Նշված ուղղությամբ ներկայումս գործող ԵՄ հանձնաժողովներն են՝ Աշխատավայրում անվտանգության ու առողջության խորհրդատվական հանձնաժողովը, Մասնագիտական ազդեցության ենթարկվելու սահմանաչափերի գիտական հանձնաժողովը, և Աշխատանքային ավագ տեսուչների հանձնաժողովը:<sup>39</sup>

### 3.5 Իրավունքների ու օրինական շահերի պաշտպանություն

Ըստ էության հանքարդյունաբերական նախագծերի իրականացման համար թույլտվությունների տրամադրումը բանակցությունների արդյունք է՝ հանքարդյունահանող կողմի և պետության միջև: Վերջինս ներկայացնում է ժողովրդի իրավունքներն ու օրինական շահերը և հանդիսանում է դրանց պաշտպանը: Ժողովրդի դիրքը այդ բանակցություններում ճակատկերում է ներկայացվող շահերի հավասարակշռմամբ:

Մի կողմից մասնավոր ներդրումների համար համաշխարհային մրցակցությունը ստիպում է երկրներին սահմանել օրենսդրությամբ հաստատված հնարավորինս գրավիչ պայմաններ՝ հանքարդյունահանող կողմի համար, որ ներառում է նաև մրցունակ ֆիսկալ և հարկային պայմաններ:<sup>40</sup> Իսկ մյուս կողմից էլ կա ժողովրդին պատկանող օգտակար հանածոների շահագործման արդյունքում հնարավորինս առավելագույն սոցիալ-տնտեսական օգուտներ ստանալու անհրաժեշտություն:

#### 3.5.1 Փոխհատուցում

Հանքարդյունաբերության ոլորտում ֆինանսական փոխհատուցման առումով նշենք, որ աշխարհում կիրառվում են տարբեր տեսակի ռոյալթիներ, այդ թվում՝ միավորի վրա հիմն-

<sup>38</sup> Health and Safety at Work: Areas of Activity – Work Places; *European Commission*; [ec.europa.eu/social/main.jsp?catId=716&langId=en&intPageId=219](http://ec.europa.eu/social/main.jsp?catId=716&langId=en&intPageId=219)

<sup>39</sup> Health and Safety at Work: Committees; *European Commission*; [ec.europa.eu/social/main.jsp?catId=153&langId=en](http://ec.europa.eu/social/main.jsp?catId=153&langId=en)

<sup>40</sup> International Mineral Regulatory Best Practice; *Spatial Dimension*; [www.spatialdimension.com/LinkClick.aspx?fileticket=Ta5%2F5jT9dus%3D&tabid=153](http://www.spatialdimension.com/LinkClick.aspx?fileticket=Ta5%2F5jT9dus%3D&tabid=153)

ված<sup>41</sup>, արժեքի վրա հիմնված<sup>42</sup>, շահույթի ու եկամտի վրա հիմնված<sup>43</sup> և հիբրիդային համակարգեր<sup>44</sup>: Ընդ որում, նույն իրադրությունում նույն հավաքագրվող ամբողջ գումարի դեպքում՝ տարբեր տեսակի ռոյալթիները ենթադրում են տարբեր դրույքաչափեր:

Մասնավորապես, ըստ իրացման արժեքի ռոյալթիների դրույքաչափերը տատանվում են նվազագույնը գրոյից (Զիմբաբվե) մինչև առավելագույնը 12 տոկոս (Գանա, գերշահույթների դեպքում): Որպես կանոն՝ ավելի մեծ արժեք ունեցող հանքանյութերի, ավելի մեծ հանքերի, ավելի մեծ արտադրության ու ավելի բարձր շահույթների դեպքում կիրառվում են ավելի բարձր ռոյալթիներ: Ինչ վերաբերվում է որոշ երկրների գրոյական կամ ցածր ռոյալթիներին, ապա դրանց հիմքում հաճախ ընկած է օտարերկրյա ներդրումներ խրախուսելու նպատակը: Մակայն, օրինակ Զիմբաբվեի փորձը ցույց է տվել, որ ներդրումների մակարդակը ավելի շատ կախված է երկրի ներքաղաքական վիճակից, ընդհանուր գործարար միջավայրի որակից ու կոռուպցիայի մակարդակից:<sup>45</sup>

### 3.5.2 Պատասխանատվության միջազգային չափանիշներ

Մինչ համայնքների զարգացման և այլ սոցիալական ծրագրերով ռոյալթիներից ստացված եկամտի տնօրինումը երկրներում պետական ռազմավարության ու հանրային բանավեճի խնդիր է, առաջատար հանքարդյունաբերական ընկերությունները իրենց նախաձեռնությամբ օժանդակում են այդ ծրագրերին: Մասնավորապես, այդ ընկերությունները գործադրում են ISO 26000 ստանդարտի<sup>46</sup> վրա հիմնված սոցիալական պատասխանատվության կառավարման համակարգեր: Դրանց օգնությամբ ընկերությունները ավելի լավ են պատկերացնում շահագրգիռ կողմերի սպասելիքները և ավելի լավ փոխհարաբերությունների մեջ են նրանց հետ:<sup>47</sup>

Ընդհանուր առմամբ, չկան որևէ միջազգային չափանիշներ՝ նեգրավված համայնքների տնտեսական զարգացմանը հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների տրամադրած օժանդակությունը գնահատելու համար: Ընկերությունների օժանդակության բնույթն ու ծավալները խիստ տարբերվում են: Դա ներառում է աջակցություն տեղական մարդասիրական կամ կայուն զարգացման ծրագրերին, ինչպես նաև տեղական կարողությունների զարգացմանը՝ տեղական աշխատուժի վերապատրաստման և աշխատանքի ընդունման միջոցով: Ընկերությունները համայնքների օժանդակության ծրագրերին հատկացնում են որոշակի միջոցներ, որոնք կարող են կազմել նրանց տարեկան նախքան հարկումը շահույթի մինչև մեկ տոկոսը: Ընկերությունների միջազգային համագործակցության մակարդակով՝ Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհուրդը (ՀՄՄԻ) խրախուսում է համայնքների սոցիալական, տնտեսական ու ինստիտուցիոնալ զարգացմանը ընկերությունների տրամադրած օժանդակությունը:<sup>48</sup>

<sup>41</sup> քաշ, ծավալ և այլն, ձեռնատու է կառավարությունների համար

<sup>42</sup> ad valorem, ձեռնատու է կառավարությունների համար

<sup>43</sup> ձեռնատու է ներդրողների համար

<sup>44</sup> օրինակ՝ ցածր շահույթների դեպքում կիրառվում է նվազագույն արժեքային սահման

<sup>45</sup> Mining Royalties; *World Bank*; [siteresources.worldbank.org/INTOGMC/Resources/336099-1156955107170/miningroyaltiespublication.pdf](http://siteresources.worldbank.org/INTOGMC/Resources/336099-1156955107170/miningroyaltiespublication.pdf)

<sup>46</sup> ISO 26000 – Social Responsibility; *International Organization for Standardization*; [www.iso.org/iso/iso\\_catalogue/management\\_standards/social\\_responsibility.htm](http://www.iso.org/iso/iso_catalogue/management_standards/social_responsibility.htm)

<sup>47</sup> Setting the Standard on Social Responsibility; *Mining, People and the Environment*; [www.mpe-magazine.com/reports/industry-guidelines-setting-the-standard-on-social-responsibility](http://www.mpe-magazine.com/reports/industry-guidelines-setting-the-standard-on-social-responsibility)

<sup>48</sup> Company Codes of Conduct and International Standards: An Analytical Comparison; *World Bank*; [siteresources.worldbank.org/INTPSD/Resources/Angola/Angola\\_CompanyCodesofConduct.pdf](http://siteresources.worldbank.org/INTPSD/Resources/Angola/Angola_CompanyCodesofConduct.pdf)

ՀՄՄԽ-ը մշակում և իրականացնում է համայնքների զարգացման ծրագրեր: Այդ ծրագրերի նպատակն է ապահովել համայնքների կարիքներին համապատասխան արդյունք, որի օգուտները կշարունակվեն նաև հանքերի փակվելուց հետո: Դրան հասնելու համար՝ ՀՄՄԽ-ը Համաշխարհային բանկի հետ համատեղ մշակել է գործնական ուղեցույց, որը կարող է օգտագործվել ընկերությունների, համայնքների, կառավարությունների և հասարակական կազմակերպությունների կողմից:<sup>49</sup>

### 3.6 Հետևություններ

Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի կարգապահությունն ու պատասխանատու գործունեությունը կարևորվում են թե՛ առնչվող հիմնախնդիրների բարդությամբ և թե՛ դրանց ծավալներով՝ պայմանավորված ոլորտի աճով: Ինչպես նշվել էր՝ ընդհանուր առմամբ խնդիրները վերաբերում են ոլորտում պետական կարգավորիչ գործընթացներում կոռուպցիոն ռիսկերին, շրջակա միջավայրին հասցվող վնասին, տեխնիկական վտանգներին, ինչպես նաև գործունեության դիմաց ոչ բավարար փոխհատուցման հարցերին:

Կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու համար Հայաստանում կարող է ստեղծվել մի անկախ կարգավորիչ մարմին, որը կունենա Ազգային ժողովի կամ Նախագահի կողմից նշանակվող բազմաթիվ անդամներից կազմված խորհուրդ: Այդ մարմինը իրավասու կլինի դիտարկել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ուսումնասիրության ծրագրերը, արդյունահանման նախագծերը, դրանց վերաբերյալ Բնապահպանության ու Արտակարգ իրավիճակների նախարարությունների փորձաքննությունների եզրակացությունները և իր առաջարկը տալ Էներգետիկայի ու բնական պաշարների նախարարությանը՝ համապատասխան թույլտվությունների տրամադրման վերաբերյալ: Հակառակ որոշումներ ընդունելու պարագայում այդ նախարարությունը կտա հիմնավորում: Սա կհակակշռի նշված երեք նախարարությունների որոշումներ կայացնելու բացառիկ իրավասությանը: Ֆինանսական ու մարդկային ռեսուրսների ապահովման մոտեցումները կմշակվեն լրացուցիչ ուսումնասիրություններից հետո:

Ըստ վերջին տարիներին արտահանման ցուցանիշների՝ Հայաստանը հանդիսանում է հանածոներով հարուստ երկիր և ոլորտում թափանցիկության ու պատասխանատվության համաշխարհային չափանիշներ ապահովելու համար կարող է անդամակցել «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն» միջազգային կառույցին: Այդ կառույցի պահանջները կատարելու արդյունքում կապահովվի թե՛ ընկերությունների վճարումների ու առնչվող պետական եկամուտների հրապարակայնությունը և թե՛ բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավվածությունն ու հանրային բանավեճի արդյունքում կայուն զարգացման ուղիների ընտրության հնարավորությունը: Նախաձեռնության իրագործման հարցում կարելի է ակնկալել Համաշխարհային բանկի ֆինանսական ու տեխնիկական աջակցությունը:

Հայաստանը կարող է նաև լրացուցիչ ուղիներ գտնել ընկերությունների շրջանում



Հայաստանը կարող է մշակել կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու, բնապահպանության և տեխնիկական անվտանգության նոր ստանդարտներ

<sup>49</sup> Projects: Community Development; *International Council on Mining and Metals*; [www.icmm.com/page/236/community-development](http://www.icmm.com/page/236/community-development)

բոլոր շահագրգիռ կողմերի հետ փոխհարաբերություններում ազնվության, պատասխանատվության և համագործակցության խրախուսման համար՝ ըստ Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի (ՀՄՄԽ) կողմից մշակված լավագույն գործելակերպի չափանիշների: Ոլորտում գործունեություն սկսելու և իրականացնելու բոլոր փուլերում այդ չափանիշների կատարումը կարող է ապահովվել հնարավոր բոլոր լծակներով՝ բանակցելուց մինչև համապատասխան կանոնակարգերով պարտավորեցնելը:

Բնապահպանական և տեխնիկական անվտանգության հարցերում Հայաստանի համար ուղեցույցային կարող են լինել զուգահեռաբար միջազգային ստանդարտների տեղայնացումն ու դրանց վրա հիմնված տեխնիկական կանոնակարգերի ընդունումը և Եվրոմիության հետ ինտեգրման պետական քաղաքականության շրջանակներում ԵՄ փորձի ու օրենսդրական նախաձեռնությունների ամբողջ գործելակերպի տեղայնացումն ու ընդունումը:

Բնապահպանության առումով Հայաստանը կարող է մշակել միջազգային ISO 14001-ի վրա հիմնված ստանդարտներ և այնուհետև դրանց հիման վրա մշակել այնպիսի տեխնիկական կանոնակարգեր, որոնց ընկերությունների համապատասխանության արդյունքում կապահովվի միջազգային առաջատար ընկերությունների կողմից գործադրվող բնապահպանական կառավարման համակարգերին հավասարագոր արդյունք: Կարող են նաև կիրառվել շրջակա միջավայրին առնչվող ՀՄՄԽ չափանիշները: ԵՄ մասով՝ կարող է մասնավորապես քննարկվել ոլորտի թափոնների կառավարման օրենսդրությունը և ընդունվել «Առկա լավագույն մեթոդներ» փաստաթուղթը, որը նկարագրում է հստակ գործողություններ առանձին հանքատեսակների պոչանքների դեպքում:

Տեխնիկական անվտանգության առումով Հայաստանը կարող է մշակել միջազգային OH-SAS 18001-ի վրա հիմնված ստանդարտներ և այնուհետև դրանց հիման վրա մշակել այնպիսի տեխնիկական կանոնակարգեր, որոնց ընկերությունների համապատասխանության արդյունքում կապահովվի միջազգային առաջատար ընկերությունների կողմից գործադրվող աշխատանքային առողջության ու անվտանգության (ԱԱԱ) կառավարման համակարգերին հավասարագոր արդյունք: Կարող են նաև կիրառվել անվտանգությանն առնչվող ՀՄՄԽ չափանիշները: ԵՄ մասով՝ կարող է մասնավորապես քննարկվել ԱԱԱ օրենսդրությունն ու ռազմավարությունը և ընդունվել փորձագետների հանձնաժողովներով օրենսդրության մշակման, գնահատման, թարմացման, վերահսկողության ու իրագործման գործելակերպը:

Փոխհատուցման առնչությամբ պետք է նշել, որ Հայաստանում որևէ ընկերության շահույթը նախքան հարկումը պետք է կազմի դրա առանց ԱԱՀ-ի հասույթի 64 տոկոսը, որպեսզի ռոյալթիի դրույքաչափը հավասարվի աշխարհում առավելագույն 12 տոկոսին՝ ինչը գործնականում քիչ հավանական է:<sup>50</sup> Ինչևիցե, ռոյալթիից ստացվող եկամտի նշանակալի մասը պետք է հատկացվի համայնքների սոցիալական զարգացման ծրագրերին: Ավելին, լրացուցիչ սոցիալական օժանդակության համար ընկերությունների կողմից ISO 26000-ի չափանիշների կատարում կարող է ապահովվել հնարավոր և կիրառելի լծակներով՝ բանակցելուց մինչև համապատասխան կանոնակարգերով պարտավորեցնելը: Ընկերությունների ծրագրերը նպատակային ուղղորդելու համար կարող է հիմք ընդունվել ՀՄՄԽ կողմից մշակված համայնքների զարգացման գործնական ուղեցույցը:

<sup>50</sup>  $R = 4 + [\mathcal{C}/(Z \times 8)] \times 100 = 4 + [0,64/8] \times 100 = 4 + 8 = 12$

## Հղումներ

1. Արտակարգ իրավիճակների նախարարություն; [www.mes.am/](http://www.mes.am/)
2. Բնապահպանության նախարարություն; [www.mnp.am/](http://www.mnp.am/)
3. Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն; [www.minenergy.am/](http://www.minenergy.am/)
4. About Us; *International Council on Mining and Metals*; [www.icmm.com/](http://www.icmm.com/)
5. Company Codes of Conduct and International Standards: An Analytical Comparison; *World Bank*; [siteresources.worldbank.org/INTPSD/Resources/Angola/Angola\\_CompanyCodesofConduct.pdf](http://siteresources.worldbank.org/INTPSD/Resources/Angola/Angola_CompanyCodesofConduct.pdf)
6. Designing Independent and Accountable Regulatory Authorities for High Quality Regulation; *OECD*; [www.oecd.org/dataoecd/15/28/35028836.pdf](http://www.oecd.org/dataoecd/15/28/35028836.pdf)
7. Draft OECD Recommendation on Regulatory Policy and Governance; *OECD*; [www.oecd.org/dataoecd/49/43/48087250.pdf](http://www.oecd.org/dataoecd/49/43/48087250.pdf)
8. Guiding Principles for Regulatory Quality and Performance; *OECD*; [www.oecd.org/document/38/0,3746,en\\_2649\\_37421\\_2753254\\_1\\_1\\_1\\_37421,00.html](http://www.oecd.org/document/38/0,3746,en_2649_37421_2753254_1_1_1_37421,00.html)
9. Health and Safety at Work; *European Commission*; [ec.europa.eu/social/main.jsp?catId=148&langId=en](http://ec.europa.eu/social/main.jsp?catId=148&langId=en)
10. Implementing the Extractive Industries Transparency Initiative; *World Bank*; [siteresources.worldbank.org/INTOGMC/Resources/implementing\\_eiti\\_final.pdf](http://siteresources.worldbank.org/INTOGMC/Resources/implementing_eiti_final.pdf)
11. International Mineral Regulatory Best Practice; *Spatial Dimension*; [www.spatialdimension.com/LinkClick.aspx?fileticket=Ta5%2F5jT9dus%3D&tabid=153](http://www.spatialdimension.com/LinkClick.aspx?fileticket=Ta5%2F5jT9dus%3D&tabid=153)
12. ISO 14000 – Environmental Management; *International Organization for Standardization*; [www.iso.org/iso/catalogue/management\\_and\\_leadership\\_standards/environmental\\_management.htm](http://www.iso.org/iso/catalogue/management_and_leadership_standards/environmental_management.htm)
13. ISO 26000 – Social Responsibility; *International Organization for Standardization*; [www.iso.org/iso/catalogue/management\\_standards/social\\_responsibility.htm](http://www.iso.org/iso/catalogue/management_standards/social_responsibility.htm)
14. Management of Tailings and Waste-rock in Mining Activities; *European Commission*; [eippcb.jrc.ec.europa.eu/reference/mmr.html](http://eippcb.jrc.ec.europa.eu/reference/mmr.html)
15. Mining and ISO 14000; *EnviroGulf Consulting*; [www.envirogulf.com/mining\\_iso.html](http://www.envirogulf.com/mining_iso.html)
16. Mining, metal sector more transparent: international council; *Mining Weekly*; [www.miningweekly.com/article/dialogue-brings-progress-2011-03-24](http://www.miningweekly.com/article/dialogue-brings-progress-2011-03-24)
17. Mining, Metals and Minerals; *European Commission*; [ec.europa.eu/enterprise/sectors/metals-minerals/index\\_en.htm](http://ec.europa.eu/enterprise/sectors/metals-minerals/index_en.htm)
18. Mining Royalties; *World Bank*; [siteresources.worldbank.org/INTOGMC/Resources/336099-1156955107170/miningroyaltiespublication.pdf](http://siteresources.worldbank.org/INTOGMC/Resources/336099-1156955107170/miningroyaltiespublication.pdf)
19. Mining Waste; *European Commission*; [ec.europa.eu/environment/waste/mining/index.htm](http://ec.europa.eu/environment/waste/mining/index.htm)
20. OHSAS 18001; *The BS8800 OHSAS and OSHA Health and Safety Management Group*; [www.osha-bs8800-ohsas-18001-health-and-safety.com/ohsas-18001.htm](http://www.osha-bs8800-ohsas-18001-health-and-safety.com/ohsas-18001.htm)
21. Projects: Community Development; *International Council on Mining and Metals*; [www.icmm.com/page/236/community-development](http://www.icmm.com/page/236/community-development)
22. Setting the Standard on Social Responsibility; *Mining, People and the Environment*; [www.mpe-magazine.com/reports/industry-guidelines-setting-the-standard-on-social-responsibility](http://www.mpe-magazine.com/reports/industry-guidelines-setting-the-standard-on-social-responsibility)
23. State's player/ref role makes independent mining regulation essential – Leon; *Mining Weekly*; [www.miningweekly.com/article/states-playerref-status-makes-independent-mining-regulation-essential-leon-2011-03-18](http://www.miningweekly.com/article/states-playerref-status-makes-independent-mining-regulation-essential-leon-2011-03-18)
24. The Health and Safety and OHSAS Guide; *OHSAS 18001 Occupational Health and Safety Zone*; [www.ohsas-18001-occupational-health-and-safety.com/index.htm](http://www.ohsas-18001-occupational-health-and-safety.com/index.htm)
25. What is the EITI?; *Extractive Industries Transparency Initiative*; [eiti.org/eiti](http://eiti.org/eiti)

# Управління

# Մանկավարժական ոլորտի աշխատողների սոցիալական պաշտպանվածությունը Հայաստանի Հանրապետության հանրակրթության համակարգում Ներածություն

Հասարակության սոցիալական պաշտպանությունը բարդ և բազմաշերտ երևույթ է քաղաքական կյանքում: Այն քաղաքական ասպարեզ է եկել սոցիալական իրավունքների մասին պատկերացումների հետ և ուղղակիորեն առնչվում է վերջիններիս հետ: Սոցիալական պաշտպանությունն ընկած է ժամանակակից սոցիալական պետության հիմքում, նրա շուրջ են ձևավորվել և կառուցվել 19-րդ դարի սոցիալիստական գաղափարախոսությունները:

XX դարի 90-ական թվականներին Հայաստանի Հանրապետությունում հաստատված նոր քաղաքական ռեժիմի ձևավորումը սրեց և ավելի կարևորեց հասարակության սոցիալական պաշտպանության խնդիրները: Քաղաքական, տնտեսական և այլ ոլորտներում ազատականացմանն ուղղված բարեփոխումները կենտրոնացվեցին առավելապես տարբեր ինստիտուտների և կառուցվածքների ձևավորման ու ձևավոխման վրա: Այս գործընթացում հաճախ անտեսվեցին անհատական կամ սոցիալական առանձին խավերի շահերը, խախտվեցին նրանց սոցիալական իրավունքները:

Այս առումով առանձնահատուկ տեղ է զբաղեցնում կրթությունը: Մի կողմից այն շատ հետազոտողների և կառավարման մասնագետների կողմից տնտեսական ճյուղ է համարվում և ինչպես բոլոր մնացած ոլորտները պետք է ենթարկվի ազատականացման, իսկ մյուս կողմից՝ կրթությունը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ դաստիարակելու գործին և այս պատճառով իր վրա կրում է պետական մենաշնորհի հետքեր, որոնք դրսևորվում են կրթության միասնական նպատակների, սկզբունքների և միասնական կրթական չափորոշիչների ձևակերպման մեջ: Ավաճող հատկապես բնորոշ է հանրակրթությանը: Պետական, թեկուզ մասնակի, մենաշնորհի պայմաններում միայն մրցակցային արդար պայմանների ապահովումը բավարար չէ ոլորտի զարգացումն ապահովելու համար: Պետության մասնակի մենաշնորհը պայմանավորում է թե՛ զարգացման նպատակային ուղղորդում, թե՛ ուսուցիչների շահերի պաշտպանության անհաժեշտություն:

Քանի որ հատկապես հանրակրթությունը պետք է գտնվի պետության հովանու ներքո, մենք կարևորել ենք ՀՀ հանրակրթության ոլորտում աշխատող մանկավարժների սոցիալական պաշտպանության հարցերը:

Մեր խնդիրն է գնահատել արդի շրջանում ՀՀ հանրակրթության աշխատողների սոցիալական պաշտպանության հիմնախնդիրը և վեր հանել նրանց սոցիալական իրավունքների առավել ակնհայտ խախտումները: Այս նպատակով դիտարկում ենք ՀՀ հանրակրթության համակարգի ընդհանուր բնութագիրը, սոցիալական պաշտպանության հասկացության սահմանումը, քննարկում ենք ուսուցիչների ֆինանսական ապահովման, կենսաթոշակի, հանգստի պայմանները, կադրերի կառավարման համակարգի հիմնական դրվագները:

Գնահատումը կատարում ենք ՀՀ կրթական օրենսդրության վերլուծության հիման վրա:

## Գլուխ 1. ՀՀ հանրակրթության համակարգի և մանկավարժական աշխատողների կարգավիճակի ընդհանուր նկարագիրը

### Ներածություն

Հանրակրթությունը, որպես սոցիալ-քաղաքական և մշակութային երևույթ, խորը արմատներ ունի հայ իրականության մեջ: Պատմության ընթացքում կրթական քաղաքականությունը հաճախ օգտագործվել է որպես պետական և ազգային ինքնության խնդիրների լուծման գործիք: Այն ծառայել է այս խնդիրների լուծմանն ուղղված արժեհամակարգի ձևավորմանը և գաղափարախոսական հենքի ստեղծմանն ու զարգացմանը՝ նպաստելով այլ հասարակական ոլորտների առաջընթացին:

Կրթության նկատմամբ պետական և պետական-եկեղեցական գործիչների ուշադրությունը պատմականորեն հարգանք է ձևավորել ուսուցչի ինստիտուտի հանդեպ: Եվ թեպետ պատմությունը պահպանել է նաև արժեգրկումների և կորուստների մասին հիշողություններ, ընդհանուր առմամբ, կարելի խոսել պատմության համատեքստում կրթության հանրակրթական բնույթի և մանկավարժների բարձր հեղինակության, նրանց ակտիվ սոցիալական դերի մասին:

Արդի կրթական համակարգի հիմքը դրվել է 1918–1920թթ. Հայաստանի հանրապետության օրոք և զարգացում ապրել խորհրդային շրջանում:

Խորհրդային տարիներին շատ մեծ նշանակություն է տրվել կրթությանը առհասարակ և հանրակրթությանը՝ մասնավորապես: Պետական կենտրոնական կառավարման պայմաններում և սոցիալիստական գաղափարախոսության համատեքստում կրթությունը դիտվել է գերազանցապես որպես գաղափարապես կայացած քաղաքացու և ներդաշնակորեն զարգացած անձի կերտման միջոց: Ուստի՝ հաճախ երկրորդ պլանում էին մնում տնտեսական նպատակահարմարության, շահավետության գաղափարները, իսկ մանկավարժի մասնագիտությունը դառնում էր պատվաբեր և սոցիալ-տնտեսական տեսակետից՝ շահավետ:

1991թ. նորանկախ Հայաստանը կանգնեց կրթության համակարգի վերափոխման և նոր կրթական քաղաքականության մշակման անհրաժեշտության առջև: Որպես ելակետ ընդունվեց երկու հիմնական դրույթ.

1. ՀՀ կրթական համակարգը պետք է լինի ազգային, համապատասխանի ազգային արժեհամակարգին և ուղղված լինի հայակերտմանը,
2. ՀՀ կրթական համակարգը պետք է «ընթեռնելի» լինի միջազգային հանրության համար և համապատասխանի նոր սոցիալ-տնտեսական պայմաններին:

Այս երկու դրույթներն էլ վերջին 20 տարվա ընթացքում ուղղորդել են կրթության ոլորտում կառուցվածքային և բովանդակային բարեփոխումները, ինչը ակամա բերել է ուսուցչի սոցիալական կարգավիճակի և մասնագիտական (ինքնագիտակցության փոփոխությանը):

XX դարի վերջին և XXI դարի առաջին տասնամյակում իրականացված բարեփոխումների ընթացքում կարելի է առանձնացնել հիմնական փուլերը՝ ձևավորող վճռորոշ տարեթվեր: Համառոտ բարեփոխումների այս ժամանակագրությունը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

- 1991–1995թթ.**՝ ազգային դպրոցի հիմքի ստեղծում, առաջնային բարեփոխումներ,
- 1995–1998թթ.**՝ կրթության ոլորտում պետական կառավարման համակարգի հիմնադրում (Մահմանադրության և մի շարք օրենքների ընդունում),
- 1998թ.**՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունում,



**2001-2005թթ.**՝ «2001-2005թթ. կրթության զարգացման պետական ծրագիր հաստատելու մասին» ՀՀ օրենքի մշակում և ընդունում,

**2003-2009թթ.**՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ «Կրթության որակ և համապատասխանություն» առաջին ծրագրի իրագործում,

**2011-2015թթ.**՝ «ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի ընդունում,

Ներկայումս կրթության համակարգը շարունակում է ենթարկվել զգալի փոփոխությունների: Ստորև բերվող նկարագրությունն արտացոլում է կրթական համակարգն իր ներկա փուլում՝ անշարժ վիճակում:

## 1.1 ՀՀ հանրակրթության համակարգի ընդհանուր նկարագիրը

### ա. ՀՀ հանրակրթության համակարգի կառուցվածքի նկարագիրը.

Հանրակրթության համակարգի գործառնությունը կարգավորվում է «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ հարակից օրենքներով ու իրավական ակտերով:

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ հանրակրթությունը իրականացվում է նախադպրոցական, տարրական, հիմնական, միջնակարգ կրթության հիմնական և լրացուցիչ ծրագրերով:

Նախադպրոցական կրթության համակարգի գործունեությունը կարգավորվում է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքով: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության հանրակրթության համակարգի պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը, կարգավորում է հանրակրթության գործընթացին մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունները, ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի, պարտադիր հիմնական ընդհանուր կրթության և անվճար միջնակարգ կրթության հնարավորության հիմքերը:

Նախադպրոցական կրթական ծրագիրը նպատակաուղղված է երեխայի առողջ մանկության ապահովմանը, նրան տարրական կրթությանը նախապատրաստելուն: Այն իրականացվում է երեխայի վաղ տարիքից մինչև 6 տարեկանը: Նախադպրոցական կրթությունը ՀՀ շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղադրիչ մասն է՝

Մնացած հանրակրթական ծրագրերը դասավորվում են ըստ աստիճանների հաջորդականության՝ շարունակականության սկզբունքով:

Միջնակարգ կրթության ծրագիրը, հանդիսանալով 3-րդ աստիճանի կրթություն, ներառում է տարրական և հիմնական կրթության ծրագրեր, իսկ երկրորդ աստիճանի հիմնականը՝ առաջին՝ տարրական կրթության ծրագիրը<sup>2</sup>:

Միջնակարգ կրթությունը 12-ամյա է: Այն սկսվում է 6 տարեկանից: 4 տարում իրականացվում է տարրական կրթության ծրագիրը, հետագա հինգ տարիներին լրացվում է հիմնական կրթության ծրագիրը: Հիմնական 9-ամյա կրթությունը, համաձայն օրենքի, պարտադիր է: Մնացած 3 տարները հատկացված են միջնակարգ կրթության ծրագիրը յուրացնելու համար<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդ.7, 9:

<sup>2</sup> Տե՛ս. «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդ. 10.2 և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդ. 7.3 և 7.7:

<sup>3</sup> «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդ. 7.8:


Հանրակրթական ուսումնական հաստատությունների (ՈՒՀ) տեսակները համապատասխանում են հանրակրթական ծրագրերին:

ՀՀ կառավարության՝ 26.12.2006թ. թիվ 54 արձանագրությամբ հաստատված «ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի օրինակելի կանոնադրությունը սահմանում է նախադպրոցական ՈՒՀ-ների հետևյալ Տեսակները.

1. մանկապարտեզ,
2. հատուկ մանկապարտեզ,
3. առողջարանային մանկապարտեզ,
4. մանկական կենտրոն,
5. համալիր մանկապարտեզ,
6. կրթահամալիր,
7. մինչև 6 տարեկան երեխաների մանկատուն:

Հատուկ և առողջապահական մանկապարտեզները մանկավարժության և առողջապահության հատուկ ծրագրերով աշխատող մանկապարտեզներն են: Մանկական կենտրոնն իրականացնում է նաև խորհրդատվական ծառայություններ: Համալիր մանկապարտեզն իր մեջ միավորում է նախորդ տեսակները: Կրթահամալիրը, բացի նախադպրոցական կրթական ծրագրից, իր մեջ ընդգրկում է նաև այլ հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատություններ:

Միջնակարգ կրթության ծրագիրը կարող է իրագործվել ինչպես միջնակարգ կամ ավագ դպրոցներում, այնպես էլ վարժարաններում: Հիմնական կրթության ծրագիրն իրագործվում է միջնակարգ, միջին դպրոցներում և վարժարաններում, իսկ տարրական կրթության ծրագիրը գործում է միջնակարգ կամ տարրական դպրոցներում: Այսպիսով՝ երեք աստիճանական ծրագրերի համար սահմանված են 6 տիպի ՈՒՀ-եր, որոնց հարաբերակցությունը պատկերված է սույն գծապատկերում.



Ներկայումս Համաշխարհային բանկի աջակցությամբ «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում ընթանում է հանրակրթական ՈՒՀ-ներում 5-6 տարեկան երեխաների (ավագ խումբ) համար մեկամյա նախադպրոցական ծրագրերի (այլընտրանքային միկրոծրագրեր) իրագործումը:

Յուրաքանչյուր կրթական ծրագիր (բացի՝ նախադպրոցականից), համաձայն գոյություն ունեցող օրենքի, իրականացվում է երեք տարբերակով՝ ընդհանուր, մասնագիտացված և

կրթություն

հատուկ: Մասնագիտացված հանրակրթական հիմնական ծրագրերն իրագործվում են ընդհանուրի հիման վրա՝ ռազմագիտության, սպորտի, արհեստների, արվեստի կամ գիտության որևէ բնագավառում: Հատուկ հանրակրթական ծրագրեր իրագործվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորող սովորողների խմբում: Մասնագիտացված հանրակրթական, արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների և այլընտրանքային կրթական ծրագրերի իրականացման համար ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, որպես կրթության պետական կառավարման լիազորված մարմին, կարող է սահմանել ուսուցման այլ ժամկետներ<sup>4</sup>:

Այս երեք տարբերակներին համապատասխան՝ հանրակրթական ՈՒՀ-ները բաժանվում են երեք տեսակի՝ հանրակրթական դպրոց, մասնագիտացված հանրակրթական դպրոց և հատուկ հանրակրթական դպրոց<sup>5</sup>:

Համաձայն ՀՀ կառավարության 24.03.2005թ. թիվ 381-Ն որոշման՝ ՀՀ-ում գործում են 7 տեսակի հատուկ ՈՒՀ-ներ.

1. լսողության խանգարումներ ունեցող երեխաների համար,
2. Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար,
3. խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների համար,
4. հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների համար,
5. մտավոր թերզարգացում ունեցող երեխաների համար,
6. հակասոցիալական վարք ունեցող երեխաների համար,
7. արտակարգ ընդունակություններ դրսևորած (օժտված) երեխաների համար:

Հանրակրթական ծրագրերը կարող են իրականացվել նաև նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգում (ուսումնարաններում, քոլեջներում), եթե մասնագիտական կրթության ծրագիրն իրականացվում է 9-րդ դասարանի՝ հիմնական կրթության բազայի հիման վրա: Այս դեպքում ուսումնական ծրագիրն ունենում է երկու կրթական բաղադրիչ. հանրակրթական (միջնակարգ կրթությանը համապատասխան) և մասնագիտական:

Բացի հիմնական ծրագրերից՝ հանրակրթության բոլոր աստիճանակարգերում կարող են իրագործվել նաև լրացուցիչ ուսումնական ծրագրեր՝ սովորողների, հիմնական ծրագրերից դուրս, նախասիրական և կրթական պահանջմունքների բավարարման նպատակով: Հանրակրթական լրացուցիչ ծրագրերն իրականացվում են հանրակրթական ՈՒՀ-ների կամ այլ կազմակերպությունների կողմից (այդ թվում՝ արտադպրոցական կրթադաստիարակչական հաստատություններում<sup>6</sup>)՝ հաստատության և սովորողների ծնողների (օրինական ներ-


<sup>4</sup> Տե՛ս. «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդ. 10, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդ. 3.9, 3.10 և 7.9:

<sup>5</sup> Տե՛ս. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդ. 3

<sup>6</sup> Արտադպրոցական դաստիարակության հաստատություններն իրականացնում են արտադպրոցական կրթություն: Նրանց թվին են դասվում մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնները, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցները, ակումբները, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների ու տուրիստական կայանները, մարզադպրոցներ, առողջարարական ճամբարները և այլ կազմակերպություններ:

Կրթություն

կայացուցչի) փոխադարձ համաձայնությամբ: Ընդհանուր առմամբ՝ Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրերը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով:



2011-2012 ուսումնական տարվա տվյալներով՝ ՀՀ-ում գործում են ընդամենը 813 նախադպրոցական ՈՒՀ-ներ, որոնցից 125-ը գործում են հանրակրթական դպրոցներում, իսկ 5-ը՝ կրթահամալիրներում:

Նախադպրոցական կրթության համակարգում ընդգրկված է ընդամենը 69.807 երեխա, որից 3.576-ը՝ հանրակրթական դպրոցներում:

2011-2012 ուսումնական տարվա տվյալներով՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է 1441 հանրակրթական ՈՒՀ, որից 14-ը մասնագիտացված դպրոց, իսկ 27-ը՝ հատուկ: Տարրական դպրոցների թիվը հանրապետությունում 3-ն է, հիմնական դպրոցները 495-ն են, ավագ դպրոցները՝ 118, վարժարանները՝ 18: Ամենամեծ բաժինը կազմում են միջնակարգ դպրոցները. դրանց թիվը 797 է: Ներկա դրությամբ Հայաստանում չեն գործում միջին դպրոցներ:

Հանրակրթական ՈՒՀ-ներ հաճախում է 386.439 աշակերտ, որից 3.711-ը հաճախում է մասնագիտացված դպրոցներ, իսկ 2649-ը՝ հատուկ<sup>7</sup>:

<sup>7</sup> Տե՛ս. «Հանրակրթական ուսումնական հաստատություններ» [www.armedu.am/arm/official.php?sec=org&id=377](http://www.armedu.am/arm/official.php?sec=org&id=377)

Կրթություն

Արտադպրոցական կրթության ոլորտում գործում է 54 արտադպրոցական կրթադաստիարակչական հաստատություն<sup>8</sup>:

### **բ. ՀՀ հանրակրթության համակարգի կառավարումը.**

Հանրակրթական ՈՒՀ-ներն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններ են: Ըստ սեփականության ձևի՝ գործում են պետական, համայնքային և ոչ պետական ուսումնական հաստատություններ: Պետական և համայնքային ուսումնական հաստատություններն ունեն ոչ առևտրային կազմակերպության կազմակերպական-իրավական ձև և ենթարկվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Թե՛ պետական և թե՛ համայնքային սեփականության ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը հաստատում է ՀՀ կառավարությունը: Ոչ պետական ուսումնական հաստատությունները կարող են ունենալ ցանկացած կազմակերպական-իրավական ձև:

Հանրակրթական ՈՒՀ-ների կառավարման համար օրենսդրական հիմք են հանդիսանում նաև «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքները:

Ներկայումս ՀՀ-ում գործում է 763 պետական և 50 ոչ պետական նախադպրոցական ՈՒՀ, 1402 պետական և 48 ոչ պետական հանրակրթական ՈՒՀ (1-ը՝ մասնագիտացված դպրոց է): Ոչ պետական հանրակրթական ՈՒՀ-ներից 4-ը տարրական դպրոցներն են, 2-ը՝ հիմնական, 7-ը՝ ավագ, գործում է ոչ պետական 4 վարժարան և 31 միջնակարգ դպրոց<sup>9</sup>:

Նախադպրոցական պետական ՈՒՀ-ների հիմնադիրը տեղական ինքնակառավարման մարմինն է (ՏԻՄ)՝ ի դեմս համայնքի ղեկավարի, իսկ հանրակրթական պետական ՈՒՀ-ներինը՝ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ կառավարության:

**Նախադպրոցական պետական ՈՒՀ-ների արտաքին կառավարումն** իրականացնում են ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և ՏԻՄ-երը: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը լիազորված է տվյալ ոլորտում մշակել և իրականացնել կրթական քաղաքականություն: Այն ներառում է համակարգի զարգացման հեռանկարները, կազմակերպում է կադրերի պատրաստում, հաստատում է ուսումնաօժանդակ նյութերի ցանկը, սահմանում է տարիֆատրակավորման բնութագրերը և այլն: Հաստատության ընդհանուր կառավարումը իրականացնում է համայնքի ղեկավարը<sup>10</sup>:

Նախադպրոցական պետական ուսումնական հաստատությունները գործում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կամ համայնքների ենթակառուցվածքի տակ:

Ներկայումս ՀՀ-ում գործում են 633 համայնքային և համալիրների կազմում գործող 5 գերատեսչական հաստատություններ: Այլընտրանքային միկրոդրագրով գործում են 125 հաստատություններ:

**Նախադպրոցական պետական ՈՒՀ-ների ներքին կառավարումն** իրականացնում է տնօրենը: Հաստատությունը կարող է ունենալ խորհրդակցական մարմիններ, ինչպիսիք են մանկավարժական խորհուրդը, ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդները:

**Հանրակրթական պետական ՈՒՀ-ների արտաքին կառավարումն** իրականացնում են ՀՀ կառավարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, տարածքային կառավարման մարմինները (մարզպետարաններ/ Երևանի քաղաքապետարան):

<sup>8</sup> ՀՀ կառավարության 2010թ. թիվ 846-Ն որոշում «ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր հաստատելու մասին», 7.1.1 ենթակետ:

<sup>9</sup> Տե՛ս. «Հանրակրթական ուսումնական հաստատություններ» [www.armedu.am/arm/official.php?sec=org&id=377](http://www.armedu.am/arm/official.php?sec=org&id=377)

<sup>10</sup> Տե՛ս. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, գլուխ 4:

Հանրակրթական ՈՒՀ-ների վերակազմակերպումը, լուծարումը, մասնաճյուղերի հիմնումն իրականացնում է ՀՀ կառավարությունը՝ որպես հիմնադիր: ՀՀ կրթության և գիտության նախարարությունն իրականացնում է, հիմնականում, ընդհանուր կրթական քաղաքականության մշակման և վերահսկման գործառնությունները. մասնավորապես՝ մշակում և հաստատում է ուսումնական օրինակելի պլաններ, ապահովում է առարկայական ծրագրերի, դասագրքերի և այլ ուսումնական նյութերի մշակումը, փորձաքննությունն ու հրատարակումը և այլն:

Բոլոր պետական հանրակրթական ՈՒՀ-ները գործում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կամ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ենթակայությամբ: Հանրակրթական տարրական, միջնակարգ և հիմնական դպրոցները գործում են մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ենթակայության տակ: ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործում են ավագ դպրոցներ: Ներկայումս ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ գործում է 118 ավագ դպրոց: Նրանց ընդհանուր կառավարումը և բնականոն գործունեության ապահովումն իրականացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ իր կողմից տարվող կրթական քաղաքականությանը համապատասխան:

Մարզպետարանները (Երևանի քաղաքապետարանը) ապահովում են կրթական քաղաքականության իրականացումը և իրականացման նկատմամբ վերահսկողությունը իրենց ենթակայության տակ գործող ՈՒՀ-ներում:

Ընդհանուր կառավարման իրավասությունները սահմանված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 31-րդ և 25.07.2002թ. թիվ 1392 ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն օրինակելի կանոնադրության 46-րդ հոդվածներում:

Ներկայացնենք ՀՀ կրթության և գիտության նախարարության և մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) իրավասությունները՝ իրենց ենթակայության հաստատությունների նկատմամբ).

1. տնօրենի հետ աշխատանքային պայմանագրի կնքումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը
2. հանրակրթական դպրոցի կանոնադրության հաստատումը և դրանում կատարվող փոփոխությունները
3. տնօրենի ներկայացմամբ հանրակրթական դպրոցի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակների, ամենամյա ծախսերի նախահաշվի, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտի հաստատումը
4. խորհրդի ձևավորմանը մասնակցելը, իր կողմից առաջադրված խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելը (հետ կանչելը)
5. իր լիազորությունների սահմաններում հանրակրթական դպրոցի կառավարման մարմինների՝ խորհրդի, տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և կանոնադրության պահանջներին հակասող որոշումները, հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները կասեցնելը կամ ուժը կորցրած ճանաչելը.
6. հանրակրթական դպրոցի լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռը հաստատելը
7. հանրակրթական դպրոցին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողությունը, հիմնադրի որոշմամբ կամ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում գույքի վարձակալության հանձնման համար համաձայնություն տալը

8. գույքի օտարման և (կամ) ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման համար համաձայնություն տալը և այլն:

**Պետական հանրակրթական ՈւՎ-ների ներքին կառավարումն** իրականացվում է հաստատության խորհրդի և տնօրենի կողմից՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ուսումնական հաստատությունների իրավասությունների շրջանակներում: Հանրակրթական դպրոցը կարող է ունենալ նաև խորհրդակցական մարմիններ, ինչպիսիք են մանկավարժական, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդները:

Խորհրդը կառավարման կոլեգիալ մարմին է, որը նախատեսված է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով: Այն հանրակրթական դպրոցի օրենսդիր մարմին է: Խորհուրդի ձևավորման սկզբունքները սահմանված են «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրությամբ, իսկ կարգը հաստատում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

Խորհրդի կազմում ընդգրկվում են նախարարության, մարզպետարանի ու համայնքի, ինչպես նաև մանկավարժական ու ծնողական խորհուրդների ներկայացուցիչներ: Վերջին պահանջը ծնողական և մանկավարժական խորհրդակցական մարմինների գոյությունը դարձնում է, փաստորեն, պարտադիր:

Խորհուրդը.

1. օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրում է տնօրեն
2. հաստատում է ուսումնական հաստատության կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները
3. հավանություն է տալիս ուսումնական հաստատության զարգացման ծրագրին
4. քննարկում և հավանություն է տալիս ուսումնական հաստատության հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին
5. քննարկում է ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը
6. քննարկում է ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները
7. որոշում է մասնակցել արտաքին գնահատմանը, քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները
8. վերահսկում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման գործընթացը
9. հիմնադրի սահմանած կարգով սահմանում է ուսումնական հաստատության շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները և այլն:

Տնօրենը հանրակրթական դպրոցի գործադիր մարմինն է և իրականացնում է հաստատության ընթացիկ ղեկավարում: Նա չի կարող խորհրդի անդամ լինել և մասնակցում է նիստերին միայն խորհրդակցական ձայնի իրավունքով:

Տնօրենին, որպես պաշտոնատար անձի, ներկայացվում են մի շարք ձևական (որակավորման) և բովանդակային պահանջներ: Նա պետք է հանդիսանա ՀՀ քաղաքացի, ունենա բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական,



Պետական հանրակրթական ՈւՎ-ների ներքին կառավարումն իրականացվում է խորհրդակցական մարմինների և տնօրենի կողմից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր լիազորությունները

գիտամանկավարժական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն 7 տարվա ընդհանուր աշխատանքային փորձ: Տնօրենի պաշտոնին հավակնությունները ներկայացնելուց առաջ նրա գիտելիքներն ու կարողությունները նախապես պետք է հաստատվեն հավաստագրով, որը ուժի մեջ է մինչև 5 տարի: Հավաստագիրը տրվում է քննության արդյունքում, որի ժամանակ պետք է բացահայտվեն տնօրենի պաշտոնի հավակնորդի գիտելիքներն ու կարողությունները կրթական և հարակից օրենսդրության, մանկավարժության, հոգեբանության, ֆինանսական ու տնտեսական գործունեության և այլ ոլորտներում: Վերոնշյալը պահանջներին բավարարող անձնավորությունը պետք է ընտրվի խորհրդի կողմից<sup>11</sup> հարցազրույցի և նրա կողմից մշակված հաստատության զարգացման ծրագրի քննարկման արդյունքում: Տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը ՀՀ ԿԳ նախարարությունը կամ մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը)<sup>12</sup> ըստ հաստատության ենթակայության, կնքում է 5 տարվա ժամկետով: Տնօրենը պաշտոնավարում է մինչև իր աշխատանքային պայմանագրով սահմանված լիազորությունների ավարտը՝ անկախ հավաստագրի ժամկետի լրանալուց:

Տնօրենի պաշտոնում նշանակման նման բարդ համակարգը նպատակաուղղված է արտաքին կառավարման ապակենտրոնացման պայմաններում, մասնագիտական և կրթության կառավարման գիտելիքների ու հմտությունների ապահովման մեխանիզմի սահմանման միջոցով, ներքին կառավարման ուժեղացմանը:

#### գ. ՀՀ հանրակրթության համակարգի ֆինանսավորումը.

Հանրակրթական ՈՒՀ-ների ֆինանսատնտեսական գործունեությունը պայմանավորված է նրանց կազմակերպական-իրավական ձևով և սահմանվում է կառավարման համակարգը սահմանող նույն ՀՀ օրենքներով:

Հանրակրթական ոչ պետական ՈՒՀ-ների ֆինանսավորման համակարգը պայմանավորված է հիմնադրի կողմից ընտրված կազմակերպական-իրավական ձևով և սահմանվում է հաստատության կանոնադրությամբ: Միաժամանակ, ըստ օրենքի, նրանցում գործածվող ֆինանսական չափանիշները չեն կարող ցածր լինել պետական համանման ուսումնական

հաստատությունների համար պետության կողմից սահմանված չափանիշներից:

Պետական ՈՒՀ-ների պարագայում՝ ֆինանսավորման համակարգը պայմանավորված է նրանց պետական կամ համայնքային լինելու փաստով: Պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեից, իսկ համայնքայինինը՝ համայնքային բյուջեից: ՀՀ օրենքներով նախատեսվում են նաև ոչ պետական՝ ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ, ինչպիսիք են իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից կատարվող ներդրումները, տարբեր տեսակի վճարովի ծառայությունները և օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներ:



Պետական բյուջեից կրթության ոլորտին տրամադրված գումարների գերակշիռ մասը ուղղված է հանրակրթական դպրոցին

<sup>11</sup> Ընտրությունը կատարվում է ՀՀ կառավարության 04.03.2010թ.թիվ 319-Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի համաձայն:



Հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը թե՛ պետական և թե՛ համայնքային բյուջեից իրականացվում է մեկ սովորողի հաշվարկով՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված չափանիշներով: Նախադպրոցական ՈՒՀ-ների, հիմնական և ավագ դպրոցների, բարձրլեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնագավայրի միակ՝ մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար ֆինանսական չափորոշիչները տարբերակված են: Ըստ ներկայումս գործող ֆինանսավորման բանաձևի<sup>12</sup> հանրակրթական ՈՒՀ-ին հատկացվող ընդհանուր գումարը գոյանում է մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի և սովորողների թվի արտադրյալից՝ գումարած հաստատության պահպանման համար սահմանված նվազագույն գումարը: Ֆինանսավորման տվյալ մեխանիզմով հաշվարկվող և հաստատություններին տրամադրվող գումարն ամբողջությամբ ուղղվում է ընթացիկ ծախսերի վրա:

Ֆինանսավորման տվյալ մեխանիզմը լրացվում է ծրագրային ֆինանսավորմամբ: Այն արտացոլված է ՀՀ պետական բյուջեի «Կրթությանը տրամադրվող օժանդակ ծրագրեր» խմբում: Ծրագրային ֆինանսավորումը նպատակաուղղված է 1) սովորողներին, մանկավարժներին և ուսումնական հաստատություններին ուղղված օժանդակությանը, 2) հանրապետական միջոցառումներին (օր.՝ օլիմպիադաների), 3) ուսումնական հաստատությունների հիմնանորոգմանը և շինարարությանը, 4) զարգացման ծրագրերին<sup>13</sup>:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման համաձայն «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի, դիտարկվում է որպես ՏԻՄ-երի սեփական պարտադիր լիազորություն: Ֆինանսական միջոցներն ուղղում են աշխատավարձի, սննդի, գույքի, տնտեսական ու կոմունալ ծախսերի վրա: Շենքերի վերանորոգման (վերակառուցման) գումարները սահմանվում են առանձին տողով:

«Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում ընթացող բարեփոխումներ իրականացնելու նպատակով, ներդրումային մասով իրականացվում է ֆինանսավորում նաև ՀՀ պետական բյուջեից: 2012թ. ՀՀ պետական բյուջեով նախադպրոցական կրթությանը նախատեսված է տրամադրել 156669.2 հազ. դրամ:

Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսական գործունեության, սեփականության օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ պետական մարմիններ:

Պետական բյուջեից կրթության ոլորտին տրամադրված գումարների գերակշիռ մասը (մոտ 85%-ը) ուղղված է հանրակրթական դպրոցին<sup>14</sup>: Ծրագրային ֆինանսավորման մասում տեղ են գտնում զարգացման ծրագրերով, ՀՀ օրենսդրությամբ ստանձնած ֆինանսական պարտավորություններ, ինչպես նաև այլ ծրագրեր:

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի՝ տարրական դասարանների աշակերտներին պետությունն անվճար ապահովում է դասագրքերով, (բացառությամբ օտար լեզուների և երաժշտության դասագրքերի), իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով: Այս պահանջով են պայմանավորված ՀՀ պետական բյուջեում տեղ գտած «Տարրական դպրոցի աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում» և «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» տողերը:

<sup>12</sup> Տե՛ս. ՀՀ ֆինանսների նախարարի 2010թ. թիվ 851-Ն և ՀՀ կրթության ու գիտության նախարարի 2010թ. թիվ 1730-Ն համատեղ հրամանը:

<sup>13</sup> Տե՛ս. ՀՀ օրենք «ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին»

<sup>14</sup> Տե՛ս. ՀՀ օրենք «ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին»

Կրթություն

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսված են մանկավարժների վերապատրաստման, ատեստավորման, տարակարգերի շնորհման գործընթացները, որոնք ենթադրում են ատեստավորման հետ կապված ծախսերի և տարակարգեր ստացած ուսուցիչների հավելավճարների տրամադրում:

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ ենթակետի՝ սահմանամերձ, բարձրլեռնային և լեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար սահմանվում է հավելյալ աշխատավարձ, ինչը հիմք է ՀՀ պետական բյուջեում համապատասխան փոխհատուցում սահմանելու համար և այլն:

Բյուջեի ծախսային հոդվածների մի մասը բխում է զարգացման ծրագրերի տրամաբանությունից: Այդպիսիք են, օրինակ, 2012թ. «Ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգում», «Ուսուցիչների վերապատրաստում», «Համաշխարհայի բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագիր» և այլ հոդվածներ:

Մնացած ծախսային հոդվածները կարող են բխել ընթացիկ նպատակահարմարությունից, արտացոլված լինեն կրթության զարգացման պետական ծրագրերում և ուղղված լինեն կրթության որակի բարելավմանը:

Հանրակրթության ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից իրականացվում է ինչպես հանրակրթական ՌԻՀ-ների, այնպես էլ ՀՀ կրթության և գիտության նախարարության, մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) և կրթական համակարգի այլ կառույցների միջոցով:

## 1.2 Մանկավարժական աշխատողները ՀՀ հանրակրթության համակարգում

### ա. «Մանկավարժական աշխատող» հասկացությունը, մանկավարժների տեղն ու դերը ՀՀ հանրակրթության համակարգում.

Մանկավարժական աշխատողը (մանկավարժը) ուսումնական և դաստիարակչական գործընթացների մասնակիցներից մեկն է: Համաձայն «Հանրակրթության մասին» 3-րդ հոդվածի՝ մանկավարժը սովորողների կողմից հանրակրթական (հիմնական, լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների պահանջների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների,

հմտությունների, կարողությունների ձեռքբերմանն արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող և (կամ) դրանք ապահովող ՌԻՀ-ի աշխատակից է:

Այսպիսով՝ մանկավարժների շարքին են դասվում ՌԻՀ-ների վարչակազմը, ի դեմս տնօրենների և տնօրենի տեղակալների, ուսուցիչները, դաստիարակները և ուսումնական ու դաստիարակչական գործընթացում սովորողների հետ անմիջականորեն առնչվող այլ աշխատողներ: Վերջինների ցանկն արտացոլում է մանկավարժական գիտության ներկա մակարդակը և սերտորեն պայմանավորված է ուսումնական ու դաստիարակչական գործընթացների նկատմամբ կազմակերպական, մեթոդական և բո-



Մանկավարժները կապող օղակ են հանդիսանում հանրակրթական ծրագրերի յուրացման և արժեքային համակարգի ձևավորման միջև

վանդակային պահանջներով: Այն սահմանվում է համապատասխան օրենքներով ու իրավական ակտերով:

Օրենքում տրված սահմանման մեջ հիմնական և լրացուցիչ հանրակրթական ծրագրերի հիշատակումը շեշտում է նաև հիմնական ծրագրերից դուրս՝ կամավորական սկզբունքով սովորողների, նախասիրական կրթական պահանջմունքների բավարարմանն ուղղված աշխատանքի մանկավարժական բնույթը: Դրանով իսկ սահմանումը ներառում է նախադպրոցական, հանրակրթական և արտադպրոցական կրթադաստիարակչական ՈՒՀ-ների համապատասխան աշխատողներին:

«ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011թ. թիվ 416-Ն որոշմամբ՝ նախադպրոցական կրթության ոլորտում սահմանվում են մանկավարժական հետևյալ պաշտոնները.

1. տնօրեն,
2. մեթոդիստ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ,
3. դաստիարակ,
4. լոգոպեդ,
5. հոգեբան,
6. սոցիալական մանկավարժ,
7. ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչ,
8. երաժշտության դաստիարակ,
9. պարուսույց:

Հանրակրթական ոլորտի մանկավարժական պաշտոնները սահմանված են ՀՀ կառավարության 14.10.2010թ. թիվ 1391 որոշմամբ: Անվանացանկում ներառված են հետևյալ պաշտոնները.

1. տնօրեն,
2. ուսումնական աշխատանքի գծով տեղակալ,
3. մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ,
4. տնտեսական աշխատանքի գծով տեղակալ,
5. դաստիարակչական աշխատանքի կազմակերպիչ,
6. ուսուցիչ,
7. հատուկ մանկավարժ,
8. հոգեբան,
9. սոցիալական մանկավարժ,
10. զինղեկ,
11. գրադարանավար,
12. լաբորանտ:

ՀՀ կառավարության 2002թ. թիվ 1245-Ն որոշմամբ արտադպրոցական կրթադաստիարակչական հաստատություններում նախատեսվում են. 1) տնօրենի, 2) տնտեսական գծով տնօրենի տեղակալի և 3) խմբակավարի մանկավարժական պաշտոնները:

Սահմանված անվանացանկերը հիմք են աշխատանքի վարձատրության, աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման կանոնակարգման, կենսաթոշակների նշանակման, արձակուրդի ու հանգստի ռեժիմի սահմանման և սոցիալական կարգավիճակը արտացոլող այլ աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման համար:

Մանկավարժի տեղն ու դերը կրթական համակարգում պայմանավորվում է նախևառաջ օրենսդրորեն սահմանված մանկավարժի պետական սոցիալական երաշխիքներով և ուսումնական ու դաստիարակչական գործընթացում նրան ամրագրված իրավունքներով ու

պարտականություններով: «Կրթության մասին» ՀՀ օրենքը երաշխավորում է, որ մանկավարժի աշխատանքի վարձատրության դրույքաչափը չի կարող ցածր լինել բյուջետային հիմնարկների աշխատողների միջին աշխատավարձից, ինչպես նաև կարգավորում է ուսումնական հաստատության կողմից մասնագիտական որակի բարձրացման և վերապատրաստման գործընթացների իրագործումը: Օրենքը առանձնահատուկ կարգավիճակ է ապահովում սահմանամերձ, բարձրլեռնային և լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ՌԻՀ-ների ուսուցիչների համար:

Մանկավարժի հիմնական իրավունքների շրջանակը վերաբերում է ՌԻՀ-ների ներքին կառավարմանը: Ուսումնական գործընթացում մանկավարժին տրված իրավունքներն ապահովում են նրա դաստիարակչական գործունեության արդյունավետությունը: Մանկավարժն իրավունք ունի, օրինակ.

1. ընտրել և կիրառել դասավանդման մեթոդներ, երաշխավորված դասագրքեր և այլ ուսումնասովանողական նյութեր՝ պետական չափորոշի պահանջները բավարարելու պայմանով,
2. ունենալ անհրաժեշտ կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ,
3. մասնակցել վերապատրաստումների, գիտաժողովների, քննարկումների,
4. քննարկել և կարծիք հայտնել (ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր) գործող ծրագրերի, դասագրքերի և ուսումնասովանողական միջոցների մասին:

Իրավունքների շարքում կան այնպիսիք, որոնք ընդգծում են մանկավարժի անձնական կարգավիճակը և նրա սոցիալ-բարոյական արժեքը: Օրինակ, սահմանված է, որ մանկավարժն ունի պաշտպանված լինելու իրավունք սովորողների, մանկավարժական և այլ աշխատողների այնպիսի գործողություններից, որոնք նսեմացնում են նրա մասնագիտական վարկանիշն ու արժանապատվությունը:

Տրված իրավունքների դիմաց մանկավարժը միաժամանակ պարտավոր է հարգել սովորողի իրավունքներն ու արժանապատվությունը, հետևողականորեն բարձրացնել իր մասնագիտական որակները, համագործակցել ծնողների և գործընկերների հետ, պատշաճորեն իրականացնել իր ուսումնական ու դաստիարակչական աշխատանքը:

2011-2012 ուսումնական տարվա տվյալներով՝ ՀՀ հանրակրթական համակարգում (բացառությամբ նախադպրոցական) աշխատում է 41 757 մանկավարժ, որից 6 640-ը տղամարդ: 40 715 մանկավարժ ներգրավված է պետական հանրակրթական ՌԻՀ-ներում, իսկ 1042-ը՝ ոչ պետական: 40.340 մանկավարժ աշխատում է հանրակրթական, 544-ը՝ մասնագիտացված, իսկ 873-ը՝ հատուկ դպրոցներում:

## **բ. Մանկավարժական անձնակազմի կառավարումը ՀՀ հանրակրթական համակարգում:**

Մանկավարժական անձնակազմի կառավարումը ՀՀ հանրակրթական համակարգում իրականացվում է մանկավարժներին ներկայացվող որակավորման պահանջների, պատժող նկարագրերի սահմանման, որակավորման բարձրացման, վերապատրաստման, ատեստավորման, աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման գործընթացների, գնահատման և խրախուսման համակարգերի միջոցով:

**Մանկավարժներին ներկայացվող հիմնական պահանջները.** Մանկավարժներին ներկայացվող պահանջները սահմանված են երեք մակարդակի իրավական փաստաթղթերում. ՀՀ օրենքներում, ՀՀ կառավարության որոշումներում, նախադպրոցական ու հանրակրթական ՌԻՀ-ների կանոնադրությունում, ինչպես նաև արտացոլվում են նախադպրոցական ու հանրակրթական ՌԻՀ-ների տարիֆիկացիոն ցուցակներում: Ներկայացնենք իրավական այդ համակարգը.

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք

Սահմանված են՝  
Հոդ. 12՝ տնօրենի իրավասությունները,  
Հոդ. 24՝ մանկավարժ աշխատելու սահմանափակումները  
Հոդ. 27՝ մանկավարժի իրավունքներն ու պարտականությունները:

ՀՀ կառավարության 2010թ. թիվ 1391 որոշում

Սահմանված են՝  
մանկավարժական պաշտոնների նկարագրեր:

ՈՒՀ-ի կանոնադրություն

Սահմանված են՝  
տվյալ դպրոցում առկա պաշտոնները և նրանցում մանկավարժների  
պարտականությունները:

Նախադպրոցական կրթության համար այս նույն աստիճանավորումը կարելի է պատկերել հետևյալ կերպ.

«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք

Սահմանված են՝  
Հոդ. 22 ուսումնարաստիարակչական գործընթացի մասնակիցները

ՀՀ կառավարության 2011թ. թիվ 416-Ն որոշում

Սահմանված են՝  
ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆատրակավորման բնութագրեր:

ՈՒՀ-ի կանոնադրություն

Սահմանված են՝  
տվյալ տեսակի դպրոցում առկա պաշտոնները և նրանցում  
մանկավարժների պարտականությունները:

ՀՀ օրենքներն այս աստիճանակարգում կատարում են երկակի գործառույթ: Նախևառաջ՝ նրանք հիմք են ավելի ցածր իրավական ուժ ունեցող ակտերի մշակման և հանրակրթության ոլորտում իրական հարաբերությունների կարգավորման համար: Մյուս կողմից՝ օրենքը ուղե-նիշ է իրական հարաբերությունների հետևողական և աստիճանական խմբագրման համար:

Այս դեպքում՝ ՀՀ կառավարության որոշումը ցանկալի ու իրական վիճակների միջև ժամանակավոր և տարանցիկ միջնորդի դեր է կատարում: Նրա և օրենքի դրույթների միջև առաջանում է անհամապատասխանություն, որը հիմնավորվում է օրենքի անցումային դրույթներով: Ներկայումս նման անցումային վիճակում են գտնվում մանկավարժին ներկայացվող պահանջները:

Մանկավարժին ներկայացվող հիմնական պահանջներն արտացոլված են պաշտոնների նկարագրերում: Նկարագրերը սահմանում են մանկավարժի համար անհրաժեշտ՝

- ա. որակավորումը (կրթության աստիճան, մասնագիտություն, փորձ),
- բ. գիտելիքները,
- գ. կարողությունները,
- դ. պարտականությունները:

Տարբեր մանկավարժական պաշտոնների համար որակավորման պահանջները տարբերակված են:

Հանրակրթական ՈՒՀ-ներում ամենաբարձր որակավորումը պահանջվում է տնօրենի պաշտոնն զբաղեցնելու համար՝ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա փորձ:

Տնօրենի՝ ուսումնական գծով, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալների, ուսուցչի պաշտոնների համար սահմանված չէ պարտադիր մանկավարժական կրթություն: Նրան կարող է հավասարակշռել մանկավարժական սահմանված տևողության ստաժը: Ուսուցիչը կարող է ունենալ նաև միջին մասնագիտական կրթություն:

Պարտադիր մանկավարժական կամ տվյալ պաշտոնին համապատասխանող մասնագիտական որակավորում պահանջվում է դաստիարակչական աշխատանքի կազմակերպչի, հատուկ մանկավարժի, հոգեբանի, սոցիալական մանկավարժի և զինղեկի համար:

Որակավորման ամենացածր պահանջները ներկայացված են տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալին, գրադարանավարին և լաբորանտին: Նրանց ներկայացվող միակ պահանջը բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթության առկայությունն է:

Միաժամանակ, համաձայն օրենքի, ուսուցիչը պարտադիր պետք է ունենա մանկավարժական կրթություն կամ բարձրագույն կրթություն՝ համապատասխան որակավորմամբ և վերջին 10 տարվա ընթացքում առնվազն 5 տարվա մանկավարժական ստաժ: Այս պահանջը ուսուցչի նկատմամբ ուժի մեջ է մտնում 2018 թվականից: Այլ կերպ ասած՝ 2018 թվականից դպրոցում պետք է աշխատեն միայն բարձրագույն կրթությամբ մասնագետներ, իսկ ևս մի քանի տարի անց՝ միայն մանկավարժական բարձրագույն կրթությամբ մանկավարժներ:

Գիտելիքների և դրանց համապատասխան կարողությունների հարցում բոլոր մանկավարժական պաշտոնները կարելի է բաժանել երեք խմբի. 1) տնօրեն, 2) տնօրենի երկու տեղակալներ, դաստիարակչական աշխատանքի կազմակերպիչ, ուսուցիչ, 3) հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ, զինղեկ, հոգեբան, 4) տնօրենի տնտեսական գծով տեղակալ, գրադարանավար, լաբորանտ:

ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի իմացությունը պարտադիր է բոլոր մանկավարժների համար: Պաշտոնների մեծ մասի դեպքում պարտադիր է նաև հոգեբանամանկավարժական գիտելիքները (մանկավարժություն, հոգեբանություն, ֆիզիոլոգիա, հիգիենայի հիմունքներ): Որոշ պաշտոնների համար սահմանված են նաև սովորողների կյանքի և առողջության պահպանման ուղղությամբ մշակված կանոնների (աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային անվտանգության, առաջին բուժօգնության կանոններ) պարտադիր իմացություն:

Տնօրենի գիտելիքների համակարգում հատկապես շեշտադրվում է իրավական բազայի իմացությունը: Պարտադիր են համարվում նաև հոգեբանամանկավարժական գիտելիքներն ու սովորողների կյանքի և առողջությանը պահպանման մասին կանոնների իմացությունը:

Երկրորդ խմբում, որպես պահանջ, ավելի ընդգծված են հոգեբանամանկավարժական գիտելիքներն ու սովորողի կյանքի և առողջությանը պահպանման կանոնների իմացությունը:

Երրորդ խմբում կարևորվում են համապատասխան մասնագիտական գիտելիքները:

Չորրորդ խումբն առանձնանում է նրանով, որ այդ խմբի աշխատողների համար բացակայում է հոգեբանամանկավարժական գիտելիքներ ունենալու պահանջը:

2011-2012 ուսումնական տարվա տվյալներով՝ ՀՀ-ում աշխատում է 41402 մանկավարժ (տնօրեններին չհաշված), որից միայն 1022-ը՝ ոչ պետական հանրակրթական ՈՒՀ-ների համակարգում: Ներկայումս ՈՒՀ-ներում աշխատում են բարձրագույն, թերի բարձրագույն, միջին մասնագիտական մանկավարժական և ոչ մանկավարժական, ինչպես նաև միջնակարգ կրթությամբ մանկավարժներ: Մանկավարժների բաշխավածությունն ըստ նրանց կրթական մակարդակի.

	Բարձրագույն	Թերի բարձրագույն	Միջին մասնագիտական	Միջնակարգ ընդհանուր
Մանկավարժական	33 201	4 358	500	-
Ոչ մանկավարժական	5 827	605	37	-
				137

Բարձրագույն մանկավարժական կրթությամբ մանկավարժներն 2011-2012 ուսումնական տարվա տվյալներով կազմում են մանկավարժների ընդհանուր թվի շուրջ 79.5%-ը: Այս թիվը 2.5%-ով գերազանցում է նախորդ՝ 2010-2011 ուստարվա տվյալները: Նախորդ ուստարում հանրակրթական ուսումնական հաստատություններում բարձրագույն, այդ թվում՝ մանկավարժական կրթությամբ մանկավարժների մասնաբաժինը մանկավարժների ընդհանուր թվի մեջ ավելի փոքր էր: Իսկ մնացած բոլոր խմբերի (թերի բարձրագույն, միջին մասնագիտական, միջնակարգ մասնագիտական) մասնաբաժինը՝ ավելի մեծ է:

Մանկավարժների (բացառությամբ տնօրենի) կազմն ըստ տարիքային խմբերի.

Մինչև 25	25-29	30-34	35-39	40-44	45-49	50-54	55-59	60-64	65-ից բարձր
2 256	3 557	3 841	4865	5 379	5 622	6 165	5 592	3642	838

Այսպիսով, մանկավարժների մեծ մասը գտնվում է 40-60 տարիքային խմբում: Այս խումբը կազմում է մանկավարժների ընդհանուր թվի 54 %-ը:

Հիմնական պահանջների և չափանիշների սահմանումն ստեղծում է օրենսդրական վերահսկողության հնարավորություն: Հանրակրթության որակի ապահովման նպատակով և հաշվի առնելով մանկավարժի կենտրոնական դերը ուսումնական ու դաստիարակչական գործում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պահանջներին համապատասխանող լավագույնների ՀՀ հանրակրթության համակարգում ընդգրկելու մեխանիզմ: Դա ուսուցչի թուփուր պաշտոնի համար մրցույթն է:

Մանկավարժի թափուր պաշտոնի համար մրցույթն անցկացնելու օրենսդրական պահանջը գործում է 2010 թվականից ՀՀ կառավարության թիվ 1262 որոշմամբ:

Մանկավարժի ընտրության իրավասությունները պատկանում են մրցույթային հանձնաժողովին, որի կազմում ընդգրկվում են տնօրենը (հանձնաժողովի նախագահ), տնօրենի տեղակալները, մասնախմբի ղեկավարները, տվյալ և այլ ՈՒՀ-ի մասնագետ ուսուցիչները: Ուսուցչի նշանակումը կատարվում է տնօրենի կողմից:



Ընտրությունը կատարվում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր քննության արդյունքում: Գրավոր փուլում ստուգվում են ուսուցչի պաշտոնի հավակնորդի մասնագիտական որակները՝ պետական հանրակրթության չափորոշիչներին համապատասխան: Բանավոր փուլում ստուգվում են նրա մանկավարժական և մասնագիտական գործնական հմտություններ:

**Ընթացիկ գնահատման համակարգ:** Ուսուցչին աշխատանքի ընդունելուց հետո ծագում են նրա որակական հատկանիշների պահպանման և հարմարեցման խնդիրներ: Դրանք, հիմնականում, լուծվում են վերապատրաստման ու ատեստավորման միջոցով:

Վերապատրաստման (որակավորման բարձրացման) և ատեստավորման գործընթացները սերտորեն փոխկապակցված են: Վերապատրաստումը նախորդում է ատեստավորմանը: Վերապատրաստումն ու ատեստավորումն իրականացվում են հինգ տարին մեկ անգամ: Վերապատրաստումն անցկացվում է հանրակրթական ՈՒՀ-ի ֆինանսական միջոցների հաշվին:

Ատեստավորման նպատակն է որոշել ուսուցչի գիտելիքների, աշխատանքային կարողությունների, հմտությունների համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին: Պարզ ընթացակարգով ատեստավորվումն իրականացվում է ուսուցչի փաստաթղթերի քննության հիման վրա: Այն անցկացվում է մարզում (Երևանում) տարածքային հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի բացասական որոշման կամ որակավորման տարակարգի փոփոխման մասին որոշման դեպքում՝ ուսուցիչն անցնում է ատեստավորում բարդ ընթացակարգով, որը նախատեսում է երկու՝ թեստավորման և հարցազրույցի փուլեր: Դրանք անցկացվում են հանրապետական հանձնաժողովի կողմից՝ բարդ ընթացակարգով: Ատեստավորման վերաբերյալ բացասական որոշումը հիմք է մանկավարժին աշխատանքից ազատելու համար:

Ուսուցչի կենսաթոշակային տարիքն ինքնին հիմք չէ նրան աշխատանքից ազատելու համար:

**Խրախուսման համակարգ:** Խրախուսման համակարգն իրականացվում է երկու ձևով՝ ֆինանսական և բարոյական: Ուսուցչի աշխատանքի ֆինանսական խրախուսումն իրականացվում է նրան որակավորման տարակարգերի շնորհման և դրանց համապատասխան՝ հավելավճարների սահմանման միջոցով: Ուսուցչի տարակարգը կոչված է ցույց տալու նրա մասնագիտական և մանկավարժական գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը: Այն շնորհվում է ատեստավորման արդյունքում: Ատեստավորման կարգով նախատեսված են երեք մակարդակի տարակարգեր, որոնք տրվում են հաջորդաբար: Բարձրագույն տարակարգը երրորդն է: Այն շնորհելու համար պահանջվում է ինքնուրույն ստեղծագործական աշխատանք, նոր մեթոդների, լրացուցիչ ուսումնասովանողակ նյութերի կիրառում, անհատականացված հոգեբանամանկավարժական մոտեցում: Երկրորդ մակարդակի տարակարգ ունեցող ուսուցիչը տիրապետում է ուսումնական նյութին, կարողանում է ձևավորել իր աշակերտների ինքնուրույն մտածողությունը, ցուցաբերում է անհատականացված հոգեբանամանկավարժական մոտեցում, ինքնուրույն մշակում է առանձին դասընթացի թեմատիկ միավորներ: Առաջին մակարդակի տարակարգի ուսուցիչը տիրապետում է իր դասավանդած առարկայի ողջ բովանդակությանը և ունի պետական ծրագրերի և չափորոշիչների շրջանակներում իր պարտականությունները պատշաճորեն կատարելու կարողություններ:

Նախադպրոցական ՈՒՀ-ների և լրացուցիչ կրթության հաստատությունների դաստիարակների համար տարակարգեր և հավելավճարներ նախատեսված չեն:

Բարոյական խրախուսանքն իրականացվում է գերազանցապես «Լավագույն ուսուցիչ» և «Լավագույն դաստիարակ» մրցույթների միջոցով: Մրցույթներն ամենամյա են և տարբեր անվանակարգերի սահմանման միջոցով կոչված են խրախուսելու մանկավարժի ստեղծագործական աշխատանքը, նորարարական մեթոդների և առաջավոր փորձի կիրառումը:



Ուսուցիչներին հնարավորություն է տրվում «Կրթություն» թերթում և [www.amedu.am](http://www.amedu.am) կրթական կայքում հանդես գալ սեփական հոդվածներով և մեթոդական մշակումներով: Հրապարակված նյութերը բարձրացնում են ուսուցչի հեղինակությունը, ինչպես նաև հաշվի են առնվում «Լավագույն ուսուցիչ», «Լավագույն դաստափրակ» մրցույթներում կամ ատեստավորման ժամանակ:

Լրացուցիչ կրթության ոլորտում պետականորեն սահմանված խրախուսման համակարգ չի գործում:

#### **գ. Մանկավարժական աշխատանքի վարձատրության համակարգը:**

Մանկավարժի վարձատրությունն իրականացվում է ՈՒՀ-ի կազմակերպական-իրավական ձևին և ֆինանսավորման համակարգին համապատասխան: Քանի որ դպրոցները ֆինանսավորվում են աշակերտների թվով, հնարավոր չէ օրենսդրորեն սահմանել մանկավարժի վարձատրության կայուն չափ: Աշակերտների թվով ֆինանսավորման պարագայում մանկավարժի վարձատրությունը պայմանավորվում է ՈՒՀ-ի առկա միջոցներով: Պետական նախադպրոցական և հանրակրթական ՈՒՀ-ների համար պետականորեն սահմանված է շաբաթական առավելագույն ծանրաբեռնվածությունը: Վարձատրությունը նաև չի կարող ցածր լինել 32.500 դրամից: Ոչ պետական ՈՒՀ-ներում մանկավարժների աշխատավարձը չի կարող ցածր լինել պետական համանման ուսումնական հաստատությունների համար պետական չափորոշիչով սահմանված ֆինանսավորման չափանիշներից<sup>15</sup>: Հանրակրթական դպրոցներում աշխատանքային ծանրաբեռնվածության դիմաց մանկավարժին տրվող գումարը՝ մանկավարժական դրույքը, սահմանվում է յուրաքանչյուր հանրակրթական հաստատության խորհրդի կողմից՝ հաստատության ֆինանսական հնարավորություններին համապատասխան:

ՀՀ կառավարության 2008թ. թիվ 196 որոշմամբ<sup>16</sup> սահմանում է մանկավարժի հետևյալ առավելագույն շաբաթական ծանրաբեռնվածությունը.

5. հատուկ մանկավարժների համար՝ շաբաթական 24 ժամ
6. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, երկարօրյա խմբերի դաստիարակների համար՝ շաբաթական 30 ժամ
7. նախադպրոցական ՈՒՀ-ների դաստիարակների՝ շաբաթական 36 ժամ
8. արտադպրոցական դաստիարակության հիմնարկներում դասավանդողների համար՝ շաբաթական 24 ժամ
9. ուսուցչի համար՝ շաբաթական 22 ժամ:

Հանրակրթական դպրոցներում գործնականորեն կարող են տարբեր դրույքաչափեր սահմանված լինել տարրական, միջին և ավագ դասարաններում դասավանդող մանկավարժների համար: Ներկայումս այն կազմում է միջինը 116 հազար դրամ:

Մանկավարժների աշխատավարձերի բարձրացումն այս կամ այն տոկոսով արտացոլվում է աշակերտների թվով ֆինանսավորման բանաձևի մեջ, և մանկավարժների աշխատավարձը փոփոխում է նույնքան տոկոսով՝ տվյալ ՈՒՀ-ում գործող դրույքաչափի նկատմամբ: Վարձատրության համար կարող է նշանակություն ունենալ նաև դասարանների միջին խտությունը: Միջին խտության ցուցանիշիչը կեսից փոքր լինելու դեպքում (խորհրդի որոշմամբ)

<sup>15</sup> Տես. «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդ. 47:

<sup>16</sup> Սույն որոշմամբ կատարվում է փոփոխություն և լրացում ՀՀ կառավարության 2007թ. թիվ 201 որոշման մեջ «Ուսուցիչների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկություններ հաստատելու մասին» Թիվ 196 որոշմամբ հավելվածով սահմանված «Ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունը»:


Կրթություն

ուսուցիչը նույն աշխատանքային ծանրաբեռնվածության պայմաններում կարող է վարձարատրվել սահմանված դրույքի կեսի չափով:

Բացի դասավանդող ժամերի դիմաց վարձատրությունից՝ մանկավարժն ստանում է հավելավճար՝ կրթության և ստաժի համար: Որակավորման տարակարգեր ստացած ուսուցիչները պետք է ստանան հավելավճար տվյալ տարակարգի համար սահմանված չափով: Այս չափը տատանվում է գործող մանկավարժական դրույքի 10%-ից մինչև 50%-ը: ՀՀ սահմանամերձ, բարձրլեռնային և լեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատությունների մանկավարժների համար սահմանվում է հավելյալ աշխատավարձ:

Մանկավարժը վարձատրվում է ոչ միայն դրույքաչափով՝ դասավանդած ժամերի դիմաց: Նրա ընդհանուր վարձատրությունն ունի նաև երկրորդ մաս, որն առնչվում է մանկավարժական աշխատանքին, բայց դասավանդման հետ ուղղակի կապ չունի: Դրանք առնչվում են գրավոր աշխատանքների ստուգմանը, կաբինետների ղեկավարմանը, միջոցառումների անցկացմանը, ինքնաուսուցմանը, վերապատրաստմանը և այլն:

Այսպիսով, մանկավարժի աշխատավարձը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով, որտեղ բոլոր ցուցանիշները «լողացող» բնույթ են կրում.



Մանկավարժի վարձատրության առանձնահատկություններից է նաև 35, իսկ առանձին դեպքերում 48 օր տևողությամբ ամենամյա վարձատրվող արձակուրդը: 35 օրվա արձակուրդը տրամադրվում է ՈՒՀ-ների ղեկավարներին, նրանց տեղակալներին և ստորաբաժանումների ղեկավարներին, արտադպրոցական կրթադաստիարակչական հաստատություններում դասավանդողներին: 48 օրվա արձակուրդի իրավունք ունեն նախադպրոցական և հանրակրթական ՈՒՀ-ների մանկավարժներ:

**դ. ՀՀ հանրակրթության համակարգում ընթացող բարեփոխումների հիմնական ուղղությունները:**

Նկարագրված հանրակրթության ոլորտն իր կառուցվածքով, կառավարման և ֆինանսավորման սկզբունքներով դեռևս գտնվում է նպատակային և հետևողական բարեփոխումների փուլում: Եթե առաջնորդվենք համակարգի դասական պատկերացումներով, որոնց համաձայն այն ենթադրում է ինքնավերափոխման, ինքնազարգացման կարողություն, որը իրագործվում է արտաքին աշխարհի ազդեցության տակ սեփական կայուն որակի պահպանման նպատակով ներքին խնդիրների լուծման ձևով, ապա պետք է ընդունել, որ այն հեռու է հանրակրթության նպատակներին արդյունավետորեն ծառայող համակարգ լինելուց: Ուստի, հանրակրթության ոլորտում հերթական քաղաքական խնդիրը պետք է լինի համակարգի ներսում այնպիսի փոխհարաբերությունների իրականացում, որոնք կդարձնեն այն կայուն և մեկ նպատակի շուրջ համախմբված: Սա է պատճառը, որ արդի փուլում կրթական քաղաքականությունն ուղղված է համապատասխան սոցիալական միջավայրի, բացառիկ նվաճումների խրախուսմանը, բարեփոխումներն առաջնորդելու կարողությունների հզորացմանը և այլն: Այլ կերպ ասած՝ հասարակության մեջ այնպիսի կապերի և փոխհարաբերությունների ստեղծմանը, որոնք ինքնաբերաբար կրթական համակարգը կտանեն ճիշտ ուղղությամբ և

կրթություն

կապահովեն նրա զարգացումը: Իսկ իրավական-ձևական տեսակետից՝ քանի որ հանրակրթության նպատակը հանրակրթության պետական չափորփշիչների յուրացումն է աշակերտների կողմից, ապա ներկա փուլի բարեփոխումներն ուղղված են կրթության որակի ապահովման մեխանիզմների ստեղծմանը և գործող մեխանիզմների կատարելագործմանը:

Բարեփոխումների ներկա փուլի սկիզբը կարելի է համարել 2010թ., երբ սկսել է գործել Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ «Կրթության որակ և համապատասխանեցում» ծրագիրը, որի բովանդակությունը մաս է կազմում ավելի ուշ ընդունված «ՀՀ կրթության 2011-2015թթ. զարգացման պետական ծրագիր» ՀՀ օրենքի:

Ռազմավարական նպատակներ սահմանված են նաև «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագիր» ՀՀ կառավարության 2008թ. թիվ 10 արձանագրային որոշման մեջ, Հանրակրթության ոլորտի բարեփոխումների հայեցակարգում, Միջնաժամկետ ծախսերի ծրագրերում և այլ փաստաթղթերում:

Նվազագույն փոփոխություններ են կատարվում համակարգի կառուցվածքում: Դրանք կապված են ավագ դպրոցների ինքնուրույն առանձնացված ցանկի ձևավորման հետ: Ինստիտուցիոնալ իմաստով ցանցի ստեղծումը ավարտվել է 2012թ.: Ներկա փուլում ընթանում են ստեղծված դպրոցների կայացմանն ուղղված միջոցառումներ: Միջոցներն են ձեռնարկվում ավագ դպրոցներում նյութատեխնիկական բազայի հարստացման, մանկավարժական կադրերի որակի բարձրացման, նոր առարկայական ծրագրերի ու դասագրքերի պատրաստման, ժամանակակից գրադարանների ստեղծման ուղղությամբ:

ՆախաՏեսվում է ֆինանսական միջոցների տնօրինման լիազորությունների մեծացում, կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում: Մեծ իրավաստեղծ աշխատանք պետք է տանել հանրակրթության բոլոր տարրերին ներկայացվող բովանդակային պահանջների և կառավարման համակարգի նույնականացման ուղղությամբ: Մասնավորապես՝ պետք է մշակվեն արտադպրոցական դաստիարակության համակարգի զարգացման հայեցակարգ, դաստիարակության պետական չափորփշիչներ, արտադպրոցական դաստիարակության և նախադպրոցական կրթության ոլորտում մանկավարժների պաշտոնների նկարագրեր, ատեստավորման և վերապատրաստման կարգեր:

Թե՛ ձև-իրավական, թե՛ բովանդակային դաշտում քաղաքականության իրականացման շեշտը դրվում է մանկավարժի վրա: Կարելի է ասել, որ համակարգի զարգացման ներկա փուլում մանկավարժն ստանձնել է կենտրոնական դեր: Հետագա զարգացումն այլևս հնարավոր չէ առանց մանկավարժի տեղն ու դերը կարևորելու, նրա գիտելիքները, կարողությունները, հմտությունները, աշխատելու և կատարելագործվելու ներքին խթաններն արժևորելու: Այս կապացությամբ նախատեսված է.

1. վերանայել և բարելավել մանկավարժական կրթության որակը՝ այն համապատասխանեցնելով կրթության արդի խնդիրներին և բովանդակությանը.
  - ներդնել նոր մագիստրոսական և բակալավրական ծրագրեր,
  - վերանայել ուսումնական ծրագրերի բովանդակությունը,
  - խրախուսել բուհի և դպրոցի կապը
2. ուսումնասիրել մանկավարժի կարիքները և բարձրացնել վերապատրաստման արդյունավետությունը
3. վերապատրաստել ուսուցիչներին՝ նոր ծրագրերին, դասագրքերին, մեթոդական ցուցումներին և նրանց ներկայացվող արդի պահանջներին համապատասխան
4. բարձրացնել ավագ դպրոցների ուսուցիչների մասնագիտական որակը
5. նպաստել մանկավարժի վարկի բարձրացմանը՝ խրախուսելով մանկավարժական միավորումների գործունեությունը, նորարարությունը, նախաձեռնողականությունը՝ հրապարակելով լավագույն փորձը և նվաճումները

6. ներդնել մանկավարժների և նրանց պահանջարկի տեղեկատվական բազա
7. բարելավել մանկավարժների գործուղման համակարգը
8. իրականացնել մանկավարժների ատեստավորումը
9. ապահովել մեթոդական օգնություն ներառական կրթության մասով:

Այս համատեքստում մանկավարժը հանդես է գալիս որպես բարեփոխումների ակտիվ մասնակից՝ թե՛ որպես սուբյեկտ, թե՛ որպես օբյեկտ: Մի կողմից՝ նա կրողն է այն փոփոխությունների, որոնք նախատեսված է կատարել ուսումնադաստիարակչական գործընթացում հենց իր շնորհիվ, մյուս կողմից՝ նա ոչ մի անգամ դեռևս իր վրա չի զգացել այսքան մեծ ուշադրություն պետության կողմից՝ ակնկալվող արդյունքներն ստանալու համար: Բարեփոխումների նախորդ փուլերում մանկավարժը գերազանցապես ստիպված էր հարմարվել կատարվող փոփոխություններին՝ ինքնուրույնաբար գտնելով իր տեղը նոր սոցիալ-տնտեսական և ուսումնական պայմաններում: Թեթև բեկում այս իրավիճակում նկատվել է 2004թ., երբ զգալի կերպով բարձրացվեց ուսուցիչների աշխատավարձը և խոսվեց հասարակության մեջ մանկավարժի վարկի բարձրացման անհրաժեշտության մասին: Ներկա փուլում մանկավարժն ստիպված պետք է առնչվի իր իրավունքների ու պարտականությունների իմաստավորման և նրանց միջև հարաբերակցության նոր տարաբերակին: Որքանով այն գործառական կլինի, կծառայի նախանշված նպատակներին և որքանով այն կձևավորի մանկավարժական նոր բարձր ինքնագիտակցություն, մեծապես կախված է այն բանից, թե որքանով է այս տարբերակն արտահայտում մանկավարժների սոցիալական պաշտպանվածության գաղափարը:

## **Գլուխ 2. Սոցիալական պաշտպանությունը տեսության մեջ և միջազգային պրակտիկայում:**

### **2.1 Սոցիալական պաշտպանության հասկացությունը:**

#### **ա. Սոցիալական պաշտպանության միջազգային ըմբռնումը.**

Հասարակության սոցիալական պաշտպանության հասկացության ժամանակակից ըմբռնումն արտացոլվում է միջազգային և ներպետական իրավունքում: Ըստ միջազգայնորեն ընդունված սահմանման՝ սոցիալական պաշտպանությունը բոլոր մակարդակների կառավարման մարմինների, այլ ինստիտուտների օրենսդրորեն ամրագրված սոցիալական, իրավական և տնտեսական երաշխիքների իրականացման առաջնությունների և մեխանիզմների համակարգ է, ինչպես նաև սոցիալական ծառայությունների համակարգ, որոնք կոչված են ապահովել սոցիալական պաշտպանության որոշակի մակարդակ, օգնում են բնակչությանը հասնել ընդունելի սոցիալական կենսամակարդակի՝ հասարակական զարգացման որոշակի պայմաններին համապատասխան: Սոցիալական պաշտպանվածությունը մարդու իրավունքների և ազատությունների պահպանման և իրականացման տնտեսական, սոցիալական, իրավական երաշխիքների համակարգ է: Սոցիալական պաշտպանվածությունը քաղաքացիների համար ապահովում է կյանքի արժանավայել մակարդակ և որակ: Սույն մեխանիզմը ներառում է զբաղվածության, վարձահատուցման և աշխատավարձի, արժեքը կումից առաջացող կորուստների փոխհատուցում, գառամյալներին և հիվանդներին օգնելու բնագավառում երաշխիքների ապահովման միջոցառումների համալիր:

Թուրինում, 1991թ. հոկտեմբերին Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված սոցիալական խարտիայում տրված են սոցիալական պաշտպանության հիմնական ոլորտները: Նրանցից մեկը աշխատանքի պայմաններին և աշխատանքի դիմաց վարձատրությանը առնչվող իրավունքներն են: Այս իրավունքների շարքին են պատկանում ազատորեն զբաղմունքը ընտրելու և դրանով ապրուստը հայթայթելու յուրաքանչյուրի իրավունքը, աշխատանքի արդար

պայմաններ ունանելու իրավունքը, աշխատանքի անվտանգ պայմանների իրավունքը, արդար վարձատրության իրավունքը և այլն: Խարտիայի մի շարք հոդվածները անդրադառնում են մարդու առողջության պահպանման և բժշկական օգնության, ինչպես նաև հանգստի կազմակերպման կամ մեծ տարիքում ապահովված լինելու իրավունքներին: Ուշադրություն է դարձվում նաև մարդու մշակութային իրավունքներին: Ըստ խարտիայի՝ աշխատողը ձեռնարկության շրջանակներում տեղեկացված և խորհրդակցված լինելու իրավունքն ունի:

Երկրորդ մասում Եվրոպայի խորհրդի նախարարների խորհուրդը բացատրում է, թե որն է «արդար վարձատրությունը»:

Սոցիալական պաշտպանության սահմանումը լրացնում է 1976 թվականին ուժի մեջ մտած ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա (XXI) բանաձևը, որի 6-րդ կետում մասնավորապես ասվում է, որ դաշնագրին մասնակցող պետությունները պետք է ճանաչեն յուրաքանչյուր մարդու՝ իր ապրուստն աշխատանքով վաստակելու իրավունքը և պետք է ձեռնարկեն քայլեր այդ իրավունքի իրացման պայմաններն ապահովելու համար: 7-րդ հոդվածը նշում է արդար վարձատրության յուրաքանչյուր մարդու իրավունքը, որ ենթադրում է արժանապատիվ կյանքի համար բավարար վարձարության չափը և համանման աշխատանքի դիմաց հավասար վարձատրություն՝ անկախ աշխատողի սեռից, ինչպես նաև աշխատանքի այնպիսի պայմանների ապահովում, որոնք համապատասխանում են անվտանգության և հիգիենայի պահանջներին: Նույն հոդվածը նախատեսում է նաև յուրաքանչյուրի կարիերայի աճի համար հավասար հնարավորությունների ապահովում, հանգստի, ժամանցի, վճարվող արձակուրդի իրավունքը<sup>17</sup>:

Սոցիալական պաշտպանության հասկացության սահմանման մեջ մեծ է Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայի (1996) դերը, որը պարունակում է 31 հոդված և երաշխավորում է աշխատողների իրավունքները՝ բնակավայրի ընտրության, առողջության, կրթության, զբաղվածության, իրավական ու սոցիալական պաշտպանության, շարժումներին մասնակցության, ինչպես նաև խտրականության դեմ պայքարի ոլորտներում:

## **բ. Սոցիալական պաշտպանության տեսակները և կազմակերպման ձևերը.**

Սոցիալական պաշտպանության կազմակերպական-իրավական ձևերը բաժանվում են պետական և մասնավոր ձևերի: Պետական ձևերն են՝ սոցիալական ապահովագրությունը, սոցիալական օգնությունը, պետական ապահովությունը, պարտադիր կուտակումները:

Սոցիալական պաշտպանությունը նախատեսվում է մեկ շնչին ընկնող փոքր եկամուտ ունեցող ընտանիքների համար, որոնք չեն ապահովում հանրորեն անհրաժեշտ կենսանվագագույնը:

Սոցիալական պաշտպանություն կարող է իրականացվել դրամական ձևով (կենսաթոշակներ և նպաստներ), բնամթերքի ձևով, ինչպես նաև սոցիալական պաշտպանության օբյեկտ հանդիսացող անձանց զանազան ծառայություններ մատուցելու միջոցով: Այն կարող է ունենալ ինչպես փոխհատուցումային, այնպես էլ նախազգուշական (կանխարգելիչ) բնույթ:

<sup>17</sup> Տե՛ս. [www2.ohchr.org/english/law/cescr.htm](http://www2.ohchr.org/english/law/cescr.htm)

Գրքերի և հոդվածների ցուցակ

Սոցիալական պաշտպանության պետաիրավական ձևերից մեկն է անաշխատունակ անձանց անմիջական պետական ապահովությունը: Անմիջական պետական ապահովության հիմնական հատկանիշներն են ծախսերի ֆինանսավորում պետական բյուջեի հաշվին և ապահովվող անձանց խմբերի ու նրանց ապահովության մակարդակի սահմանում պետական իշխանության մարմինների սահմանած առաջնություններին համապատասխան:

Շուկայական տնտեսություն ունեցող երկրներում անմիջական պետական ապահովությունն ունի կիրառման բավականաչափ սահմանափակ ծավալներ:

Սոցիալական պաշտպանության մյուս կազմակերպական-իրավական ձևը սոցիալական ապահովագրությունն է, որը լայնորեն օգտագործվում է շուկայական տնտեսություն ունեցող երկրներում սոցիալական պաշտպանության մյուս տեսակների համեմատությամբ: Դրա հիմքում ընկած է 'սոցիալական ռիսկեր' հասկացությունը և դրանց պարտադիր և կամավոր ապահովագրության պահանջը:

Սոցիալական ապահովագրության վճարումների ֆինանսավորումն իրականացվում է աշխատող քաղաքացիների և նրանց գործատուների ապահովագրական վճարների հաշվին, որոնք վճարվում են, որպես կանոն, հավասար բաժնեմասով: Սոցիալական ապահովագրության համակարգի ֆինանսավորմանը երբեմն մասնակցում է նաև պետությունը:

Շուկայական տնտեսություն ունեցող երկրներում լայնորեն կիրառվում է սոցիալական պաշտպանության նաև այնպիսի կազմակերպական-իրավական ձև, ինչպիսին սոցիալական օգնությունն է: Այն կրում է հասցեական բնույթ և տրվում է մարդկանց կարիքավորությունն ստուգելուց հետո, եթե նրանք չունեն գոյության այլ աղբյուրներ:

Սոցիալական պաշտպանության այլ կազմակերպական-իրավական ձևեր կարող են լինել նախախնամակալական հիմնադրամները՝ միջոցների պարտադիր (հարկադրական) կուտակում որոշ հանգամանքների առաջացման և դեպքերի համար: Այդ հիմնադրամները գոյություն ունեն Ասիայի և Աֆրիկայի որոշ երկրներում (նախկինում գաղութներ): Դրանք նաև համազգային կազմակերպություններ են, որոնք կոչված են բոլոր աշխատող քաղաքացիների կողմից պարտադիր խնայողություններ իրականացնելու: Հիմնադրամները նպատակ են հետապնդում ապագայի անձնական բարեկեցության համար ապահովել յուրաքանչյուր քաղաքացու անհատական պատասխանատվությունը: Դրանք խնայբանկի տիպի հաստատություններ են: Այդ ներդրումներից կարելի է օգտվել ժամանակավոր անաշխատունակության, գործազրկության դեպքում:

Սոցիալական պաշտպանության մասնավոր ձևերի բնորոշ յուրահատկությունն այն է, որ դրանք ստեղծվում են ոչ թե պարտադիր կարգով, օրենսդրությանը համապատասխան, այլ առանձին սուբյեկտների մասնավոր նախաձեռնությամբ, որոնք ստանձնում են իրենց համար որոշակի հետաքրքրություն ներկայացնող անձանց սոցիալական պաշտպանությունն իրականացնելու պատասխանատվությունը: Մասնավոր ձևերը կարող են կիրառվել որպես բժշկական օգնություն, կենսաթոշակային ապահովություն, նպաստ ժամանակավոր անաշխատունակության դեպքերում և այլն:

Այսպիսով, սոցիալական պաշտպանությունը սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգ է, որը նախատեսված է



Սոցիալական  
պաշտպանությունն  
իրականանում է  
պետական և մասնավոր  
կազմակերպական-  
իրավական ձևերի  
միջոցով

անաշխատունակներին կամ սահմանափակ աշխատունակություն ունեցող անձանց բազմակողմանի օգնություն ցուցաբերելու համար, ինչպես նաև օգնելու այն ընտանիքներին, որոնց աշխատունակ անդամների եկամուտները չեն ապահովում ընտանիքի հանրորեն անհրաժեշտ կենսամակարդակը:

Արդյունավետ սոցիալական պաշտպանությունը ենթադրում է այնպիսի քաղաքականություն, որը համարժեքորեն արճագանքում է մարդկանց սոցիալական ինքնագագացողությանը, ընդունակ է որսալ սոցիալական դժգոհության և սոցիալական լարվածության աճը, կանխարգելել հնարավոր բախումները և բողոքի արմատական ձևերը:

#### **գ. Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները սոցիալական պաշտպանության ոլորտում.**

Հայաստանի Հանրապետության համար սոցիալական պաշտպանության հասկացության սահմանները գծվում են գործող Սահմանադրությամբ, ՀՀ սոցիալական օրենսդրությամբ և միջազգային հանրության առջև ստանձնած պարտավորություններով: Վերջինի առումով հատկապես մեծ դեր է խաղում Մտասբուրգում 1996 թվականին ստորագրված Եվրոպական վերանայված սոցիալական խարտիան, որը ոչ միայն տալիս է սոցիալական պաշտպանության հասկացությունը և նրանից բխող իրավունքները, այլև դրանց իրացման մեխանիզմները: Սույն խարտիային իր մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2004 թվականին: Խարտիան ընդունելու ընթացակարգը նախատեսում է վավերացման համար պարտադիր նվազագույն հոդվածների հոդվածների քանակը և պարտավորությունների ընդլայնման ժամանակացույցը: Նման ընթացակարգը հնարավորություն է տալիս խարտիան ընդունած պետություններին աստիճանաբար անդրադառնալ հասարակության սոցիալական պաշտպանության խնդիրներին: Խարտիան իր բովանդակությամբ ծածկում է սոցիալական իրավունքի բոլոր տեսակները և հուշում է իրավունքների իրացման մեխանիզմները:

Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է խարտիայի 13 հոդվածները և ևս 18 կետերը<sup>18</sup>:

Ըստ հոդվածների՝ պարտավորությունները հետևյալ տեսքն ունեն. «Հոդված 1 Աշխատանքի իրավունքը», «Հոդված 2 Աշխատանքի արդար պայմանների իրավունքը», «Հոդված 5 Կազմակերպելու իրավունքը», «Հոդված 7 Երեխաների և երիտասարդների պաշտպանվածության իրավունքը», «Հոդված 8 Աշխատող կանանց մայրության պաշտպանության իրավունքը», «Հոդված 17 Երեխաների և երիտասարդների սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանվածության իրավունքը», «Հոդված 18 Մյուս Կողմերի տարածքներում վճարովի աշխատանքով զբաղվելու իրավունքը», «Հոդված 19 Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների պաշտպանվածության և օգնություն ստանալու իրավունքը», «Հոդված 20 Առանց սեռական խտրականության՝ աշխատանքի և մասնագիտական հարցերում հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը», «Հոդված 22 Աշխատանքային պայմանների և աշխատանքային միջավայրի սահմանմանը և բարելավմանը մասնակցելու իրավունքը», «Հոդված 24 Աշխատանքից ազատելու դեպքերում պաշտպանվածության իրավունքը», «Հոդված 27 Ընտանեկան պարտավորություններով աշխատողների հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը», «Հոդված 28 Ձեռնարկություններում և նրանց տրամադրվող մեխանիզմներում աշխատողների ներկայացուցիչների պաշտպանվածության իրավունքը»: Նշված հոդվածների վերնագրերը ար-

<sup>18</sup> St' u. Acceptance of provisions of thye Revised European Social Charter (1996)  
www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Presentation/ProvisionTableRevOct2011.pdf:

դեն հուշում են սոցիալական այն իրավունքները, որոնց մասով Հայաստանի Հանրապետությունն ունի միջազգային պարտավորություններ:

Բացի այս հոդվածների և նրանցում սահմանված իրավունքների և դրանց իրացման մեխանիզմների՝ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մի շարք հոդվածների առանջին կետեր: Կետերի վավերացումը նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունը արդի փուլում չի կարող ստանձնել հոդվածով սահմանված իրավունքի իրացումը ամբողջ ծավալով, սակայն քայլեր է ձեռնարկում այս իրավունքը մասնակիորեն ապահովելու ուղղությամբ: Այսպես, ՀՀ ընդունում է անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքը ապահովելու դժվարությունները և հայտարարել է միայն այս ուղղությամբ քաղաքականության մշակման և վթարների կանխագելման իր պատրաստակամությունը, որը իրավաբանորեն ձևակերպվում է 3-րդ հոդվածի 1-ին կետում: Արդարացի վարձատրության իրավունքի վերաբերյալ հոդվածը վավերացված է համարյա ամբողջությամբ՝ բացառությամբ մեկ կետի, որը պատրավորեցնում է պետությանը պատշաճ կենսամակարդակ ապահովել ընտանիքների համար: Հայաստանի Հանրապետությունը ընդհանրապես չի ստանձնում պարտավորություններ կոլեկտիվ գործարկների կնքման (հոդված 6), մասնագիտական ուսուցման (հոդված 10), առողջության պաշտպանության (հոդված 11), ընտանիքի սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանվածության (հոդված 16), տեղեկատվության և խորհրդատվության (հոդված 21), տարեց մարդկանց սոցիալական պաշտպանվածության (հոդված 23), գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների հայցերի պաշտպանվածության (հոդված 25), աշխատանքում արժանապատվության (հոդված 26), աշխատանքից կոլեկտիվ ազատման ընթացակարգերում տեղեկատվության և խորհրդատվության (հոդված 29), աղքատությունից և սոցիալական անարդարությունից պաշտպանվածության (հոդված 30) և բնակավայրի (հոդված 31) իրավունքների մասով<sup>19</sup>:

## 2.2 Եվրոպական երկրներում սոցիալական պաշպանության փորձը:

### ա. Աշխատանքի դիմաց վարձատրություն.

Այս բաժնում մենք կփորձենք գնահատել եվրոպական մի շարք երկրներում ուսուցիչների աշխատավարձերի և աշխատանքային պայմանների ապահովման ոլորտում առկա արդի միտումները: Ինչ վերաբերվում է ուսուցիչների աշխատավարձի մակարդակին, ապա եվրոպական 15 երկրներում (նկատի ունենք այն երկրները, որոնք ԵՄ անդամ են դարձել վաղուց), համաձայն շուկայական աշխատավարձի նորմերի, այն շատ ավելի բարձր է, քան ավելի ուշ Եվրոմիության անդամ դարձած պետություններում, Եվրոպայի հարավ-արևելքում և Արևելյան Եվրոպայում: ԵՄ-ին առավել վաղ անդամակցած երկրներում, օրինակ, տարրական դպրոցի սկսնակ ուսուցիչների ամսական ամենաբարձր աշխատավարձը 14 անգամ գերազանցում է Բուլղարիայում ընդունված նվազագույն աշխատավարձը:

Իրենց կարիերայի ընթացքում ուսուցիչների աշխատավարձերի միջև եղած տարբերությունը տարբեր երկրներում տարբեր է և որևէ կերպ կապված չէ տվյալ երկրի աշխարհագրական դիրքի հետ: ԵՄ 15 երկրներում կան այնպիսիները, որտեղ աշխատավարձերի տարբերությունը մեծ է սկսնակ և փորձառու ուսուցիչների միջև: Տարբեր մակարդակի աշխատանքային փորձ ունեցող ուսուցիչների աշխատավարձերի նվազ տարբերություն կարելի է տեսնել այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ֆինլանդիան, Շոտլանդիան, Լատվիան:

Հետաքրքիր է նաև այն, որ շատ երկրներում, որոնք համարվում են սոցիալ-տնտեսական շուկայի մայրցամաքային մոդելի ներկայացուցիչ՝ սովորաբար բնութագրված որպես միջին

<sup>19</sup> Տե՛ս. Եվրոպական սոցիալական խարտիան (վերանայված)  
[www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Presentation/ESCRBooklet/Armenian.pdf](http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Presentation/ESCRBooklet/Armenian.pdf):



եկամտային տարբերություն ունեցող երկրներ, մեծ տարբերություններ կան ուսուցիչների աշխատավարձերի միջև (Ավստրիա, Ֆրանսիա, Բելգիա), մինչդեռ անգլո-սաքսոնյան երկրները և ԵՄ մի շարք նոր անդամներ ունեն աշխատավարձերի շատ քիչ տարբերություն սկսնակ և փորձառու ուսուցիչների միջև:

Ընդհանուր սահման ունեցող երկրներում (Լատվիա, Լիտվա) աշխատավարձերի տարբերությունը էականորեն ցածր է, երբ աշխատավարձերը հաշվվում են համաձայն գնողունակության ստանդարտների՝ շնորհիվ ավելի աղքատ երկրներում առկա գների և արժեքների ցածր մակարդակների: Աշխատավարձերի տարբերությունն ըստ աշխատանքային փորձի նույնպես տարբեր է ըստ երկրների:

Օրինակ՝ Ռուսաստանի տարրական դպրոցների ուսուցիչների աշխատավարձերն ավելի ցածր են (նշենք, որ ՌԴ-ում ուսուցիչների միջին աշխատավարձը կազմում է 85000-ից 90000 ՀՀ դրամ), քան Ավստրիայում, որտեղ գրեթե հնգապատիկ ավելի է: Զարմանալի է, որ որոշ անդամ երկրներում, ըստ գնողունակության ստանդարտների, աշխատավարձերն ավելի լավ են ներկայացված: Օրինակ՝ Չեխիայի Հանրապետությունում, համաձայն գնողունակության ստանդարտների, տարրական և միջնակարգ դպրոցների ուսուցիչները շատ ավելի բարձր աշխատավարձ են ստանում, քան Ֆինլանդիայում, Իտալիայում և Շվեդիայում: Անհրաժեշտ է նշել նաև, որ Սերբիայում և Թուրքիայում սկսնակ ուսուցիչներն ստանում են միևնույն աշխատավարձը, ինչ իրենց գործընկերները Պորտուգալիայում, համաձայն գնողունակության ստանդարտների, և նրանք բոլորն էլ ստանում են շատ ավելի բարձր աշխատավարձ, քան սկսնակները Իսլանդիայում:

Ամեն դեպքում ԵՄ 22 երկրների տարրական դպրոցների սկսնակ ուսուցիչներն ավելի բարձր աշխատավարձ են ստանում, քան պետական նվազագույն աշխատավարձն է: Մյուս կողմից Ռուսաստանում, Թուրքիայում, Սերբիայում տարրական դպրոցների սկսնակ ուսուցիչներն ստանում են 3 անգամ ավելի, քան պետական նվազագույնը:

Այստեղից պարզ և ինչ-որ տեղ զարմանալի հետևություն կարելի է անել, որ հնարավոր չէ հստակ խոսել Եվրոպայի Արևելքի և Արևմուտքի ուսուցիչների աշխատավարձերի մակարդակների և տարբերությունների մասին:

Նախնական ակնկալիքները, կապված հարուստ երկրների բարձր հարկերի և նորանդամ երկրների ցածր հարկերի հետ, հավաստագրված չեն: ԵՄ 15 հարուստ երկրներ՝ Իռլանդիան, Ֆինլանդիան, և Իտալիան, ունեն ցածր հարկային տոկոսներ և սոցիալական ապահովագրության ցածր ծախսեր, իսկ ավելի աղքատ տնտեսությամբ նորանդամ երկրները կամ Եվրոպայի հարավ-արևելյան երկրները, օրինակ՝ Հունգարիան և Սերբիան, ունեն բարձր հարկային տոկոսներ: Որակական ցուցանիշները նույնպես՝ կապված աշխատանքային պայմանների և որակի հետ, ցույց չեն տալիս Արևելք-Արևմուտք տարբերությունը:

Ինչ վերաբերվում է աշխատավարձերի հարցում գենդերային տարբերությանը, ապա շատ գեկույցներում, ինչպես նաև մասնագետների կողմից նշվում է, որ պետականորեն նշանակված աշխատավարձերը և վճարումները այդ հարցում չեզոք են, ինչն անշուշտ կարելի է ասել նաև ՀՀ-ի համար: Այնուամենայնիվ մի քանի երկրներ դեռևս տարբերակում են աշխատավարձերի ճեղքվածք, կապված սեռական տարբերությունների հետ, որը կազմում է



Հնարավոր չէ հստակ պարզաբանել Եվրոպայի տարբեր երկրների ուսուցիչների աշխատավարձերի տարբերությունները

3,5%-ից 18%: Պատճառները, որոնք առաջ են քաշվում այս երևույթը բացատրելու համար, ներառում են հետևյալ դեպքերը՝ կարիերայի համար տարբեր առաջադիմական հնարավորություններ կանանց և տղամարդկանց համար, ավելի շատ արտաժամյա աշխատանքներ են տրամադրվում տղամարդկանց, իսկ որոշ դեպքերում էլ քիչ քանակի դասաժամերի պարագայում ավելի շատ ժամերով ապահովվում են տղամարդիկ:

Եթե դիտարկենք միջին շաբաթական դասաժամերը տարրական դպրոցներում, ապա 2 սկանդինավյան երկրներում դրանք կարող են լինել ամենաբարձր և ամենացածր մակարդակներում: Միջին աշխատանքային ժամերը Շվեդիայում ամենաբարձրն են՝ 35 ժամ երկու կատեգորիաների համար և ամենացածրը Իսլանդիայում՝ 17 ժամ սկսնակների և 13 ժամ աշխատանքային մեծ փորձով ուսուցիչների համար: Նշենք, որ ՀՀ-ում ուսուցչի շաբաթական դասաժամը կազմում է 22 ժամ մեկ դրույքաչափի դեպքում:

Մասնավորեցումը կամ դպրոցների հասարակական կարգավիճակի փոփոխությունները որոշիչ գործոն չեն ուսուցիչների աշխատանքային պայմանների համար՝ մասամբ այդ փոփոխությունների սահմանափակ լինելու, մասամբ էլ դպրոցների հասարակական կառուցվածքի և աշխատանքային պայմանների միջև եղած հարաբերակցության պակասի պատճառով:

Դանիայում, Միացյալ Թագավորությունում և Կիպրոսում մասնավոր դպրոցների մասնաբաժինը 20-ից ցածր է, միայն Իսպանիան, Մալթան և Նիդերլանդները ունեն բարձր մակարդակներ, բայց այս երկրներում կա ուսուցչի աշխատավարձի բարձր մակարդակ, իսկ նրա աշխատանքային պայմաններն էլ ավելի վատը չեն: Այս երկրներից միայն Նիդերլանդներն է, որ աշխատավարձերի բարձր տարբերություն է ցուցաբերել, ինչպես նաև ներկայացրել է ամենաբարձր աշխատավարձային ճեղքվածքը կապված գեղերային տարբերությունների հետ: Աշխատանքային պայմանների ցանկացած տեսակի վատացման հետ կապված՝ պատասխանատուները վկայակոչում են պայմանների պակասը և կառավարության կողմից ծախսերի կրճատումը: Պահանջվող որակավորման չափանիշներից ցածր մակարդակ ունեցող ուսուցիչներ կան միայն Շվեդիայում, չնայած, որ ինչ-որ չափով այս երևույթը կարելի է տեսնել նաև մի շարք այլ երկրներում: Իհարկե, Շվեդիան էլ համեմատաբար տարբեր արդյունքներ է ցուցաբերում տարբեր տեսակետներից՝ ներառյալ արտաժամյա աշխատանքի բարձր մակարդակը, աշխատանքային պայմանների վատթարացումը և միացյալ գործարքների ապակենտրոնացման աճը:

Ինչ վերաբերվում է ուսուցիչների կես դրույքով աշխատանքին՝ տարրական և միջնակարգ դպրոցները ցույց են տվել միևնույն բնութագրերը՝ շատ երկրներում կես դրույքով աշխատող ուսուցիչների աշխատավարձերը 20 տոկոսով ցածր են: Բացառություն են Լատվիան և Իսլանդիան՝ համապատասխանաբար 30 և 25 տոկոս կես դրույքային չափաբաժնով: Ինչ վերաբերվում է Ավստրիային և Բելգիային, ապա միջնակարգ դպրոցում կես դրույքով աշխատող ուսուցիչների աշխատավարձը բարձր է 25 տոկոսով:

Ուսուցիչների թվի պակասությունը լուրջ խնդիր է համարվում: Պետական դպրոցների 50 տոկոսը հաշվետվություն է ներկայացրել, որ ունի ուսուցիչների թվի պակաս: Իրականում պատասխանատուների 70 տոկոսը ներկայացրել է, որ որոշ առարկաների մասնագետների լուրջ պակաս ունեն: Նմանատիպ խնդիրները արդյունք են ցածր աշխատավարձերի և ոչ հավասար աշխատանքային պայմանների: Մանկավարժների սերնդափոխությունը, որպես արդյունք ուսուցիչների թվի պակասության, ի հայտ եկավ Նիդերլանդներում, Դանիայում և Լիտվայում, որտեղ թոշակի անցնող ուսուցիչների թիվը բարձր է: Ի հակադրություն սրա՝ Իսլանդիայում բնակչության աճը հանդիսացավ որակավորված ուսուցիչների թվի պակասության պատճառ: Վրաստանից, ՀՀ-ից, Լիտվայից, Լատվիայից և Հոլանդիայից տեղեկացվում է, որ պակասության պատճառ է հանդիսանում արտագաղթը:

Քանի որ այս բոլոր տվյալները համեմատական են, ապա դրանք չեն կարող ապահովել յուրաքանչյուր երկրի մանրակրկիտ պատկերը, որտեղ հաշվի են առնվում ազգային բնութագրերը: Այստեղ ներկայացվում են ողջ Եվրոպայի ուսուցիչների աշխատավարձերի և աշխատանքային պայմանների հիմնական տենդենցները: Մինչդեռ բոլոր ոլորտների զանազանությունը կարելի է դիտել որպես Եվրոպայում ուսուցչի դիրքի 'կամարաձև բնութագիր': ՀՀ-ում, ՌԴ-ում, Եվրոպայում գնալով ակնհայտ է դառնում, որ ուսուցիչների սոցիալական պաշտպանվածությունը տկարանում է:

### **բ. Ուսուցչական կադրերի կառավարման եվրոպական փորձը.**

Որակավորում ունեցող ուսուցիչ է համարվում նա, ով լիազորագիր է ստանում հեղինակավոր մարմիններից՝ կառավարությունից, բարձրագույն կրթական հաստատությունից կամ մասնավոր մի այլ հաստատությունից: Որակավորման վկայագրերը ուսուցիչներին թույլ են տալիս դասավանդել այնպիսի դպրոցներում, որտեղ առհասարակ պահանջվում է լիազորություն, ինչպես նաև կրթողներին թույլ է տալիս ուսուցանել որոշակի կոնտեքստում և ուսումնական պլանների սահմանում: Մինչդեռ շատ լիազորող մարմիններ պահանջում են ուսուցում նախքան ուսուցչի որակավորման վկայագիր տալը:

Ֆրանսիայում ուսուցիչները (professeurs) հիմնականում քաղաքացիական ծառայողներ են՝ հավաքագրված մրցությային քննությունների միջոցով: Նրանք պետք է անպայման ձեռք բերեն քոլեջի նախնական կրթություն և ստանան մասնագիտական կրթություն Ուսուցիչների Պատրաստման Համալսարանական Հաստատություններում (ՈՒՊՀՀ) (University Institutes for Teachers Training, IUFM): Սկսած 2010 թվականից ՈՒՊՀՀ-ի դասընթացները փոխարինվել են կրթական նոր համակարգով: Առաջացել է ուսուցիչների վեց խումբ.

- Professeurs des écoles – տարրական դպրոցի ուսուցիչներ, հանձնում են CRPE մրցությային քննություն
- Professeurs certifiés – ավագ դպրոցի ուսուցիչներ, հանձնում են CAPES որակավորում միջնակարգ կրթություն տալու համար, կամ CAPET որակավորում տեխնոլոգիական կրթություն տալու համար
- Professeurs de l'enseignement privé – մասնավոր դպրոցի ուսուցիչներ, հանձնում են CAFEP որակավորում մասնավոր դպրոցներում կրթելու համար
- Professeurs de lycées professionnels – հատուկ մասնագիտական ավագ դպրոցի ուսուցիչներ, հանձնում են CAPLP որակավորում ավագ դպրոցում հատուկ մասնագիտական առարկաներ դասավանդելու համար
- Professeurs de l'enseignement physique et sportif – սպորտի ուսուցիչներ, որոնք հանձնում են CAPEPS որակավորում սպորտային առարկաներ դասավանդելու համար
- Professeurs agrégés – ավագ դպրոցի ուսուցիչներ: Նրանք հանձնում են Agrégation մրցությային քննություն: Սա համարվում է բարձր վարկանիշով տիտղոսը և հաճախ դիմում են ակադեմիկի դիրքի համար և փոքրամասնություն են կազմում ավագ դպրոցներում:

Թվարկվածներից առաջին հինգը ստանում են թույլտվություն և նրանցից պահանջվում է նվազագույնը բակալավրի աստիճան: Նրանք ստանում են միևնույն աշխատավարձ: Վեցերորդ կետի ներկայացուցիչներից պահանջվում է նվազագույնը մագիստրոսի աստիճան: Նրանք ունեն համեմատաբար բարձր աշխատավարձ:

Եվրոպայի երկրներում մեծ ուշադրություն է դարձվում սերնդափոխության խնդիրներին: Տարիքի կառավարումը համարվում է կադրերի կառավարման կարևոր խնդիրներից մեկը:



Տարբեր եվրոպական երկրներում որակավորման վկայագրերն են որոշում ուսուցիչների տարիքային սահմանափակումը և աշխատավարձը

Համաձայն Իտալական «La Repubblica» թերթի<sup>20</sup> Ֆրանսիան, միջին հաշվարկով, ունի ուսուցիչների ամենաերիտասարդ (միջին տարիքը 40) , իսկ Իտալիան՝ ամենատարեց կազմը՝ միջին տարիքը՝ 51: Գիտարկելով վեցնյակը՝ տեսնում ենք, որ Գերմանիան երկրորդն է Եվրոպայում՝ (46): ճապոնիայում ուսուցիչների միջին տարիքը 45 է Միացյալ Թագավորության և Միացյալ Նահանգների ուսուցիչների միացյալ միջին տարիքը՝ 41: Այս թվերը կարող են փոփոխական լինել, քանի որ ուսումնասիրությունները կատարվել են մինչև 50 տարեկան ուսուցիչների շրջանում:

Գերմանիան, որը գտնվում է երկրորդ տեղում միջին տարիքային չափանիշներով, 50-ն անց ուսուցիչների պարագայում ունի ամենաբարձր ցուցանիշը: Գերմանիայում ուսուցիչների 50 տոկոսի տարիքը 50-ից բարձր է: Մասնագետներն այս հանգամանքը դիտարկում են տարբեր կերպ. մի կողմից աշխատանքային փորձի թեղորայի՝ որքան մեծ է ուսուցիչ տարիքը, այնքան մեծ է նրա աշխատանքային փորձը, իսկ մյուս կողմից՝ սա խոսում է այն մասին, որ չկան համապատասխան ոլորտում աշխատելու ցանկություն ունեցող մասնագետներ:

Իտալիայում շատ ուսուցիչներ դիմել են կառավարությանը, խնդրելով ընդունել մի օրենք, որը թույլ կտա ուսուցիչներին թոշակի անցնել 50 տարեկանից, դրանով իսկ նոր աշխատատեղեր ստեղծել երիտասարդ կադրերի համար:

### Գլուխ 3. ՀՀ հանրակրթության ոլորտի մանկավարժական աշխատողների սոցիալական պաշտպանվածության գնահատականը

Ինչպես նշվեց նախորդ գլխում, սոցիալական պաշտպանության գաղափարը հենվում է հիմնական սոցիալական իրավունքների իմաստավորման վրա և ուղղված է դրանց իրացման երաշխիքների ու մեխանիզմների ապահովմանը:

Մանկավարժների սոցիալական պաշտպանվածության ուսումնասիրության պարագայում կարելի է առանձնացնել երկու մեթոդաբանական մակարդակ:

Առաջին մակարդակում մանկավարժների սոցիալական պաշտպանության հարցը դիտարկվում է ՀՀ-ում սոցիալական պաշտպանվածության համակարգի լայն համատեքստում և չի տարանջատվում այլ խավերի սոցիալական պաշտպանության հարցերից: Հետազոտության այս կտրվածքն արտացոլում է, գերազանցապես, ՀՀ Մահմանադրությամբ ամրագրված բազային սոցիալական իրավունքների իրացման աստիճանը, որը վկայում է ՀՀ-ի, որպես սոցիալական պետության, կայացման աստիճանի մասին:

Երկրորդ մակարդակում կարելի է դիտարկել մանկավարժների, որպես առանձին սոցիալական շերտի, պաշտպանվածության խնդիրները, որոնք ուղղակիորեն կապվում են.

- ՀՀ կրթական օրենսդրության կատարելության աստիճանի, դրա անհակասականության և
- ՀՀ կրթական օրենսդրության կրթական իրականությանը համապատասխանության աստիճանի հետ:

<sup>20</sup> www. Larepublica.it 1 March:

Երկու դեպքում էլ ցածր ցուցանիշների հետևանքով ստեղծվում է մի իրավիճակ, որը բնութագրվում է սոցիալական անկայունությամբ, իրավունքների և պարտականությունների անհամաչափությամբ, անորոշությամբ ու հոգեբանական ճնշվածությամբ: Այս պարագայում խոսել սոցիալական պաշտպանության արդյունավետ համակարգի մասին՝ անհնար է:

Մեր ուսումնասիրության ժամանակ մենք փորձել ենք գնահատել ՀՀ-ում մանկավարժների սոցիալական պաշտպանության առանձին կողմերը ՀՀ կրթական օրենսդրության սահմաններում՝ ուշադրություն դարձնելով մի շարք խնդիրների վրա՝

- ա) մանկավարժի ֆինանսական ապահովության, սոցիալական աջակցության ու կենսաթոշակային ապահովության,
- բ) ՀՀ կառավարության՝ կենսամակարդակն իջեցնող գործոնների ազդեցությունը չեզոքացնելու կարողության,
- գ) կրթության ոլորտում մանկավարժների աշխատանքի անցնելու և նրանց գնահատման ու առաջխաղացման համակարգի արդյունավետության,
- դ) վարչական կամայականություններից և հոգեբանական ճնշումներից ազատ լինելու երաշխիքների,
- ե) սահմանված պարտականությունների շրջանակի:

Սոցիալական պաշտպանության մի շարք պետական և մասնավոր ձևեր դուրս են մնացել մեր ուսումնասիրությունից: Պատճառներից մեկը տվյալ ուսումնասիրության ծավալի սահմանափակությունն է, որը ստիպում է սահմանել առաջնայնությունները՝ համալիր բնույթ ունեցող հիմնախնդրից դուրս բերելով առավել զարգացած և ծանրակշիռ տարրեր: Այս հիմնավորմամբ էլ մենք չենք քննարկել մանկավարժի աշխատանքի տեխնիկական և այլ բարենպաստ պայմանների, սոցիալական պարտադիր ապահովագրության, սոցիալական արտոնությունների, մանկավարժական հասարակական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ հարցեր:

Այսպիսի մոտեցման երկրորդ պատճառն այն է, որ ներկայումս ՀՀ հանրակրթության համակարգում ոչ բոլոր բաղադրիչների զարգացումն է իրականանում զուգընթաց: Այսպես, նախադպրոցական կրթության բարեփոխման ծրագրով նախատեսված միջոցառումների մի մասը կան կատարման ընթացքում են, կան սկիզբ են առաել 2011 թվականին, ինչը գնահատումը ներկա փուլում դարձնում է հատվածային և ոչ օբյեկտիվ: Ուստի, մեր ուշադրությունը գերազանցապես սևեռվելու է հանրակրթական ՈՒՀ-ի մանկավարժների, այն էլ՝ ուսուցիչների վրա:

### 3.1 Ֆինանսական ապահովության և հանգստի պայմանների գնահատում

#### ա. Մանկավարժների ֆինանսական ապահովության գնահատում.

Սոցիալական պաշտպանության անբաժանելի մասն է աշխատանքի դիմաց արդար վարձատրությունը, որը ենթադրում է.

- կյանքի նվազագույն արժեքի ապահովում,
- պաշտպանություն բարեկեցության մակարդակն իջեցնող գործոններից,
- սոցիալական, հասարակական կյանքի կայունության հնարավորության ընձեռում:

ՀՀ-ում մանկավարժների աշխատավարձը մշտապես քննարկվող նյութ է: Տարիներ շարունակ ուսուցիչներին տրվող ցածր աշխատավարձը պատճառ է դարձել համակարգում և հասարակության մեջ տեղ գտած տարաբնույթ բացասական երևույթների: Զգալի փոփոխություններ են կատարվել 2003-2004թթ., երբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002թ. թիվ 2047-Ն «ՀՀ հանրակրթական համակարգի ռացիոնալացման և ՀՀ կառավարության 2001թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1236 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

որոշումը, իրականացվել է ուսուցիչների կրճատում: Կրճատման հետևանքով աշխատանքից ազատվել են շուրջ 3700 ուսուցիչներ: Ու թեպետ ուսուցիչների միջոցառումները անսպասելիորեն գործազուրկ են դարձրել մոտ չորս հազար ուսուցիչ (ինչը մեծ պիք է բարձրացրել հասարակության մեջ), դրա շնորհիվ կարգավորվել է ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը և աճել դասարանների միջին խտությունը, ինչը հնարավորություն է տվել զգալիորեն բարձրացնել ուսուցիչների աշխատավարձը:

Գործող ֆինանսական համակարգի հիմքը դրվել է 2007թվականին<sup>21</sup>: Համակարգի գործադրումից հետո ուսուցիչների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2009թ. բարձրացվել է մոտ 30%-ով՝ հասցվել շուրջ 116.3 հազար դրամի<sup>22</sup>:

2010-2012 թվականների ընթացքում ուսուցիչների աշխատավարձի բարձրացումը ՀՀ կառավարության կողմից չի դիտարկվում որպես գերակայություն, քանի որ ներկայումս այն ավելի բարձր է գիտության և մշակույթի ոլորտների աշխատողների աշխատավարձից:

Բացի սոցիալական ապահովության բավարար մակարդակի ապահովումից՝ ներկայումս մանկավարժների վարձատրության արդարությունը ապահովվում է նաև հետևյալ միջոցառումներով.

- օրենսդրորեն նվազագույն ամսական աշխատավարձը սահմանելու<sup>23</sup>,
- պետական ՈՒՀ-ների մանկավարժների աշխատանքի վարձատրության դրույքաչափը՝ բյուջետային հիմնարկների աշխատողների միջին աշխատավարձից ցածր չլինելու օրենսդրական պահանջի<sup>24</sup>,
- փոքրաթիվ հանրակրթական դպրոցներին տարբերակված ֆինանսավորման,
- տարբեր բնակավայրերի հանրակրթական դպրոցներին տարբերակված ֆինանսավորման,
- տարբեր կրթական աստիճանների հանրակրթական դպրոցներին տարբերակված ֆինանսավորման,
- սահմանամերձ, բարձրլեռնային և լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների ուսուցիչներին հավելավճար տալու,
- հանրակրթական դպրոցներին առանձին ծրագրերով և լրացուցիչ կրթական ծառայությունների դիմաց համապատասխան միջոցների տրամադրման,
- նախադպրոցական, հանրակրթական արտադպրոցական կրթադաստիարակչական ՈՒՀ-ների մանկավարժների ուսումնական աշխատանքի տևողությունը սահմանելու,
- որակավորման տարակարգերի համար հավելավճարի միջոցով:

Ֆինանսավորման տարբերակված համակարգն իրականացվում է լրացուցիչ գործակիցների միջոցով, որոնք մեծացնում են հիմնական բանաձևով սահմանվող գումարի չափը: Հաշվի առնելով այն, որ սովորողների թվով ֆինանսավորման պարագայում, փոքրաթիվ դպրոցների միջոցները խիստ սահմանափակ են, և ուսուցիչներին բարձր աշխատավարձ տալու հնարավորությունը շատ փոքր՝ մինչև 400 աշակերտ ունեցող բարձրլեռնային դպրոցների համար հիմնական գումարը բազմապատկվում է 1.2 գործակցով: Նույն գործակցով բազմապատկվում է նաև միևնույն բնակավայրում միակ և մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար նախատեսված հիմնական գումարը: Լեռնային բնակավայրերի դպրոց-

<sup>21</sup> Աշակերտների թվով ֆինանսավորման համակարգը գործադրվել է ՀՀ կառավարության 2006թ. թիվ 1262-Ն որոշման հիման վրա:

<sup>22</sup> Տե՛ս՝ ՀՀ կառավարության 2011թ. թիվ 955-Ն «ՀՀ 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» որոշումը:

<sup>23</sup> Համաձայն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի՝ ներկայումս այն կազմում է 32.500 դրամ:

<sup>24</sup> «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդ. 50:

ների համար գումարը բազմապատկվում է 1.02-ով: Բացի դրանից՝ սահմանամերձ, բարձրլեռնային և լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար սահմանված է հավելյալ վճար: Այս բոլոր միջոցառումները տալիս են մանկավարժների եկամուտները համահարթեցնելու հնարավորություն:

Արդի փուլում արդար վարձատրության համակարգի զարգացման ճանապարհին բոլորին հավասարապես կյանքի նվազագույն պայմաններ ապահովելու խնդրից շեշտը փոխադրվել է ուսուցչի աշխատանքի խթանման և մասնագիտական որակին համապատասխան վարձատրության սահմանման խնդրին:

Այս համատեքստում 2010–2011 թվականների ուսուցչի միջին աշխատավարձի պահպանման պայմաններում, «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2008թ. արձանագրային որոշման համաձայն՝ ավագ դպրոցներում ի հավելումն մանկավարժական անձնակազմի աշխատավարձի՝ նախատեսվել է 20%-ի հավելավճար: Իսկ 2011 թվականից ուսուցիչների ատեստավորման նոր կարգի ներդրմամբ՝ հնարավորություն է ստեղծվել իրականացնել տարբերակված ֆինանսավորում՝ ըստ ատեստավորման արդյունքում ուսուցչի ստացված որակավորման տարակարգի: Քանի որ առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում է ատեստավորել հանրակրթական դպրոցների բոլոր ուսուցիչներին, սպասվում է, որ հավելավճարների համակարգը լիարժեքորեն կգործի 5 տարի հետո:

Դրա հետ մեկտեղ՝ անհրաժեշտ է նշել, որ մանկավարժների աշխատանքի վարձատրության համակարգում առկա են մի շարք խնդիրներ, որոնք հարվածի տակ են դնում մանկավարժի բարեկեցության կայունությունը և չեզոքացնում իրականացվող միջոցառումների դրական ուղղվածությունը:

Այսպես, հանրակրթական ՈՒՀ-ի՝ մանկավարժական դրույքաչափը սահմանելու խորհրդի իրավասությունը խտրականություն է առաջացնում տարբեր ուսումնական հաստատություններում աշխատող մանկավարժների շրջանում: Այլ կերպ ասած՝ նույն ծավալի աշխատանքի դիմաց երկու տարբեր դպրոցներում նույն մանկավարժը կարող է վարձատրվել տարբեր չափով: Դրա հետևանքով կարող է ստեղծվել որակի տեսանկյունից կադրերի անհամաչափ բաշխում:

Վարձատրության հաջորդ խնդիրը կապված է ավագ դպրոցներում գործող այլ՝ ոչ ֆինանսական չափանիշների հետ: Ավագ դպրոցների համար դասարանների միջին խտությունը սահմանված է 20–25 աշակերտ, իսկ մասնագիտական առարկաների համար՝ 12–15: Այս ցուցանիշներն ավելի ցածր են, քան միջին դպրոցներում գործող ցուցանիշները, ինչի հետևանքով ուսուցիչների թիվը աշակերտների թվի նկատմամբ աճում է: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ աշխատավարձի համար պահանջվող ընդհանուր գումարն ավելանում է: Համամասնությունը դասավորվել է այնպես, որ 2011թ., չնայած ուսուցիչներին հատկացվող աշխատավարձի 20%-ի հավելավճարին, արդյունքում ուսուցիչների աշխատավարձը ոչ միայն չի բարձրացել, այլև նվազել է:

Միաժամանակ ավագ դասարաններից զրկված միջնակարգ դպրոցները նույնպես հայտնվել են դժվար կացության մեջ: Սովորողների թվի կրճատումը բերել է ընդհանուր ֆինանսա-



Անհրաժեշտ է գտնել հանրակրթության ոլորտում ուսուցիչների վարձատրության համակարգի խնդիրների լուծման նոր ուղիներ

վորման մակարդակի իջեցման: Նշված հիմնավորմամբ դպրոցներն ստիպված են իրականացնել ուսուցիչների կրճատում կամ նվազեցնել գործող ուսուցիչների աշխատավարձը: Իսկ եթե հաշվի առնենք ՀՀ-ում արտագաղթի հետ կապված առկա միտումները, ապա կարելի է կանխատեսել մանկավարժների աշխատավարձի կրճատում նաև հետագայում: Այս պայմաններում որպես որակի խթան սահմանված որակավորման տարակարգերի դիմաց տրվող հավելավճարները կարող են միայն որոշակի չափով փոխհատուցել մանկավարժի եկամտի նվազումը:

Այսպիսով՝ մանկավարժների վարձատրության գործող համակարգը, որը պայմանավորված է դասարանում առկա աշակերտների քանակով, ի գործու չէ ապահովելու մանկավարժների բարեկեցության կայունությունը և չեզոքացնելու բացասական գործոնների ազդեցությունը:

Որոշ խնդիրներ կան նաև նախադպրոցական կրթության և արտադպրոցական կրթա-դաստիարակչական համակարգերում: Քանի որ նախադպրոցական ՈՒՀ-ների գերակշռող մասը գործում է համայնքային ֆինանսավորման վրա, ապա համայնքների սոցիալապես անկայուն վիճակը ուղղակիորեն անդրադառնում է մանկապարտեզների ֆինանսավորման վրա: Դաստիարակների աշխատավարձը շարունակում է մնալ ցածր: Մինչ 2005թ. մանկապարտեզի դաստիարակի աշխատավարձը կազմել է 15 000 դրամ: 2005թ. ընդունված «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ կետը սահմանում է, որ նախադպրոցական հաստատությունների դաստիարակների աշխատավարձը չի կարող պակաս լինել, քան հանրապետությունում ընդունված նվազագույն աշխատավարձի կրկնապատիկը, այն է՝ 65 000 դրամ: Սակայն շատ համայնքներում միջոցների բացակայության պատճառով այս օրենսդրական պահանջը խախտվում է:

Արտադպրոցական կրթադաստիարակչական հաստատություններում խնդիրն ունի գերազանցապես իրավական ակունքներ: ՀՀ կառավարության 2002թ. թիվ 2145-Ն որոշմամբ հաստատված արտադպրոցական կրթադաստիարակչական ՈՒՀ-ների օրինակելի կանոնադրությունը սահմանում է արտադպրոցական կրթադաստիարակչական ՈՒՀ-ների առանձին տեսակներ, որոնց թվում են մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտության կենտրոնները: Կենտրոնների կազմում հաճախ գործում են տարբեր մասնագիտական ուղղվածության խմբակներ: Այսպես՝ գեղարվեստական խմբակների կողքին կարող են աշխատել երաժշտական ստուդիաներ: Սակայն նույն օրինակելի կանոնադրության մեջ ամրագրված է, որ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող բոլոր միավորումներում պետք է ընդգրկվի առնվազն 7-12 երեխա: Հասկանալի է, որ այս պայմանը չի գործում գործիքային պարապմունքների դեպքում, երբ մեկ ուսուցիչը (երբեմն նաև երկու) վարում է անհատական պարապմունք մեկ աշակերտի հետ: Նման դեպքերում առաջանում է հակասություն իրական հարաբերությունների և դրանց իրավական կարգավորման միջև: Արդյունքում՝ մանկավարժը զրկվում է իր աշխատանքը կատարելու և դրա դիմաց արդար վարձատրություն ստանալու պետական երաշխիքներից:

**ԱՄՓՈՓՈՒՄ.** Վերջին տարիներին թեև ՀՀ կառավարության կողմից իրականացված միջոցառումները զգալիորեն բարելավել են ՈՒՀ-ների մանկավարժների սոցիալական ապահովությունը, շարունակում են ձեռնարկվել նոր միջոցառումներ սոցիալական կայունությունն ապահովելու ուղղությամբ: Միաժամանակ՝ նկատվում են տարվող քաղաքականության ներքին հակասականություն, իրավականորեն հաստատվող չափանիշների և ֆինանսական հնարավորությունների մասնակի անհամապատասխանություն, ինչպես նաև իրավական դաշտի անկատարություն: Արդյունքում՝ խախտվում է մանկավարժի արդար վարձատրության սկզբունքը՝ իր բոլոր բաղադրիչներով:



## **բ. Մանկավարժների կենսաթոշակային ապահովության և արձակուրդի իրավունքի իրացման գնահատում.**

**Արձակուրդի իրավունքը:** Սոցիալական իրավունքների շարքում կարևոր տեղ է հատկացվում մարդու հանգստի իրավունքին, որն իրացվում է, հիմնականում, ամենամյա վճարովի արձակուրդի տրամադրման միջոցով: Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի՝ վճարովի ամենամյա արձակուրդի տևողությունը 20 աշխատանքային օր է (5-օրյա աշխատանքային ռեժիմի պարագայում): Մակայն, հատուկ պայմաններում աշխատող առանձին կարգերի աշխատողների համար, որոնց աշխատանքը կապված է մտավոր և հուզական գերլարվածության կամ մասնագիտական ռիսկի հետ, արձակուրդը կարող է երկայացվել մինչև 35 կամ 48 աշխատանքային օր: Երկարացված ամենամյա արձակուրդի իրավունքից օգտվող պաշտոնների ցանկը հաստատված է ՀՀ կառավարության 2005թ. թիվ 1599-Ն որոշմամբ:

Համաձայն այս որոշման՝ 35 օր տևողությամբ երկարացված արձակուրդի իրավունք ունեն բոլոր ուսումնական հաստատությունների ղեկավարները, նրանց տեղակալները և ստորաբաժանումների տեղակալները: Վերհիշելով «ուսումնական հաստատություն» հասկացության սահմանումը՝ կարելի է ասել, որ այս իրավունքից օգտվում են նախադպրոցական, հանրակրթական (ընդհանուր, մասնագիտացված և հատուկ) ՈՒՀ-ների և արտադպրոցական կրթադաստիարակության ՈՒՀ-ների ղեկավարները և նրանց տեղակալները:

48 օր տևողությամբ արձակուրդի իրավունք է տրված նախադպրոցական և հանրակրթական (ընդհանուր, մասնագիտացված և հատուկ) ՈՒՀ-ների դասավանդողներին, հոգեբաններին, գինղեկներին, երեխաների խնամքն իրականացնող աշխատողներին:

Հանրակրթական հաստատություններում լրացուցիչ ուսուցման համար արտադպրոցական կրթադաստիարակչական ՈՒՀ-ների դասավանդողներին, ուսուցման մեթոդիկայի և դաստիարակչական աշխատանքների մասնագետներին տրամադրվում է 35 օր տևողությամբ երկարացված արձակուրդ:

Թեպետ այս որոշումն առանձնահատուկ սոցիալական արտոնություն է շնորհում մանկավարժներին, այնուամենայնիվ նրա բովանդակությունը լրացուցիչ պարզաբանման կարիք ունի:

ՀՀ կառավարության կողմից սահմանված է մանկավարժական ոլորտի աշխատողների պաշտոնների անվանացանկ: Այս անվանացանկում, ինչպես նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքում, չի հանդիպում «դասավանդող» եզրույթը, որը կիրառված է ՀՀ կառավարության թիվ 1599-Ն որոշման մեջ: Միաժամանակ՝ մանկավարժական աշխատողների անվանացանկում ընդգրկված են թվով ավելի շատ պաշտոններ, քան նշված են այդ որոշման մեջ: Եզրույթների ու ցանկերի անհամապատասխանությունը տարակուսանք է առաջացնում այնպիսի մանկավարժական պաշտոնների վերաբերյալ, ինչպիսիք են, օրինակ, սոցիալական մանկավարժը, գրադարանավարը կամ լաբորանտը: Արդյո՞ք վերջինները, որոնք, ըստ մանկավարժական պաշտոնների անվանացանկի մանկավարժ են համարվում, օգտվում են երկարացված արձակուրդի իրավունքից: Եթե չեն օգտվում, ապա ո՞րն է չափանիշը, որով այս պաշտոնները առանձնացվել են մնացած այլ մանկավարժական պաշտոններից, որոնց հետ հավասար իրավունքներն ու պարտականություններն են կրում կրթության ոլորտում:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ հանրակրթական հաստատությունների լրացուցիչ ծրագրով աշխատողների և արտադպրոցական կրթադաստիարակչական ՈՒՀ-ների աշխատողների արձակուրդը ոչ թե այլ մանկավարժների նման 48, այլ 35 օր է, ինչը կրթական օրենսդրության շրջանակներում դարձյալ բացատրություն չունի: Օրենքը նույն իրավունքներն ու պարտականություններն է սահմանում հանրակրթական ու արտադպրոցական կրթադաստիարակչական ՈՒՀ-ների հիմնական ու լրացուցիչ կրթություն իրականացնող մանկավարժների համար:

Այսպիսով, կարելի է նշել, որ ՀՀ կառավարության թիվ 1599-Ն որոշմամբ խախտվում է սոցիալական իրավունքի իրացման կարևորագույն սկզբունքը, որը պահանջում է պարտականությունների և իրավունքների համապատասխանություն:

**Կենսաթոշակային ապահովություն:** Սոցիալական պաշտպանության պետական կարևոր ձևերից է կենսաթոշակային ապահովությունը: Կենսաթոշակային ապահովման բնագավառում՝ կենսաթոշակի այլ տեսակների կողքին, առանձին մասնագիտությունների և պաշտոնների համար նախատեսվում է նաև մասնակի կենսաթոշակի իրավունք: Դա կենսաթոշակի այն մասն է, որը նշանակվում է կրթության ոլորտի որոշ կարգերի աշխատողներին, եթե լրացել է նրանց 55 տարին, և նրանք ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ: Ընդ որում՝ դրանցից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ<sup>25</sup>: Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. թիվ 665-Ն որոշման՝ կրթության ոլորտում այս իրավունքից օգտվում են պետական հանրակրթական դպրոցների տնօրենները, նրանց տեղակալները, ուսուցիչները, մանկապարտեզների տնօրենները և այլ մանկավարժներ: Ինչպես ՀՀ կառավարության՝ երկարացված ամենամյա արձակուրդի իրավունքից օգտվող պաշտոնների ցանկը հաստատող որոշումը, այս որոշումը ևս կրթության օրենսդրության ոլորտում գործող հասկացության համարապատասխան չի ներառում և առաջացնում է նույնանման խնդիրներ:

Եթե բուն մանկավարժական աշխատանքը դիտարկվում է մասնակի կենսաթոշակ տրամադրելու համար որպես հիմք, ապա ինչու՞ պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներն իրավունք ունեն օգտվելու դրանից, իսկ ոչ պետական ՈւՀ-ների մանկավարժները՝ ոչ, այն պարագայում, երբ ոչ պետական հանրակրթական դպրոցներում մանկավարժական աշխատանքի բնույթը ոչնչով չի տարբերվում պետական դպրոցներում աշխատանքի բնույթից:

Առանձնահատուկ պետք է նշվի, որ վերը նշված ցանկից դուրս են մնացել արտադպրոցական կրթադաստիարակչական ՈւՀ-ների մանկավարժները: Կազմակերպությունների անվանացանկում նշված են երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցները, որոնք, սակայն, չեն սպառում արտադպրոցական կրթադաստիարակչական ՈւՀ-ների տեսակները: Այսպես, ցանկում նշված չեն մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնները, պատանի տեխնիկների կայանները, ճամբարները, ակումբները, հոգեբանական կենտրոնները, մարզադպրոցները, որոնք գործում են նույն օրինակելի կանոնադրության հիման վրա և իրականացնում են նույնանման գործունեություն<sup>26</sup>:

Հետևաբար, այս որոշումը ևս խախտում է մանկավարժական աշխատանքի, որպես սոցիալական երևույթի ամբողջականությունը՝ խտրականություն մտցնելով մանկավարժական աշխատողների տարբեր պաշտոնների միջև:

Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական երկու հիմնական ձևերի նման անկատարությունը ոչ միայն աղճատում է սոցիալական քաղաքականությունը՝ խախտելով պարտականությունների և իրավունքների հավասարակշռությունը, այլև խոչընդոտում է կրթական համակարգի համաչափ զարգացումը:

**ԱՄՓՈՓՈՒՄ.** ՀՀ սոցիալական օրենսդրությունը մանկավարժների համար սահմանում է կենսաթոշակային ապահովման և արձակուրդի արտոնյալ պայմաններ՝ նպաստելով մանկավարժների սոցիալական պաշտպանվածությանը: Սակայն ՀՀ կառավարության որոշումների անկատարությունը խաթարում է այս իրավունքների արդար իրացումը, խախտում է մանկավարժական աշխատանքի՝ որպես սոցիալական երևույթի ամբողջականությունը՝ խտրականություն մտցնելով մանկավարժական աշխատողների տարբեր պաշտոնների միջև:

<sup>25</sup> «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, 2010թ., հոդ.14:

<sup>26</sup> Տե՛ս՝ ս. ՀՀ կառավարության 2002թ. թիվ 2145-Ն որոշումը:

### 3.2 Մանկավարժական կադրերի կառավարման գնահատում

#### ա. Աշխատանքի ընդունման պայմանների գնահատում:

Մանկավարժների աշխատանքի պաշտպանվածության աստիճանը զգալիորեն պայմանավորված է կադրերի կառավարման համակարգով և դրա գործառնության արդյունավետությամբ: Մանկավարժական կադրերի կառավարման հիմնասյուններից է աշխատանքի ընդունման, պահպանման, առաջխաղացման, խթանման և աշխատանքից ազատման գործընթացների կանոնակարգումը: ՀՀ հանրակրթական ՌԻՀ-ներում մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, աշխատանքի ընդունումը և աշխատանքային պայմանագրի լուծումն իրականացնում է տնօրենը:

Ուսուցիչների աշխատանքի ընդունումը կանոնակարգվում է.

- Հանրակրթական ՌԻՀ-ի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգով<sup>27</sup>,
- ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի «ՀՀ հանրակրթական ՌԻՀ» ՊՈԱԿ մանկավարժական կադրեր գործուղելու կարգով<sup>28</sup>,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով ամրագրված նպատակային ուղեգրով ընդունելությամբ:

Առաջին կարգը սահմանում է թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու պայմանները, մրցութային փուլերը և մրցութային առաջադրանքների բովանդակությունը: Համաձայն այս կարգի՝ ձևավորվում է 6 կամ 7 հոգուց կազմված մրցութային հանձնաժողով, և թափուր տեղի համար պահանջվող որակավորում ունեցող թեկնածուն անցնում է մրցութային երկու փուլ: Առաջին փուլն անցկացվում է գրավոր: Տարբեր բնույթի առաջադրանքների, խնդիրների, վարժությունների, թելադրությունների միջոցով ստուգվում է հավակնորդի գիտելիքների համապատասխանությունը հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին: Երկրորդ փուլն իրականացվում է բանավոր: Հարցազրույցի միջոցով հանձնաժողովի անդամները որոշում են հավակնորդի մանկավարժական և մասնագիտական գործնական հմտությունների մակարդակը: Յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ որոշումն ընդունվում է հանձնաժողովի քվեարկությամբ:

Այսպիսով, կարգը սահմանում է ուսուցչի պաշտոնում աշխատանքի ընդունվելու պայմանները, ինչի շնորհիվ պետք է ապահովվի աշխատանքային շուկայի թափանցիկությունը, մատչելիությունը, որոնք սոցիալական պաշտպանության կարևորագույն տարրերն են: Այս կարգի շնորհիվ ստեղծվում է նախագծած որակական պահանջներին բավարարող ուսուցչի շահերը պաշտպանելու հնարավորություն: Մակայն հարկավոր է նշել, որ տվյալ կարգը, այնուամենայնիվ, չի ծածկում մանկավարժական ամբողջ դաշտը և գործում է վերապահումներով: Համաձայն այս կարգի՝ ուսուցիչը կարող է աշխատանքի նշանակվել նաև առանց մրցույթի, եթե.

- պաշտոնը թափուր է ավելի քան 3 տարի,
- մրցույթը հայտարարվել է երկու անգամ, սակայն ընտրությունը չի կայացել,
- թոփուր տեղի ուսուցչի դասաժամերը բաշխվել են նույն դպրոցում համատեղությամբ աշխատող և համապատասխան որակավորում չունեցող այլ մասնագետների վրա,
- ՀՀ ԿԳ նախարարության կողմից գործուղվել է մասնագետ:

Կարգի գործածության այս չորս բացառություններին ավելանում է նաև 5-րդը, որը սահմանված է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում: Այն է՝ նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած թեկնածուի առկայությունը:

<sup>27</sup> ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. թիվ 1262-Ն հրաման

<sup>28</sup> ՀՀ կառավարության 2002թ. թիվ 955-Ն որոշում

Այս դրույթների առկայությունը զգալիորեն չեզոքացնում է ուսուցիչներին մրցույթով ընտրելու պահանջը: Այն դառնում է ընտրության մեխանիզմներից միայն մեկը, որը գործում է հատվածաբար՝ խաթարվելով այլ հնարավորությունների գործածությամբ:

Այսպիսով, տվյալ կարգը իրականում չի ապահովում սոցիալական պաշտպանության այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են թափանցիկությունը, մատչելիությունը և լավագույնին ընտրելու երաշխիքները: Այն հակառակ է նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ ենթակետն, որը պահանջում է, որ պետական ՈՒՀ-ներում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվի մրցութային հիմունքներով՝ բացառությամբ նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած թեկնածուի առկայության դեպքերը:

Մրցութային կարգի հետ էլ ավելի ակնհայտ հակասության մեջ է գտնվում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ուսուցիչների գործուղման կարգը: Համաձայն այս կարգի՝ մարզպետարանները ներկայացնում են մանկավարժական կադրերի պահանջարկ: ՀՀ կրթության և գիտության նախարարությունն այդ դպրոց է գործուղում նախարարությանը դիմած մասնագետ ուսուցչին: Ընդ որում՝ կարգը չի սահմանում, թե ինչպիսի՞ն պայմաններում է կատարվում գործուղվող մասնագետի ընտրությունը: Սահմանված են միայն հետևյալ նախապատվությունները.

- մանկավարժի որակավորման առկայությունը,
- տվյալ մարզի բնակիչ լինելը,
- մասնագիտական գիտելիքները հաստատող այլ փաստաթղթեր:

Ակնհայտ է, որ տվյալ կարգով սահմանված մեխանիզմը շատ ավելի պարզ է, քան երկու փուլերից բաղկացած մրցույթը: Ավելին՝ սույն կարգով գործուղվողն ստանում է լրավճար՝ գույքի տեղափոխման, ճանապարհածախսի, բնակարանի ամսական վարձի (10.000 դրամ) և կեցության այլ ծախսերի (5.000 դրամ) համար: Այլ կերպ ասած՝ գործուղվող մասնագետը մրցույթով նշանակվողի նկատմամբ միաժամանակ ունի երկու արտոնություն. խուսափել որակի պահանջներից և ստանալ լրավճար: Այս պայմաններում աշխատանքի ընդունումը կանոնակարգող երկու՝ իրար հակասող իրավական ակտերը ոչ միայն իմաստազրկում են կադրերի կառավարման գաղափարը և ի գորու չեն ազդելու կադրերի որակի վրա, այլև խտրականություն են մտցնում տարբեր կարգերով դիմող ուսուցիչների միջև:

Նման իրավիճակը, անշուշտ, ունի իր բացատրությունները: Նրանցում բախվում են կադրերի արդյունավետ բաշխման և սոցիալական պաշտպանության երկու տարբեր մոտեցումներ: Առաջինի պարագայում շուկայական մեխանիզմները և մրցակցությունը դիտարկվում են որպես մանկավարժների արդյունավետ բաշխումը և որակն ապահովելու բավարար երաշխիքներ, իսկ մյուս մոտեցումը հենվում է այն պատկերացման վրա, որ խոցելի դպրոցները պետք է վայելեն պետական աջակցություն, որի շնորհիվ որոշակի չափով կխմբագրվեն շուկայական մրցակցային հարաբերությունները:

Խոշոր և բարեկարգ դպրոցներում կարելի է ակնկալել մրցույթին բարձր մասնակցություն, իսկ առանձին գյուղական դպրոցներում հնարավոր է մրցույթներ ընդհանրապես չլինեն: Այս իրականությունն է պատճառը, որ մրցութային կարգում հաշվի են առնված նաև դեպքեր, երբ 3 տարուց ավելի ուսուցչի պաշտոնը մնում է թափուր, կամ երբ մրցույթը հայտարարվում է, բայց ընտրությունը չի կատարվում, ինչպես նաև թույլ է տրվում մեծացնել աշխատող որևէ ուսուցչի ծանրաբեռնվածությունը թափուր մնացած պաշտոնի ծանրաբեռնվածության հաշվին: Գործուղման այսպիսի կարգը կոչված է լրացնելու այս բացը. այն շահագրգռում է ուսուցիչներին դիմելու բարձրլեռնային, լեռնային և սահմանամերձ դպրոցներում աշխատելու: Դրանով իսկ սահմանվում են տվյալ դպրոցներում աշխատող ուսուցիչների լրացուցիչ արտոնությունները: Արդյունքում, փորձելով կառավարել մանկավարժական կադրերի արդ-


յունավետ բաշխումը և նպաստել խոցելի դպրոցներ մանկավարժական կադրերի ներհոսքին՝ գործուղման կարգը երկրորդ պլան է մղում մանկավարժական կադրերի որակի խնդիրը՝ դրանով ուղիղ հակասության մեջ մտնելով մրցութային կարգի հետ:

Արդյունքում՝ աշխատանքի ընդունման հարցում իրավական դաշտում գործող անորոշության և անարդյունավետության հետևանքով գերակայում է տնօրենի անձնական ընտրությունը:

**ԱՄՓՈՓՈՒՄ.** «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո ՀՀ-ում սկսել են ձևավորվել մանկավարժական կադրերի կառավարման տարրեր, որոնք պետք է ապահովեն աշխատանքի ընդունման գործընթացի կանոնակարգումը և կրթության ոլորտում աշխատանքի մատչելիության սոցիալական իրավունքների պաշտպանությանը: Մակայն գործող իրավական ակտերը հակասում են իրար և միասնական մոտեցման շրջանակներում չեն արտացոլում բարդ իրականությունը՝ խախտելով աշխատանքի մատչելիության նկատմամբ սոցիալական հավասար իրավունքը, տեղ թողնելով տնօրենի կողմից թույլ տրվող կամայականություններին:

**բ. Ուսուցչի պաշտոնով աշխատանքի ընդունվելու և աշխատելու համար ուսուցչին ներկայացվող բավոնդակային պահանջների գնահատում:**

Բովանդակային պահանջներ ասելով՝ հասկանում ենք ուսուցչի կրթության, գիտելիքների, կարողությունների և հմտությունների նկատմամբ պահանջները: Բովանդակային պահանջները տարբերակված են ուսուցչի պաշտոնով աշխատանքի ընդունվելու, այդ պաշտոնում աշխատելու, առաջխաղացման և խրախուսման համար: Դրանք կարելի է պատկերել հետևյալ գծապատկերի միջոցով.



Բուրգի չորս աստիճանները արտացոլված են չորս տարբեր իրավական ակտերում: Նվազագույն և պարտադիր պահանջները ներկայացված են արդեն հիշատակված հանրակրթության ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգում (ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. թիվ 1262-Ն հրաման) և մանկավարժական պաշտոնների նկարագրերում (ՀՀ կառավարության 2010թ. թիվ 1391-Ն որոշում): Ստորև բերվող աղյուսակի օգնությամբ համադրենք այս երկու իրավական ակտերում առկա պահանջները:

Պարտադիր բնութագրիչներ		
	ըստ մրցույթային կարգի	ըստ նկարագրի
Կրթություն	ա) բարձրագույն մանկավարժական կրթություն բ) բարձրագույն կրթություն և վերջին 10-ը տարվա ընթացքում մանկավարժական 5 տարվա ստաժ	ա) բարձրագույն մանկավարժական կրթություն բ) միջին մասնագիտական մանկավարժական կրթություն գ) բարձրագույն կրթություն և վերջին 10-ը տարվա ընթացքում մանկավարժական 5 տարվա ստաժ դ) միջին մասնագիտական կրթություն և վերջին 10-ը տարվա ընթացքում մանկավարժական 5 տարվա ստաժ
Ստաժ	չի պահանջվում	մանկավարժական կրթության բացակայության դեպքում՝ 5 տարվա ստաժ
Իրավական ակտերի իմացություն	չի պահանջվում	ՀՀ Սահմանադրություն, 6 ՀՀ օրենքներ, աշխատանքային օրենսգրք, կանոնադրություն, այլ նորմատիվ ակտեր, առարկայական չափորոշիչներ
Հոգեբանական բաղադրիչ	սահմանված չէ	հոգեբանության հիմունքներ
Մասնագիտական բաղադրիչ	հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին համապատասխան	սահմանված չէ
Մանկավարժական բաղադրիչ	մանկավարժական գործնական հմտություններ	մանկավարժության տեսություն, առարկայի դասավանդման մեթոդիկա <sup>29</sup>
Այլ	սահմանված չէ	մինչքժշկական օգնության հիմունքներ, աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոններ

Համեմատական աղյուսակից երևում է, որ նկարագրում տեղ գտած որակավորման պահանջները ավելի թույլ են, քան մրցույթային կարգով սահմանվածները: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ պաշտոնների նկարագիրը տրվում է դպրոցում աշխատող ուսուցչի համար: Նկարագրից հետևում է, որ այժմ չի արգելվում միջին մասնագիտական կրթությամբ կամ ոչ մանկավարժական բարձրագույն կրթությամբ անձնանց աշխատանքն ուսուցչի պաշ-

<sup>29</sup> Այս երկու պահանջները ՀՀ կառավարության 2010թ. թիվ 1391-Ն որոշման 4-րդ հավելվածի 7-րդ գլխի 2-րդ կետի գ./ ելթակետում ձևակերպված են հետևյալ կերպ. «մանկավարժության տեսության և մեթոդիկայի ... հիմունքներ», ինչը պետք է հասկանալ որպես մանկավարժության տեսության հիմունքներ և առարկայի դասավանդման մեթոդիկա, քանի որ մանկավարժությունը գիտություն է դասավանդման վերաբերյալ, իսկ մեթոդիկան որոշակի սկզբունքների և արժեքային կողմնորոշումների վրա հիմնված դասավանդման մեթոդների և հնարների ամբողջություն է: Այլ կերպ ասած՝ մանկավարժությունը շատ ավելի լայն և ընդգրկում հասկացություն է, քան ցանկացած մեթոդիկա:

կրթություն

տոնում: Մակայն տարվող քաղաքականությունն այնպիսին է, որ նոր կադրային հոսքը դեպի դպրոց պետք է վերափոխի ուսուցչական կազմը այնպես, որ դպրոցում մնան դասավանդելու միայն բարձրագույն մանկավարժական կրթությամբ ուսուցիչներ: Ըստ այս պահանջի՝ առաջին փուլում մրցույթներին կդիմեն բարձրագույն մանկավարժական կրթություն կամ բարձրագույն կրթություն և 5 տարվա մանկավարժական փորձ ունեցող անձինք, իսկ ավելի ուշ հետանկարում, հաշվի առնելով տարիքային շարժը, հավակնորդների շարքում ինքնաբերաբար կմնան միայն բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցողները:

Հարկավոր է նշել, որ այս նպատակին ծառայում է նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ ենթակետի այն պահանջը, համաձայն որի՝ միջին մասնագիտական կրթությամբ ուսուցիչները կարող են շարունակել աշխատել դպրոցում միայն մինչև 2018թ.: Այսպիսով, բնականորեն սահմանված գործընթացն արագացվում է լրացուցիչ օրենսդրական պահանջի միջոցով:

Այս քաղաքականությունն արդեն բերել է իր առաջին արդյունքները: 2009/2010 ուսումնական տարվանից երկու տարվա ընթացքում պակասել է բոլոր տեսակի կրթություն ունեցողների թիվը դպրոցում, և մոտ 3,9 տոկոսով աճել է բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող ուսուցիչների թիվը:

Միաժամանակ՝ այս քաղաքականությունն ունի հետևյալ կողմնակի արդյունքները.

- միջնակարգ, միջին մասնագիտական, թերի բարձրագույն կամ ոչ մանկավարժական կրթությամբ և 5 տարվա մանկավարժական փորձը չլրացած ուսուցիչների մի մասը կազատվի դպրոցից մինչև 2018թ.,
- միջնակարգ, միջին մասնագիտական, թերի բարձրագույն կամ ոչ մանկավարժական կրթությամբ և 5 տարվա մանկավարժական փորձ չունեցող ուսուցիչների մի մասը կշարունակի իր կրթությունը մանկավարժական համալսարանում:

Մա նշանակում է, որ տարվող քաղաքականության արդյունքում ուսուցիչների մոտ 20%-ը կամ զրկվելու է աշխատանքից, կամ սեփական միջոցներ է ներդնելու՝ առկա աշխատանքը պահպանելու համար: Այլ կերպ ասած՝ բարեփոխման բացասական հետևանքով առաջացած սոցիալական ցնցումների առջև ավելի քան 8.5 հազար ուսուցիչները մնում են միայնակ և ստիպված են պաշտպանվել միայն իրենց համար մատչելի և հնարավոր մեթոդներով:

Հատկանշական է, որ այս պայմաններում դպրոցը կլքեն 30-59 տարիքային միջակայքում գտնվող ուսուցիչներ, որոնք ունեն որոշակի աշխատանքային փորձ և կարող են իրենց աշխատանքում ունենալ առաջխաղացման համար ներքին խթաններ ու նախանձախնդրություն: Նրանց փոխարեն դպրոցը համալրվում է 60-ից բարձր և կենսաթոշակային տարիքի ուսուցիչներով: Այսպես, վերջին երեք տարիների ընթացքում կենսաթոշակային տարիքի և 1 կամ 2 տարի մինչև կենսաթոշակային տարիքը մնացած ուսուցիչների թիվը 2009/2010 ուստարվա համեմատ աճել է 38%-ով, կամ 2%-ով աճել է նրանց տեսակարար կշիռը ուսուցիչների ընդհանուր թվի մեջ: Հաշվի առնելով, որ ուսուցիչների ընդհանուր թիվը երեք տարվա մեջ աճել է 0.6%-ով, նշանակում է, որ 63 և բարձր տարիքի ուսուցիչները մասնակիորեն ապահովել են ուսուցիչների ընդհանուր թվի պահպանումը և աճը:

Ի տարբերություն կրթության նկատմամբ պահանջների՝ մանկավարժական պաշտոնների նկարագրով սահմանված պահանջներն ավելի բազմազան են և շատ ավելին են պահանջում գործող ուսուցից, քան մրցու-



Ուսուցիչների որակավորման նոր քաղաքականությունը կարող է հանգեցնել անսպասելի հետևանքների

թային կարգն է պահանջում ուսուցչի պաշտոնին ձգտող հավակնորդից: Դա նշանակում է, որ ուսուցիչներն աշխատանքի ընթացքում պետք է ձեռք բերեն գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, որոնք նրանք չունեին կամ որոնք չեն բացահայտվել աշխատանքի ընդունվելու պահին: Դրանք բավականին մեծ թվով իրավական ակտերն են, աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնների իմացությունը, հոգեբանամանկավարժական գտելիքները, մինչբժշկական օգնության հիմունքների իմացությունը:

Ըստ ներքոբերյալ աղյուսակի՝ ենթադրվում է, որ ուսուցիչների մասնագիտական գիտելիքների շրջանակը չպետք է փոփոխություն կրի, իսկ նրանց մանկավարժական գիտելիքների և հմտությունների ծավալի փոփոխությունը դժվար է գնահատել երկու փաստաթղթերում տարբեր հասկացությային ձևակերպումների պատճառով. պարզ չէ, թե որոնք են այն մանկավարժական հմտությունները, որոնք պահանջվում են ուսուցչի պաշտոնին ձգտող հավակնորդից: Սակայն, եթե ենթադրենք, որ բանավոր հարցազրույցի միջոցով ստուգվում են հավակնորդի միայն գործնական հմտությունները, ապա նորություն կարելի է համարել մանկավարժության տեսության իմացությունը: Այս պահանջները ամփոփ տեսքով ներկայացված են հետևյալ կերպ.

Կրթություն	ա) բարձրագույն մանկավարժական կրթություն, բ) բարձրագույն կրթություն և վերջին 10-ը տարվա ընթացքում մանկավարժական 5 տարվա ստաժ
Ստաժ	մանկավարժական կրթության բացակայության դեպքում՝ 5 տարվա ստաժ
Իրավական ակտերի իմացություն	ՀՀ Սահմանադրություն, 6 ՀՀ օրենքներ, աշխատանքային օրենսգիրք, կանոնադրություն, այլ նորմատիվ ակտեր, առարկայական չափորոշիչներ
Հոգեբանական բաղադրիչ	հոգեբանության հիմունքներ
Մասնագիտական բաղադրիչ	հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին համապատասխան
Մանկավարժական բաղադրիչ	մանկավարժական հմտություններ, մանկավարժության տեսություն, առարկայի դասավանդման մեթոդիկա
Այլ բաղադրիչներ	մինչբժշկական օգնության հիմունքներ, աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոններ

Ամփոփ աղյուսակից եզրակացնում ենք, որ աշխատանքի ընթացքում ուսուցչի ուշադրությունը պետք է սևեռված լինի ոչ այնքան գործնական հմտությունների զարգացման և փորձի ձեռքբերման, մասնագիտական գիտելիքների շրջանակի ընդլայնման, որքան Տեսական գիտելիքի հարստացման վրա, ինչը հակասում է ուսուցչի զարգացման բնականոն ընթացքին և լրացուցիչ ծանրաբեռնվածություն ստեղծում գործող ուսուցչի համար՝ շեղելով նրան բուն մանկավարժական գործունեությունից:

**ԱՄՓՈՓՈՒՄ.** Մանկավարժական կադրերի կառավարման և որակի բարձրացման ոլորտում կատարվող բարեփոխումները միտված են ուսուցիչներին ուղղված պարտադիր պահանջների սահմանմանը և դրանք պահպանելու մեխանիզմների ստեղծմանը: Սակայն տարվող գործընթացներում հաշվի չեն առնված ուսուցիչների սոցիալական շահերը: Ներկայացվող պահանջների անորոշությունը և հակասականությունը ուսուցիչներին կանգնեցնում է ֆինանսական կորուստների և հոգեբանական ճնշումների առջև, և երիտասարդ կադրերին վանում մանկավարժական գործունեությունից:

կրթություն



#### գ. Աշխատանքի պահպանման և առաջխաղացման պայմանների գնահատում:

Մանկավարժական պաշտոնների նկարագրով սահմանված աշխատանքային պարտականությունների կատարման համար անհրաժեշտ բնութագրիչները պահպանելու նպատակով ՀՀ հանրակրթության մասին ՀՀ օրենսդրությունը նախատեսում է ուսուցիչների ատեստավորման գործընթացը<sup>30</sup>: Ատեստավորումը նպատակ ունի որոշելու ուսուցչի գիտելիքների, աշխատանքային կարողությունների, հմտությունների համապատասխանությունը. 1) զբաղեցրած պաշտոնին և 2) որակավորման տարակարգերի բնութագրիչներին: Այլ կերպ ասած՝ ատեստավորման գործընթացն ապահովում է թե՛ նվազագույն պահանջներին համապատասխանելիության և թե՛ ուսուցիչների խրախուսման, առաջխաղացման խնդիրների լուծումը հանրակրթության ոլորտում:

Նախորդ բաժնում համեմատեցինք ուսուցչին ներկայացվող պարտադիր և պարտադիր նվազագույն պահանջները: Այս բաժնում կանդրադառնանք ուսուցիչների որակի պահպանումը և շարունակական աճն ապահովող ձևական պահանջներին:

Պահանջներն ամփոփված են հավելված 1-ում բերվող աղյուսակում:

Համեմատական աղյուսակից երևում է, որ աշխատանքի պահպանումը կառուցվում է գնահատման «ժողովրդավարական» սկզբունքի վրա և ենթադրում է պաշտոնների նկարագրերով նախատեսված գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառումը: Մասնագիտական որակների պահպանման և զարգացման նպատակին է ծառայում ատեստավորումից առաջ ուսուցչի պարտադիր վերապատրաստումը: Արդյունավետորեն իրականացվող վերապատրաստումը խոչընդոտում է ուսուցչի լճացումը և զգալի դեր է խաղում նրա մասնագիտական աճի ուղղորդման գործում, ինչի շնորհիվ ապահովվում է ուսուցչի սոցիալական դիրքի կայունությունը:

Ուսուցիչների առաջընթացի մասով հարկավոր է նշել մի քանի կարևոր հանգամանք.

- առաջխաղացման համակարգն սկսում է գործել համապատասխան ՀՀ կառավարության որոշման իրավական ուժի մեջ մտնելու պահից՝ 2010 թվականից,
- ուսուցչի առաջխաղացման համար որոշակի դեր է խաղում նրա աշխատանքային ստաժը. առաջխաղացման հնարավորությունն ստեղծվում է աշխատանքային 3 տարվա փորձ ունենալուց հետո,
- որակավորման տարակարգերն ունեն հաջորդական բնույթ, և ամեն հաջորդը հնարավոր է ստանալ միայն նախորդն ունենալուց հետո:

Առաջխաղացման ուրվագծած համակարգում չկա ուսուցիչների կրթական աստիճանի մասին հղում (բակալավր, մագիստրոս, հետազոտող): Ուսուցչի թափուր պաշտոնի մրցույթի համար սահմանվող պայմաններում կրթական աստիճանն արդարացիորեն չէր նշվում, քանի որ բերված են աշխատելու համար նվազագույն պահանջները: Սակայն կադրերի կառավարման հետագա գործընթացներում կրթական աստիճանը չի կարող անտեսվել: Անտեսելու պարագայում՝ չի խրախուսվում կրթական բարձր աստիճան ունեցող կադրերի ներհոսքը



Արդյունավետորեն իրականացվող վերապատրաստումը խոչընդոտում է ուսուցչի լճացումը և ապահովում նրա սոցիալական դիրքի կայունությունը

<sup>30</sup> Գործընթացը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2010թ. նոյն թիվ 1391-Ն որոշմամբ:

դպրոց, և անուղղակիորեն առավելապես սատարվում է բակավարի կրթական աստիճանով ուսուցիչների աշխատանքը:

Ուսուցչի շահերից չի բխում նաև որակավորման տարակարգեր ձեռքբերելու հաջորդականության սկզբունքը: Այն նույնպես անտեսում է երիտասարդ ուսուցչի կրթական աստիճանը, ինչպես նաև անտեսում է երկարամյա փորձ ունեցող ուսուցչի հմտություններն ու գիտելիքները: Հաջորդականության սկզբունքի կիրառման արդյունքում յուրաքանչյուր ուսուցիչ սկսում է իր առաջխաղացումն առաջին աստիճանից՝ որակավորման 1-ին տարակարգից, 2010թ.՝ անկախ իր բազմամյա փորձից և արժանիքներից: Այնինչ նրանց թվում կարող են լինել մանկավարժական լուրջ վաստակ ունեցող թե՛ չպարգևատրված, թե՛ «Լավագույն ուսուցիչ» կոչմանն արժանացած ուսուցիչներ:

Այսպիսով՝ ներկա ձևով ուսուցիչների առաջխաղացման համակարգն արժեզրկում է ուսուցիչների փորձն ու վաստակը մանկավարժական ոլորտում և ստեղծում աշխատանքի անարդար պայմաններ: Հատկապես ազդեցիկ է այս անարդարությունը 10-14 տարվա աշխատանքային փորձ ունեցող ուսուցիչների պարագայում, որոնց թիվը վերջին երեք ուսումնական տարիներին նվազել է 0,6%-ով:

Աղյուսակում ներկայացված են այն պահանջները, որոնք սահմանվում են ուսուցչի պաշտոնն զբաղեցնելու և որակավորման 1-ին, 2-րդ և 3-րդ տարակարգերը շնորհելու համար: Հակիրճ անդրադառնանք պահանջների բովանդակությանը:

Ներկայացվող պահանջներից մեկն իրավական ակտերի իմացությունն է: Գիտելով աղյուսակը կարելի է պահանջի կիրառման հարցում տեսնել անհետևողականություն: Առավելագույն իմացությունը պահանջվում է ուսուցչի պաշտոնի նկարագրով: Մակայն հետագայում այս պահանջը թուլանում է. տարակարգ ստանալու համար պահանջվում է միայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը և ՈՒՀ-ի կանոնադրության իմացությունը: Հետագա առաջխաղացման մեջ պահանջը չի խստանում և մնում է նույնը: Միաժամանակ ակնհայտ է, որ աշխատանքի ընթացքում ուսուցիչը, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքից առավել, ստիպված է առնչվել գործնական նշանակություն ունեցող մի շարք այլ իրավական ակտերի, ինչպիսիք են առարկայական չափորոշիչները, ծրագրերը և այլ ուսումնական և մեթոդական նյութերը, որոնք հաստատվում են ՀՀ ԿԳ նախարարի հրամաններով: Բացի իրավական ակտերից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կամ նրա առանձնացված ստորաբաժանումների կողմից տարեկան հրապարակվում են մեթոդական ցուցումներ: Մակայն ուսուցչի կողմից վերջինների իմացությունը

ատեստավորման և առաջխաղացման գործընթացում չի ստուգվում: Անորոշ է մնում, թե ինչու այս դեպքում դրանց իմացությունը պարտադիր է համարվում ըստ պաշտոնների նկարագրի, և ինչով առաջնորդվի ուսուցիչն իր գործունեությունը և իր առաջխաղացումը ծրագրավորելու ընթացքում: Հետևաբար, գնահատման հիմքում ընկած չափանիշները չեն համապատասխանում աշխատանքի իրական ծավալին և բնույթին:

Համանման իրավիճակի ենք հանդիպում, երբ փորձում ենք համադրել ներկայացվող պահանջների և թեստային աշխատանքի ծավալները: Համաձայն ստես-



Ներկայումս ուսուցիչների առաջխաղացման համակարգն արժեզրկում է նրանց փորձն ու վաստակը մանկավարժական ոլորտում

տավորման կարգի՝ որակավորման տարակարգի թեստային առաջադրանքը պետք է պարունակի 50-90 հարց՝ հետևյալ հարաբերակցությամբ.

1. օրենսդրության իմաստություն՝ 15%,
2. առարկայական-մասնագիտական գիտելիքներ՝ 60%,
3. մանկավարժական գիտելիքների տիրապետում՝ 25%:

Մակայն աղյուսակից երևում է, որ ամենաակնհայտ զարգացումը ուսուցիչը պետք է ապրի մանկավարժական գիտելիքների և կարողությունների մասով: Դժվար է պատկերացնել, որ այս բոլոր կարողությունների մակարդակները հնարավոր է պարզել 12-22 թեստային հարցերի միջոցով: Առավել ևս, որ նրանց թվում կան այնպիսիք, որ ընդգծված գործանական բնույթ են կրում (օրինակ՝ դասի պլանի մշակում) և ընդհանրապես ենթակա չեն թեստավորման միջոցով բացահայտվելու:

Միաժամանակ՝ մասնագիտական գիտելիքների մասով չի նախատեսվում որևէ փոփոխություն 2-րդ և 3-րդ տարակարգերից անցման դեպքում, այնինչ թեստային առաջադրանքներում այս մասով հարցերի թիվն ավելանում է:

Կարելի է ենթադրել, որ թեստային առաջադրանքներից դուրս մնացած որոշ պահանջներին ուսուցչի համապատասխանությունը կարող են ստուգվել հարցազրույցի միջոցով, սակայն հարցազրույցի ձևաչափը թույլ չի տալիս ներկայացնել որևէ դասի պլան, կամ ապացուցել փորձարարական մեթոդների կիրառումը դասարանում և կամ ապացուցել դաստիարակության մեթոդի մշակման և տարածման փաստը:

Տարակուսանք են առաջացնում նաև ներկայացվող բուն պահանջները:

Այսպիսով, դիդակտիկայի համաձայն՝ դասի պլանի առկայությունը դասին պատրաստվելու պարտադիր պայման է, և այն պետք է ունենա յուրաքանչյուր ուսուցիչ, որը դասարան է մտնում դասը վարելու համար: Մակայն այս պահանջը ներկայացված է որակավորման 1-ին տարակարգի համար: Բացի դրանից՝ պլանի առկայությունը դեռևս ամբողջությամբ չի արտացոլում մանկավարժական գործունեության որակը: Յուրաքանչյուր դասի պլան արտացոլում է դասի ժամանակ իրականացվող ընդհանուր մանկավարժության, հեգոբանության, բանախոսության, սոցիոլոգիայի և դասավանդող առարկաների պահանջները, իրականացվում են ուսուցման, դաստիարակության և զարգացման ընդհանուր և մասնավոր խնդիրներ, փոխհարաբերության մեջ են մտնում ուսուցիչը և աշակերտը: Դասի պլանի կազմման ժամանակ ուսուցիչը գործ ունի փոխկապված չորս գործոնների հետ՝ դպրոցի ընդհանուր խնդիրներ, ծրագրային պահանջներ, սովորողների պատրաստվածության աստիճան և դասի բաղադրիչներ: Այս ամբողջի արտացոլումը դասի պլանում շատ բարդ ստեղծագործական մոտեցում պահանջող մանկավարժական համալիր խնդիր է: Ուստի, թե ինչպես է ուսուցիչը կարողանում համակցել այս բոլոր խնդիրները դասի ժամանակ և գործանակում դրսևորում իր գիտելիքները, միայն դասի պլանի առկայության փաստից հնարավոր չէ հասկանալ:

Այսպիսով, գործող ատեստավորման կարգը չի անդրադառնում որակական գնահատականներին և չի տարբերակում ուսուցչի մանկավարժական և մասնագիտական բարձր կամ ցածր պատրաստվածությունը:

Նույնը կարելի է ասել նաև սովորողների գիտելիքների և կարողությունների գնահատման ձևերին և մեթոդներին տիրապետելու պահանջի մասին: Դժվար է պատկերացնել, որ ՀՀ ԿԳՆ տեսուչը կամ ծնողական խորհուրդը դրական կարծիք տան գնահատման մեթոդիներին չտիրապետող ուսուցչին, եթե անգամ այդ ուսուցիչը չի հավակնում տարակարգ ձեռք բերել: Այնինչ, այս պահանջը ձևակերպվում է որակավորման 1-ին տարակարգի պահանջներում:

Ընդհանրապես արտացոլված չէ ատեստավորման գործընթացում պաշտոնների նկարագրում տեղ գտած մինչբժշկական օգնության հիմունքների, աշխատանքի անվտան-

գության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնների իմացության պահանջը:

Կարևոր է նաև նշել, որ մանկավարժությունը ուսուցման և դաստիարակության ամբողջականությունն է: Ներկայացված գնահատման համակարգում շեշտը դրված է ուսուցման վրա, և ուշադրությունից դուրս են մնում դաստիարակության հետ կապված խնդիրների բացահայտումն ու արտադասարանային աշխատանքը: Եվ, վերջապես, այն չի ստուգում ուսուցչի հմտությունները, չի նախատեսում անգամ ավանդական, բայց այսօր հազվադեպ դարձած այնպիսի գնահատման մեթոդներ, ինչպիսիք են ինքնահաշվետվությունը կամ ցուցադրական դասի անցկացումը: Անտեսվում են նաև կրթության կազմակերպման ժամականակից համարվող այնպիսի անձնակողմնորոշված, աշակերտակենտրոն մեթոդներ, ինչպիսիք են գործնական խաղերը, վարպետաց-դասերը, խմբակային աշխատանքները և ծրագրավորված վերահսկողությունը: Ուսուցչի գնատահման այս ձևերը իսպառ մոռացված են:

Վերը շարադրածը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ գործող ատեստավորման և տարակարգերի շնորհման համակարգը չի համապատասխանում արդի մանկավարժական աշխատանքի բնույթին, չի արտացոլում դրա իրական ծավալը, և այդ պատճառով այն խիստ ճնական բնույթ է կրում: Նման պայմաններում վերանում է գնահատման իմաստը՝ որպես ուսուցչի աշխատանքի պաշտպանության ձև:

**ԱՄՓՈՓՈՒՄ.** ՀՀ-ում ներդրվել է մանկավարժական կադրերի գնահատման համակարգ, որն ինքնին ուժեղ միջոց է ուսուցչի աշխատանքի պաշտպանության համար: Պարտադիր սահմանված վերապատրաստումն ապահովում է դիրքի կայունություն և մասնագիտական հարատև աճ: Սակայն նախագծված համակարգը հակասական է, չի հիմնվում ժամանակակից մանկավարժության և կրթության կազմակերպման տեսության վրա, չի բխում մանկավարժական գործունեության բնույթից: Այս ամենը բերում է անարդարություն, ուսուցչի չհիմնավորված ծանրաբեռնվածության, վարչական կամայականությունների և հոգեբանական ճնշումների:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված և դիտարկված խնդիրները չեն սպառում ընդհանրապես ուսուցիչների դիրքի և աշխատանքի պաշտպանության հիմնահարցի բոլոր տեսանկյունները: Մեր կողմից քննարկվել են այս պահին առավել կարևոր և ակնհայտ խնդիրներ: Դրանց քննարկման արդյունքում եկել ենք այն եզրակացության, որ վերջին տարիների փոփոխություններն ունեն դրական լիցք.

- բարձրացել է ուսուցիչների աշխատավարձը,
- սահմանված են որոշակի կենսաթոշակային և հանգստի պայմանների արտոնություններ,
- հիմք է դրվել մանկավարժական կադրերի կառավարման համակարգի:

Սակայն այս ամենի հետ մեկտեղ՝ բոլոր ուղղություններով իրականացվող բարեփոխումներն ունեն մի շարք ընդհանուր թերություններ.

- շատ իրավական ակտեր համադրված չեն և հակասական բնույթ են կրում,
- գործող իրավական ակտերը լիարժեքորեն չեն արտացոլում կրթության ոլորտում տիրող իրավիճակը,
- տարվող գործընթացները չեն դիտարկվում ուսուցչի տեսանկյունից,
- իրավական ակտերը քիչ են հիմնվում ժամանակակից մանկավարժության տեսության վրա:

Արդյունքում՝ ֆինանսավորման և գնահատման համակարգերը հնարավոր չէ արդար համարել: Ուսուցչի կենսամակարդակի կայունությունը, աշխատանքի մատչելիությունը խիստ հարաբերական բնույթ են կրում: Ուսուցիչները կարող են առանց դժվարությունների ենթարկվել վարչական կամայականությունների: Պետական պահանջների ոչ օբյեկտիվ բնույթը և վարչական ճնշումների հավանականությունը նպաստում են նաև հեզբեբանական ճնշվածության մեծացմանը:

Այլ կերպ ասած՝ արդի փուլում ուսուցչի սոցիալական պաշտպանությունը չի կարելի բավարար համարել:

Մանկավարժի սոցիալական պաշտպանության հիմնախնդրում շատ կարևոր հանգամանք է նաև այն, որ կրթության՝ որպես սոցիալական և արժեքային համակարգի դրոշմը կրող գործունեության տեսակի կառավարումը անբաժանելի է մանկավարժությունից: Ուստի, կրթությունը, դասագրքերի բովանդակությունը, դասավանդման մեթոդները և ներարկվող արժեհամակարգը, ուսուցչի բարձր հեղինակությունը նույնքան ակնհայտորեն են ազդում ուսուցչի սոցիալական պաշտպանվածության վրա, որքան արդար վարձատրությունը, գնահատումը, սահմանվող արտոնությունները, պետական և ոչ պետական սոցիալական պաշտպանության այլ հայտնի ձևեր:

ՀՀ կառավարության 2010թ. թիվ 1391-Ն որոշում					
Հավելված 4	Հավելված 1	Հավելված 5	Հավելված 5		
Պարտադիր պահանջներ	Առաջխաղացման համար պահանջներ	Պրակտիկայի 1-ին մ/կ-ի տարակարգ (4)	Պրակտիկայի 2-րդ մ/կ-ի տարակարգ (5)	Պրակտիկայի 3-րդ մ/կ-ի տարակարգ (6)	
Բնութագրիչներ (1)	Պաշտոնի նկարագրում (2)	Առեստավորման կարգով (3)	Պրակտիկայի 1-ին մ/կ-ի տարակարգ (4)	Պրակտիկայի 2-րդ մ/կ-ի տարակարգ (5)	Պրակտիկայի 3-րդ մ/կ-ի տարակարգ (6)
Կրթություն	ա) բարձրագույն մանկավարժական կրթություն բ) բարձրագույն կրթություն և վերջին 10-ը տարվա ընթացքում մանկավարժական 5 տարվա ստաժ	Նույնն է	Նույնն է	Նույնն է	Նույնն է
Ստաժ	մանկավարժական կրթության բացակայության դեպքում՝ 5 տարվա ստաժ	Նույնն է	3 տարի	5 տարի	7 տարի
Բրավալական ակտերի իմացություն	ՀՀ Սահմանադրություն, 6 ՀՀ օրենքներ, օրենսգիրք, կանոնադրություն, այլ իրավական ակտեր, առարկայական չափորոշիչներ	Բացակայում է	«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք և ՈՒՀ-ի կանոնադրություն	Նույնն է	Նույնն է

Հավելված 1 (շարունակություն)

(1)	(2)	(3)	(4)	(5)	(6)
Հոգեբանական բաղադրիչ	հոգեբանության հիմունքներ		<p>ա) ապահովում է հարմարավետ միջավայր, հարորակցման ազատ և բարենկիթ մթնոլորտ</p>	<p>ա) + բ) տիրապետում է սովորողների տարի-բային և հոգեբանական առանձնահատկությունների ուղղությամբ գոյություն ունեցող ժամանակակից մոտեցումների</p>	<p>ա), բ) + գ) լուծում է սովորողի անհատական հոգեբանական խնդիրներ</p>
Մասնագիտական բաղադրիչ	հանրակրթական ուսումնական ծրագրերին համապատասխան	<p>ա) գերազանցում են դասավանդման համար անհրաժեշտ մասնավարժական կրթության չափորոշիչների պահանջները</p>	<p>ա) կիրառում է ժամանակակից տեխնոլոգիաներ, մեթոդների ընտրության մեջ հաշվի է առնում սովորողների հոգեբանական առանձնահատկությունները</p>	<p>ա) + բ) լիարժեքորեն տիրապետում է դասավանդվող առարկայի բազային և հարակից գիտելիքների</p>	<p>ա), բ)</p>
Մանկավարժական բաղադրիչ (դիրքակրիկա, դասավանդման մեթոդիկա)	մանկավարժական հմտություններ, մանկավարժության տեսություն, առարկայի դասավանդման մեթոդիկա	<p>ա) կիրառում է տարբարակ մեթոդներ բ) ապահովում է դասավանդման դասընթացին սովորողների մասնակցությունը գ) մշակում է դասի պլաններ դ) տիրապետում է սովորողների գնահատման ձևերին և մեթոդներին</p>	<p>ա), բ), գ), դ) + ե) կիրառում է ժամանակակից տեխնոլոգիաներ, մեթոդների ընտրության մեջ հաշվի է առնում սովորողների հոգեբանական առանձնահատկությունները</p>	<p>ա), բ), գ), դ), ե) + զ) կիրառում է հետազոտական և փորձարարական մեթոդներ է) ինքնուրույն մշակում է ուսուցման և դաստիարակության մեթոդներ, տարածում է դրանք ը) անհատական հետաքրքրությունները հաշվի առնելով օգտագործում է լրացուցիչ ուսումնական նյութեր, տեղեկատվական այլ աղբյուրներ</p>	<p>ա), բ), գ), դ), ե) + զ) կիրառում է հետազոտական և փորձարարական մեթոդներ է) ինքնուրույն մշակում է ուսուցման և դաստիարակության մեթոդներ, տարածում է դրանք ը) անհատական հետաքրքրությունները հաշվի առնելով օգտագործում է լրացուցիչ ուսումնական նյութեր, տեղեկատվական այլ աղբյուրներ</p>



Հավելված 1 (շարունակություն)

(1)	(2)	(3)	(4)	(5)	(6)
Ինքնագարգացում, վերապատրաստում	Բացակայում է:	պարտադիր վերապատրաստում	ա) պարտադիր վերապատրաստում բ) սեփական մասնագիտական զարգացում	ա), բ) + գ) վերապատրաստումների վերաբերյալ սեփական նշանումներ	ա), բ), գ) + դ) հանդես է գալիս գիտական հոդվածներով և գեկոյցներով ե) իրականացնում է մասնագիտական նպատակային հետազոտություններ
Այլ	մինչթշկական օգնության հիմունքներ, աշխատանքի անվտանգության , սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոններ	Բացակայում է:	Բացակայում է:	Բացակայում է:	Բացակայում է:
Գործնական արդյունք		Բացակայում է:	գիտելիքների և կարողությունների բարձր մակարդակ	ապահովում է կայուն աճ, մասնակցություն մրցույթներին և օլիմպիադաներին	գիտելիքների և կարողությունների բարձր մակարդակ
Դրսերման ձևը		փաստաթղթային	50-60 թեստ և հարցազրույց	65-75 թեստ և հարցազրույց	80-90 թեստ և հարցազրույց



## Հավելված 2

## Ուսուցիչների թվաքանակն ըստ տարիքի

	2009/2010	2010/2011	2011/2012	2009/2010	2010/2011	2011-2012
մինչև 25	2 271	2 246	2 256	5,5%	5,4%	5,4%
25-30	3 352	3 388	3 557	8,1%	8,2%	8,5%
30-34	4 320	4 005	3 841	10,4%	9,6%	9,2%
35-39	5 082	4 984	4 865	12,2%	12,0%	11,7%
40-44	5 554	5 409	5 379	13,4%	13,0%	12,9%
45-49	5 933	5 792	5 622	14,3%	14,0%	13,5%
50-54	6 308	6 196	6 165	15,2%	14,9%	14,8%
55-59	5 356	5 444	5 592	12,9%	13,1%	13,4%
60-64	2 768	3 348	3 642	6,7%	8,1%	8,7%
65 քարձր	568	590	838	1,4%	1,4%	2,0%

## Ուսուցիչների թվաքանակն ըստ մարզերի

	2009/2010	2010/2011	2011/2012	2009/2010	2010/2011	2011-2012
Երևան	10 662	10 503	10 832	25,7%	25,4%	25,9%
Արագածոտն	2 900	2 933	3 025	7,0%	7,1%	7,2%
Արարատ	3 263	3 294	3 354	7,9%	8,0%	8,0%
Արմավիր	3 754	3 839	3 881	9,0%	9,3%	9,3%
Գեղարքունիք	3 723	3 713	3 789	9,0%	9,0%	9,1%
Լոռի	4 047	4 019	3 845	9,7%	9,7%	9,2%
Կոտայք	3 708	3 312	3 327	8,9%	8,0%	8,0%
Շիրակ	4 116	4 176	4 042	9,9%	10,1%	9,7%
Սյունիք	2 507	2 493	2 487	6,0%	6,0%	6,0%
Վայոց Ձոր	1 061	1 074	1 090	2,6%	2,6%	2,6%
Տավուշ	2 071	2 046	2 085	5,0%	4,9%	5,0%

## Ուսուցիչների թվաքանակն ըստ աշխատանքային փորձի

	2009/2010	2010/2011	2011/2012	2009/2010	2010/2011	2011-2012
մինչև 1	1 411	1 361	1 330	3,4%	3,3%	3,2%
1-4	3 724	3 801	4 138	9,0%	9,2%	9,9%
5-9	4 943	4 505	4 515	11,9%	10,9%	10,8%
10-14	6 367	5 833	5 639	15,3%	14,1%	13,5%
15 և ավելի	25 067	25 902	26 135	60,4%	62,6%	62,6%

## Կենսաթոշակային և մինչկենսաթոշակային տարիքի ուսուցիչների թվաքանակը

	2009/2010	2010/2011	2011/2012	2009/2010	2010/2011	2011/2012
կենսաթոշակային	1 018	1 222	1 506	2,5%	3,0%	3,6%
1 տարի մինչև	562	615	723	1,4%	1,5%	1,7%
2 տարի մինչև	723	1 073	945	1,7%	2,6%	2,3%

## Ուսուցիչների թվաքանակն ըստ կրթական աստիճանների

	2009/2010	2010/2011	2011/2012	2009/2010	2010/2011	2011/2012
բարձրագույն	3 382	3 280	2 827	8,1%	7,9%	6,8%
թերի բարձրագույն	713	647	605	1,7%	1,6%	1,4%
միջին մասնագիտական	64	69	37	0,2%	0,2%	0,1%
բարձրագույն մանկավարժական	31 550	31 931	33 201	75,6%	77,1%	79,5%
թերի բարձրագույն մանկավարժական	4 702	4 575	4 358	11,3%	11,1%	10,4%
միջին մասնագիտական մանկավարժական	786	657	500	1,9%	1,6%	1,2%
միջնակարգ	209	158	173	0,5%	0,4%	0,4%



## Հրայր Մարուխյան հիմնադրամ

Հրայր Մարուխյան Հիմնադրամը ստեղծվել է 2009 թվականին, Հայաստանում: Հիմնադրամի նպատակն է՝ նպաստել հանրային քաղաքականության զարգացմանը և առաջընթացին, պաշտպանել սոցիալ-ժողովրդավարության հիմնական արժեքները՝ կրթության, ուսուցման, հետազոտության հնարավորությունները՝ տարածաշրջանային և միջազգային համագործակցության միջոցով:

Հիմնադրամի նպատակներն են՝ աջակցել և գործնականորեն նպաստել ազգային, տարածաշրջանային և միջազգային երկխոսությանը՝ ուշադրության կենտրոնում պահելով ընթացիկ քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումները և մարտահրավերները՝ հատկապես կենտրոնանալով Հայաստանի և Հարավային Կովկասի վրա:

Հիմնադրամը իրականացնում է հետազոտություններ և մշակում քաղաքականություն, որպեսզի տարածաշրջանային և գլոբալ կերպով աջակցի Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ դիմագրավելու քաղաքական և սոցիալական հարատև փոփոխվող իրավիճակներին: Հիմնադրամը ծառայում է նաև որպես կենտրոն, որտեղ ուսումնասիրվում են նորանկախ պետությունների համար այնպիսի հատկանշական հարցեր, ինչպիսիք են ժողովրդավարությունը, աշխատանքային իրավունքները, սոցիալական արդարությունը, խոսքի ազատությունը, արտաքին և անվտանգության քաղաքականությունը, քաղաքական և միջազգային ընթացիկ իրադարձություններն ու զարգացումները, որոնք հիմնականում վերաբերում են Հարավային Կովկասին:



## Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ

Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը (ՖԷՀ) շահույթ չհետապնդող գերմանական քաղաքական հիմնադրամ է, որի նպատակն է սոցիալ-ժողովրդավարության արժեքների տարածումը: Հիմնադրամը, որի կենտրոնական գրասենյակները գտնվում են Բեռլինում և Բոնում, հիմնադրվել է 1925 թվականին և այդպես անվանվել ի պատիվ ժողովրդավարական ճանապարհով ընտրված Գերմանիայի առաջին նախագահի՝ Ֆրիդրիխ Էբերտի:

Այսօր ՖԷՀ-ը ունի մասնաճյուղեր ավելի քան 90 երկրում և գործունեություն է իրականացնում ավելի քան 100 երկրում:

Թբիլիսիում գտնվող Հարավային Կովկասի համագործակցության գրասենյակը կոորդինացնում է ՖԷՀ-ի գործունեությունը Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում: Բոլոր երեք երկրներում ՖԷՀ-ը նպաստակ ունի խթանելու ժողովրդավարությունը, խաղաղությունը, սոցիալական արդարությունը, քաղաքական երկխոսությունը՝ կրթության և հետազոտությունների միջոցով:

ՖԷՀ-ի գործընկերներն են տարբեր ՀԿ-եր, գիտնականներ և փորձագետներ, լրագրողներ, որոշ երկրների խորհրդարաններ, նախարարություններ և քաղաքական որոշում կայացնող պաշտոնյաներ:



